

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Է. ԱՐԱՇԱՄՅԱՆ

ՃԱԿԱՏԱԳՐԻՆ  
ԸՆԴԱՌԱԶ

ՀՐԱՆՑ ԱՅՐԱԶԱՄՅԱՆ

ԾԱԿԱՏԱԳՐԻՆ  
ԸՆԴԱՌԱԶ

Փաստավավերագրական  
ակնարկ

հ/ս/ 2001

ԵՐԵՎԱՆ  
«ԱՄԱՐԱՍ»  
2001

*Գիրքը տպագրության է երաշխավորել  
պատմագիտության դոկտոր  
Կ. Ա. Հարությունյանը,  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ*

Գրքի տպագրության ծախսերը  
հոգացել է ամերիկահայ բարերար  
**Ծախեն Նազարյանը,**  
որին հայտնում ենք մեր շնորհակալությունը

*Խմբագիր՝ Հ. Հ. Խաչատրյան*

**Արրահամյան Հ.**

Ա 161 Ծակատագրին ընդառաջ. Փաստավավերագրական ակնարկ. –  
Եր.: Ամարաս, 2001. – 240 էջ:

Հրանտ Արրահամյանի սույն գիրքը նվիրված է քրիստոնեական թվականության երկրորդ հազարամյակը եզրափակող արցախահայության հերոսամարտին և այդ հերոսամարտի ղեկավարներից մեկի՝ ՀԱՄԼԵՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ գործունեության արտացոլմանը: Գրքում տեղ գտած վավերագրերի և արխիվային նյութերի մի մասը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Այս գիրքը նախատեսված է մեծ ընթերցասրահի համար: Այն կգոհացնի բոլոր նրանց, ում հուզում է Արցախի հիմնախնդիրը:

0803010413  
Ա 0029 (01) - 2001

ԳՄԴ 66.3 (22)

© «Ամարաս» հրատ. 2001

**ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ**

Արք իմացա, որ լրանում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարար Համլետ Գրիգորյանի՝ իմ նախկին աշակերտի ծննդյան 60-ամյակը, չէի ուզում հավատալ դրան: Չէ՞ որ ընդամենը երեկ էր, երբ դասարան մտա, ու իմ ուշադրությունը գրավեց բարեսեռ, ժպտուն աչքերով պատանյակը, որը լուրջ և մի տեսակ ընդոստ տեսք ուներ: Ուսուցչի համար ինչ կա հանելի, քան տեսնել իր դիմաց նստած խոհեմ, նաև մի փոքր աշխույժ, իր մտածածն ու զգացածը հստակ, առանց վարանելու արտահայտող աշակերտի. մանավանդ, որ հետո, տարիներ անց, առիթ կստեղծվի հպարտությամբ ասել՝ նա իմ սանն է եղել:

Երկար խորհեցի. ի՞նչ անել Համլետի 60-ամյակի առթիվ: Ի վերջո հանգեցի այն մտքին, որ, թերևս, միակ արժանի նվերը կլինի մի այնպիսի ակնարկ գրել նրա մասին, որ դառնա ամբողջական գիրք: Ահա քանի տարի է, ինչ ես աշխատում եմ «Մարտնչող Արցախը» եռամսա գրքի վրա, որը ընդգրկում է 1917 թվականից մինչև մեր օրերը: Այդ ընթացքում ես, որ առիթ եմ ունեցել շոշափել հազարավոր վավերագրեր, թերթել տասնյակ լրագրեր, կարդալ հարյուրավոր վրքեր, գրի առնել բազմաթիվ վկայություններ, մի պահ կանգ առա դժվարության առաջ. կկարողանա՞մ գրել հավուր պատշաճի, ճշմարիտը, արդարուսույցը: Դեռևս հազար հինգ հարյուր տարի առաջ հայ ճշմարտապատում պատմիչ Ղազար Փարպեցին է ասել. «Պատմությունը շարադրելիս պետք է ստույգ գրել, չեղածը չավելացնել, եղածները չպակասեցնել»: Չպետք է մոռանալ նաև ֆրանսիացի անվանի լուսավորիչ ու փիլիսոփա Ծառլ Մոնտեսքյոյի խրատանին. «Հարկավոր է ճշմարիտ լինել հայրենիքին վերաբերող ամեն ինչում...»:

Հայրենի Արցախը Մայր Հայաստանին վերամիավորելու պայքարը ավելի քան լոթ տասնամյակի վերք ու տառապանք ուներ: Գործաչովյան վերակառուցման օրերին այն նորից կյանքի կոչվեց՝ այս անգամ երբեք չնահանջելու անհողողող հաստատակամությամբ:

Մեծ փոթորիկը ճայթեց 1988 թ. փետրվարին՝ իր ճամփին հողմացրիվ անելով պնդողիկ խորհրդային պատկերը: Փոթորիկն իր մեջ ներառեց համայն հայությանը: Այն հարթ չզնայ, այլ կենսաններով, որ օրինաչափ էր: Ազգահավաքության մերաբերյալ արցախցի մեծ

1355

մտածող և երախտավոր Դավիթ Անանուհի գաղափարը թևածեց ամենուր: Հայ ժողովուրդը շատ տառապանքներ է կրել, օտար բռնապետները բաժան-բաժան են արել հայոց հայրենիքը, բզկտել Հայաստան երկիրը, նրա թանկ կտորներից մեկը՝ Արցախը, կտրել Մայր հայրենիքից և ապօրինաբար հանձնել ուրիշին: Բիրտ ուժերը միշտ էլ բիրտ են մնում, անուղղելի և անմահանց: Ով, ով, հայը դա լավ գիտի, քանզի դարեր շարունակ այն զգացել է իր մաշկի վրա: Հարկավոր էր արդարություն ազդարարող ճիշ, մի մեծ ցնցում, որ լսելի ու տեսանելի լիներ համայն աշխարհի: Եվ արցախահայությունը հնչեցրեց այդ շեփորը: Եկան, եկան հազարավորներ, հարյուր հազարավորներ: Հրապարակներն ու փողոցները տնքում էին մարդկանց ծանրությունից, բուռնցքների հոժ անտառներից սարսափում էին կայսրապետական իշխանությունները: Դա կապանքները խորտակող համաժողովրդական զարթոնք էր, փոթորիկ: Հեղափոխություն էր, անզիջում պայքար, ապրելու կամ մեռնելու պայքար, բոլոր տեսակի վարագույրները պատռելու և դեն շարտելու պայքար: Հրապարակներ ավաճած ժողովուրդը «Մայր հայրենիք» էր երգում փողփողացող եռագույնի տակ, ամբիոններից կոչեր էին հնչեցնում անգամ նրանք, ովքեր հեռու էին ճառախոսությունից: 12-13 տարեկան երեխան հրացան էր վերցնում, տանկ վարում, կամ հայրենաշունչ բանաստեղծություններ գրում: Պատերազմների հին ու նոր աստվածները ասես գորավիզ էին կանգնել հային, արցախահայությանը: 2<sup>0</sup> է որ նրա ճամփան պետք է անցներ դժոխքից դեպի դրախտ, ինչպես կասեր Արցախի ԿՈՍԻՍԱՆ անունը վաստակած Զորի Բալայանը:

Այդ հերոսական ճամփով անցել են հարյուր հազարավորները: Համլետը նրանցից մեկն է: Նա արցախյան շարժման ողնաշարի մի ողն է: Գրել նրա մասին՝ նշանակում է գրել շարժման պատմությունը, խոսել շատերի մասին, ովքեր իրենց անձը մկրտել են հայրենիքի ազատագրության սրբազան գործին և մոտեցրել մեզ հաղթության այս բաղձալի օրվան: Այո՛, այս գիրքը գիրք չէ մեկ ճակատագրի մասին, սա տարեգրության մատյան է Արցախ-Ղարաբաղի հորձանուտում մաքառող մի ամբողջ ժողովրդի մասին, որի զավակներից շատերը, այդ թվում և Համլետը, ասես շանթարգելի դեր էին խաղում պայքարի դժվարին պահերին և իրենց վրա վերցնում հարվածների մի մասը: Ինձ անչափ ուրախացնում է այն, որ ամբողջ պայքարի ընթացքում նա քայլել է հաստատակամ և կասկածելի որևէ հետք չի թողել, նա չի

երկնչել ամենածանր պահին, մարտնչել է անմնացորդ մկրվածությամբ, հոգով ու սրտով: Նրա մկրվածությունը հայրենիքին առապելական է թվում:

Ավարտված 20-րդ դարը սկզբից մինչև վերջ մեծ փորձությունների ժամանակաշրջան էր հայ ժողովրդի համար: Մենք տեսանք 1905-1907 թթ. ազգամիջյան կոտորածները, 1909 թ. Ադանայի հայերի ջարդը, 1915-22 թթ. թուրք կառավարողների իրազործած հայոց մեծ եղեռն-ցեղասպանությունը, որին զոհ զնաց երկու միլիոն հայ, երկու աշխարհամարտեր, որոնք նույնպես շատ զոհեր իլեցին մեզնից, ապա 1988 թ. դեկտեմբերի Սպիտակի աղետաբեր երկրաշարժ և՛ պատերազմը Ղարաբաղում: Արցախը պաշտպանելու, Հայաստանի Հանրապետության սահմանները ամրապնդելու համար մենք տվեցինք շուրջ 6 հազար զոհ և 15 հազար վիրավոր: Դա մեծ թիվ է մեզ պես մի փոքր ժողովրդի համար: Էլ չենք խոսում մեր ժողովրդի կրած, միլիարդների հասնող նյութական վնասների և կորցրած տարածքների մասին:

Մեր նորոյա վարդանները, Անդրանիկները և Նժդեհներն իրենց կյանքը զոհեցին կամ անցան թուրք-ազերական դժոխքով: Նրանցից մեկն է Համլետ Գրիգորյանը, որի անունը հավերժ կմնա իրեն ծնող ժողովրդի սրտում: Նրա և նրա զինակիցների մասին գրելը ոչ միայն պարտականություն է, այլև՝ անհրաժեշտություն:

Այս գիրքը գրելիս օգտագործել ենք ժամանակի մամուլը, Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ) նյութերը, Հայաստանում, Ադրբեջանում և այլուր տպագրված բազմաթիվ գրքեր, շարժման և պայքարի մասնակիցների հուշեր, ռազմաճակատային նամակներ, լուսանկարներ և այլն: Առանձնապես հաբուստ են Համլետի հուշերը, որ գրի ենք առել դեռևս 90-ական թվականների կեսերին և լրացրել վերջերս:

Անշուշտ գրքում կլինեն նաև բացթողումներ ու թերություններ: Ընթերցողը թող ներողամիտ լինի դրանց հանդեպ: Բոլորի բարի դիտողություններն ու առաջարկները կընդունենք երախտագիտությամբ և կաշխատենք հետագայում հաշվի առնել դրանք:

Պիտի անկեղծորեն ասել ու խոստովանել, որ դժվար է պատկերացնել մեր շարժումն առանց Համլետ Գրիգորյանի, առանց նրա սխրագործությունների: Խոսքս հատկապես Ղարաբաղյան շարժման արշալույսի մասին է: Եվ պատահական չէ, որ Պոլյանիչկոյի, հատկապես Սաֆոնովի, ինչպես և միմյանց հաճախակի փոխարինող մյուս պարետների սև ցուցակներում Համլետի անունը առաջիններից մեկն էր: Պատահական չէր նաև այն, որ Խորհրդային Միության Գերագույն խորհրդի արցախցի հինգ պատգամավորներին կողքին միշտ տեսնում էինք Համլետին, որն օգնում էր մեզ մոսկովյան այդ դաժան պայքարի օրերին: Պատահական չէր և այն, որ առաջիններից մեկը Համլետին նստեցրին բանտ՝ վախենալով նրա ելույթներից և պատգամավորի իրավունքից: Եվ, վերջապես, պատահական չէր, որ մեր ժողովուրդը սիրելով Համլետին՝ ընտրեց ՀՀ և ԼՂՀ առաջին խորհրդարանների պատգամավոր:

Ես հպարտ եմ, որ մեր Ծարժումն ուներ Համլետի նման անձնվեր ու սկզբունքային ղեկավար:

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

Մոտ յոթանասուն տարի Արցախ-Ղարաբաղը գտնվում էր թուրք-ազերիների ճնշման տակ: Այդ ժամանակաշրջանում, չնայած արցախահայությունը բազմիցս փորձել է ազատվել Ադրբեջանի գաղութակալությունից և միավորվել Մայր Հայաստանի հետ, որից բռնությանը բաժանվել է Անդրերկրկոմի 1921 թ. հուլիսի 5-ի ապօրինի որոշմամբ, հաջողության չի հասել: Սակայն աննկուն արցախահայերը բնավ չեն վհատվել, շարունակել են իրենց պայքարը՝ համոզված լինելով, որ վաղ թե ուշ կհասնեն իրենց բաղձալի նպատակին:

Եվ ահա տակնուվրա անող փոթորիկն սկսվեց 1988-ին, իսկ մինչ այդ իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել ՀՀ (Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը Ի. Վ. Ստալինին 1945 թվականին գրած հայտնի նամակում, ապա՝ 60-80-ական թվականներին Բագրատ Ուլուբաբյանը, Ջորի Բալայանը, Իգոր Մուրադյանը, Սամվել Կարապետյանը, Բենիկ Միրզոյանը, մոսկվաբնակ մի շարք հայ գիտնականներ, ուսանողներ, քաղաքական ու մշակութային գործիչներ: Արխիվում պահվող այդ բողոք-նամակներում հարց էր բարձրացվում Լեռնային Ղարաբաղը դուրս բերել Խորհրդային Ադրբեջանի կազմից և միավորել Մայր Հայաստանի հետ<sup>1</sup>: Մոսկվան և Բաքուն անտեսում էին այդ արդարացի պահանջը և ամեն կերպ ուժեղացնում ճնշումը արցախահայության վրա: Արցախահայությանը իր բնօրրանից արտաքսելու և երկրամասը թուրք-ազերիներով բնակեցնելու վճիռը Ադրբեջանի իշխանությունների համար դարձել էր պետական քաղաքականություն, որը փոխառնված էր համաթուրքական գաղափարախոսության զինանոցից:

1987 թվականի նոյեմբերից մինչև 1988-ի փետրվարը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից երեք անգամ պատվիրակություն է մեկնել Մոսկվա. որոնք հանդիպումներ են ունեցել ԽՍՀՄ բարձրագույն մարմինների ղեկավարության հետ և նրանց ներկայացրել արցախահայության արդարացի պահանջը՝ վերամիավորել Մայր Հայաստանի հետ: Սակայն արցախցիների պահանջը մնացել է անպա-

տասխան: Մոսկվան շարունակում էր համառորեն լռել:

Եվ, այնուամենայնիվ, Մոսկվա ուղարկվող բողոքների հոսքը չէր դադարում: Արցախի համալսարանի դասախոս Լենա Գրիգորյանը գրում է, որ արցախահայերի՝ Մոսկվայի կրեմլին հասցեագրված առաջին զանգվածային նամակները՝ մի ճամպորուկ, Մոսկվա է հասցվել դասախոսներ Համլետ Գրիգորյանի, Նիկոլայ Ավագունյանի և իր միջոցով, 1988-ի հունվարին, երբ դասախոսների մի խումբ զբոսաշրջության էր մեկնել Բաքու-Մոսկվա-Վիլնյուս երթուղով<sup>2</sup>:

Արցախում շարունակվում էին տեղի ունենալ զաղտնի ժողովներ ու հավաքներ: Իզոր Մուրադյանը գրում է. որ այդ օրերին Ասկերանի շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը և մարզային ագրոարդի նախագահ Հենրիխ Պողոսյանը բավականին նպաստել են Ղարաբաղյան շարժմանը: Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության զանգվածային ելույթները նախապատրաստելու գործում կարևոր դեր է խաղացել 1988-ի հունվարին Ասկերանի շրջանի Նորագյուղում հրավիրված այդ շրջանի կոլտնտեսությունների ու գյուղխորհուրդների 40 նախագահների մասնակցությամբ ժողովը, որը հավաստել է, որ Ղարաբաղը պատրաստ է կազմակերպված ելույթի<sup>3</sup>: Նորագյուղի այդ ժողովի մասին շուտով իմացան ամբողջ Ղարաբաղում: Դա ոգևորեց ամենքին և ասես կազմակերպչական կարևոր նշանակություն ունեցավ արցախահայության մարտական ոգին բարձրացնելու համար: Այնուամենայնիվ, պայքարի առաջամարտիկը մարզի քաղաքամայր Ստեփանակերտն էր իր 11 հազարանոց բանվոր դասակարգով:

Ազգային-ազատագրական պայքարի փոթորիկն ընդգրկեց ամբողջ Ղարաբաղը: Համբերության կաթսան եռում էր, հա եռում: Այլևս հնարավոր չէր կանգնեցնել ժողովրդական փոթորիկը, որը գլխավորում էին Արկադի Մանուչարովը, Համլետ Գրիգորյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ժաննա Գալստյանը, Վարդան Հակոբյանը, Ռոլեն Աղաջանյանը, Արկադի Կարապետյանը, Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Ռուդիկ Ազարյանը և ուրիշներ:

Համլետ Վաղարշակի Գրիգորյանը շարժման մեջ է ներգրավվել 1987 թվականի աշնանը: Վերոհիշյալ Լենա Գրիգորյանը պատմում է, որ իր ամուսին, Ասկերանի շրջանային «Խաչեն» թերթի խմբագիր Կոմիտաս Դանիելյանի հանձնարարությամբ Ստեփանակերտի

մանկավարժական ինստիտուտում պետք է ստորագրություններ հավաքեր Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին միավորելու պահանջով: «Չմոռանանք. - շարունակում է նա, - որ աշխատում էինք աղբյուրաբանական բաժնի հետ կողք-կողքի, և մեր առանձին դասախոսների մեջ դեռևս պինդ էր նստած «քրիստոնյությունը»... Ես, ինչ խոսք, նախընտրեցի դիմել առաջել վստահությունն անընդհատ գործընկերներին: Զգուշորեն բացատրեցի, թե ինչն ինչոց է: Զարմանալի բան. ոմանք կտրականապես հրաժարվեցին, մի քանիսը քաղաքավարությամբ մերժեցին: Բայց և այնպես դատարկաձեռն չդարձա տուն. Համլետ Մովսիսյանը և Համլետ Գրիգորյանը ոչ միայն սիրահոժար ստորագրեցին իրենց պարզած թուղթը, այլև... կատակեցին. «Իու, որ կին տեղովդ այդ վտանգավոր գործը քեզ վրա ես վերցրել, մենք մեր տղամարդ տեղով ինչո՞ւ պիտի վախենանք ստորագրելուց...»: Տիկին Լենան նաև վկայում է, որ Մոսկվա ուղարկված առաջին հեռագրի տեքստերի կազմումն ու կազմակերպումը իրականացվում էր նրանց տանը, Կ.Դանիելյանի, Հ. Գրիգորյանի և Հ.Մովսիսյանի համագործակցությամբ<sup>4</sup>: Լրատվական հաղորդումներում ասված է, որ Ստեփանակերտի հանրահավաքներում դասախոսներից հաճախակի ելույթներ էին ունենում Գ. Աթանասյանը, Հ. Գրիգորյանը, Ա. Մխիթարյանը, Լ. Գրիգորյանը, Ս. Ղազանչյանը և ուրիշներ<sup>5</sup>:

Արցախահայության ազգային-ազատագրական պայքարի տասնամյակի տարեդարձի տոնակատարության նախապատրաստման և անցկացման կառավարական հանձնաժողովը կազմել է մինչև 1988 թվականի փետրվարի 20-ը Արցախյան պայքարին Ստեփանակերտից և ամբողջ Լեոնային Ղարաբաղից ակտիվորեն մասնակցած անձանց ցուցակը: Ահավասիկ Ստեփանակերտից մասնակցածները. Արկադի Մանուչարով, Բորիս Դադամյան, Համլետ Գրիգորյան, Մուրադ Պետրոսյան, Ռոլեն Աղաջանյան, Ռազմիկ Պետրոսյան, Ժաննա Գալստյան, Մաքսիմ Միրզոյան, Վասիլի Աթաջանյան, Գրիգոր Աթանասյան, Ռաֆայել Գաբրիելյան, Էդնեստ Հայրապետյան, Համլետ Մովսիսյան, Արզիկ Մխիթարյան, Ավետիք Գրիգորյան, Արաքսյա Աղասարյան, Սերժիկ Գրիգորյան, Գալյա Առտամյան, Վլադիմեր Սարգսյան, Սլավա Աղաջանյան, Զամալ Թադևոսյան, Ռուսլան Իսրայելյան և ուրիշներ<sup>6</sup>:



Մի անգամ Արկադի Մանուչարովի հետ միասին Ստեփանակերտից Երևան էին գալիս Համլետի ավտոմեքենայով: Ամբողջ ճանապարհին խոսում էին: Արկադին հետաքրքրական գործություններ հաղորդեց: Նա հուշերի գիրք է գրել և պատրաստվում էր հրատարակել: Բայց ինչպես հետո իմացա. գիրքը շարված էր և պետք է լույս տեսներ, վերջին պահին փոխեց միտքը և հետաձգեց տպագրությունը: Ափսոս: Ինչևէ: Զրույցի ժամանակ ընդհատեցի նրան ու հարցրի.

– Արկադի Մանվելի, Ծարժմանը Համլետի մասնակցության մասին ի՞նչ կասեք:

Նա բազմանշանակ ժպտաց ու ասաց.

– Համլետը մեր գնդացիին էր և ամեն պարագայում գործում էր անխափան ու անվրեպ: Իր վրա շատ հարվածներ էր վերցնում ու երբեք չէր նահանջում: Ես շատ էի հպարտանում, որ ունեմ Համլետի նման ազնիվ, անկաշառ, սկզբունքային, Արցախյան մեր պայքարին ֆանատիկորեն նվիրված ընկեր:

Եվ այսպես, Համլետ Գրիգորյանը, անսպով հայրենիքի և իր ժողովրդի կանչին, իրեն նետեց Ղարաբաղյան հերոսամարտի հորձանուտը, որը նրան պարզեց ուրախության ու դառնության զարմանալի պահեր: Ահա նրա կյանքի բազում դրվագների հյուսվածքներից մեկը:

... Համլետ Գրիգորյանը ծնվել է 1941 թվականի սեպտեմբերի 17-ին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Հերհեր գյուղում, ուսուցչի ընտանիքում: 1958-ին ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, իսկ 1960-ին՝ Ծուշիի մանկավարժական ուսումնարանը: Ապա որպես ուսուցիչ աշխատել է Հերհերի, Սյատորաշենի, Ծեխերի դպրոցներում: 1961-ին զորակոչվել է խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո ընդունվել է Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը և ավարտել այն 1969 թվականին: Ապա աշխատանքի է անցել Ստեփանակերտի թիվ 1, հետո թիվ 5 հանրակրթական դպրոցներում, ուր դասավանդել է մաթեմատիկա:

1981-ին ատենախոսություն է պաշտպանել և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նույն տարում աշխատանքի է տեղավորվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ամբիոնում: 1986-ին

ստացել է դոցենտի կոչում: Հընթացս այս ամենի, ասենք, որ Համլետ Գրիգորյանը տասնյակ գիտական աշխատությունների հեղինակ է:

Երբ գրի էի առնում կենսագրությունը, ինձ առավելապես հետաքրքրեցին այն դրդապատճառները, որոնք նրան նետեցին Արցախյան շարժման մեջ:

– Որքան խորանում էի դարաբաղյան մեր ցավերի մեջ, այնքան ատելությամբ էի լցվում խորհրդային կայսրապետության նկատմամբ: Խորհրդային իշխանությունների թողտվությամբ և լուր համաձայնությամբ Ադրբեջանի իշխանությունները բնիկ հայկական երկրամաս Արցախը դարձրել էին գաղութ, թուրք-ազերիները ջանում էին փոխել Արցախի ժողովրդագրական դիմագիծը: Այստեղ հայկականը ռոտահարվում էր տնով-տեղով, ազգով-արմատով: Մոր կողմից պապս՝ Խերխան գյուղացի Ասլան Սարգսյանը, որին համագյուղացիները Օղյան էին անվանում, 1918 թվականի Մսմնայի ճակատամարտի հերոսներից էր, որից հետո երկու ոտքից հաշմանդամ էր դարձել: Նա ընդամենը մի ջրաղաց ուներ և թեևնու մի քանի ծառ: Ասացին՝ կուլակ ես ու զրկեցին ունեցվածքից: 1941-ին ինչ-որ մեկը զրպարտեց, թե իբր նա Ստալինի մասին անվայելույս խոսքեր է ասել: Եվ անհիմն մեղադրանքով հաշմանդամ մարդուն նետեցին Ծուշիի բանտը, որտեղ էլ նա մահացավ: Ազերիները նույնիսկ չտվեցին նրա դիակը: Մայրս քանի՜ անգամ է ոտքով հասել Ծուշի, բայց ոչ մի անգամ թույլ չեն տվել, որ տեսնի իր հորը: Եվ ամեն անգամ վերադարձել է արտասուքն աչքերում:

Ղարաբաղում ո՞վ չի հիշում 1951-ի թալանը: Մեր տանը տեղաշոր չմնաց, բոլորը թափ տվին ու բուրդը տարան: Պապս՝ Քիրամանց Խաչին, հողվոր մարդ էր, չհասցրեց տեսնել պատերազմի վերջը: Տատս՝ Զատին, դեռ ապրում էր: Նա չանչ արեց այդ թալանչիների՝ ասելով. «Գնացեք պատերազմում մնացած Ահարոնիս բերեք»: Մեկը փորձեց ձեռք բարձրացնել տատիս վրա, որն ութսունն անց էր: Ես քարը վերցրի, կանգնեցի տատիկիս առաջ ու գոռացի: Թալանչիները բուրդը շալակած, հայհոյելով հեռացան: Ո՞նց մոռանամ:

Կամ ուրիշ օրինակ: Հայրս՝ Վաղարշակ Գրիգորյանը, ապրել է դժվարին կյանք: Ավարտել է Բաքվի բանֆակը և աշխատում էր մեր գյուղի դպրոցում, երբ սկսվեց պատերազմը: Զորակոչվեց պատերազմի հենց առաջին օրերին: Նրանց ամբողջ զորամասը շրջա-



պատման մեջ էր ընկել: Գերի էր ընկել ոչ իր կամքով: Նրան գերությունից ազատեցին ամերիկացիները և Մարսելից տեղափոխեցին Նեապոլ: Այդտեղից նավով բերեցին Օդեսա: Իսկ այստեղից բեռնատար գնացքներով հազարավոր գերիներ քշեցին Չիտայի մարզ, Բուգաչաչա ածխահանքերը: Մինչև հիսունական թվականների սկիզբը չգիտեիք նրա կենդանի լինելու մասին: Ծարաթական մեկ անգամ մորս կանչում էին ՊԱԿ-ի Մարտունու բաժանմունք հարցաքննության և ոչ մի բան չէին ասում հորս կենդանի լինելու մասին: Մայրս՝ Բնարիկը, անընդհատ նվաստացվել է նախ հոր, ապա ամուսնու պատճառով: Նա Արցախի լավագույն մանկավարժներից մեկն էր, բայց իր ամբողջ կյանքն անցկացրեց ընկճված:

Հայրս վերադարձավ 1953-ի հոկտեմբերին, մի ձեռքից հաշմանդան: Նա զորակոչվել էր իմ ծնվելուց 15 օր առաջ: Արդեն 13 տարեկան էի, իսկ քույրս՝ Ջուլիետան՝ 15: Մենք հայրական գուրգուրանք չէինք տեսել: Ասես չէինք հավատում, որ մեր հայրը կենդանի է ու վերադարձել է: Աշխատում էր կոլտնտեսությունում: Հաշմանդամ մարդու համար դժվար էր ֆիզիկական աշխատանք կատարել: Միայն 1955-ին մեր գյուղի դպրոցի տնօրեն Միքայել Բեգլարյանի ակտիվ միջամտությամբ այն ժամանակվա Մարտունու շրջժողկրթբարձվար Եսայի Եսայանը հորս վերականգնեց մանկավարժական աշխատանքի և մինչև 1985 թվականը, մինչև իր մահը, նա իրեն նվիրեց հայրենի գյուղի մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը<sup>7</sup>: Հաճախ ինքս ինձ հարցնում եմ, հայրս ինչի՞ համար բռնադատվեց և այդքան ժամանակ կրեց Սիբիրի տանջանքները, ինչո՞ւ նրա երեխաները պիտի մեծանային առանց հայրական հոգատարության:

Ահա այսպիսի դառնություններով է անցել մանկությունս: Ամեն կերպ օգնում էի մորս, ամառը աշխատում էի թթահավաքի, հասկահավաքի կամ խոտհավաքի բրիգադներում, անտառից շալակով փայտ ու ցախ էի բերում, մեկ-մեկ էլ, չմոռանամ ասել, մայրիկիս կամ տատիկիս թաքցրած ընկույզը գտնում ու ծածուկ ուտում էի:

Տասն աննման կին էր, իսկական նահապետական արցախուհի: Նա ինձ շատ էր սիրում, ես էլ նրան: Ափսոս, հորս վերադառնալուց հետո նա քիչ ապրեց:

Այսպես, ես կորցրել էի իշխանությունների և խորհրդային կարգերի նկատմամբ հավատս: Ախր բոլորիս աչքերի առաջ Ղարաբաղը,

նրա մշակույթը, նրա անցյալն ու ներկան, նրա ժողովուրդը խորտակվում էին:

Այստեղ մի պահ լուռն է, գրպանից հանում ծոցատետերը, դանդաղ թեքթում, ապա խոսում մի տեսակ ջղագրգիռ.

– Բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ Լեոնային Ղարաբաղը գտնվում էր գաղութային վիճակում: Հիմա բերեմ մի քանի թվեր, որոնց մասին դուք ավելի լավ գիտեք: Տեսեք, 1981-1985 թվականներին մարզը բնակչության 1000 շնչի հաշվով կատարված կապիտալ ներդրումներով ավելի քան 2, իսկ 1986 թվականին՝ 2.7 անգամ գիջում էր հանրապետության միջին ցուցանիշին: Ավելի պարզ, եթե 1970 թվականին կապիտալ ներդրումները մեկ մարդու հաշվով հանրապետությունում կազմել են 243, Նախիջևանում՝ 267, ապա Լեոնային Ղարաբաղում այն կազմել է ընդամենը 153 ուրլի: Այդ նույն ցուցանիշը 1986 թվականին համապատասխանաբար կազմել է 473, 334, 178 ուրլի: Մարզի ամենախոշոր՝ Ղարամետաքսի կոմբինատը չունի ներկված արտադրամաս, ներկելու համար հումքը առաքվում էր Թեքի մետաքսագծական միավորում, որտեղ քմահաճորեն մետաքսի որակը ցածր էր գնահատվում, որի պատճառով էլ կոմբինատը տարեկան կորցնում էր 60 միլիոն ուրլի:

Մարզը չունի երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան, խիստ քիչ են գյուղատնտեսական մեքենաները: Մարզի 218 բնակավայրերից միայն 25 է շատ, թե քիչ ջրով ապահովված: 77 կոլտնտեսություններից և պետական տնտեսություններից միայն հինգն էին գազով մատակարարված: Այդ այն դեպքում, երբ միայն 1981-1985 թվականներին տարեկան միջին հաշվով մարզում արտադրվել է 145,7 հազար տոննա խաղող, մինչև 11 հազար տոննա միս, շուրջ 55 հազար տոննա կաթ, որը զգալի չափով գերազանցել է 1000 շնչի հաշվով հանրապետության համապատասխան միջին ցուցանիշը: Մարզի 4,4 հազար քառակուսի կիլոմետրի վրա պահվում էր 100 հազար գլուխ խոշոր եղջերավոր մթերատու անասուն, ավելի քան 275 հազար գլուխ ոչխար և այծ, 95 հազար խոզ: Չափից դուրս դժվար էր հայթայթվում անասնակերը, վատ էին ոռոգման աշխատանքները, անմխիթար վիճակում էր գյուղատնտեսական տեխնիկան:

Նախանձելի չէր վիճակը նաև մարզի աշխատավորների բուժապասարկման, ժողովրդական կրթության, կուլտուր-լուսավորա-

կան աշխատանքների, գրականության և արվեստի բնագավառներում: Վաթսունական թվականներից մինչև 1988 թվականը մարզում փակվել է հայկական 46 դպրոց: Բժշկական սպասարկման տեսակետից մարզը գտնվում էր երկրի ամենավերջին տեղերից մեկում: 1970 թվականի համեմատությամբ մարզում 1988 թվականին դպրոցականների թիվը նվազել էր 13 հազարով: Ստեփանակերտ քաղաքի մանկապարտեզներում տեղերի քանակը 1575 էր, բայց կար 2735 երեխա: 1986 թվականին Լեոնային Ղարաբաղում բնակչության 10 հազար շնչին ընկնում էր 28.7, իսկ հանրապետությունում՝ 38.4 բժիշկ: Մտուր-մանկապարտեզների թեկուզ մի փոքր խումբ բացելու կամ մի բուժքույր աշխատանքի ընդունելու համար հնարավոր չէր առանց Բաքվի ղեկավարության հետ համաձայնեցնելու: Ստեփանակերտում մարդիկ բնակարան ստանալու համար սպասում էին 20 տարի: Պատկերացնո՞ւմ եք:

Ամենասարսափելին մարզի բնակչության տեղաշարժի հարցն էր: Տեսեք. 1959 թվականից մինչև 1979 թվականը մարզում հայ բնակչությունն ավելացել էր ընդամենը 13 հազար մարդով: 1979 թվականի մարդահամարով 1970-1979 թվականներին մարզում աղրբեջանական բնակչությունն ավելացել էր 37, իսկ հայ բնակչությունը՝ 1.7 տոկոսով:

Դժվար է գտնել որևէ բնագավառ, որը կախման մեջ չլիներ հանրապետական մարմիններից: Բոլոր օղակներում կուպտրեն խախտված էին ինքնավար մարզի իրավունքները: Բանը հասել էր նրան, որ Աղրբեջանի իշխանությունների կողմից կազմված ինքնավար մարզի կանոնադրության մեջ մինչև անգամ չի գրվել, թե որն է ինքնավար մարզի լեզուն: Մարզը չուներ հայերեն լեզվով հրատարակչություն, գրկված էր մայր Հայաստանից մայրենի լեզվով հեռուստահաղորդումներ դիտելու և հայերեն ռադիոհաղորդումներ լսելու հնարավորությունից: Աղրբեջանը միայն մի նպատակ ուներ՝ ունենալ Արցախ առանց հայ բնակչության: Եվ այդ ամենի դեպքում Աղրբեջանի թուրք պարագույնները փորձում էին Լեոնային Ղարաբաղը ներկայացնել որպես դրախտավայր: Մի՞թե կարող էինք այդ ամենը հանդուրժել և մի կողմ քաշվել: Համբերության բաժակն արդեն լցվել էր: Մահ կամ ազատություն, այլ ելք չկար: Սկզբում կրեմլից եկող ամենաանձնա խոստումը հուսադրում էր մեզ, ոգևորում, մենք էլ միամիտների նման

ամեն ինչի հավատում էինք: Բայց, հետո, սթափվեցինք այդ վարդագույն երազներից և ի վերջո համոզվեցինք, որ մեր ազատությունն ու փրկությունը պետք է կոփենք սեփական բռունցքներով:

\* \* \*

Օղբ լցված էր այնպիսի ճայթյուններով, որ փոթորիկի պայթյունը դառնում էր անխուսափելի: Իսկ մինչ այդ մարզի բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, ուսումնական հաստատություններում, մշակութային կենտրոններում տեղի էին ունենում ժողովներ, կուսակցական, կոմերիտական կազմակերպությունների նիստեր, գյուղական, ավանային, քաղաքային և շրջանային խորհուրդների նստաշրջաններ, որտեղ քննարկում էին ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը:

Այդ որոշումը պաշտպանեցին Ստեփանակերտի կուսակցության քաղկոմի, Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու և Հաղրուծի կուսակցական շրջկոմների բյուրոներն ու պլենումները, իսկ դա ոչ Աղրբեջանի և ոչ էլ Լեոնային Ղարաբաղի կուսակցական և պետական մարմինների ղեկավարների սրտովը չէր: Աղրբեջանի ՊԱԿ-ը և ներքին գործերի նախարարությունը հանձնարարություն ունեին ամեն կերպ կանխել Ծարժումը և չեզոքացնել ղեկավարներին: Կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովը փետրվարի 11-ին մարզկոմի ապարատի աշխատողներին հայտնում է, որ Աղրբեջանի կոմկուսի Կենտկոմից հաղորդում է ստացվել այն մասին, որ ԽՄԿԿ Կենտկոմը չի քննարկելու ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու հարցը, միաժամանակ ԽՄԿԿ Կենտկոմը չի ընդունելու մարզի՝ Մոսկվա մեկնած աշխատավորների ներկայացուցիչների պատվիրակությանը<sup>8</sup>:

1988 թ. փետրվարի 12-ին Ստեփանակերտում տեղի է ունենում կուսակցական-տնտեսական աշխատողների ակտիվի նիստ, որին մասնակցում էին մարզկոմի առաջին քարտուղար Բ. Ս. Կևորկովը, մեկ օր առաջ Ստեփանակերտ ժամանած Աղրբեջանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Ն. Կոնովալովը, բաժնի վարիչ Մ. Ասադովը, հանրապետության ՊԱԿ-ի նախագահի տեղակալ Ի. Լևրանովը, ԼՂԻՄ-ի ՊԱԿ-ի բաժնի նախկին պետ, արդեն Աղրբեջանի կոմկուսի Կենտկոմի ապարատ տեղափոխված Գ. Ի. Սեպտան և


այլ պաշտոնյաներ: Նրանք Լեոնային Ղարաբաղ էին եկել Ղարաբաղի և Հայաստանի միացման պահանջը դատապարտող որոշումներ պոկելու կուսակցական և պետական մարմիններից ու ամեն կերպ փակելու արցախահայության ինքնորոշման ճանապարհը, ինչպես դա տեղի է ունեցել 60-70-ական թվականներին: Սակայն այդ էմիսարները դահլիճից հեռացան հուսահատ:

Ծարժման ակտիվիստների կոչերով փետրվարի 12-ին և 13-ին հանրահավաքներ տեղի ունեցան մարզի բոլոր խոշոր բնակավայրերում և շրջկենտրոններում: Կուսակցական-տնտեսական ակտիվի շրջանային հավաքները միաձայն պաշտպանում էին երկրամասի հայության պահանջը՝ ԼՂԻՄ-ը վերամիավորել ՀԽՍՀ-ին: Ծտալ կարգով հաքվից Լեոնային Ղարաբաղի շրջաններ են ուղարկվում կուսակցական և պետական մարմինների պատասխանատու աշխատողներ, որպեսզի կանխեն միտինգներն ու ցույցերը: Սակայն արցախահայությունը վճռական էր և անզիջում:

1988-ի փետրվարի կեսերին Ստեփանակերտում սկիզբ են առնում անդադար հանրահավաքներ, որոնց մասնակցում էին նաև մարզի շրջաններից եկած հազարավոր մարդիկ: Տասնյակ, հարյուրավոր դիմումներ, նամակներ և հեռագրեր էին ուղարկվում Մոսկվա: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կազմի 28 հոգու ստորագրությամբ Գորբաչովին ուղարկված հեռագրում պահանջվում էր «Ղարաբաղի քաղաքական հարցը ճիշտ որոշելու համար ստեղծել կառավարական հանձնաժողով»:<sup>9</sup>

Հանրահավաքներին և նստացույցերին մասնակցողների համար գյուղերից բերվում էին սննդամթերք, տաք հագուստ, կրակ վառելու համար փայտ և այլն:

Փետրվարի 13-ին Ստեփանակերտ են ժամանում նոր էմիսարներ՝ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Թ. Խ. Օրուջևը, Ռ. Է. Մեհտիևը, ներքին գործերի նախարարի տեղակալ Ռամիզ Մամեդովը և ուրիշներ: Նրանք Լեոնային անվան հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր միտինգավորներին հայտնում են, որ Մոսկվան մտադիր չէ ազգային հարց քննարկել: Ծտալ կարգով Ստեփանակերտ է տեղափոխվում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ենթակա մի դիվիզիա՝ գեներալ Սաֆոնովի հրամա-



Համլետ Գրիգորյան





Համետ Գրիգորյանի ընտանիքը



1988թ. մայիսին Մոսկվա մեկնած պատվիրակները



Համետը բաժանում է «Սովետական Ղարաբաղ» քերթի  
1988թ. հունիսի 23-ի համարը





«Սովետական Հայաստան» թերթի աշխատակիցների հետ Ամարասում

նատարությամբ: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ասադովը լուր է տարածում, թե հարևան շրջաններից 100 հազար ադրբեջանցիներ պատրաստ են ներխուժել Լեռնային Ղարաբաղ և կազմակերպել նոր 1920 թվական: Ադրբեջանական շրջաններից Ստեփանակերտ և մարզի շրջկենտրոններ են բերվում միլիցիայի ջոկատներ, շուրջ 2 հազար հոգի: Այդ օրերին մարզի կուսակցական և պետական մարմինների որոշ ղեկավարներ հյու-հնազանդ ծառայում էին Ադրբեջանի դրածո Բ. Ս. Կևորկովին, գտնվում էին մոլորության մեջ և չէին համարձակվում անցնել ժողովրդի կողմը:

Ուսումնասիրությունները մեզ բերել են այն համոզման, որ 1988-ի փետրվարին ղարաբաղյան համաժողովրդական շարժումն ընթանում էր մի տեսակ տարերային ձևով, չկար մի կազմակերպություն, որն իր վրա վերցներ շարժման ղեկավարումը: Նախկին մանր-մունր խմբերը պարզապես «ճնշվել» էին ժողովրդական հզոր ալիքի տակ, որովհետև դրանք չէին կարողացել հասնել կազմակերպվածության այն աստիճանի, որ ի վիճակի լինեին իրենց «հնազանդեցնել» հրապարակում հավաքված հոծ բազմությանը: Հետևապես հրամայական էր դարձել Ծարժումը գլխավորելու համար որևէ կազմակերպություն ունենալը: Այդ մասին անընդհատ հիշեցնում էին նաև Երևանից, մանավանդ Իգոր Մուրադյանը, որն օրական մի քանի անգամ զանգահարում էր Ստեփանակերտ և խոսում Ծարժման ակտիվիստների հետ: Որպես ժամանակավոր կենտրոն ընտրվեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունը, որը գտնվում էր հրապարակի հարևանությամբ: Թերթի մշակույթի բաժնի վարիչ Գուրգեն Գարրիելյանի աշխատասենյակը, որն ուղիղ նայում էր հրապարակի կողմը, դարձել էր Ստեփանակերտի «Սնուլի»։ Հենց այդ օրերին էլ ծնվեց նախաձեռնող խումբը, որը դիմելով միտինգավորներին, առաջարկեց թեկնածուներ առաջադրել Ծարժումը ղեկավարելու համար: Նախաձեռնող խումբը ղեկավարում էր Արկադի Մանուչարովը, որին ակտիվ աջակցում էին Համլետ Գրիգորյանը, Ռուլես Աղաջանյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ռոբերտ Քոչարյանը, Մուրադ Պետրոսյանը և ուրիշներ: Նախաձեռնող խմբի առաջարկությամբ գիշերային հերթապահություններ սահմանվեցին ոչ միայն քաղաքում, այլև շրջկենտրոններում: Ստեփանակերտի ադրբեջանցիներն սկզբում մասնակցում էին ցույցերին: Հետո նրանք նահանջեցին և, կատարելով

դրսից ստացվող հրահանգները, փորձեցին խոչընդոտել և վիժեցնել ցույցերն ու հանրահավաքները:

Մայրաքաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների ներկայացուցիչներից և հրապարակում հավաքված միտինգավորներից կազմված մի պատվիրակություն Արկադի Մանուչարովի գլխավորությամբ ներկայանում է մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կերկովին և նրանից պահանջում ղեկավարել ժողովրդական պայքարը: Կերկովը հրաժարվում է և պատվիրակությունից պահանջում՝ միտինգավորներին հասկացնել վերադառնալու իրենց տներն ու գյուղերը: Բորիս Կերկովը այս վերջին ու վճռական պահին անգամ չկարողացավ կտրվել իր տերերից և մնաց նույն դրածոն: Ամենահարմար և ամենավճռական պահը չցանկացավ օգտագործել զոնն իր մեղքերին թողություն տալու համար:

– Ադրբեջանի ամբողջ քարոզչությունն ուղղված էր մեր դեմ, – պատմում է Համլետը: – Ռադիոն, հեռուստատեսությունը, լրագրերը հանգիստ չունեին, վիրավորում էին մեր ազգային արժանապատվությունը, հոխորտում, հակահայկական կոչեր հնչեցնում: Իսկ մենք անելու շատ բան ունեինք, հեռագրեր ու նամակներ էինք ուղարկում Մոսկվա, որի փչոցներին դեռ հավատում էինք: Արկադի Մանուչարովը և նրա շուրջը հավաքվածներս օր ու գիշեր աշխատում էինք: Ժողովուրդը պահանջում էր հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան ու քննարկել Լեոնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Փետրվարի 15-ից հետո նախաձեռնող խմբի գլխավոր խնդիրը մարզխորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու հարցն էր: Դրան էլ ուղղվեց մեր հիմնական գործունեությունը:

Փետրվարի 19-20-ը անց են կացվում ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների շրջանային նստաշրջաններ, որտեղ ընդունվում են որոշումներ Լեոնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու օգտին:

Փետրվարի 18-ին Ստեփանակերտի քաղխորհրդի նիստերի դահլիճում հավաքված 52 պատգամավորները որոշում են պահանջել քաղխորհրդի գործկոմից հրավիրել քաղխորհրդի արտահերթ նստաշրջան: Այն հրավիրվում է փետրվարի 20-ի առավոտյան: Ստեփանակերտի քաղխորհրդի 20-րդ գումարման 4-րդ արտահերթ նստաշրջանը, որին 110 պատգամավորներից մասնակցեցին 98-ը, 90 ձայնով որոշում է «Խնդրել ԼՂԻՄ-ի մարզխորհրդի գործկոմին նստաշրջանում քննարկել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից հանելու և Հայաստանին միավորելու հարցը»<sup>10</sup>:

Մարզխորհրդի գործկոմի նախագահ Վ. Օսիպովին փետրվարի 19-ի երեկոյան տեղեկացվում է, որ մարզխորհրդի 67 պատգամավոր պահանջում են փետրվարի 20-ին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Օսիպովը կտրուկ մերժում է արտահերթ նստաշրջան հրավիրելու պատգամավորների պահանջը: Մինչդեռ հրապարակում հավաքված շուրջ 60 հազարի հասնող միտինգավորները պահանջում էին նստաշրջան: Ստեփանակերտ էին ժամանել Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Մ. Բադիրովը և ԽՄԿԿ Կենտկոմի պրոպագանդայի բաժնի հրահանգիչ Վ. Մ. Յաշինը: Փակվում են Ստեփանակերտ բերող բոլոր ճանապարհները: Ադրբեջանի իշխանությունները փորձում էին թույլ չտալ, որ պատգամավորները շրջաններից հասնեն Ստեփանակերտ: Հաղործի, Մարտունու և Մարտակերտի շրջաններից պատգամավորները, նախաձեռնող խմբի որոշմամբ, Ստեփանակերտ պետք է գային լեռնային ճանապարհներով և կաժաններով, հիմնականում հետիոտն: Այդ աշխատանքի կազմակերպումն իրենց վրա են վերցնում Ռազմիկ Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Ռուբեն Աղաջանյանը, Վարդան Հակոբյանը, Յուրի Զհանգիրյանը և նրանք, ովքեր մշտական կապի մեջ էին շրջանների հետ:

Նախատեսված էր մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը սկսել փետրվարի 20-ին, ժամը 16-ին: Նախաձեռնող խմբի անդամները հանդիպում էին Ստեփանակերտ հասած պատգամավորների հետ, նրանց բացատրում խնդրի էությունը: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի կազմակերպման գործում կարևոր դեր է խաղում նաև մարզգործկոմի նախագահի տեղակալ Ծմավոն Պետրոսյանը:

Փետրվարի 20-ի երեկոյան հայտնի է դառնում, որ մարզխորհրդի 149 պատգամավորներից ներկայացել էին 110-ը: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանին մասնակցելուց հրաժարվեցին ադրբեջանցի պատգամավորները: Բայց եղած պատգամավորների թվաքանակն էլ հուշում էր, որ կարող էին նստաշրջանը սկսել:

Այդ օրերի իրադարձությունների վերաբերյալ Ծմավոն Պետ-

րույանը հետագայում պատմել է. «Փետրվարի երկրորդ կեսին ինձ մոտ եկան Վարդան Հակոբյանը, Արմո Ծատրյանը և Գուրգեն Գար-րիելյանը: Նրանք սեղանին դրեցին 67 պատգամավորների ստորագ-րությամբ առաջարկությունը՝ արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին: Ես նրանց բացատրեցի, որ արտահերթ նստաշրջան հրավի-րելու համար, ըստ կանոնակարգի, պետք է լինի խորհրդի գործկոմի որոշումը: Այդ մասին հայտնվում է Վ. Օսիպովին, սակայն նա հրա-ժարվում է:

15 տարվա ընթացքում առաջին անգամ Բ. Կևրկովը գալիս է մարզգործկոմի շենք: Նրա հետ էին Վ. Բոգոսովսկին և Վ. Օսիպովը: Առաջարկվում է հրավիրել գործկոմի նիստ: Նիստը բացում է Կևր-կովը և առաջարկում որոշում ընդունել հանրահավաքները արգելելու մասին ու արագ «մաքել» հրապարակը: Դա նշանակում էր իրա-վունք տալ ուժային մարմիններին՝ բռնություն կիրառել ցուցարար-ների դեմ: Առաջարկում է նաև հրաժարվել նստաշրջան հրավիրե-լուց: Սակայն գործկոմի անդամների ճնշող մեծամասնությունը չի ըն-դունում նրա առաջարկությունը: Ինը հոգի դեմ են քվեարկում: Որո-շում են նստաշրջան հրավիրել նույն օրը, փետրվարի 20-ին:

Լսում ենք, որ Քոասնի և Օռշ գյուղերի ճանապարհները աղբե-ջանցի ոստիկանները փակել են: Մի շարք պատգամավորներ Ստե-փանակեթտ են հասնում լեռնային ճանապարհով, հետիոտն: Գալիս է 111 պատգամավոր: Բաղիրովը որոշում է դիմել խորամանկության՝ իր մոտ կանչել շրջկոմների քարտուղարներին և պահել նրանց: Այդ փորձը հաջողություն չի ունենում: Դրանից հետո գալիս է գործկոմ և թուրքավարի ելույթ ունենում: Դա էլ չի անցնում...<sup>11</sup>»:

– Ստեփանակեթտն այդքան անհանգիստ չէի տեսել, – պատմում է Համլետը:– Այդ օրը մարզի բնակչության գրեթե կեսը գտնվում էր Ստեփանակեթտում: Անվերջ պահանջում էին՝ նստաշրջան: Նախա-ձեռնող խումբը անում էր ամեն ինչ, որպեսզի նստաշրջանը չհե-տաձգվի: Հրապարակ մտած ամեն մի պատգամավորի դիմավորում և ուղեկցում էին մարզխորհրդի դահլիճ: Երևի բոլորից անհանգիստը նախաձեռնող խմբի ղեկավար Արկադի Մանուչարովն էր: Անընդ-հատ հանձնարարություններ էր տալիս խմբի անդամներին, հեռա-խոսով կապվում Երևանի հետ, հաղորդում ժամանած պատգամա-վորների թիվը, վազում մարզխորհուրդ: Ստեփանակեթտի կենտրո-

նում կանգնելու տեղ չկար, չէր դադարում շրջաններից եկող մարդ-կանց հոսքը: Քաղաքը լցվել էր նաև թուրք ոստիկաններով:

1988-ի փետրվարի 20-ին տեղի ունեցած ժողովրդական պատգա-մավորների ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման արտահերթ նս-տաշրջանի նախագահ Վիգեն Հայրապետյանը իրադարձություննե-րից 3 տարի անց հիշել է. «Լեմիճի անվան հրապարակը մարդկան-ցով լեփեցուն էր: Նրս-տա-շքր-ջա՛ն, – վանկարկում էր ամբոխը: Ստեփանակեթտ հասած պատգամավորներին մարդիկ ընդունում էին որպես հերոսների: Մարդկային ծովը նրանց համար ճանապարհ էր բացում դեպի մարզխորհրդի շենքը: Ամեն անգամ, երբ պատգա-մավորների թիվն ավելանում էր թեկուզ մեկով, հավաքվածներն ան-սահման ուրախանում էին: Ծանապարհները փակ էին, իշխանու-թյուններն ամենուրեք պատգամավոր էին «որսում»: Բայց նրանք, այ-նուամենայնիվ, եկան՝ շրջանցելով պահակակետերը, անտառներով ու լեռներով: Ինչ-որ մեկի խելքը կտրեց նրանց կերակրել: Ոտքի վրա նրանք մի կտոր հաց էին ուտում ու ներս մտնում...»

Կևրկովը երեք անգամ զանգահարում և իր մոտ է կանչում կո-մունիստ պատգամավորներին, սակայն ոչ մեկը չի գնում: Իր շքախմ-բով մարզխորհրդի նիստերի դահլիճ եկավ Բաղիրովը: Նա «խոնարհ ու բարի» խոստումներ է տալիս, կոկորդիլոյան արցունքներ թա-փում: Հետո ելույթ է ունենում Մոսկվայի ներկայացուցիչ Կոնդ-րատևը... Եվ ահա ամբիոնին է մոտենում բանաստեղծ Վարդան Հա-կոբյանն ու ասում. «Դուք խանգարում եք մեզ: Մենք հիմա սկսում ենք նստաշրջանի աշխատանքը: Կարող եք նստել, կարող եք և գնալ՝ ինքներդ որոշեք...»: Նստաշրջանն սկսելու պահին երկու անգամ մարդ են ուղարկում մարզխորհրդի գործկոմի նախագահ Վ. Օսիպո-վի մոտ, պահանջում, որ նա ներկայանա: Օսիպովը դարձյալ հրա-ժարվում է: Այնուամենայնիվ, ընդունվում է հայտնի որոշումը և մի գիշերվա ընթացքում ավարտվում է փաստաթղթերի մշակումը»:<sup>12</sup>

Ցուցարարները, որոնց թիվը հասել էր 70 հազարի, շրջապատել էին մարզխորհրդի շենքը և անհամբեր սպասում էին նստաշրջանի ո-րոշմանը: Նստաշրջանի ընթացքի մասին յուրաքանչյուր հինգ րո-պեն մեկ տեղեկություններ էին հաղորդվում ցուցարարներին: Ելույթ են ունենում 44 պատգամավոր: Բոլորն էլ պնդում են՝ մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից և վերամիավորել Հայաստանին: 1988-ի



փետրվարի 20-ին, ժամը 22-ն անց կեսին, ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը ընդունում է պատմական որոշում. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խորն ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ անցնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ անցնելու հարցի դրական լուծմանը»:<sup>13</sup>

Մարզխորհրդի նախագահ Վ. Օսիպովը վերացրել էր մարզգործկոմի կնիքը և անհետացել: Ուստի բավարարվում են ընդունված որոշումը վավերացնել մարզխորհրդի գործկոմի շտամպով և մարզխորհրդի գործկոմի նախագահության անդամների ստորագրություններով:

Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի նյութերը և ընդունված որոշումը հրատարակվեցին փետրվարի 21-ին «Սորհրդային Ղարաբաղ» և «Սովետսկի Կարաբախ» թերթերում, չնայած մարզկոմի քարտուղար Բ. Կևորկովը և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Բադիրովը խմբագիր Եղիշե Սարգսյանից խստորեն պահանջել էին արտահերթ նստաշրջանի նյութերը չհրատարակել: Հազարավոր ցուցարարներ շրջապատել էին տպարանը և սպասում էին թերթի լույս ընծայմանը: Այդ գործողության ղեկավարումը հանձնարարված էր նախաձեռնող խմբի անդամ Համլետ Գրիգորյանին: Նա տպարանում մնաց այնքան ժամանակ, մինչև թերթերը լույս տեսան մի քանի հազար տպաքանակով: Փետրվարի 21-ի օրվա վերջին թերթերը հասցվեցին Երևան, Թատերական հրատարակ, որտեղ հարյուր հազարանոց միտինգավորներին Իգոր Մուրադյանը պատմում էր մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի մասին, որի մանրամասներին տեղեկացել էր հեռախոսով:

Արցախը ցնծության մեջ էր: Պատգամավորները, որոնք մասնակցել էին մարզխորհրդի արտահերթ նստաշրջանին, միանում են միտինգավորներին: Գիշերվա ժամը երեքն էր, սակայն ելույթները շարունակվում էին Լեռնի անվան հրատարակում: Ողջունում էին պատգամավորներին, գնահատում նրանց աննախադեպ գործունեու-

թյունը և հարգանքի տուրք մատուցում նրանց:

Հիմա լսենք Համլետին.

– Այդ օրերին մեզ համար ամենից կարևորը պահն էր և ընդունված որոշումը: Ամբողջ Ղարաբաղում համաժողովրդական տոն էր. շնորհավորում էինք իրար և զրկախառնվում. տարբեր ուղղություններով հեռագրեր և նամակներ ուղարկում, պատմում և կիսում մեր ուրախությունը: Ըմբուտ արցախցիներս միամտորեն հավատում էինք, թե մարզխորհրդի որոշումով կլուծվի Ղարաբաղյան հիմնահարցը և Մեծ Հայքի 10-րդ նահանգ Արցախը վերջապես կմիավորվի Մայր Հայաստանի հետ, որ, ի վերջո, կազատվենք թուրքական գաղութարարությունից: Դեռ չէինք տեսնում մեր առջև կանգնած դժվարանցանելի խութերը: Իրոք, մարզխորհրդի որոշումը խառնեց Բաքու-Մոսկվա խաղաքարտերը: Ղարաբաղի հիմնախնդիրը դեմ առավ Գորբաչովյան վերակառուցման ճանապարհին ընկած ժայռաբեկորներին:

Դրա ամենաբնորոշ արտահայտությունը ԽՄԿԿ Կենտկոմի 1988-ի փետրվարի 21-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի դեպքերի մասին» որոշումն էր, որը ԼՂԻՄ-ի մարզխորհրդի որոշումը բնութագրեց որպես մի խումբ «անջատականների» գործողության արդյունք: Հապճեպ կայացած այդ որոշման մեջ եզրակացվում էր, թե իբր ԼՂԻՄ-ի՝ Ադրբեջանական ԽՍՀ-ից անջատումը հակասում է հայ և ադրբեջանցի ժողովուրդների շահերին ու ցանկություններին: Այդ նույն օրը Բադիրովն անց է կացնում կուսակցության մարզկոմի բյուրոյի նիստ: Փետրվարի 22-ին Ադրբեջանի էմիսարներին օգնության են հասնում ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ռազումովսկին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Պ. Դեմիչևը: Անց է կացվում կուսակցական ակտիվի ժողով, որին չեն մասնակցում Ասկերանի և Մարտակերտի շրջանների ներկայացուցիչները: Գ. Ռազումովսկին ակտիվին ծանոթացնում է «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» ԽՄԿԿ Կենտկոմի փետրվարի 21-ի որոշման հետ: Մոսկվան և Բաքուն ընկել էին ծիծաղելի վիճակի մեջ: Փոխանակ բավարարելու արցախահայության պահանջը, մուրովել և ընկել էին հեքիաթների աշխարհ: Նրանք չէին ցանկանում տեսնել, որ արցախահայը իր լեռների պես ամուր է ու տոկուն, համառ է ու անճահանց: Իսկ երբ այդ զգացին, արդեն նրանց համար շատ ուշ էր...

Ստեփանակերտում լուրեր էին ստացվում, թե աղբբեջանցիները հարձակումներ են գործում Ղարաբաղ եկող, մանավանդ հայաստանյան համարանիշ ունեցող ավտոմեքենաների վրա, ծեծում և դանակահարում են հայ ուղևորներին: Փոխանակ այդ երևույթը լրջորեն քննարկելու և այն կանխելու համար համապատասխան որոշում ընդունելու, մարզկոմի բյուրոն փետրվարի 21-ին որոշում է ընդունում բյուրոյի անդամներին ուղարկել մարզի շրջանները, տեղերում հրավիրել շրջկոմների պլենումներ և որոշումներ ընդունել ԽՍՀՄ Կենտկոմի փետրվարի 21-ի որոշմանը հավանություն տալու և մարզը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջը մերժելու վերաբերյալ: Կրկնվում էր 1975 թվականի սցենարը:

Ստեփանակերտում և շրջկենտրոններում շարունակվում էին բազմամարդ միտինգները: Փետրվարի 22-ին նոր էր ավարտվել Ստեփանակերտի շրջանային ակտիվի միստը, որին ներկա էին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Հասան Հասանովը և Թելման Օրուշևը, երբ լուր ստացվեց, թե մի խումբ ծայրահեղական և ազգայնամոլ աղբբեջանցիների գլխավորությամբ Ադղամից 8-10 հազար մարդ հարձակվել են Ասկերանի շրջանի վրա: Ամբոխը, շարժվելով Ադղամ-Ստեփանակերտ երկաթգծով և ավտոճանապարհով, ներխուժում է մարզի տարածք, ավերում նավթի բազան, քանդում Նելսոն Ստեփանյանի անվան կոլտնտեսության ջրաղացը, ավտոտեսչության պահակակետը և կատարում այլ վայրագություններ: Ասկերան ավանի և մոտակա հայկական գյուղերի բնակիչները կուշրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանի գլխավորությամբ փակում են կատաղած ջարդարարների ճամապարհը: Հայերին օգնում են տեղական ռազմական կապազորի զորամասերը, որոնք բանակի գեներալ Ջալցկի հրամանով մեկնել էին դեպքի վայրը: Այդ նույն երեկոյան լրատվական միջոցները հաղորդում են ԽՍՀՄ Գերագույն դատախազի տեղակալ Կատուսկի սադրիչ ելույթը: Նա հայտնում է, որ բախման ժամանակ սպանվել է 2 աղբբեջանցի: Դա ավելի է բորբոքում մարդկանց և սրում իրադրությունը: Խորհրդային երկրի լկտի լրատվական միջոցները սկսում են տարածել սադրանքներ, թե Լեոնային Ղարաբաղում ծանր վիճակ ստեղծողները իբր մի քանի անջատողականներ են, որոնք իրենց շուրջը հավաքելով հանցագործ տարրերի, պահանջում են ԼՂԻՄ-ը անջատել Աղբբեջանից

և միացնել Հայաստանին, որ նրանք անտեսում են ԽՍՀՄ Կենտկոմի փետրվարի 21-ի որոշումը և, նույնիսկ, սանձազերծել են ազգամիջյան ընդհարում հարևան աղբբեջանցիների հետ, ինչը պատճառ է դարձել զոհերի ու ավերածությունների: Ի պատասխան հակահայկական այդ քարոզչության, Ստեփանակերտի Լեոնի անվան հրապարակում հավաքված ավելի քան վաթսույն հազարանոց հանրահավաքը որոշում է մարզում հայտարարել համընդհանուր գործադուլ:

Հանրահավաքի մասնակիցները որոշում են շարժվել դեպի Ասկերան և դաս տալ շրջան ներխուժած աղդամցի թուրքերին, սակայն նախաձեռնող խումբը կանխում է այդ քայլը, որա մեջ տեսնելով ազգամիջյան մեծ բախում՝ դրանից բխող լուրջ հետևանքներով: Արկադի Մանուչարովը, Համլետ Գրիգորյանը, Գրիշա Աֆանեսյանը և ամբիոնից մյուս ելույթ ունեցողները հանրահավաքի մասնակիցներին կոչ են անում լինել զուսպ և առանց նախաձեռնող խմբի համաձայնության ոչ մի քայլ չձեռնարկել: Նույնիսկ առաջարկվում է դադարեցնել պարապմունքները ուսումնական բոլոր հաստատություններում: Նախադեպը չունեցող և անակնկալի եկած նախաձեռնող խմբի համար դյուրին չէր ճիշտ եզրահանգումներ և հետևություններ անել, իսկ ինչ մնում էր ընդհանուր գործադուլին, նախաձեռնող խումբը դեմ չէր, մանավանդ, որ այդ քայլին դիմել էին նաև Երևանում: Խորհրդային իրականության մեջ համընդհանուր գործադուլի եզակի երևույթը յուրատեսակ դպրոց էր, որի քուրայով անցավ Արցախի և Հայաստանի բնակչությունը: Տնտեսական խոշոր վնասներ պատճառելուց բացի, համընդհանուր գործադուլի մասնակիցները կոփվում, ավելի առնական ու վճռական էին դառնում: Միայն հաղթանակ, միայն Հայաստան, սա էր յուրաքանչյուր արցախահայի տենչանքը և շուրթերի խոսքը:

Արցախահայության պահանջով փետրվարի 23-ին տեղի է ունենում ԼՂԻՄ մարզկոմի պլենում: Այդ մասին նույն օրվա ժամը 17-ին միտինգավորներին հաղորդում է մարզկոմի կուսակցական հանձնաժողովի նախագահ Վահան Հարությունյանը: Այդ օրը, փետրվարի 23-ին, որոշ հաղորդումների համաձայն Ստեփանակերտի հանրահավաքի մասնակիցների թիվը հասնում էր 100 հազարի: Ը՛իշտ է, անհավատալի է, բայց այդպես են վկայում մասնակիցները: Մարզ-

կոմի պլենումը պաշտոնից ազատում է Բ. Ս. Կերկոպիան և նրա տեղը մարզկոմի առաջին քարտուղար ընտրում Հենրիխ Պողոսյանին: Պլենումի որոշման մասին միտինգավորներից տեղյակ է պահում Վաչագան Գրիգորյանը: Նախաձեռնող խմբի անունից արցախահայության հաղթանակը շնորհավորում է Համլետ Գրիգորյանը: Այնուհետև ոգևորիչ ճառ է արտասանում Արկադի Մանուչարովը: Հետո ամբիոն է բարձրանում մարզկոմի նոր քարտուղար Հենրիխ Պողոսյանը: Նա արցախահայությանը կոչ է անում անցնել աշխատանքի: Ժողովրդին դիմում են նաև Դեմիչևն ու Ռազումովսկին:

Այնուամենայնիվ, ժողովուրդը չէր հավատում էմիսարների խոստումներին և չէր համաձայնվում ընդհատել գործադուլը: Նախաձեռնող խմբի անդամները լինում են բոլոր ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում, կոչ անում չնահանջել, քանի դեռ արցախահայության հիմնական խնդիրը մնում էր չլուծված: Հրապարակում թևածում է այն լուրը, թե Հայաստանում հայտարարված է համընդհանուր գործադուլ՝ ի պաշտպանություն արցախահայերի ինքնորոշման իրավունքի: Դա ավելի է ոգևորում մարզի բնակչությանը: Ի պատասխան այդ ամենի, թուրքերը փակում են Միքաշիրի, Աղդամի, Աղջաբաղու, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Լաչինի, Քելբաջարի կողմերից Լեռնային Ղարաբաղ մտնող ճանապարհները: Ահա այսպես է սկսվում ԼՂԻՄ-ի շրջափակումը: Ադրբեջանի ներքին գործերի նախարարության ղեկավարները սկսում են հայերից հավաքել որսորդական հրացանները: Այդ օրերին նախաձեռնող խմբի կարևոր խնդիրներից էր գեների կուտակումը և պահպանումը: Իգոր Մուրադյանը գրում է, որ 1988-ի փետրվարին Ղարաբաղում կազմակերպված թշիջների տրամադրության տակ կար երկու տասնյակից ոչ ավելի ինքնաձիգ զենք, մինչև 100 կարաբին ու «Մոսին» հրացան: մի զույգ ձեռքի զնդացիր և 3 տասնյակ ատրճանակ: Իգորը նաև վկայում է, որ 1988-ի փետրվարից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում արցախահայերի ու հայաստանյան կազմակերպությունների ձեռքին կար հազար միավոր մարտական զենք<sup>14</sup>:

1988-ի փետրվարի 27-29-ին Ադրբեջանի իշխանությունները կազմակերպեցին Սումգայիթի հայության ցեղասպանությունը: Սումգայիթին հաջորդեցին Կիրովաբադի, Մինգեչաուրի, Օուշիի, Աղդամի, Շամխորի, սպա Բաքվի և մյուս հայաշատ բնակավայրերի հայ

բնակչության ջարդերը, որոնց հետևանքով զոհվեցին մեծ թվով հայեր: Սկսվեց Ադրբեջանում ապրող 500 հազար հայերի և Հայաստանում ապրող 160 հազար ադրբեջանցիների տեղահանությունը:

Արխիվային փաստաթղթերից և հրապարակված նյութերից տեղեկանում ենք, թե Սումգայիթում ապրող 18 հազար հայերը ինչպիսի բարբարոսությունների են ենթարկվել թուրք «եղբայրների» կողմից: Այդ օրերին հայկոմկուսի Կենտկոմում ստացված մի ընդարձակ տեղեկանքում նշվում է, որ Սումգայիթում սպանվել են ոչ թե 26 հայ, ինչպես կեղծված է պաշտոնական փաստաթղթերում, այլ ավելի քան 400, իսկ տուժել և խեղդվել են մոտ 1000 հոգի, որոնց շարքերում մեծ թվով կանայք, ծերունիներ և երեխաներ: Ջարդերի միայն երրորդ օրը Սումգայիթ մտցվեցին ռազմական զորամասեր: Ականատեսների վկայությունները սահմոկեցուցիչ էին. խելագար ամբոխը 16-ամյա հայ աղջնակին դեմ է անում պատիճ ու դամակահարում, մի տարեց ադրբեջանցի, բերանը մոտեցնելով վերքին, խմում է հոսող արյունը... Վայրագ խուժանը ներս է խուժում խողովակազլանման գործարանի արտադրության առաջավոր բանվոր Արտո Արամյանի բնակարանը, կացնահարում նրան, կտոր-կտոր անում և բակում խորովում կրակի վրա: Խելակորույս մայրը որդուն ճանաչում է միայն ոտքերից:

Սումգայիթում ադրբեջանցի արմատները գերազանցել են բոլոր տեսակի վայրագությունները, իսկ դա անամոթաբար թաքցնում էին կենտրոնական իշխանությունները և խելաթյուրում իրողությունը:

— Սումգայիթում տեղի ունեցած այդ գազանությունների մասին Ղարաբաղում իմացանք երկու-երեք օր ուշացումով, — պատմում է Համլետը: — Ժողովուրդը ցասման մեջ էր: Ցավով էինք դիմավորում Արցախ եկող սումգայիթցիներին: Ստեփանակերտի Լեմինի անվան հրապարակը ետում էր մարդկանց ըմբոստությունից: Իրար հետևից անբիոն բարձրացողները մերկացնում էին Սումգայիթի ցեղասպանությունը և երկրի ղեկավարներից պահանջում արժանի պատիժ կիրառել հանցագործների նկատմամբ:

1988-ի մարտի 6-8-ը ԼՂԻՄ-ում հայտարարվում է սգո օրեր՝ ի հիշատակ Սումգայիթի զոհերի: Այդ օրերին հուշաքար է դրվում Ստեփանակերտի հուշահամալիրում: Մարտի 8-ին հուշահամալիրում

տեղի է ունենում բազմահազարանոց սզո միտինգ: Ելույթ է ունենում նաև Համլետը: Հետո նա ինձ կասի.

– Չէիմք կարողանում հավատալ այդ հրեշավոր արարքին: Հուշահամալիրում ելույթ ունեցողներս չգիտեինք ինչ ասել ժողովրդին, որն արդեն երրորդ շաբաթն էր հրապարակից տուն չէր գնում: Ստեփանակերտ էին ներգաղթել մի քանի հազար սումգայիթցիներ: Հարցը լրջորեն քննարկեցինք և որոշեցինք ընդհատել գործադուլն ու անցնել աշխատանքի: Սակայն հեշտ չէր բնակչությանը համոզել: Նրանց ի՞նչ երաշխիք կարող էինք տալ...

### ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ԾԱՆԱՊԱՐՀԻՆ

1988 թվականի մարտ ամիսը պակաս փոթորկալի չէր: Հայ ժողովուրդը, Արցախում և Հայաստանում ընտրելով պայքարի ժողովրդական ձևը և հավատալով գորբաչովյան վերակառուցման ոգուն, ջանում է Ղարաբաղյան բարդույթը լուծել սահմանադրական եղանակով՝ նախ և առաջ հիմք ընդունելով ազգերի ինքնորոշման սկզբունքը: Ղարաբաղյան շարժման սկզբին ժողովրդական զանգվածները չունեին քաղաքական պայքարի փորձ: Այն կուտակվում էր աստիճանաբար: Ստեփանակերտում, Երևանում և այլուր չէին դադարում հանրահավաքներն ու ցույցերը: Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործկոմը մարտի 1-ին որոշում ընդունեց «Ստեփանակերտ քաղաքի փողոցներում, հրապարակներում և պուրակներում ժողովներ, միտինգներ, փողոցային երթեր, ցույցեր և այլ միջոցառումներ անցկացնելու ժամանակավոր կանոնների և կարգի մասին»<sup>15</sup>: Հենց այդ նույն օրը նախաձեռնող խմբի անդամները խելք խելքի տալով՝ որոշում են Երևանում ստեղծված «Ղարաբաղ» կոմիտեի օրինակով Ստեփանակերտում ևս ստեղծել համանման կոմիտե: Նախաձեռնող խմբի առաջարկությամբ մարտի մեկի լույս երկուսի գիշերվա ժամը 2-ին Համլետ Գրիգորյանը բարձրանում է ամբիոն և բարձրախոսով հայտարարում.

– Հայրենակիցներ, նախաձեռնող խումբը առաջարկում է ստեղծել մի մարմին, որը պետք է իր վրա վերցնի արցախահայության ազգային-ազատագրական պայքարի ղեկավարումը: Խնդրում ենք

փոքր կոլեկտիվներից մեկական, իսկ խոշոր կոլեկտիվներից մինչև երեքական հոգի ընտրել, ուղիղ մեկ ժամ հետո ընտրվածները պետք է հավաքվեն «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրության դահլիճում:

Եվ ահա 70 տարվա մեջ առաջին անգամ Ստեփանակերտի Լենինյան անվան հրապարակում քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների կոլեկտիվները, առանձին-առանձին հավաքվելով, անց են կացնում ժողովրդական ընտրություն: Ուղիղ մեկ ժամ անց կրկին ամբիոն է բարձրանում Համլետը, ապա՝ Ժաննա Գալստյանը և ընտրված 66 ներկայացուցիչներից հրավիրում դահլիճ: Նիստը երկար չի տևում: Ընտրվում է 11 հոգուց բաղկացած խորհուրդ: Քանդակագործ Արմեն Հակոբյանի առաջարկությամբ ստեղծված խորհրդին տրվում է «Կոունկ» անունը, որը նշանակում է «Լեռնային Ղարաբաղի հեղափոխական կառավարման կոմիտե», («Комитет революционного управа Нагорного Карабаха»): «Կոունկ» խորհրդի անդամներ են ընտրվում՝ Արկադի Մանուչարով (նախագահ), Վարդան Հակոբյան (տեղակալ), Ռոյես Աղաջանյան, Ռոբերտ Բաղդասարյան, Համլետ Գրիգորյան, Արկադի Կարապետյան, Ռոբերտ Քոչարյան, Ռազմիկ Պետրոսյան, Համլետ Մոսիսյան, Մաքսիմ Միրզոյան և Ռուդիկ Աթաջան: Խորհուրդն անմիջապես ձեռնամուխ է լինում «Կոունկ» կանոնադրության մշակմանը: Մարտի 3-ին խորհրդի ընդլայնված նիստում հանգամանորեն քննարկվում է կանոնադրության նախագիծը և ընդունվում: Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմը մարտի 5-ին որոշում է ընդունում (արձանագրություն նո. 6, որոշում՝ 3/65) գրանցել «Կոունկ» միությունը և հաստատել նրա կանոնադրությունը<sup>16</sup>: Թե՛ Երևանի «Ղարաբաղ» կոմիտեն և թե՛ «Կոունկը» ԼՂԻՄ-ի գլխավոր կարգավիճակից բացի, առաջ են քաշում «ի պաշտպանություն վերակառուցման, հրապարակայնության, դեմոկրատացման, ժողովուրդների բարեկամության» կարգախոսները<sup>17</sup>: Ստեփանակերտի քաղխորհուրդը թույլատրում է «Կոունկը» միջոցառումներ անցկացնի քաղաքային մշակույթի տանը: «Կոունկը» հասարակական կազմակերպություն էր, որը գործում էր ԽՍՀՄ Սահմանադրության 51-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Կանոնադրության համաձայն, ընկերությունն իր գործունեությունն իրականացնում էր հասարակա-

կան մյուս կազմակերպությունների հետ սերտ համագործակցության պայմաններում: «Իզվեստիա» թերթի թղթակիցներ Ս. Ռարդիկինը և Ռ. Լիցնովը այդ օրերին լինելով Լեռնային Ղարաբաղում՝ միտինգավորների հետ ունեցած գրույցի ժամանակ փորձում էին շոշափել նրանց տրամադրությունները: Բոլորի պատասխանների մեջ դիպուկ էր «Կոունկի» անդամ Համլետ Գրիգորյանի պատասխանը. «Եթե մեր պահանջը չկատարվի, ապա պարտիզանական պատերազմ կսկսվի»<sup>18</sup>: Մոսկովյան թղթակիցներն այսպիսի խոհերով են վերջացնում իրենց շարադրանքը. «Այսօր ամբողջ երկիրն այստեղ է մայրում, սպասում է և հույս ունի, որ հույզերը կհանդարտվեն, ու կհաղթի մեր բազմազգ ժողովրդի ամբողջ փորձն արտացոլող ողջամտությունը»<sup>19</sup>: Սին հույսեր:

Համլետ Գրիգորյանի «պարտիզանական պայքարի» կոչը լայն արձագանք գտավ երկրում: Նա տարբեր ծայրերից ստանում էր մամակներ, որոնց հեղինակները պաշտպանում էին արցախահայության արդարացի պահանջը: Բաշկիրիայի Սալավաթ քաղաքից Գարբուզովա Լիլյա Գերասիմովնան, կիսելով արցախահայերի ցավը, 1988 թ. ապրիլի 14-ին Համլետին գրած նամակում նշում է. «Կարելի է հասկանալ հայերին, որովհետև նրանք հին, հույակապ մշակույթ և քաղաքակրթություն ունեցող ժողովուրդ են, որոնք պայքարում են այդ ամենը պահպանելու համար»<sup>20</sup>: Միանգամայն իրավացի է նամակի հեղինակը:

«Կոունկը» բացահայտորեն քաղաքական նպատակներ չէր առաջադրում, մինչդեռ մոսկովյան վերոհիշյալ թղթակիցները հայտարարում են, թե «իրականում նրա պարագլուխները, հանդես գալով ժողովրդի անունից, փորձում են իրենց կամքը թելադրել մարզի կուսակցական, խորհրդային, տնտեսական մարմիններին, հավանաբար կարծելով, թե այնտեղ՝ հրապարակում, իրենց տվել են ամեն տեսակի գործողությունների «մանդատ»: Այո՛, «Կոունկի» անդամներն այդ մանդատը ստացել են այնտեղ, Լեռնի անվան հրապարակում, երբ մարտի 1-ի լույս 2-ի գիշերը անց է կացվել ժողովրդավարական ընտրություն, առանց որևէ փաստաթուղթ ձևակերպելու: Մի՞թե մոսկովյան լրագրողները չէին հասկանում, որ խորհրդային մուրճը քանի դեռ ուժեղ էր խփում, հնարավոր չէր «Կոունկի» կանոնադրության մեջ բացահայտորեն քաղաքական խնդիրներ առաջադրել:

Մարզում աշխատանքային ռիթմը վերականգնելու, կարգն ու կանոնը ամրապնդելու նպատակով մարզային իշխանությունների և կազմակերպությունների կողմից ձեռնարկվում էին մի շարք միջոցառումներ: Սակայն լրատվության միջոցները շարունակում էին մնալ կաղապարված և ժողովրդական պաշքարից կտրված: «Կոունկի» խորհրդի անդամ Համլետ Գրիգորյանը և մանկավարժական ինստիտուտի դասախոսներ Արզիկ Մխիթարյանն ու Լեռնա Գրիգորյանը «Ողջախոհության ձայնին ունկնդիր» վերտառությամբ բաց նամակով հանդես գալով «Խորհրդային Ղարաբաղ» թերթի մարտի 15-ի համարում՝ խիստ անհանգստություն են հայտնում այն առթիվ, որ «ինչ-ինչ պատճառներով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը հստակորեն ու ամբողջությամբ չարտացոլվեց մարզային թերթում» և որ «մարզում տեղի ունեցող մասսայական շարժումը» արժանի գնահատական չստացավ լրատվական միջոցների կողմից: Հեղինակները մարզի լրատվական միջոցներից արդարացիորեն պահանջում են «ժամանակին արձագանքել իրադարձություններին և միայն ճշմարտությունը տպագրել թերթի էջերում»: Իսկ վերջում՝ «Ուղղակի անտանելի են դարձել սուտը, ժողովրդի խոսքի անտեսումը մամուլի կողմից»: Այդ նամակը կարևոր դեր խաղաց մարզային լրատվական միջոցները ժողովրդական պայքարին մոտեցնելու գործում:

«Կոունկը» քարոզչական լայն աշխատանք էր տանում մարզի բնակչության շրջանում: Խորհրդի անդամները հերթով մեկնում էին շրջանները և բնակավայրերում, հիմնարկ-ձեռնարկություններում հանդիպումներ ունենում աշխատավորների հետ, ոգևորում նրանց պայքարը:

Մարզի տարածքում ժամանակավոր դադարում են գործադուներն ու համընդհանուր միտինգները: «Կոունկի» խորհրդի անդամները հանդիպում են ունենում մարզի ղեկավարների հետ և նրանցից պահանջում կանգնել ժողովրդական պայքարի գլուխ, հետևողականորեն պայքարել Լեռնային Ղարաբաղը Մայր Հայաստանի հետ վերամիավորելու վերաբերյալ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը իրականացնելու համար: «Կոունկը» նաև պահանջում էր անհնազանդություն դրսևորել և չենթարկվել Ադրբեջանի ղեկավարությանը:

1988 թ. փետրվարի 27-ին Ստեփանակերտ է ժամանում ԽՄԿԿ



Կենտրոնի բաժնի վարիչի տեղակալ Կ. Ն. Բրուտենցը կենտրոնական իշխանությունների պատասխանատու աշխատողների հետ, որոնք հանձնարարություն ունեին մոտիկից ծանոթանալ մարզի տնտեսական և քաղաքական վիճակին: Արկադի Մանուչարովը, Համլետ Գրիգորյանը և ուրիշներ հանդիպում են Մոսկվայից եկած գիտնականների հետ և նրանց միջոցով մի շարք փաստաթղթեր ու բողոքներ ուղարկում Մոսկվա: «Կոունկի» խորհուրդը պատրաստում է «Ղարաբաղի հերոսական ժողովուրդը» վերտառությամբ կոչ, որում նշված է, որ Հայաստանի հետ վերամիավորվելու համար արցախահայության սկսած պայքարը հասել է պատասխանատու պահի, և որ կենտրոնական իշխանությունները փորձում են մեր աչքերը փակել մարզի տնտեսական զարգացման պլանով: «Կոունկը» կոչ էր անում անգիջում պայքարում ցուցաբերել «համբերություն, խելամտություն և յուրաքանչյուր քայլի, յուրաքանչյուր բառի հավասարակշռություն, հոգեպես չընկճվել, մինչև վերջ կանգնել...»: «Կոունկը» հավատացած էր, որ միայն «ժողովրդի միասնությունն ու համախմբվածությունը մեզ կհասցնի հաղթանակի: Դեմոկրատիան, վերակառուցումը և հրապարակայնությունը քննություն են հանձնում Ղարաբաղում... Մեր գործն արդար է, մենք կհաղթենք»<sup>21</sup>:

1988 թ. մարտի 24-ին ԽՍՀՄ Կենտկոմը և ԽՍՀՄ նախարարների խորհուրդը ընդունեցին «Ադրբեջանական ԽՍՀ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշումը և անմիջապես հայտարարեցին, թե իբր դրանով իսկ բավարարում են մարզի աշխատավորների պահանջը: Արցախահայությունն այդ որոշումն ընդունեց արհամարհանքով: Ըստ էության, հատկացված այդ 400 միլիոն ռուբլին պետք է իրացվեր Ադրբեջանի իշխանությունների կողմից, որը երբեք էլ ձեռնառու չէր Լեոնային Ղարաբաղի համար:

– Այդ հարցը, – հետո բացատրեց Համլետը, – հանգամանորեն քննարկեցինք «Կոունկի» խորհրդում: Բոլոր արտահայտվողներն էլ ասում էին, որ Ադրբեջանն այդ գումարն օգտագործելու է արցախահայությանը դուրս մղելու և մարզի տարածքը թուրքացնելու համար: Պարզապես, Մոսկվան այդ 400 միլիոնը տրամադրել էր Արցախի հիմնահարցը ջնջելու համար: Ուրիշ հարց է, եթե այդ գումարը ուղղակի տրամադրվեր Լեոնային Ղարաբաղին: Ահա թե ինչու



Խորհրդային զինվորները եկել էին ձերբակալելու Արկադի Մանուչարովին



1990թ. մայիսին Պյատիգորսկի բանտի պատված մի խումբ արցախցիներ





Արցախի ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների մի խումբ



9 մայիսի, 1992: Ազատագրված Շուշիում



Համետը ԱՄՆ-ում ելույթ է ունենում



Գեր-Չոր, 24 ապրիլի, 2001





Հերերից գոհված ազատամարտիկների պատվին կառուցված հուշարձան-աղբյուրը

«Կոունկի» խորհուրդը մերժեց այդ պլանը:

Այդ օրերին ԼՂԻՄ մարզկոմի բյուրոն ու մարզխորհրդի գործկոմը Մոսկվայից և Բաքվից եկած իշխանավորներից պահանջեցին նախ լուծել Ղարաբաղի հիմնահարցը, նոր անդրադառնալ մարզի տնտեսական և սոցիալական խնդիրներին: Նրանց մասնակցությամբ մարզկոմի բյուրոն, քննարկելով վերոհիշյալ որոշումը, մերժեց:

– Ինչ որ մարզկոմում կատարվում էր, – մի առիթով ինձ ասաց «Կոունկի» խորհրդի նախագահ Արկադի Մանուչարովը, – մենք անմիջապես իմանում էինք: Բավական էր որևէ անհիշտ քայլ, և ամբողջ մարզում կլսվեր ճայթյունը: Մարզկոմում և մարզխորհրդում ինկատի էին ունենում «Կոունկի» կարծիքը: Խորհրդի անդամներս հաճախակի էին հանդիպում մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանի հետ և համատեղ քննարկում մեր պայքարին ու մարզի տնտեսական խնդիրներին առնչվող հարցեր: Հանդիպում էինք ունենում նաև Մոսկվայից ու Բաքվից եկած իշխանավորների հետ և նրանց ներկայացնում մեր պահանջները:

Մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի որոշումից հետո անցել էր երկու շաբաթ, սակայն կուսակցության մարզկոմը շարունակում էր լռել ու չէր ասել իր վճռական խոսքը: Փետրվարի վերջին և մարտի սկզբին մարզի կուսակցական սկզբնական կազմակերպություններում ստորագրություններ էին հավաքում պահանջելով հրավիրել մարզային կուսակցական կազմակերպությունների արտահերթ կոնֆերանս և քննարկել Ղարաբաղի հիմնահարցը: Մարզի 285 կուսակցական սկզբնական կազմակերպություններից հավաքվել էին 7260 ստորագրություններ<sup>22</sup>: Մարզի կոմունիստների և աշխատավորների պահանջով, մարտի 17-ին տեղի ունեցավ մարզկոմի պլենում, որը քննարկեց «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին ԽՍՀՄ-ի Կենտկոմի Գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի հղած դիմումից բխած՝ Լեռնային Ղարաբաղի մարզային կուսակցական խնդիրների մասին» և «ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցի վերաբերյալ ինքնավար մարզի աշխատավորների, կոմունիստների պահանջների մասին» հարցերը: Բննարկված երկու հարցերի վերաբերյալ ընդունվեցին որոշումներ: Երկրորդ հարցի վերաբերյալ ընդունված որոշումը ասում է. «Հաշվի առնելով

ինքնավար մարզի հայ բնակչությանն իղձերը, Լեռնային Ղարաբաղի կոմունիստների ճնշող մեծամասնության կամքը, խնդրել ԽՍՀՄ Կենտկոմի քաղաքային քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցը, դրանով իսկ ուղղելով 20-ական թվականների սկզբին Լեռնային Ղարաբաղի տարածքային պատկանելիությունը որոշելու ժամանակ թույլ տրված պատմական սխալը»<sup>23</sup>։ Այդ որոշումը ցնծությանը ընդունվեց մարզի հայ բնակչության կողմից։

Այդ օրը Լեռնային անվան հրապարակում դարձյալ հավաքվել էին մի քանի տասնյակ հազար մարդ՝ «Կոունկի» խորհրդի գլխավորությամբ։ Մարզկոմի պլենումի մասնակիցները գիշերվա ժամը 23-ին խառնվեցին ցուցարարների հետ։ Արկաղի Մանուչարովը ամբողջ հայ ժողովրդի անունից շնորհակալության խոսք ասաց թե՛ մարզկոմի պլենումի անդամներին և թե՛ միտինգավորներին։ Մարզկոմի պլենումի ընդունած որոշման մասին անմիջապես հաղորդվեց տարբեր հասցեներով։ Հենց հրապարակում կազմված հեռագրերի տեքստերը տղաները վազելով հասցնում էին քաղաքային փոստատուն։ Հեռագրումիները հեռագրերը հաղորդում էին հանույքով, ուրախության արցունքներն աչքերում։ Հեռագայում այդպես էր ինձ պատմում ծանոթ հեռագրումիներից մեկը։ Այդ գիշեր «Կոունկի» խորհրդի արտահերթ նիստը որոշեց խորհրդի անդամներին ուղարկել մարզի շրջանները՝ բնակչությանը տեղյակ պահելու մարզկոմի պլենումի որոշման մասին։ Խորհուրդը նաև դիմում է մարզի բնակչությանը տեղերում կազմակերպել միտինգներ, բայց ոչ մի րուպե չբացակայել աշխատանքից։ Մարզի աշխատավորները հավատացած էին, որ Լեռնային Ղարաբաղի մարզկոմի պլենումի որոշումը կանաչ լույս կբացի, և Մոսկվան ստիպված կլինի մահաճառել իր հակահայկական, հակաղարաբաղյան դիրքորոշումից։ Ռոմանտիկ այդ մտածողությունը դեռևս ամուր էր նստած արցախահայության ուղեղներում։ Բայց մինչև ե՞րբ։

– Այդպես է, – միտքս լրացնում է Համլետը, – արցախահայությունը միշտ էլ օրինապահ, բայց նաև հավատավոր ժողովուրդ է եղել։ Նա ավելի շատ կատուցել, ստեղծել և կովել է։ Դրա փայլուն օրինակն է այս փոքրիկ երկրամասում ավելի քան 1600 նարտարատակական հուշարձանների գոյությունը, որոնց շարքում կան համաշ-

խարհային արժեք ունեցողներ։ Եթե մենք ունենայինք մեր հարևանի խորամանկության, խաբեության և դաժանության թեկուզ մի չնչին մասը, երևի մեր նակատագիրն այլ կերպ կդասավորվեր։ Իմիջիայլոց, իմ այս դատողությունը կարելի է վերագրել ամբողջ հայությանը։ Ես մասնագիտությամբ մաթեմատիկոս եմ, բայց հայոց պատմության վերաբերյալ քիչ գրքեր չեմ կարդացել։ Եվ միշտ էլ այն տպավորությունն եմ ստացել, որ հայ ժողովուրդը շատ է հեռու դիվանագիտությունից։

«Պրավդայի» 1988-ի մարտի 21-ի համարում տպագրված «Էմոցիաներ և բանականություն» սադրիչ հոդվածը խիստ զայրույթ առաջ բերեց ողջ հայության շրջանում։ Այդ հոդվածը արցախահայությանը մղեց նոր գործադույի ու հանրահավաքների։ Այն վիրավորում էր հայ ժողովրդի ազգային զգացմունքները։ Մարզկոմի բյուրոն, քննարկելով հոդվածը, հիմնավորված և մերկացնող պատասխան ուղարկեց խմբագրություն։ Հոդվածի հեղինակ Օվչարենկոյին նամակ ուղարկեց նաև Համլետը՝ ըստ արժանվույն պատասխանելով նրա հոդվածին։ Մայիսի 8-ին Օվչարենկոն միևնույն ստանդարտով պատասխանում է, թե, իբր, ընթերցողները «մինչև վերջ ճիշտ չեն հասկացել հոդվածը», և որ պետք է խոսել ոչ թե «հայկական» կամ «ադրբեջանական» Խորհրդային Ղարաբաղի մասին, այլ խորհրդանիշների։ Եվ հենց դրանից բխած որոշել «տնտեսական, սոցիալական, կենցաղային և այլ հարցերի մասին»։ Հետո՝ իբր «հայերն ու ադրբեջանցիները մեղավոր չեն տեղի ունեցած իրադարձությունների համար, և որ դա նրանց գործն է, ովքեր փորձում են ազգային կոտորածներ առաջ բերելով բավարարել իրենց պատվախնդրության և եսասիրական շահերը»։ Մի փոքր անց, հունիսի 6-ին, խմբագիր Աֆանասևին և նույն Օվչարենկոյին ուղղված երկրորդ նամակում Համլետը շեշտում է, որ հենց Օվչարենկոն և Չեռնենկոն են խնդրի մտեցել ոչ օբյեկտիվ և իսկական «հրահրիչներն ու սադրիչները» հանդիսանում են նրանք<sup>24</sup>։

1988-ի մարտի 24-ին Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ ընդունում է «Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ների իրադարձությունների առթիվ միութենական հանրապետությունների դիմումներին առնչվող միջոցառումների մասին» որոշումը, որով հանձնարարվում է «տասնօրյա ժամկետում մշակել Լեռնային Ղա-



քարաղի Ինքնավար Մարզի տնտեսական և սոցիալ-մշակութային զարգացման հասունացած հարցերի լուծման նպատակին ուղղված համալիր միջոցառումներ... և ընդունել համապատասխան որոշում»։ Այդ որոշմամբ արգելվեց «Կոունկը»։ Այդ նույն օրը Երևանում նույնպես արգելվեց «Ղարաբաղ» կոմիտեն։ «Կոունկի» և «Ղարաբաղ» կոմիտեի արգելումը կատարվել է Մոսկվայի հանձնարարությամբ։ Այսպիսով, «Կոունկ» հասարակական կազմակերպությունը, որը գլխավորում էր արցախահայության ազգային-ազատագրական պայքարը և հանդիսանում էր նրա մարտական շտաբը, արգելվեց։ Սակայն Խորհրդի անդամները մնացին իրենց դիրքերում և որոշեցին չնահանջել ու աշխատանքները շարունակել ընդհատակում։

Ստեփանակերտում և շրջկենտրոններում շարունակվում էին ցույցերն ու միտինգները։ Սակայն այս անգամ, 1988-ի մարտի վերջից սկսած, Հաղթանակի հրապարակում, որը գտնվում էր արևելյան կողմից քաղաքի հիմնական մուտքի մոտ։ Պատճառն այն էր, որ Լենինի անվան հրապարակը շրջափակվել էր ոստիկանական ուժերի կողմից։ Արկադի Մանուչարովի և Համլետ Գրիգորյանի բնակարանները մոտ էին, մի բակի վրա։ Նրանք գրեթե ամեն գիշեր հանդիպում էին, մտքեր փոխանակում, գործունեության պլաններ մշակում։ «Կոունկի» խորհրդի անդամները, քաղաքի մտավորականները, ակտիվ բանվորները շարունակում էին ելույթներ ունենալ չդադարող հանրահավաքներում, ոգևորել ժողովրդին։ Ամեն օր, հանրահավաքից հետո կազմակերպվում էր միտինգավորների շքերթ։ Ժողովուրդը հրապարակից շարժվում էր դեպի քաղաքի կենտրոն՝ տանելով կարգախոսներ ու կոչեր, որոնցում վստահություն էր արտահայտվում կուսակցության, ժողովուրդների բարեկամության, ինտերնացիոնալիզմի նկատմամբ։ Մարտի վերջից սկսած, մարզի աշխատավորների պայքարի ղեկավարման գործում բավականին աշխատանք էր տանում դեռևս ութսունականների սկզբին ստեղծված Տնօրենների խորհուրդը։ Փողոցային շքերթների ժամանակ Տնօրենների խորհրդի անդամները գլխավորում էին իրենց տնօրենած ձեռնարկությունների կոլեկտիվներին։

\* \* \*

Երբ սկսել էի նյութեր հավաքել Ղարաբաղյան շարժման պատմությունը գրելու համար, ինձ շատ հետաքրքրեց Տնօրենների խորհրդի գործունեության հարցը։ Այդ նպատակով էլ 1998-ի օգոստոսի 8-ին հանդիպեցի Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի տնօրեն, 1989 թվականից Լեռնային Ղարաբաղի Տնօրենների խորհրդի նախագահ Էդնեստ Հայրապետյանի հետ, որը, ինչպես նշվել է, Ղարաբաղյան շարժման ակտիվիստներից էր։ Բանն այն է, որ «Կոունկը» արգելելուց հետո Տնօրենների խորհուրդը մի որոշ ժամանակ իր վրա էր վերցրել շարժման գլխավորումը։ Ինձ հետաքրքրում էր, թե դա ինչպես է տեղի ունեցել, նամանավանդ, որ վաղուց ստեղծված Տնօրենների խորհուրդը այդ վերջին տարիներին չէր գործում Բ. Կևորկովի մեղքով։ Նա արգելել էր խորհրդի գործունեությունը։

– Էդնեստ Եղիշեհի, – դիմում եմ նրան, – 1981 թվականից մինչև հիմա աշխատում եք որպես կահույքի ֆաբրիկայի տնօրեն։ Մինչև այստեղ գալը Ռաֆիկն ու Համլետը ինձ ասացին, որ այս դժվարին պայմաններում կարողանում եք ֆաբրիկան աշխատեցնել և 300 մարդու ապահովել աշխատանքով։ Դա շատ լավ է։ Ձեզ մոտ գալու իմ նպատակը հետևյալն է. 1988 թվականի մարտի 24-ին «Կոունկը» արգելվելուց հետո մարզում շարժման գլուխ է կանգնել Տնօրենների խորհուրդը։ Դա ինչպե՞ս է տեղի ունեցել։

– Այո՛, այդպես էր, – պատասխանեց, ապա արկղից հանեց մի թուղթ, քիչ անտղեց, դրեց մի կողմ ու շարունակեց։ – Արկադի Մանուչարովի առաջարկությամբ կենդանություն տրվեց Տնօրենների խորհրդին, որի մասին գրեթե մոռացել էինք։ Հավաքվում ենք և քննարկում մարզում ստեղծված ընդհանուր վիճակը։ «Կոունկը» գործում էր ընդհատակում, բայց մեզ հարկավոր էր չեզոք ղեկավարություն։ Իսկ դա կարող էր կատարել Տնօրենների խորհուրդը, որը ստեղծվել էր վաղուց, խորհրդային օրենքների հիման վրա։ Տնօրենների խորհրդի գործունեությունը վերսկսելու մասին տեղյակ պահեցինք մարզի ղեկավարությամբ։ Նրանք դեմ չէին և ինչ-որ տեղ պաշտպանեցին մեր նախաձեռնությունը։ Առաջին հավաքի ժամանակ Մանուչարովը առաջարկեց Տնօրենների խորհուրդն իր վրա վերցնի շարժման ղեկավարությունը։ Խորհրդի նոր նախագահ ընտրեցինք էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Բորիս Առուշանյանին, տեղակալներ՝

կաթի գործարանի տնօրեն Արմո Մատրյանին և ինձ: Չմոռանամ ասել, որ «Կոունկի» խորհրդի անդամները կարող էին մասնակցել Տճօրենների խորհրդի նիստերին և հանդես գալ ելույթներով ու առաջարկություններով: Ահա այսպես «Կոունկին» փոխարինեց Տճօրենների խորհուրդը, որի կազմում էին Ստեփանակերտ քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարները և մի շարք մտավորականներ: Այս վերջիններին անունները ցուցակի մեջ չէինք մտցնում, որպեսզի ոչինչ չկասկածեին...

1988 թվականի մարտի 28-ի երեկոյան տեղի է ունենում «Կոունկի» խորհրդի վերջին նիստը, որը, ինչպես հաղորդում էր «Իզվեստիան», լսում է ղեկավարության հաշվետվությունը իրենց գործունեության մասին: Նիստին ներկա թղթակից Պ. Գուտիոնտովը խորհրդի անդամներին առաջարկում է գրել իրենց կարծիքը մարզում ստեղծված ընդհանուր վիճակի վերաբերյալ, խոստանալով, որ նույնությամբ կտպագրվի թերթում: Հաջորդ օրը, պայմանավորված ժամին, միայն Համլետ Գրիգորյանն է գնում հյուրանոց և հաճձնում հետևյալ տեքստը. «Այս տողերը ես գրում եմ ոչ թե վիրավորվելուց, որն ինձ հասցրել է ձեր թերթը՝ ինձ անվանելով ծայրահեղական: Եվ, ընդհանրապես, շատ զգույշ գործածեք «ծայրահեղական», «ազգայնական» և «բախտախնդիր» արտահայտությունները:

Դիմում եմ իմ գործընկերներին, ծնողներին, ուսանողներին և սովորողներին: Բաց թողնված յուրաքանչյուր դասաժամ, անշուշտ, յուրաքանչյուր ընտանիքի բերում է բարոյական վնաս:

Այսօրվա դրությամբ մնում է դարաբաղցիների կողմից առաջ քաշված հիմնախնդիրը, մնում են նաև մեր կառավարության կողմից հատկացված միլիոնները: Ձեր ճիշտ որոշումը՝ գնալ դասի, անկասկած կարագացնի այդ խնդրի լուծումը»<sup>25</sup>:

Անշուշտ, Ստեփանակերտում կամ ամբողջ Ղարաբաղում ստեղծված վիճակը չէին վճռում ո՛չ ուսանողները և ո՛չ էլ դպրոցականները: Համլետը գիտակցաբար ոչ մի խոսք չասաց բանվորներին:

1988-ի մարտի վերջին կարճատև ժամկետով Մոսկվա մեկնեց Լեոնային Ղարաբաղի ղեկավար այրերից կազմված մի պատվիրակություն՝ Արկադի Մանուչարովի գլխավորությամբ: Դա թվով չորրորդ պատվիրակությունն էր: Այն հանդիպումներ ունեցավ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ և խնդրեց ընթացք տալ Ղա-

րաբաղից ստացվող նամակ-բողոքներին ու դրականորեն լուծել Ղարաբաղի հիմնահարցը:

Մարզը գործադուլից դուրս բերելու հարցը դարձել էր հրատապ խնդիր ինչպես տեղական, այնպես էլ վերադաս իշխանությունների համար: Մարտի 31-ին տեղի է ունենում ԼՂԻՄ-ի մարզկոմի բյուրոյի նիստ, որը քննարկում է Ստեփանակերտ քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում ստեղծված վիճակը կարգավորելու և աշխատանքային ուժերը վերականգնելու հարցը: Ի կատարումն բյուրոյի ընդունած որոշման, մարզկոմը, մարզգործկոմը և կոմերիտմիության մարզկոմը կոչով դիմում են մարզի աշխատավորներին «վճռականորեն հրաժարվել ամեն տեսակի հրահրողներից, պրովկատորներից, բանասարկուներից, մեր ընդհանուր գործի հակառակորդներից, ունկնդրել բանականության ձայնին, դրսևորել պատասխանատվություն, քաղաքացիական ու քաղաքական հասունություն, կազմակերպված դուրս գալ աշխատանքի»<sup>26</sup>:

Իրադարձությունները համեմատաբար ավելի բարդ էին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում: Ադրբեջանական բաժնի ուսանողներն ու դասախոսները սկզբում, փետրվարյան օրերին, մասնակցում էին գործադուլներին ու ցույցերին: Հետո վիճակը փոխվեց. ադրբեջանական բաժինը սկսեց հանդես գալ հայ ուսանողների ու դասախոսների դեմ, հակահայկական թուոցիկներ փակցնել ինստիտուտի պատերին և տարածել քաղաքում: Քանի դեռ հայկական բաժինը դասադուլի մեջ էր, իսկ դասախոսները՝ գործադուլի, ապա այդ վիճակից ավելի է երես առնում ադրբեջանական բաժինը: «Կոունկի» և Տճօրենների խորհրդի հաճձնարարությամբ ինստիտուտի դոցենտ Համլետ Գրիգորյանը և մի խումբ այլ դասախոսներ քայլեր են ձեռնարկում ադրբեջանական բաժնի ուսանողների և դասախոսների հետ հնարավոր ընդհարումը կանխելու համար: Դա մասամբ հաջողվում է նրանց:

Արցախահայությունը ապրիլի 4-5-ը դադարեցրեց գործադուլը, և ձեռնարկություններում աստիճանաբար վերականգնվեց աշխատանքային ուժերը: Աշխատանքները վերսկսվեցին նաև ուսումնական հաստատություններում, կոլտնտեսություններում, մշակույթի օջախներում: Քաղաքում լուրեր էին տարածվում, թե Խոջալուում, Մարտունու, Մարտակերտի և Հադրութի շրջաններում, Օուշի քաղա-

քում թուրքերը հարձակումներ են գործում հայերի վրա: Այդ օրերին, առանց որևէ հիմնավոր պատճառի, մարզի տարածքից սկսել էին հեռանալ ադրբեջանցի ընտանիքներ և սադիչ լուրեր տարածել արցախահայության մասին: Այդ ամենը տեղի էր ունենում ազերիների ազգայնամոլ ուժերի դրոյմամբ: Հայաստանից Ղարաբաղ եկող մեքենաները շարունակում էին ենթարկվել հարձակումների և թալանի: Հայկական գյուղերից թուրքերի կողմից անասնագողությունը կրում էր սիստեմատիկ բնույթ: Արցախահայությունը չէր կարող այդ ամենի նկատմամբ անտարբեր լինել: Վիճակը պահանջում էր պատասխան գործողություններ: «Կոուկի» և Տճօրեանների խորհրդի համաձայնարությամբ մարզի գրեթե բոլոր բնակավայրերում կազմակերպվում է շուրջօրյա հերթապահություն:

Այդ շրջանում մարդկանց կյանքի և գույքի պաշտպանությունը դարձել էր կարևորագույն խնդիր: Թուրքերը բացահայտորեն գեներ գործադրելով, տանում էին կոլտնտեսությունների անասունները, նույնիսկ ոչխարի ամբողջ հոտը: Մարդկանց պատանդ էին վերցնում և նրանց ազատելու համար մեծ գումար պահանջում: Այդ հանգամանքը արցախահայությունից պահանջում էր բողոքներ ներկայացնելուց բացի, նաև պրակտիկ գործողությունների դիմել:

Նախատեսված էր ապրիլի 24-ին, հայոց ցեղասպանության 75-ամյակի առթիվ, համընդհանուր հանրահավաք անցկացնել Լեռնի նախկին հրապարակում: Այդ առթիվ Համլետը պատմում է.

- Մեր պահանջը մերժվեց: Ծարժման ակտիվիստներս որոշեցինք այդ օրը գնալ հուշահամալիր: Ստեփանակերտում առաջին անգամ պետք է նշեինք հայոց ցեղասպանության օրը: Մեր որոշման մասին անմիջապես իմացան ամբողջ քաղաքում և մինչև անգամ թոռուհիներ տարածվեցին: Հուշահամալիրում բավականին մարդիկ հավաքվեցին: Խոսեցինք 1915 թվականի Մեծ եղեռնի, 1918-1921 թթ. Ադրբեջանում հայերի կոտորածների, 1988 թվականի սումգայիթյան ողբերգության, մեր առօրյա խնդիրների մասին: Այդ օրը որոշեցինք հաջորդ տարվանից սկսած ամեն տարի ապրիլի 24-ը նշել համաժողովրդական ձևով, ինչպես դա կատարվում է Հայաստանում:

1988-ի մայիսմեկյան տոնակատարությունը Ստեփանակերտում վերածվեց համընդհանուր ցույցի, որի հիմնական կարգախոսն էր Ղարաբաղի միացումը Հայաստանին: Այդ ցույցի մասին «խորհրդա-

լին Ղարաբաղ» թերթը գրել է: «1988 թ. մայիսմեկյան երթը նման չէր նախորդներին: Ստեփանակերտցիների հայացքներից զգացվում էր, որ ոչ ոք չէր ուզում ապրել հին ձևով: Քաղաքում թեև տանում էին ԼՂԻՄ-ը Մայր Հայաստանի հետ վերամիավորելու մարզի աշխատավորների իրենք, ցանկությունները, պահանջներն արտահայտող կարգախոսությունները և կոչերը: Տոնական շքերթի մասնակիցները, կանգ առնելով կենտրոնական տրիբունայի առաջ, կոչեր էին վանկարկում, թե մեր կուսակցությունն ու կառավարությունը լեռնային ազգային քաղաքականության հիման վրա կլուծեն լեռնային երկրամասի խնդիրը: «Հավատում ենք, լեռնային դիրքերից կվճռվի Ղարաբաղի խնդիրը» կարգախոսությունը տանում էին գրեթե բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների կողակտիվները»<sup>27</sup>:

Այդ, հավատում էին, բայց... Եվ այդ նույն հավատացողները մի քանի օր անց լուրեր են ստանում, թե Ծուշիի թուրքերը, մանավանդ Հայաստանից այնտեղ տեղափոխվածները, ծեծում են հայերին և նրանց նվաստացնում: Մայիսի 8-ին վեց թուրք բարբարոսներ ծեծով սպանում են 22-ամյա Վիտալի Պետրոսյանին և շրջանային հիվանդանոցում նրա մահը վերագրվում է ինֆարկտի:

Ադրբեջանի իշխանությունները, շարունակելով նախկին քաղաքականությունը, փորձում էին Լեռնային Ղարաբաղ աշխատանքի ուղարկել ավելի շատ ազերիների: Եվ նրա մարզի գլխավոր դատախազի տեղակալ է նշանակվում ազգությամբ թուրք: Այդ առթիվ Ստեփանակերտում տեղի են ունենում ցույցեր և հանրահավաքներ, ընդհանուր գործադուլ: Ստեփանակերտի ցուցարարների անունից մայիսի 12-ին բողոք է ուղարկվում ԽՍՀՄ Կենտկոմ: Կենտրոնական իշխանություններին բողոք է ուղարկվում նաև մարզի մի խումբ պատգամավորների, սոցիալիստական աշխատանքի հերոսների և կուսակցության մարզկոմի անդամների ստորագրությամբ, որտեղ պահանջվում է անհապաղ լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը և բավարարել նրա բնակչության արդարացի պահանջը:

Սկսված գործադուլը դադարեցվում է, որովհետև չէր լայ է հայտարարվում մարզային դատախազի տեղակալի պաշտոնում ադրբեջանցի նշանակելու որոշումը: Այնուամենայնիվ, մարզում շարունակում էր պահպանվել լարվածությունը: Ստեփանակերտցիները խիստ անհանգիստ և վրդովված էին Ծուշիում տեղի ունեցող հակա-

հայկական գործողություններից: Շուշիում տեղի ունեցած ազերիների հանրահավաքը, որին մասնակցում էին նաև հարևան գյուղերից եկած թուրքերը, բացահայտորեն կրում էր հակահայկական բնույթ: Հատ էության, Շուշիում տեղի ունեցած գործողությունները Սումգայիթի կրկնությունն էր: Շուշիի ադրբեջանական հանրահավաքները սպառնում էին հաշվեհարդար տեսնել քաղաքի հայ բնակչության հետ, ինչպես դա արվել է 1920 թվականի մարտին: Շուշիի միտինգավորները պահանջում էին լուծարել ինքնավար մարզը: Քաղաքի հայերին չէին թողնում գնալ աշխատանքի, իսկ երեխաներին՝ դպրոց: Մայիսի 16-ից սկսած, 3 օրվա ընթացքում, Շուշիի բոլոր հայերը վտարվում են քաղաքից, իսկ նրանց տներն ու ամբողջ ունեցվածքը՝ կողոպտվում: Շուշեցի հայերի մի մասը ոտքով հասնում է Քարին տակ, Մխիթարիչեն և Շոշ գյուղերը, մի մասն էլ՝ Ստեփանակերտի ծայրամասը: Հիսունվեց ընտանիք տեղավորվում է Ստեփանակերտի հյուրանոցում, ուր մնում են մինչև 1992 թ. մայիսը, մինչև Շուշիի ազատագրումը: Բազմաթիվ ընտանիքներ էլ տեղավորվում են հանրակացարաններում և Ստեփանակերտից հեռացած ադրբեջանցիների բնակարաններում: Ադրբեջանի լրատվական միջոցները փորձում էին արդարացնել իրենց իշխանությունների կատարած հանցագործությունը և աշխարհին հավատացնել, թե իբր հայերը քաղաքը լքել են ինքնակամ և ոչ մի բռնության չեն ենթարկվել: Մի խումբ դարաբաղցիներ հանդես գալով բաց նամակով, մերկացնում են ադրբեջանցի սադրիչներին և հայ ժողովրդին մրտադրելիս<sup>28</sup>:

Արցախահայերը շարունակում էին ապրել ու պայքարել հույսով ու համբերությամբ: Տնօրենների խորհրդի, ընդհատակում գործող «Կոունկի», մարզի մտավորականության և հասարակական-քաղաքական կազմակերպությունների անունից 1988 թ. մայիսի կեսերին Մոսկվա ուղարկվեց նոր պատվիրակություն Համլետ Գրիգորյանի գլխավորությամբ: Թվով հինգերորդ այդ պատվիրակության կազմում էին Մարտունու շրջանի մարտարի կոլտնտեսության նախագահ Լեոնիդ Մայիլյանը, Ասկերանի շրջանի Ակնադրյուրի (Ղարաբուլաղ) կոլտնտեսության անդամ, հայրենական մեծ պատերազմի և աշխատանքի վետերան, Փառքի երեք աստիճանների շքանշանակիր Վաղարշակ Հայրապետյանը, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկ-

նածու Արզիկ Մխիթարյանը և ԽՍՀՄ նկարիչների միության անդամ Լավրենտ Ղալայանը: Մոսկվա մեկնելուց առաջ պատվիրակության անդամները Երևանում հավաքվեցին մեր բնակարանում: Մինչև այդ հանդիպել էին «Ղարաբաղ» կոմիտեի տղաների հետ, համատեղ քննարկել մի շարք հարցեր և մշակել Մոսկվայում տարվելիք աշխատանքի ուղևորությունը: Կրկին ստուգեցին Մոսկվա տարվող բոլոր փաստաթղթերը, մանրագինն նայեցին Մոսկվայում յուրաքանչյուր օրվա աշխատանքի ծրագիրը: Ես նկատեցի, որ պատվիրակության բոլոր անդամներն էլ չափազանց մարտական էին տրամադրված: Համեմատաբար քշախոս էր Վաղարշակ Հայրապետյանը: Ի վերջո նա ձայն խնդրեց պատվիրակության ղեկավարից.

– Ախր ո՞ր եմք գնում: Նախորդ պատվիրակությունները ի՞նչ են առաջ գցել: Հասկացե՛ք, այդ Մոսկվա կոչեցյալը չի ցանկանում մեզ տեսնել, մենք նրա խորթ զավակներն ենք: Բոլոր գնացողներին ամեն անգամ խաբել ու ետ են ուղարկել: Այդպես էլ մեզ հետ կվարվեն:

– Այդ գիտե՛նք, – հանգիստ պատասխանեց Համլետը: – Բայց չգնալ չենք կարող, մեզ ժողովուրդն է ուղարկում: Թող սա լինի վերջին փորձը:

Գնացին: Մոսկվայում ունեցան բազմաթիվ հանդիպումներ, նրանց ընդունեցին բարձրաստիճանավորները, այցելեցին մի շարք գիտական հիմնարկություններ, կապեր հաստատեցին ազգությամբ հայ գիտնականների և ուսանողների հետ: Պատվիրակությունը մայիսի 24-ին վերադարձավ Երևան: Հաջորդ օրը Թատերական հրապարակում բազմահազարանոց հանրահավաք էր: Իրար ետևից ելույթ են ունենում Ռաֆայել Ղազարյանը, Գագիկ Սաֆարյանը, Մանվել Սարգսյանը, Վաչե Սարուխանյանը, Միլվա Կապուտիկյանը, Ջորի Բալայանը, Օահեն Թաթիկյանը և ուրիշներ: Եվ ահա հայտարարվում է.

– Ելույթի համար ձայնը տրվում է Մոսկվայից նոր վերադարձած Ղարաբաղի պատվիրակության ղեկավար Համլետ Գրիգորյանին:

Հրապարակը թնդում է ծափահարություններից: Համլետը մոտենում է խոսափողին, ներկայացնում պատվիրակության կազմը, սպա պատմում Մոսկվայում տեղի ունեցած իրենց հանդիպումների մասին, մասամբ ասելով.

- ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ներկայացուցիչները մեզ հետ ունեցած հանդիպման ժամանակ արդարանում էին, թե Լեոնային Ղարաբաղի պահանջը մինչև հիմա չի քննարկվել ոչ Հայաստանի, ոչ էլ Ադրբեջանի Գերագույն խորհուրդներում: Իբրև առանց դրա հնարավոր չէ որևէ որոշում ընդունել ԼՂԻՄ-ի վերաբերյալ: Կապված դրա հետ, խնդրում ենք՝ պահանջել հանրապետության Գերագույն խորհրդից քննարկել Հայաստանին վերամիավորվելու վերաբերյալ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի ընդունած որոշումը<sup>29</sup>:

Այնուհետև ելույթ են ունենում պատվիրակության անդամ Արզիկ Մխիթարյանը և Արցախից ժամանած դերասանուհի Ժաննա Գալստյանը: Եթե առաջինը պատմում է Մոսկվայում ունեցած հանդիպումների և ստացած տիպիկ տպավորությունների մասին, ապա Ժաննան հանգամանորեն ներկայացնում է Արցախում տիրող վիճակի, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի պլենումում Ե. Լիզաչովի ունեցած ելույթի բացասական հետևանքների, արցախահայերի գործադուլի, նրանց վճռականության, Ստեփանակերտ բերված մեծ թվով զինվորականների սանձարձակ գործողությունների մասին:

- Եվ այդ ամենը, - իր խոսքն է ավարտում Ժաննան, - Լեոնային Ղարաբաղի բնակչությանը ստիպում է դիմել ծայրահեղ քայլի՝ գործադուլի, որը, ինչպես պարզվում է, չի անհանգստացնում ոչ կենտրոնական, ոչ էլ Հայաստանի իշխանություններին<sup>30</sup>:

Ստեփանակերտ վերադառնալուց առաջ Համլետը հանդիպում է Իգոր Մուրադյանի և «Ղարաբաղ» կոմիտեի մյուս անդամների հետ, մշակում են առաջիկայում Ղարաբաղում իրագործելի գործողությունների պլանը, լինում է մի շարք աշխատանքային կոլեկտիվներում, որտեղ պայմանավորվում են Ղարաբաղի գործադուլավորներին նյութական օգնություն ցույց տալու մասին: Իրոք, այդ և հետագա գործադուլների ժամանակ Հայաստանի ողջ բնակչությունը և, ընդհանրապես հայ ժողովուրդը, աստար կանգնելով Ղարաբաղի հայությանը, ուղարկել են մեծ թվով սննդամթերք, դրամական միջոցներ, հագուստեղեն, դեղորայք, արդյունաբերական ապրանքներ<sup>31</sup>:

Ստեփանակերտում ամենուր կանաչ զրահաբանկոններով հանդերձավորված, դազանակներով և վահաններով զինված զինվորներ էին: Արզելվում էր փողոցներում չորս հոգուց ավել մարդկանց խմբվել: Զինվորականները շրջապատել էին մի շարք հիմնարկ-ձեռնարկություններ, այդ թվում և մանկավարժական ինստիտուտը: Խիստ հսկողության տակ էին Ծարժման դեկավարներն ու ակտիվիստները ոչ միայն Ստեփանակերտում, այլև ամբողջ մարզում:

Մոսկվայից վերադարձած Համլետ Գրիգորյանի գլխավորած պատվիրակությունը հաշվետվություն տվեց Հաղթանակի հրապարակում հավաքված միտինգավորներին: Պատվիրակության անդամների ելույթներից միտինգավորները հանգեցին այն մտքին, որ, այո՛, իզուր է Մոսկվայի վրա հույս դնելը:

1988-ի հունիսյան այդ օրերին կուսակցության Լեոնային Ղարաբաղի մարզկոմը հրավիրեց խորհրդակցություն, որին մասնակցեցին նաև Ստեփանակերտի մտավորականության ներկայացուցիչները: Կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը, խորհրդակցության մասնակիցներին պատմելով ԽՄԿԿ կենտկոմի Գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի հետ ունեցած իր հանդիպման մասին, որի ժամանակ քննարկվել է Լեոնային Ղարաբաղում և նրա շուրջ ստեղծված իրադրությունը, ամփոփեց, որ ոչ ոք չի ցանկանում կարեկից լինել մարզի հոգսերին:

Արդեն չորրորդ շաբաթն էր, ինչ մարզի արդյունաբերական, տրանսպորտային, շինարարական ձեռնարկությունների մեծամասնությունը չէր աշխատում: Այդ հանգամանքը վերևում խիստ բացասական էր գնահատվում և շեշտվում, որ իբր գործադուլը խանգարում է դրականորեն լուծել Լեոնային Ղարաբաղի հիմնահարցը: Այնուամենայնիվ, Մ. Գորբաչովը այդպես էր ասել Հենրիխ Պողոսյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ: Մարզկոմում տեղի ունեցած խորհրդակցությունում մանկավարժական ինստիտուտից ելույթ ունենալով Համլետ Գրիգորյանը, Արզիկ Մխիթարյանը և Օլեգ Նսայանը, գրողների միության բաժանմունքի պատասխանատու քարտուղար Վարդան Հակոբյանը, դերասանուհի Ժաննա Գալստյանը, բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը, կոմպոզիտոր Էդուարդ Ղազարյանը և ուրիշներ, շեշտում են, որ գործադուլը պայքարի ծայրա-



հեղ միջոց է: Սակայն ի՞նչ անեն մարզի աշխատավորները, երբ չի կատարվում նրանց արդարացի պահանջը, պայքարի ուրիշ ի՞նչ ձև օգտագործեն: Նրանք համատորեն պնդում են՝ երբեք չթուլացնել պայքարը և հասնել Ղարաբաղի հիմնահարցի դրական լուծմանը<sup>32</sup>:

– Այդ օրերին,– հիշում է Համլետը, – մեզ մնում էր պահանջել հրավիրելու մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և հարցը դնել ավելի կտրուկ: Այդ նպատակով Տնօրենների խորհուրդը և «Կոունկը» ստեղծեցին մի հանձնաժողով, որը հանդիպումներ ունեցավ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանի և մարզխորհրդի նախագահի պաշտոնակատար Ծմավոն Պետրոսյանի հետ ու նրանց համոզեցին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և լայնորեն քննել մարզում ստեղծված իրավիճակը:

Էլ ավհա 1988-ի հունիսի 21-ին, ԼՂԻՄ-ի մարզխորհրդի գործկոմի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանը, որը քննարկեց «Մարզում ստեղծված իրադրության և նրա կայունացման միջոցառումների մասին» հարցը: Բննարկվող հարցի շուրջ հաղորդումով հանդես եկավ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնակատար Ծմավոն Պետրոսյանը: Բոլոր ելույթ ունեցողներն էլ վճռական էին: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էր նաև ԽՄԿԿ կենտկոմի պատասխանատու աշխատող Լ. Դ. Ծիշովը: Նստաշրջանը ընդունեց որոշում՝ «Մարզում ստեղծված իրադրության և նրա կայունացման միջոցառումների մասին», որում ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների խորհուրդը իր անհամաձայնությունն է հայտնում «Մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ-ին տալու վերաբերյալ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի միջնորդության մասին» Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թվականի հունիսի 13-ի և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988-ի հունիսի 17-ի 7-րդ նստաշրջանի որոշումներին և «հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի հաշվառության կամքը... անհրաժեշտ է համարում մի անգամ ևս անմիջականորեն դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ խնդրելով ամենայն ուշադրությամբ քննարկել հունիսի 15-ի նստաշրջանի որոշումը, որը համաձայնություն տվեց ԼՂԻՄ-ը ընդունել Հայկական ԽՍՀ կազմի մեջ...»: Այնուհետև՝ «Մարզում ստեղծված ար-

տակարգ բարդ իրադրությունը կայունացնելու և աշխատանքային նորմալ ուրիշ վերադարձնելու նպատակով խնդրել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը մինչև 1.եռնային Ղարաբաղի հարցի վերջնական և դրական լուծումը ժամանակավորապես, որպես արդի փուլում միակ ընդունելի տարբերակը, ամենակարճ ժամանակում ինքնավար մարզը հանել Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից և հանձնել ԽՍՀՄ կառավարության տնօրինությանը»<sup>33</sup>:

Ինչպես տեսնում ենք, մարզխորհուրդը առաջարկեց ամենահարմար տարբերակը, որը չէր հակասում ԽՍՀՄ Սահմանադրության պահանջներին: Սակայն Մոսկվան այս անգամ ևս չընդհատաբեց արցախահայության պահանջին: Եթե Մոսկվան ունկնդրեր արցախահայության այդ բավականին սթափ և միանգամայն լուրջ դատողությանը, ապա, թերևս, հնարավոր կլիներ խուսափել հետագա հազարավոր զոհերից և նյութական ահեղի վնասներից:

Մարզխորհրդի վերոհիշյալ որոշումից Ադրբեջանն ավելի կատաղեց: Հանրապետության լրատվական միջոցները աչ ու ձախ վարկաբեկում էին Ծարժման ղեկավարներին, իսկ իշխանություններն էլ դատական գործեր էին սարքում նրանց դեմ: Այսպիսի մի ստոր գործ կազմվեց ԼՂԻՄ ՆԳ վարչության կողմից Համլետ Գրիգորյանի նկատմամբ և ուղարկվեց Ստեփանակերտի քաղաքապետին: Իսկ ի՞նչ էր արել Համլետ Գրիգորյանը: Բանն այսպես է եղել. մարզխորհրդի հունիսի 21-ի ընդունած որոշումը պետք է տպագրվեր «Սովետական Ղարաբաղ» թերթում: Հարչուրավոր ստեփանակերտցիներ հավաքվել էին տպարանի մոտ և սպասում էին համարի լույս ընծայմանը: Այն ուշանում էր: Հավաքված ամբոխը սպառնում էր ներս մտնել տպարան: Նախաձեռնող խմբի հանձնարարությամբ, որպեսզի հավաքվածներին հանգստացնի և թույլ չտրվի անօրեն գործողություններ, Համլետը մտնում է տպարան, վերցնում թերթի 150 օրինակ, դուրս բերում և բաժանում: Հետո, հուլիսի 14-ին ԼՂԻՄ ՆԳՎ պետ, փոխգնդապետ Ռ. Ս. Թումանյանին գրած դիմումում Համլետը կբացատրի. «Հունիսի 23-ին այնպիսի վիճակ էր ստեղծվել մեր շենքի հարևանությամբ գտնվող քաղաքային տպարանի մոտ, որը կարող էր բերել անկանխատեսելի հետևանքներ: Հավաքված ամբոխը սպառնում էր մտնել տպարան: Ես փորձեցի նրանց համոզել հեռու մնալ մեզան գործողությունից: Նրանք չցանկացան ինձ լսել:

Գնահատելով ստեղծված վիճակը, ներս եմ մտնում տպարան, տպագրիչներից խնդրում մի քանի օրինակ թերթ: Տպագրիչները չեն մերժում: Իմ ստացած օրինակները դուրս եմ բերել և բաժանել հավաքվածներին: Իմ այդ գործողության մեջ հակասօրինական ոչինչ չեմ տեսնում»:

Նպատակահարմար գտա այստեղ մեջ բերել նաև Ստեփանակերտ քաղաքի ժողդատարանի որոշումը:

**ՈՐՈՇՈՒՄ**

**Նյութեր աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու մասին**

18 հուլիսի 1988 թ., քաղաք Ստեփանակերտ

Ստեփանակերտ քաղաքի ժողդատարանի ժողդատավոր Ծ. Ս. Օհանյան. քննելով Համլետ Վաղարշակի Գրիգորյանի գործը, ծնված 1941 թ., բարձրագույն կրթությամբ, ԽՄԿԿ անդամ, նախկինում չդպրված, խնամքին երկու երեխա, աշխատում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, բնակվում է քաղ. Ստեփանակերտ, Չկալովի փող. 19, բն. 26

**Պարզեցի**

ԼՂԻՄ ՆԳ վարչությունից Ստեփանակերտի քաղդատարան են մտել վարչական իրավախախտման նյութերը Համլետ Գրիգորյանի վերաբերյալ, որից նկատելի է, որ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոս Հ. Գրիգորյանը 1988 թ. հունիսի 23-ին, ժամը մոտավորապես 20-ին, առանց թույլտվության մտել է Ստեփանակերտի տպարանը և առանց արժեքը վճարելու վերցրել 150 օրինակ «Սովետական Ղարաբաղ» օրաթերթ, արժողությամբ մեկ օրինակը՝ 3 կոպ, ընդհանուր գումարը՝ 4 ռուբլի 50 կոպեկ և բաժանել տպարանի մոտ հավաքված քաղաքացիներին:

Այդ կասկածնությամբ ԼՂԻՄ ՆԳ վարչության աշխատողների կողմից կազմվել է արձանագրություն Գրիգորյանի կողմից պետական սեփականության մասը հափշտակում կատարելու մասին:

Իր բացատրության մեջ Գրիգորյանը ցույց է տվել, որ ինքը ոչ թե

գողություն է կատարել, այլ քաղաքացիների դժգոհությունը կանխելու համար տպարանից թերթերը վերցրել և տվել է նրանց:

Գործում գտնվող բնութագրից երևում է, որ Գրիգորյանը Ադր. ԽՍՀ լուսավորության գերագահից է, դասախոսությունները վարում է բարձր մակարդակով, ակտիվորեն մասնակցում է ինստիտուտի հասարակական կյանքին: Նա ինստիտուտի արհկոմի նախագահն է:

Հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և Գրիգորյանի անձը, նպատակահարմար է նրան ազատել վարչական պատասխանատվությունից և նրա վերաբերյալ վարչական իրավախախտման նյութերը հանձնել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվի քննարկմանը:

Ղեկավարվելով Ադր. ԽՍՀ վարչական իրավախախտումների մասին օրենքի 21 հոդվածով՝

**Որոշեցի**

Համլետ Վաղարշակի Գրիգորյանին ազատել վարչական պատասխանատվությունից և նրա վերաբերյալ վարչական իրավախախտման նյութերը հանձնել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվի քննությանը, միջոցներ ձեռնարկելու համար:

Որոշումը գանգատարկման ենթակա չէ:

Ժողդատավոր՝ Ծ. Ս. Օհանյան<sup>34</sup>:

Համանման գործեր են թխվել նաև Ղարաբաղյան շարժման մի շարք ղեկավարների և ակտիվիստների, օրինակ՝ Արկադի Մանուչարովի, Ստեփանակերտի տպարանի տնօրեն Յուրի Ներսիսյանի, «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամների, Իգոր Մուրադյանի և այլոց նկատմամբ:

Այդ օրերին վիճակը չափազանց շիկացած էր թե՛ Արցախում և թե՛ Հայաստանում: Արցախցիները խիստ վրդովմունքով ընդունեցին «Զվարթնոց» օդանավակայանում տեղի ունեցածի: և Խաչիկ Զաքարյանի ողբերգական մահվան մասին լուրը: Ակնհայտ է, որ թե՛ Արցախում և թե՛ Հայաստանում տեղավորված խորհրդային ուժերը օր-օրի ավելի էին սանձարձակ դառնում: Հուլիսի 11-ին Մատենա-

դարանի դիմաց տեղի ունեցած հանրահավաքում Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե «Մոսկվայի առաջ երկու ուղի կա. կամ Ղարաբաղի հիմնահարցը լուծել դրականորեն, կամ էլ այն ճնշել տանկերով»: Նա վճռականորեն հայտարարեց, որ եթե հուլիսի 18-ին որոշում չընդունվեց Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու վերաբերյալ, ապա մենք կշարունակենք գործադուլը: Հակառակ դեպքում, ԼՂԻՄ-ի օրինակով կհրավիրենք Հայաստանի Գլխ նստաշրջան և Մոսկվայի կամքին հակառակ Ղարաբաղը կհայտարարենք Հայաստանի կազմում»<sup>35</sup>:

Այդ օրերին ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջը համակել էր բոլորին: Հանրահավաքներում և տարբեր բնույթի ժողովներում հիմնականում այդ մասին էին խոսում:

«Արտահերթ նստաշրջան հրավիրելու հիմնական նպատակը, ընթերցում են Համլետի պատմածից արված իմ գրառումներում, - նախորդ արտահերթ նստաշրջանում արծարծված մտքին իրավական տեսք տալն էր: Ծարժման ղեկավարները մարզային իշխանության հետ եկել էին այն համոզման, որ հուլիսի 18-ին տեղի ունեցած խՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստից առաջ, որտեղ պետք է քննարկվեր ԼՂԻՄ-ի հիմնահարցը, անհրաժեշտ էր հստակություն մտցնել և մեր վերջնական ու վճռական խոսքն ասել: Դա նշանակում էր, որ պետք է հայտարարեինք, թե Ղարաբաղը դուրս է գալիս Ադրբեջանի կազմից ու այլևս չի ճանաչում նրա իշխանությունը: Մենք այլ ճանապարհ չունեինք, մանավանդ, որ ի պաշտպանություն Ղարաբաղյան շարժմանը Հայաստանում համընդհանուր գործադուլ էր: Արդեն ձևավորվել էր ընդհանուր ճակատ: Այն պետք է ամրապնդեինք կոնկրետ գործողություններով»:

1988-ի հուլիսի 12-ին տեղի ունեցավ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի 20-րդ գումարման ութերորդ նստաշրջանը, որը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս բերելու հռչակման մասին» հարցը: Ելույթ ունեցած բոլոր 16 պատգամավորներն էլ առաջարկեցին հայտարարել մարզը Ադրբեջանից անջատված: Նստաշրջանը ընդունեց որոշում՝ «Ադրբեջանական ԽՍՀ կազմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դուրս գալու հռչակման մասին»: Որոշման առաջին կետը հռչակում է.

- Հաշվի առնելով ստեղծված վիճակը, անհրաժեշտ համարել մեկ անգամ ևս ընդգծել հետևյալը. արտահայտելով Լեռնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնության կամքը և ելնելով մեր միասնական միութենական բազմազգ պետության ազգային պետական կառուցվածքի հիմքում ընկած ազատ ինքնորոշման ազգերի իրավունքի մասին լեռնային սկզբունքը հետևողականորեն իրականացնելու անհրաժեշտությունից՝ հռչակել Ադրբեջանական ԽՍՀ կազմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դուրս գալը»: Մարզխորհուրդը, ի նկատի ունենալով, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի հետ կապերը գործնականում խզվել էին, «մարզի համար միակ ընդունելի» համարում էր «Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի նստաշրջանի որոշման իրագործումը»<sup>36</sup>: Իսկ այդ որոշման առաջին կետն ասում է. «Համակողմանիորեն ուսումնասիրելով Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը ստեղծված լարված իրավիճակը, ինչպես նաև ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ հայ բնակչության կամքի արտահայտությունը, ղեկավարվելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին ԽՍՀՄ Սահմանադրության 70 հոդվածով, համաձայնություն տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելուն»<sup>37</sup>:

Հետո Արկադի Մանուչարովն ինձ կպատմի.

- Այդ նույն օրը պետք է դադարեցնեինք գործադուլը: Սակայն չստացվեց: Նստաշրջանն ավարտվելուց հետո գնացինք Հաղթանակի հրապարակ, որտեղ հավաքվել էին մի քանի տասնյակ հազար մարդիկ: Այդտեղ իմացանք, որ այդ նույն օրը Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը նիստ էր հրավիրել և բեկանել մարզխորհրդի որոշումը: Ինչ-որ մեկը հեռախոսով հայտնել էր Բաքու...

Վահան Հարությունյանը այդ երևույթը մեկնաբանել է այսպես. Ստեփանակերտից Բաքու 400 կիլոմետր է, նստաշրջանը ավարտվել է ժամը 17-ին: Ե՞րբ արձանագրությունը ձևակերպվեց և Բաքվում հայտնվեց, որ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը որո-

շում ընդունեց բեկանման մասին: Մտածում էինք... Մի՞թե Բաքվի ներկայացուցիչը նստած էր նիստերի դահլիճում: Ճիշտ է, նստաշրջան հրավիրելու և օրակարգի մասին նախօրոք հայտարարվել էր, սակայն ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու վերաբերյալ խոսակցություն չի եղել: Այդ հարցը օրակարգ է մտցվել միայն նստաշրջանի ընթացքում, պատգամավորների պահանջով: Ինչպե՞ս կարող էին Բաքվում նախազգայ և ձեռքի տակ որոշում չունենալով, այն բեկանել, մանավանդ, որ ընդունված որոշումը և նստաշրջանի նյութերը Բաքու չեն ուղարկվել<sup>38</sup>:

«Իզվեստիա» թերթի հուլիսի 12-ի համարում հրատարակվեց սեփական թղթակից Ալի Կազիխանովի «Գործուղում դեպի Ստեփանակերտ» կանխամտածված հոդվածը, որտեղ ասված է, թե «Կոունկը» լուծարելու մասին խոսակցությունը ճիշտ չէ, այն շարունակում է գործել: Ալի Մահոմեդովիչը Ստեփանակերտում նաև «հայտնագործեց», որ Ղարաբաղում պաշքարը գլխավորում են ոչ պաշտոնական առաջնորդները: Կենտրոնական մամուլի թղթակիցը Արցախյան պայքարին նայում էր սևագույն ակնոցներով: Իսկ դա արցախահայերի համար զարմանալի չէր:

Այդ առթիվ Ստեփանակերտից նամակ ուղարկվեց «Իզվեստիայի» գլխավոր խմբագիր Ի. Պ. Լապտևին, որում զարմանք է արտահայտվում, թե ինչպես Մոսկվայում չեն հասկանում, որ «Կոունկը» դա ինքնավար մարզի 140 հազար հայերն են, որոնց վրա երբեք չի կարող ազդել Ադրբեջանի ոչ մի որոշում: Հետևապես արցախահայության համար արժեք չունի նաև կենտրոնական թերթի հակադարաբաղյան կեցվածքը:

Մոտենում էր 1988-ի հուլիսի 18-ը: Արցախում և Հայաստանում շարունակվում էր գործադուլը: Հուլիսի 16-ին Երևանում տեղի ունեցած հանրահավաքում «Ղարաբաղ» կոմիտեի գլխավորներից Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե աշխարհը զարմացած է, որ մեզ հաջողվել է այդպիսի երկարատև և կազմակերպված համազգային գործադուլ կազմակերպել: Գործադուլի քաղաքական նպատակն այն էր, որ հայ ժողովուրդը լի է վճռականությամբ և այլևս չի կարող համաձայնել Ղարաբաղյան հիմնահարցի դոփման հետ: Անժխտելի է, որ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի հուլիսի 12-ի որոշումն ընդունվեց Ղարաբաղի և Հայաստանի համատեղ ապստամբական գործողություն-

ների հետևանքով: Համոզված ենք, որ գործադուլները դրական կազդեն ԽՍՀՄ ԳԽ նախագահության հուլիսի 18-ի նիստի որոշման վրա: Հնարավոր է, հուլիսի 18-ից հետո հարձակում իրագործվի հայ ժողովրդի վրա, այսինքն՝ իշխանություններն անցնեն վճռական գործողությունների: Սակայն ոչ մի ուժ չի կարող հայ ժողովրդին հետ պահել իր արդարացի պահանջը լուծելու ընթացքից: Եվ երբեք հնարավոր չէ Ծարժումը խեղդել ակտիվիստներին ձեռքակալելու միջոցով<sup>39</sup>:

Հաջորդ օրը, հուլիսի 17-ին, Մատենադարանի դիմաց տեղի ունեցած հանրահավաքում Ղարաբաղի ներկայացուցիչը հայտարարեց, թե արցախահայերը համաձայն են մեռնել, բայց այսպես ապրել չեն կարող: Նույնպես արցախեցի Գրիգոր Աթանեսյանը, ողջույն հաղորդելով ղարաբաղցիների անունից, հույս հայտնեց. «Մենք կհաղթենք, և Ղարաբաղը կմիանա Մայր հայրենիքին: Այո՛, լավ է մեռնել կանգնած, քան թե ապրել ծնկաչոք»<sup>40</sup>:

– Բոլորս էինք խիստ անհանգիստ, – վերհիշում է Համլետը, – և ինչ որ դրական հույսեր էինք կապում ԽՍՀՄ ԳԽ նախագահության նիստի հետ: Ծարժման ղեկավարներս հավաքվում և քննարկում էինք հնարավոր որոշման տարբերակները և պլանավորում հետագա գործողությունները: Մարզային իշխանություններից մինչև ծայրամասային գյուղերի բնակիչները դեռևս այն մտքին էինք, որ կուսակցությունը, նրա գլխավոր քարտուղար Գորբաչովը արդարության պաշտպան են: «Լեճին-պարտիա-Գորբաչով» կարգախոսը չէր իջնում մարդկանց շուրթերից: Եվ երբ հուլիսի 18-ին պարտություն կրեցինք, իսկ դա այդպես էր, ասես ամեն ինչ միանգամից շուռ եկավ:

Այդ օրը, 1988-ի հուլիսի 18-ին, Արցախում և Հայաստանում բոլորը սպասում էին բարի լուրի: Ուշ երեկոյան հեռուստատեսությամբ տրված կցկտուր ճաղողդումները խիստ մշուշոտ էին: Միայն հաջորդ օրերին պարզ դարձավ, որ հայկական կողմը պարտություն է կրել, որովհետև ընդունվել էր մի որոշում, որով պաշտպանվում էր ադրբեջանցիների պահանջը, այսինքն՝ ԼՂԻՄ-ը չի բաժանվում Ադրբեջանից և չի միացվում Հայաստանին: Սակայն մի բան պարզ էր, ամբողջ երկիրն ի վերջո տեսավ Գորբաչովի կեղտոտ դեմքը, և շատերը կորցրեցին հավատը նրա նկատմամբ: Հայաստանում և Ղարաբաղում տեղի ունեցող հանրահավաքները խստագույնս դատապարտում էին հուլիսի 18-ի որոշումը:

Հնայած ԽՍՀՄ Գլխ Գախազահությունը ադրբեջանամետ որոշում ընդունեց, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը չվհատվեց: Փշրվել էին բոլոր պատմեղները, և փոշիացել հավատը մեծապետական բռնատիրության նկատմամբ: Այլևս ոչ մի Լեւին, ոչ մի կուսակցություն, ոչ մի Գորբաչով: Արցախահայությունը հանգեց այն մտքին, որ պետք է փոխել պայքարի ռազմավարությունը՝ նախ ազատվել թուրքի իշխանությունից, նոր միայն քայլեր ձեռնարկել Մայր Հայաստանի հետ վերամիավորվելու համար:

Այդ միտքը ահա թե ինչպես մեկնաբանեց Համլետը, երբ մենք խոսում էինք այդ հարցի շուրջ:

— Դա կլինեք Հայաստանի հետ վերամիավորման ամենակարճ և ամենաճիշտ ճանապարհը, որը այն գլխից չհասկացան՝ ոչ «Կոունկը», ոչ «Ղարաբաղ» կոմիտեն, ոչ Տնօրենների խորհուրդը, ոչ մարզային իշխանությունները, մի խոսքով՝ բոլորս:

Մարզում աստիճանաբար վերականգնվեց աշխատանքային բնականոն ուժը: Մարդիկ աշխատատեղեր էին վերադառնում ոչ թե հուսահատված, այլ ավելի վճռական: Հուլիսի 19-ին Հաղթանակի հրապարակում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքում այդպես էլ ասացին ելույթ ունեցողները: Այդ օրերին «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրական կոլեգիան հանդես եկավ «Դիմում ստեփանակերտցիներին» կոչով, որտեղ շեշտվում էր, որ «1988 թվականը կմտնի Արցախական աշխարհի բազմադարյան պատմության մեջ որպես ժողովրդական ձգտումների, ղարաբաղյան կամքի ու տոկունության տարի, նպատակին հասնելու, միահամուռության աննախադեպ մի ժամանակաշրջան, երբ բոլորիս սիրտը նույն զարկն ունի»: Ապա՝ «եկեք մեր մեջ ուժ գտնենք և հաղթահարենք արցախցիներին յուրահատուկ համառությունը»<sup>41</sup>:

Հուլիսի 25-ին, երկուշաբթի, բոլորը վերադարձան աշխատատեղեր:

ԽՍՀՄ Գլխ Գախազահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշման հիման վրա կազմվեց մի հանձնաժողով ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Արկադի Վոլսկու գլխավորությամբ, որը Ստեփանակերտ ժամանեց հուլիսի 27-ին, արդեն որպես կենտրոնի ներկայացուցիչ Լեոնային Ղարաբաղում:

Բայց և այնպես լարվածությունը թուլանալու միտում չուներ:

Դրա հիմնական պատճառը Ադրբեջանի իշխանությունների կողմից Լեոնային Ղարաբաղի նկատմամբ կիրառվող հակահայկական քաղաքականությունն էր: Ադրբեջանի քարոզչության հետևանքով Հայաստանից հեռացող ադրբեջանցիներին փորձում էին տեղավորել Ղարաբաղում և այդ ճանապարհով փոխել մարզի էթնիկական կազմը: Օգոստոսի 13-ին և 15-ին Ստեփանակերտում տեղի ունեցած հանրահավաքները մարզի ղեկավարությունից պահանջեցին վճռականորեն պայքարը շարունակել Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու համար և թույլ չտալ մարզի տարածքում տեղավորել Հայաստանից տեղափոխված թուրքերին: Մինչդեռ մինչև օգոստոսի 16-ը նրանց թիվը հասավ 1848-ի<sup>42</sup>:

1988-ի օգոստոսի 24-ին տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ 20-րդ գումարման 9-րդ նստաշրջանը, որը քննարկեց «1988-1995 թվականներին Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին» հարցը, հավանություն տվեց մարզի աշխատանքային կոլեկտիվների նախաձեռնությանը Հայկական ԽՍՀ-ի համապատասխան ձեռնարկությունների հետ համագործակցության հաստատմանը, ինչպես և մյուս բնագավառներում սերտ կապերն ու առնչությունները: Դրա հետ միասին մարզխորհրդի նստաշրջանը մեկ անգամ ևս հաստատում է մարզի աշխատավորության վճռականությունը՝ հասնել ԼՂԻՄ-ն Ադր. ԽՍՀ վարչական ենթակայությունից հանելուն և Հայկ. ԽՍՀ-ին վերամիավորելուն<sup>43</sup>:

Մարզխորհրդի նստաշրջանը ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ խորհրդի գործկոմի նախագահ ընտրեց Ստեփանակերտի գյուղատնտեսական մեքենաների գործարանի տնօրեն Սեմյոն Հմայակի Բաբայանին:

\*\*\*

1988-ի ամռանը բարձրացած հրատույլ հարցերից էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հարցը: Ահա թե այդ մասին ինչ է պատմում Համլետը.

— Բանն այն է, որ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի՝ որպես ղարաբաղյան շարժման կենտրոններից մեկի, հետա-

գա գոյությունը հարցականի տակ էր դրված: Օգոստոսի 10-ին Ստեփանակերտ ժամանեց ԽՍՀՄ ժողովրդական կրթության գծով Պետկոմիտեի նախագահի տեղակալ Գ. Փ. Կուցովը: Նա ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպման ժամանակ արտահայտեց մի քանի լեզուներով ինստիտուտի հետագա գործունեության ոչ նպատակահարմարության մասին: Մինչ այդ, ինստիտուտի ռեկտոր Սերգեյ Սարգսյանի, արհկոմի նախագահ Համլետ Գրիգորյանի, ամբիոնի վարիչ Սերգեյ Բաղդասարյանի, դեկան Ստյոպա Դադայանի, դոցենտ Օլեգ Նսայանի և այլոց ստորագրությամբ մի նամակ էինք ուղարկել վերադաս մարմիններին 1988-89 ուսումնական տարուց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում աղբյուրական բաժանմունքի գոյության աննպատակահարմարության մասին: Նամակը կազմել էինք լիովին հիմնավորված: Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի փակվելը և այդ հիմքի վրա Ստեփանակերտում առանձին մանկավարժական ինստիտուտ բացելը, թերևս, Բաքվի համար ընդունելի էր: Սակայն բացված մանկավարժական ինստիտուտում աղբյուրական բաժին ունենալը Բաքվի համար ռազմավարական նպատակ էր հետապնդում: Աղբյուրական բաժնի ուսանողների միայն 5-6 տոկոսն էր Ղարաբաղի աղբյուրական վայրերից, մնացածը, մոտ 800 հոգի, Աղբյուրանի այլ շրջաններից էին: Դեռևս 1988-ի ապրիլի 20-ին ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմից 30 հոգու ստորագրությամբ, Մոսկվա՝ ժողովրդական կրթության Պետկոմի նախագահ Գ. Ա. Յագոդինին ուղղված հեռագրում նշել էինք, որ Բաքվում, Կիրովաբադում և Նախիջևանում մանկավարժական ինստիտուտների առկայության դեպքում, որտեղ ուսուցումը տարվում է աղբյուրական լեզվով, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում աղբյուրական բաժին պահելը ո՛չ քաղաքական և ո՛չ էլ տնտեսական առումով իրեն չի արդարացնում: Բացի այդ, աղբյուրական բաժնում աշխատող 30 դասախոսներից միայն վեցն էին տեղացի, մնացածը հրավիրվել էին դրսից: Այդ նշանակում էր նրանց բոլորին պետք է բավարարեին բնակարաններով, Ստեփանակերտում բացեին նոր դպրոց: Միայն մանկավարժական ինստիտուտը չէր: Մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Օուշիում և Աղդամում կային թժշկական ուսումնարաններ: Դա քիչ

համարելով, բերել ու Ստեփանակերտի թժշկական ուսումնարանում էլ էին բացել աղբյուրական բաժանմունք: Այո՛, թուրքը թուրքավարի էր գործում և մտածում: Սեպտեմբերի 13-ին Ստեփանակերտում տեղի ունեցած շքերթի մասնակիցները և քաղաքի գործադուսվորները պահանջում էին առանց ուշացնելու Լեոնային Ղարաբաղը դուրս բերել Աղբյուրանի կազմից: Քանի որ Օուշիի հայերը քաղաքից արտաքսվել էին դեռևս մայիսի կեսերին, ապա Ստեփանակերտից աղբյուրացի ընտանիքների արտաքսումը ևս օրակարգի հարց էր դարձել: Սեպտեմբերի կեսերին քաղաքում լուր տարածվեց, թե աղբյուրացիները իրենց ընտանիքներով հեռանում են քաղաքից, և որ, իբր, հայերի կողմից նրանց նկատմամբ սեպտեմբերի 18-ին իրագործվելու է ահաբեկչություն:

- Իսկ ինչո՞ւ հենց սեպտեմբերի 18-ին:

Իմ այս հարցին կահույքի ֆարքիկայի տնօրեն Էդնեստ Հայրապետյանը այսպես պատասխանեց.

- Օուշիից հայերը արտաքսվելուց հետո աղբյուրացիներն էլ պետք է արտաքսվեին Ստեփանակերտից, դրանում ոչ մի կասկած չկար: Սակայն չէինք շտապում, համբերատար սպասում էինք, թե այսօր-վաղը մեր պահանջը կլուծվի, և ամեն ինչ կգա իր տեղը: Բայց այսպես չեղավ, մերժում էին ու մերժում: 1988 թ. սեպտեմբերի 18-ը կիրակի էր: Այդ օրը Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի և ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրն էր: Տնօրենների խորհրդում որոշել էինք այդ օրվա հանրահավաքը նվիրել նրանց մեծարմանը: Առավոտյան նկատեցինք, որ տասնյակ բեռնատար մեքենաներ քաղաքից դուրս են բերում աղբյուրացիների ընտանիքները և գույքը: Մինչև հիմա էլ մեզ համար մնում է անհայտ, թե ինչու այդպես շտապ, հենց սեպտեմբերի 18-ի առավոտյան թուրքերը հեռացան Ստեփանակերտից:

- Այդ նույն օրը, սեպտեմբերի 18-ին, - շարունակում է Համլետը, - լուր հասավ Ստեփանակերտ, թե Հայաստանից եկող ավտոմեքենաները Խոջալուում շարդում են, թալանում, ուղևորներին ծեծում: Երեկոյան ժամը 20-ին հանրահավաքում իմանալով այդ մասին, բոլորս շարժվեցինք դեպի Խոջալու, այն էլ՝ ոտքով:

Առջևից քայլողների շարքում էին Օարժման դեկավարները: Հասնելով Խոջալու՝ ընդհարվում են զինված ջոկատների հետ: Հա-

լերի կողմից 40 հոգի վիրավորվում են, որոնցից 23-ին փոխադրում են հիվանդանոց: Այդ նույն ժամանակ Ստեփանակերտի ուղղությամբ գնդակոծություններ են սկսվում Կրկժանի կողմից: Սեպտեմբերի 19-20-ին Ստեփանակերտում, որպես կենտրոնական իշխանությունների ձեռնարկած քայլերի դեմ բողոքի մշան, սկսվում է մատացույց, որին մասնակցում են նաև մանկավարժական ինստիտուտի դասախոսները:

Այդ իրադարձություններից մեկ օր առաջ, մարզկոմի բյուրոն, սեպտեմբերի 17-ին, քննարկել էր «Ստեփանակերտ քաղաքում վերջին օրերի իրադարձությունների մասին» հարցը և արձանագրել, որ քաղաքում վիճակը խիստ բարդացել է, գործադուլը կրում է համընդհանուր բնույթ: Այն ընդգրկել է նաև դպրոցները, նախադպրոցական և մանկական հիմնարկները: Մարզկոմի բյուրոն, դատապարտելով գործադուլները, հակակառավարական և հակապետական ելույթները, Ստեփանակերտ քաղաքի և ամբողջ մարզի բնակչությանը կոչ էր անում վերջ տալ գործադուլներին, պահպանել հանգստություն, զսպվածություն, չենթարկվել ամեն տեսակ սադրիչ գործողությունների և անպատասխանատու հայտարարությունների<sup>44</sup>:

Լեոնային Ղարաբաղում ստեղծված այդ ծանր վիճակի մասին մի խումբ կոմունիստներ, պատերազմի և աշխատանքի վետերաններ, 51 հոգի, սեպտեմբերի 20-ին դիմում են հղում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ Լեոնային Ղարաբաղի առնչությամբ ստեղծված հանձնաժողովի նախագահ Ա. Ի. Վոլսկուն, որտեղ ասված է, թե տասնամյակների պայքարի փորձ ունեցող այդ անձնավոր մարդիկ այսօր իրենց խաբված են զգում խորհրդային վարչակարգից և կառավարության ոչ ճիշտ քաղաքականությունից: Դիմումի հեղինակներն անկեղծորեն շարադրելով այն, ինչի մասին մտածում էին, իրենց բարոյական իրավունքն են համարում պնդել, որ «ստեղծված ներկա իրադրությունը պահանջում է մեր պրոբլեմի վերջնական և արդարացի լուծում» և, «ուղղել թույլ տված սխալը»<sup>45</sup>:

Արցախահայության արդարացի պահանջը պաշտպանելու գործում հաջողվուրդը հետզհետե ավելի էր դառնում վճռական: Թե՛ «Ղարաբաղ» կոմիտեի, թե Հայաստանի կուսակցական ու պետական մարմինների և թե՛ հասարակական կազմակերպությունների ու քաղաքական ուժերի ներկայացուցիչները հաճախակի էին լինում Ղա-

րաբաղում, մոտիկից ծանոթանում արցախահայության պայքարին և հնարավորին չափով սատար կանգնում նրան: Արցախահայության այդ համատրության և նրա միավորված լինելու մասին սեպտեմբերի 14-ին Երևանում տեղի ունեցած հանրահավաքում պատմեց Ռաֆայել Ղազարյանը:

— Ես Ստեփանակերտից վերադարձել եմ երեկ, սեպտեմբերի 13-ին, որտեղ եղել եմ երկու օր: Իրոք, այնտեղ վիճակը շատ է ծանր: Ղարաբաղցիներն իրենց ղեկավարների հետ միավորված են ինչպես մի բուննք: Այդ միասնության մեջ են մտնում ԼՂԻՄ-ի ղեկավարությունը, Տնօրենների խորհուրդը, «Կոունկը» և ամբողջ ժողովուրդը: Ադրբեջանի ղեկավարությունը փորձում է այնտեղ իրագործել սոցիալ-տնտեսական ծրագիր, բայց դարաբաղցիները չեն հավատում: Ծուշիում և մարզի տարածքում գտնվող ադրբեջանական բնակավայրերում մեծ թվով ադրբեջանցիներ են կուտակվում: Թե այդպես շարունակվի, մեկ տարուց հետո Ղարաբաղի հարցը վճռված կլինի հոգուտ Ադրբեջանի: Ես մասնակցել եմ Տնօրենների խորհրդի նիստին և հիացել նրանց կազմակերպվածությամբ: Կարճ, գործնական, ընդհանրացված ելույթներ և վճռական որոշում: Նրանք դեմ են որևէ կերպ Ադրբեջանին ենթարկվելուն: Նրանց պահանջը միանշանակ է. եթե հիմա չմիանան Հայաստանին, ապա, ծայրահեղ դեպքում, անջատվել Ադրբեջանից: Հիմա նրանց կարգախոսն է՝ անջատվել<sup>46</sup>:

1988 թվականի աշնան սկզբին Ծարժման ղեկավարները բազմաթիվ վերլուծություններից հետո հանգեցին այն մտքին, որ ռազմավարական տեսակետից նպատակահարմար է «Միացում» կոչը փոխարինել «Անջատում» կոչով: Ծիշտ է, դա ժամանակավոր մահանջ էր ընդհանուր սկզբունքից, պնդում էին Ծարժման ղեկավարները, բայց տվյալ ժամանակաշրջանում՝ ճիշտ քայլ:

Վերոհիշյալ հանրահավաքում ելույթ ունենալով՝ Ստեփանակերտի Տնօրենների խորհրդի անդամներից մեկը հաղորդում է, որ Ստեփանակերտ է ժամանել ութ հոգուց բաղկացած քննչական մի խումբ, գլխավոր քննիչ Բոգոմոլսկու գլխավորությամբ: Նրանք անմիջապես երեք օրով փակել են թաղման բյուրոն, հետո այլանդակություններ սարքել քաղաքային գերեզմանոցում: Այդ անօրինությունը սարքել է



Ադրբեջանի գլխավոր դատախազ Իսմայիլովը: Նրանց նպատակն է գործ սարքել Արկադի Մանուչարովի, տպարանի տնօրեն Յուրի Ներսիսյանի, մետաքսի կոմբինատի տնօրեն Ռաֆիկ Աթաջանի և այլոց նկատմամբ: Ի պատասխան այդ գործողությունների, մարզում սեպտեմբերի 12-ից հայտարարվել է համընդհանուր գործադուլ. պահանջելով՝

1. Մինչև սեպտեմբերի վերջը Ղարաբաղից դուրս բերել բոլոր «փախստականներին» և դադարեցնել նրանց օգնություն ցույց տալը ու բնակարաններ հատկացնելը:

2. Մինչև ԼՂԻՄ-ի հիմնախնդրի լուծումը դադարեցնել հիմնարկ-ձեռնարկությունների բոլոր տեսակի ստուգումներն ու վերստուգումները:

3. ԼՂԻՄ-ի դատախազությունը հանել Ադրբեջանի դատախազության ենթակայությունից և թողնել ԽՍՀՄ Գերագույն դատախազության ենթակայության տակ:

4. Դադարեցնել Օուշիի և Աղդամի հայության նկատմամբ բոլոր տեսակի ստորացումները:

Մեր պահանջների մասին հեռագրել ենք նաև Հայաստանի կոմկուսի պլենումի նախագահությանը և խնդրել մեզ պաշտպանել կենտրոնական իշխանությունների առաջ: Այստեղ ես արտահայտում եմ ամբողջ արցախահայության ցանկությունն ու պահանջը: Մենք կկանգնենք մինչև մահ, մինչև մեր հաղթանակը<sup>47</sup>:

1988-ի հոկտեմբերի 3-ին Ստեփանակերտ է ժամանում Ազգությունների խորհրդի նախագահ Ավգուստ Վոոսի գլխավորած հանձնաժողովը, որի հետ արցախահայությունը որոշ հույսեր էր կապում: Հանձնաժողովը չորս օր շարունակ ուսումնասիրում է Լեռնային Ղարաբաղի ընդհանուր վիճակը և, Մոսկվա վերադառնալով, զեկուցում, ուր հարկն է: Հանձնաժողովին օժանդակելու համար Երևանից ժամանել էին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Լևոն Տեր-Պետրոսյանը և Բարկեն Արարքցյանը, ինչպես և Զորի Բալայանը: Երևան վերադառնալուց հետո Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարում է, թե հանձնաժողովը հոկտեմբերի 4-ին մարզկոմում հանդիպել է Տնօրենների խորհրդի և «Կոունկի» անդամների, մշակույթի ներկայացուցիչ-

ների, մտավորականության, արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողների հետ: Հանձնաժողովին առաջարկվել է, որպես ժամանակավոր քայլ, Ղարաբաղը դուրս բերել Ադրբեջանի կազմից և թողնել Մոսկվայի ենթակայության տակ<sup>48</sup>:

Ղարաբաղ եկած Արկադի Վոլսկին պարզապես հանձնակատար էր, բայց փորձված ու խորամանկ: Նա հանդիպումներ էր ունենում Ծարժման ակտիվիստների հետ, և փորձում նրանց համոզել պաշտպանել Գորբաչովյան կուրսը: Համլետը պատմում է.

– Սեպտեմբերին առաջին անգամ, երբ հանդիպում ունեցա Արկադի Վոլսկու հետ, նա շատ սիրալիք ընդունեց ինձ, «Կոունկի», Տնօրենների խորհրդի, մարզի մտավորականության անունից նրան ներկայացրի հետևյալ պահանջը. եթե մարզը դուրս չէք բերելու Ադրբեջանի կազմից ու չէք միավորելու Հայաստանին կամ թողնելու Մոսկվայի ենթակայության տակ, ապա լավ կլինի վերադառնաք Մոսկվա: Մենք երբեք չենք նահանջելու մեր պայքարից: Նրա հետ ես խոսեցի դարաբաղցու ուղղամտությամբ և առանց խորհուրդողությունների:

Նույնը կրկնել եմ Ավգուստ Վոոսի գլխավորած հանձնաժողովի հետ հանդիպման ժամանակ ունեցած իմ ելույթում: Սակայն մեր խնդրանքներն ու պահանջները չէին անցնում: Այդ օրերին իմ մեջ ծնվեց հացադուլի դիմելու գաղափարը: Մտածում էի, գուցե այդ ձևով մեր ձայնը հասցնենք Մոսկվա և ստիպենք, որ խորհրդային ղեկավարները մտածեն արցախահայության մասին: Ընդհատ է, հացադուլը ծայրահեղ քայլ է, բայց ուրիշ ի՞նչ անելիք: Հոկտեմբերի 18-ին Մոսկվայում սկսվում էր Սոււմգայիթի հանցագործների դատը: Մտածում էի ինչ-որ ձևով ազդել նաև դատական ընթացքի վրա:

Եվ այսպես, 1988 թ. հոկտեմբերի 20-ի երեկոյան ժամը 21-ն անց երեսունին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի նախարահում երևաց մի պաստառ, հետևյալ գրությամբ. “Объявляю голодовку с 21, 30. Не разрывайте наш коллектив. 20 октября 1988 г.” Այնուամենայնիվ, հացադուլի հիմնական առիթը հանդիսացավ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը Կիրովական տեղափոխելը: Հաջորդ օրը հացադուլավոր Համլետ Գրիգորյանին միացան ուսանողներ Ի. Ծատրյանը, Գ. Բեգլարյանը, Ա.Խա-

չատրյանը և Գ. Հարությունյանը: Այդ նույն օրն էլ երկրի լրատվական միջոցները հաղորդեցին Համլետ Գրիգորյանի և ուսանողների հացադուլի մասին: Հոկտեմբերի 22-ին Ստեփանակերտի բնակիչ Նաիրի Սաֆարյանը հեռագրով հայտնում է ԽՍՀՄ առողջապահության նախարար Չագովին և ԼՂԻՄ-ի մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանին, որ հացադուլավոր Համլետ Գրիգորյանը նույնիսկ հրաժարվում է ջրից<sup>49</sup>:

Ծատերն էին անհանգստացած Համլետի առողջության համար: Երևանի կանանց անումից Գալստյանը, Անեյանը, Դանիելյանը, Խորենյանը, Սարգսյանը, Վարդանյանը և Ավետիսյանը Համլետ Գրիգորյանին ուղարկած հեռագրում խնդրում են դադարեցնել հացադուլը, շեշտելով, որ «Արցախյան պայքարին հարկավոր են ակտիվ պայքարողներ», և որ «դուք պայքարին հարկավոր եք առողջ և ուժեղ»:

Հացադուլավոր Համլետ Գրիգորյանը իր ձեռքով ռուսերեն գրում է և ներքին գործերի մարզային վարչության պետ Ռ. Ս. Թումանյանին ուղարկում հետևյալ պահանջները՝

«1. Ստեփանակերտում վերացնել պարետային ժամը:

2. Հիմնավորել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փակումը:

3. Համաձայն ենք լինել Երևանի բուհերից մեկի կազմում, եթե ԼՂԻՄ-ում վարձակալությամբ կտրվի որևէ շենք»:

Սակայն ներքին գործերի վարչությունը հրաժարվում է որևէ պատասխան տալ: Դեռ, ավելին, ներքին գործերի վարչության աշխատողների կողմից ինստիտուտի դասախոսներին և ուսանողներին հանում են շենքից:

Ի պատասխան ստացվող բազմաթիվ բողոքների, մարզկոմի քարտուղար Վ. Աթաջանյանը Համլետ Գրիգորյանին և հացադուլավոր ուսանողներին ուղարկում է հետևյալ պատասխանը՝

1. Կուսակցական և խորհրդային տեղական մարմինները հատուկ ջրջանի պարետին առաջարկել են վերացնել պարետային ժամը:

2. Ստեղծված նման իրավիճակում անհնար է դարձել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի գործունեությունը:

3. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պարապ-

մուցները ԼՂԻՄ-ի տարածքում կազմակերպելու պահանջը ընդունվում է: Ստեփանակերտում կկազմակերպվի Կիրովականի մանկավարժական ինստիտուտի հեռակա ուսուցման կոնսուլտացիոն կետ: Կիրովական աշխատանքի տեղափոխված դասախոսների Ստեփանակերտի գրանցումը կպահպանվի:

4. Քաղուսուցման տունը կտրվի քաղաքային մշակույթի տանը և էլի ուրիշ հիմնարկությունների, մարզգործկոմի նախկին շենքը կտրվի շախմատի տանը, մանկական արվեստանոցին և այլ հիմնարկների:

Իսկ վերջում՝ կուսակցության մարզկոմը հետագայում ևս կձեռնարկի կոնկրետ քայլեր ձեր կողմից բարձրացված խնդիրները իրագործելու համար: Մարզկոմը կոչ է անում դադարեցնել հացադուլը, որը չի նպաստում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծմանը:

Մարզկոմի այդ պատասխանը ինչ-որ տեղ սփոփչ էր:

Գյուղից՝ Հերհերից, Ստեփանակերտ հասավ մաշրը՝ «Զնարիկը, այնհեր ուսուցչուհին, բավականին դառնություններ տեսած մի կին, որի համար որդու նման արարքը միանգամայն անսպասելի էր: Հորն սպանել էին Ծուշիի բանտում, 12 տարի հեռու էր ամուսնուց, դառնությամբ երեխաներ էր պահել, սկեսոր ու սկեսրայր հողին հանձնել: Հիմա այս ի՞նչ է կատարվում: Ինչպե՞ս թե որդին հացադուլ է հայտարարել: Համլետը մի պահ այքերը բարձրացրեց ու տեսավ մորը՝ դիմացը կանգնած: Ոչ այն է՝ քարկանար, ոչ այն է՝ լուռ մնար: Մայրը, հասկանալով նրա վիճակը, հանգիստ ասաց.

– Ես էլ եմ հացադուլ հայտարարում, – ու նստեց որդու կողքին:

Այդ նույն օրը քույրը՝ Ջուլիետան, Երևանի Թատերական հրապարակում հանդիպում է Խաչիկ Ստամբոլյանին, որը հացադուլի փորձ ուներ և շատ լավ գիտեր Համլետին, խնդրում «Ղարաբաղ» կոմիտեի անունից հեռագրել Համլետին և առաջարկել դադարեցնել հացադուլը: Խաչիկը՝ թե գնանք Լևոնի մոտ: Լևոնը արդեն գիտեր Համլետի հացադուլի մասին: Խոստացավ անպայման զանգել Ստեփանակերտ:

Հացադուլի երրորդ օրը ինստիտուտ է գնում Արկադի Մանուչարովը և «Ղարաբաղ» կոմիտեի, «Կոունկի» ու Տնօրենների խորհրդի ա-

Առնից Համլետին առաջարկում դադարեցնել հացադուլը: Քանի որ Համլետի կողմից առաջ քաշված պահանջները հիմնականում լուծում էին ստանում, ուստի նա յոթերորդ օրը դադարեցրեց հացադուլը: Ուսանողները մեկ օր առաջ էին թողել հացադուլի վայրը: Բայց պայքարը շարունակվում էր: Այդ օրերին էր, որ «Սեմյա» հանդեսի 43-րդ համարում տպագրվեց Ալեքսեյ Սերգեևի «Հատուկ դրության մեջ» հոդվածը, որում օբյեկտիվորեն շարադրվել է արցախահայության ազատագրական պայքարի այդ օրերի ընթացքը: Հեղինակը, լինելով Երևանում և Ստեփանակերտում, տեսնելով Ստեփանակերտի փողոցներում զրահաշապիկով և սաղավարտով զինվորների, նաև տեսնելով խաղաղ, ասես անհոգ կյանքով ապրող արցախցիներին, հիացել էր ծով չունեցող, բայց ծովակալ Իսակով տված, Սուվորովի հայրուհի մայր տված ժողովրդով, որի ապրած զգացմունքները չէին հասկանում վերևում: Հենց այդ վերևները չցանկացան գնալ Սումգայիթից փախստականների հանրակացարանները, լսել նրանց պատմածը: Այդ ժամանակ միայն կհասկանային «խախտված հավասարակշռությունը»: Ցավալիկ այն է, վրդովվում է Ալեքսեյ Սերգեևը, որ չեն ցանկանում տեսնել «իրենց ցավերով, իրենց ուրախություններով, իրենց հույզերով» կենդանի մարդկանց: Մի փոքրիկ քաղաք, և լի ԲՏՏ-ներ ու տանկեր: Նեղության մեջ ապրող Ստեփանակերտը դժվարին օրեր էր ապրում: Խեղճ ու կրակ հյուրանոցը լեփ-լեցուն էր բռնագաղթվածներով: Հեղինակը համոզիչ փաստեր է բերում, որ մանկապարտեզներում երեխաներին տեղ չկա, 5810 դպրոցական տեղին ընկնում է 9118 աշակերտ: Այդպես որքա՞ն պետք է շարունակվեր, այն էլ համատարած գործադուլի պայմաններում: Իրոք, թե՛ Երևանում և թե՛ Ստեփանակերտում մարդիկ հասկանում էին, որ գործադուլը լավ բան չէ: Նրա տված բարոյական և նյութական վնասը շատ մեծ էր: Աշխատանքի վերադառնալուց հետո մարդիկ հաճախ աշխատում էին նաև հանգստյան օրերին: Նրանք գործադուլի էին դիմում, երբ վիրավորում էին նրանց արժանապատվությունը: Արցախահայության և տուժվածների նկատմամբ չկար կարելցանք: Նրանք ապրում էին հույսով և հավատով: Դա էր պահում նրանց, առանց որի շատ դժվար կլիներ: Սակայն ամեն անգամ

վերևից քար էին նետում այդ հույսի և հավատի վրա ու մարդկանց ներսը փոթորկում:

Հետաքրքիր է նաև «Ավրորա» հանդեսի 1988 թվականի 10-րդ համարում տպագրված լեհիճգրադղի հեղինակ Ալեքսանդր Վասիլևսկու «Ամպ է լեռներում»<sup>50</sup> հոդվածը, որտեղ կան այսպիսի տողեր. «ԼՂԻՄ-ի բնակիչների գերակշիռ մասը, որոնք հայեր են, ձգտում է պաշտպանել իր մարդկային ու ազգային արժանապատվությունը»: Հեղինակը մերկացնում է մարզկոմի քարտուղար Բ. Կևորկովի գործունեությունը, ինչպես և սումգայիթյան ողբերգությունը:

Ադրբեջանը Մոսկվայի հզոր ձեռքով նվաճում էր Ղարաբաղը: Ադրբեջանական բնակավայրերում օր-օրի ծավալվող շինարարությունը խիստ անհանգստացնում էր Արցախի և Հայաստանի հայությունը: 1988-ի մայիսի 6-ին Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե հայ ժողովուրդը կորցնում է Ղարաբաղը, եթե այսօր դա չհասկանանք, ապա հետո ուշ կլինի: Պետք է անհապաղ դիմենք վճռական քայլերի: Այսօր Ադրբեջանի կողմից Ղարաբաղում իրագործվող շինարարական ծրագիրը ավելի սարսափելի է, քան Սումգայիթի ցեղասպանությունը: Ադրբեջանի շինարարությանը պետք է հակադրենք մեր շինարարությունը, որպեսզի բոլոր փախստականներին տեղավորենք այնտեղ: Ղարաբաղը փրկելու համար մոտ ժամանակներս մեզնից կպահանջվի մարդկային հնարավորություններից վեր ջանքեր: Ղարաբաղը հայ ժողովրդի ճակատագիրն է: Եթե Ղարաբաղի հարցը այսօր չլուծենք, ապա այն կլուծվի ապագայում, սակայն դրա համար կպահանջվեն ավելի շատ զոհեր»<sup>51</sup>:

Ղարաբաղում շինարարական ծավալում աշխատանք սկսելու «Ղարաբաղ» կոմիտեի կոչը լայն արձագանք գտավ ամբողջ Հայաստանում: Մի քանի օրվա ընթացքում կազմվում է շինանյութերով բեռնավորված երկու ավտոշարասյուն (80 ավտոմեքենայից բաղկացած) և ուղարկվում Ղարաբաղ:

Հայ ժողովրդի, առանձնապես արցախահայության, պատմության մեջ 1988 թվականի նոյեմբերը շատ ավելի լարված և դրամատիկ իրադարձություններով հարուստ ամիս էր:

- Եվ զարմանալիորեն դիմանում էինք, - ծպտում է Համլետը: - Մի տեսակ ավելի էինք կարծրացել: Բռնագաղթ, գործադուլ, շրջափակում, բանտարկություններ, բանակի հետ ընդհարումներ, Մոսկվայի և Բաքվի կողմից օր-օրի ավելի ուժեղացող ճնշումներ, փախստականների անվան տակ երկրամասում հազարավոր թուրքերի տեղավորում... Ո՞ր մեկը թվարկես:

Ինստիտուտի ուսանողա-դասախոսական կազմը տեղափոխվել էր կիրովական: Բայց ես մնացի: Կիրովականի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 2000 թ. դեկտեմբերից ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռաֆիկ Էդոյանը, լավ իմանալով մեր վիճակը, ճիշտ գնահատեց իմ վճռականությունը կիրովական չտեղափոխվելու հարցում: Իմիջիայլոց, վերջերս Երևանի պետական համալսարանի 80-ամյակի կապակցությամբ կրկին հանդիպեցի պարոն Էդոյանին: Մենք խոսելու և հիշելու շատ բան ունեինք: Իրոք, նա շատ էր օգնում դարաբաղդի ուսանողներին և դասախոսներին: Առանց չսփազանցելու, նա Ղարաբաղյան մեր պայքարի ակտիվ աջակիցներից էր:

Ադրբեջանը նոր սադրանքներ էր սարքում Ղարաբաղում, որի նպատակն էր ձերբակալել Ծարժման ակտիվիստներին: Մարգային իշխանությունները հարց էին բարձրացրել առժամանակ մարզում ստուգումներ չկատարել, մինչև լարված իրավիճակը կթուլանա: Սակայն, հակառակ այդ ամենի, իբրև խոշոր յուրացումներ հայտնաբերելու ակնկալիքով, փորձում էին ստուգումներ կատարել Ծարժման ղեկավարների, եթե նրանք պաշտոնյա էին հիմնարկներում: Ամենից առաջ հարվածի նետն ուղղել էին Արկադի Մանուչարովի դեմ: Այդ ճանապարհով նրանք նաև ձգտում էին արցախահայության, մանավանդ Ծարժման ղեկավարների ուշադրությունը շեղել ադրբեջանական բնակավայրերում օր օրի ծավալվող շինարարությունից: Ադրբեջանի տեղեկատվության միջոցները շարունակում էին «մրոտել» հայ ժողովրդին, առանձնապես արցախահայությանը: Եվ այդ ամենը

պատճառ հանդիսացան նոյեմբերի 14-ից համընդհանուր գործադուլ սկսելու: Գործադուլավորները պահանջում էին՝

1. Պահանջել ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ԳԽ պատգամավորներից քննարկման մտցնել Լեոնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը:

2. Պահանջել ԽՍՀՄ Գերագույն խորհրդից քաղաքական գնահատական տալ փետրվարի 27-29-ին Սումգայիթում տեղի ունեցած սպանդին և պատասխանատվության ենթարկել կազմակերպիչներին:

3. Պահանջել Ադրբեջանի ղեկավարությունից Լեոնային Ղարաբաղից դուրս բերել «Հայաստանից փախստականներին»:

4. Անհապաղ դադարեցնել անօրեն շինարարությունները:

5. Վերացնել պարետաչին ժամը:

6. Պաշտոնից հեռացնել ԽՍՀՄ դատախազության ներկայացուցիչ Վասիլենկոյին:

7. ԼՂԻՄ-ում դադարեցնել բոլոր տեսակի ստուգումներն ու վերստուգումները:

8. Մարգային ղեկավարներին հնարավորություն տալ հանդես գալ կենտրոնական մամուլի էջերում և կենտրոնական հեռուստատեսությամբ:

9. Անհապաղ վերացնել Հայաստանից Լեոնային Ղարաբաղ բերող բոլոր ճանապարհների շրջափակումը<sup>52</sup>:

Մինչ այդ, նոյեմբերի 4-ին, տեղի էր ունեցել ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման մարգային խորհրդի 9-րդ նստաշրջանը: Այն ընդունեց «Լեոնային Ղարաբաղի» հիմնախնդրի լուսաբանման նկատմամբ մասսայական լրատվական միջոցների վերաբերմունքի մասին» որոշումը, որով դատապարտվում էր «Կենտրոնական և Ադրբեջանի հանրապետական մամուլում ու հեռուստատեսության մեջ տեղ գտած միտումները և սադրիչ ելույթները որպես քաղաքականապես վնասակար, որոնք վիրավորում են հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը»<sup>53</sup>:

Ծոշ գյուղի մոտ գտնվող Խաչին տափ կոչված տեղամասում նոյեմբերի 9-ին սկսվում է Երևանի Կանազ գործարանի հանգստյան տան շինարարությունը, որի համար կային պահանջվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Այդ առթիվ Ադրբեջանում սկսվում է հակա-



հայկական նոր հիստորիա, շխորշելով կեղծիքի, շանոածի, սեփական ժողովրդին խաբելու մեթոդից: Արկադի Վոլսկու ցուցումով խաչին տափում շինարարությունը ժամանակավորապես դադարեցվում է, մինչև Մոսկվայից «հատուկ հանձնաժողով գալը»: Նույնների 25-ին հանձնաժողովը տվեց իր եզրակացությունը, շինարարությունը տարվում է օրենքով, և Ադրբեջանի բողոքն անհիմն է: Այդ հանձնաժողովը մինևույն ժամանակ նշեց Խոջալուում տարվող շինարարության անօրեն լինելու մասին:

1988-ի նույնների 16-ին և 17-ին փորձ արվեց ձեռքակալել Ստեփանակերտի շինանյութերի արտադրության կոմբինատի տնօրեն, «Կոունկ» կոմիտեի նախագահ Արկադի Մանուչարովին: Ահա թե այդ առթիվ ինչ է պատմում Համլետը.

– Նույնների 17-ի ցերեկը Կոմունիստական փողոցի 40-րդ տունը շրջապատում են իբրև կարգ ու կանոն պաշտպանող զինվորականները և բնակչության նկատմամբ թույլ տալիս անկարգություններ: Նրանք ականազերծող բահերով և դագանակներով ծեծում են ծերունիներին և կանանց ու մարմնական վնասներ պատճառում: Տուժվում են Շուրա Հաբությունյանը, Դիանա Հակոբյանը, Սեդա Ասժատրյանը, Արաքսյա և Ռուբեն Շումանյանները, Աբրահամ Հովհաննիսյանը և ուրիշներ, շուրջ 20 հոգի: Եվ բոլորն էլ դիմում են բժշկական օգնության: Այդ ամենի մասին գրավոր շարադրված ու լուսանկարներով նույնների 19-ին հանձնել են Ստեփանակերտ ժամանած ԽՍՀՄ Գերագույն դատախազ Ա. Յ. Սուխարևին:

Մարգարյանի հիվանդանոցի բժիշկ Ռ. Ղազարյանի, մանկավարժական ինստիտուտի դասախոսներ Համլետ Գրիգորյանի, Արգիլ Մխիթարյանի, գրող-լրագրող Հրաչիկ Բեգլարյանի և դրամատիկական թատրոնի տնօրեն Ա. Ստեփանյանի ստորագրությամբ նույնների 19-ին դիմում է հանձնվում Ա. Յ. Սուխարևին, որում շարադրված է Ադրբեջանի բարբարոսների կողմից 1988 թ. փետրվարից հետո ընկած ժամանակաշրջանում Ղարաբաղում կատարված վայրագությունների մասին: ԽՍՀՄ գլխավոր դատախազի առաջ դրվել են կոնկրետ փաստեր և նրան խնդրել այդ ամենի մասին տեղյակ պահել կենտրոնական իշխանություններին, անմիջապես նրանց հասցնել

արցախահայության հիմնական պահանջը՝ Լեռնային Ղարաբաղը դուրս բերել Ադրբեջանի կազմից և վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին:

Ստեփանակերտում բանակի և բնակչության մեջ նույնների 17-ին տեղի ունեցած ընդհարման մասին անմիջապես իմանում են ամբողջ երկրում: Այդ նույն օրը Երևանում տեղի ունեցած միտինգում Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե Ղարաբաղում զինվորականների և ժողովրդի միջև տեղի է ունեցել ընդհարում: Զինվորականները գիշերը փորձել են ուժով մտնել «Կոունկի» նախագահ Արկադի Մանուչարովի բնակարանը և ձեռքակալել նրան: Բնակչությունը պաշտպանել է իր առաջնորդին: Վիրավորվողներից յոթ հոգի տեղափոխվել է հիվանդանոց: Դա բացահայտ բարբարոսություն է<sup>54</sup>:

Այդ օրերին կազմված փաստաթղթերից և ակամատեսների պատմածներից պարզվում է հետևյալը. նույնների 17-ի լույս 18-ի գիշերը, ժամը 4-ն անց կեսին, հինգ տանկով և 500 զինվորներով շրջապատում են Ստեփանակերտի Կոմունիստական փողոցի 40-րդ շենքը, որտեղ գտնվում էր Արկադի Մանուչարովի բնակարանը: Ռոյես Աղաջանյանին և ուրիշների հաջողվում է Մանուչարովին դուրս բերել շենքի տանիքով և փրկել ձեռքակալությունից: Այդ գործողությունը զլխավորում էին ԽՍՀՄ դատախազության աշխատողները Կարտաշևի զլխավորությամբ: Նախօրոք անջատել էին շենքի էլեկտրականությունը, հեռախոսները: Բնակչության բարձրացրած աղմուկ-աղաղակի վրա հավաքվում են հարևան շենքերի բնակիչները: Այստեղ էր նաև Համլետը, որը փորձում էր բնակչությանը հետ պահել ընդհարումներից: Կինը՝ Բելան, լուսանկարում է զինվորականների գործողությունները: Հենց նրա կատարած լուսանկարներն են հետո հանձնվում Սուխարևին: Զայրացած ու համբերությունից դուրս եկած բնակիչները քարեր ու փայտեր են նետում զինվորականների վրա: Ինչպես հետո պարզ դարձավ, Մանուչարովին ձեռքակալելու վավերացումը տվել էր ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Կատտուկը, որը հաշտնի է Սումգայիթում հայերի ցեղասպանության փաստը կեղծելու մեջ: Ստեփանակերտցիների ակտիվ գործողությունների շնորհիվ Արկադի Մանուչարովին հաջողվում է խուսափել ձեռքակալվելուց և տեղափոխվել Երևան, որտեղ ձեռքակալվում է նույնների 28-ին:

Արկադի Մանվելի Մանուչարովը ծնվել է 1931 թ. Լեռնային Ղարաբաղում: «Կոունկի» առաջնորդը 58 տարեկան էր, ԽՄԿԿ անդամ, բազմաթիվ նորարարական առաջարկությունների և 30 հայտնագործությունների հեղինակ, սոցմրցման հաղթող, Աշխատանքային կարմիր դրոշի և Ժողովուրդների բարեկամության շքանշանակիր, «Տաշքենդի շինարարության գերազանցիկ»՝ երկրաշարժից հետո քաղաքի վերականգնմանը մասնակցելու համար:

...Մանուչարովին տանում են Հայաստանի ՆԳՆ: Նախարարի տեղակալ Երիկը մտնելով սենյակ, շատ քաղաքավարի իր մոտ է հրավիրում Մանուչարովին և ասում՝ 20 րոպեից բաց կտողնի: Ուղիղ 18 ժամ հետո նրան ուղղաթիռով տանում են Ադրամ, որին օդանավակայանում «դիմավորելու» էին եկել մի քանի հազար աղբյուրացի: Մինչ այդ Շուշիում, Ադրամում, Սումգայիթում, Բաքվում և այլուր կախել էին Մանուչարովի նկարով պլակատներ, «5000000 ոտբի է հավաքվել Ադրբեջանում Մանուչարովի գլխի համար» գրությամբ: Ադրամից զրահամեքենայով, 20 ավտոմատավորների ուղեկցությամբ տեղափոխում են Շուշիի բանտը: Երբ նա փորձում է բողոք հայտնել Շուշի տանելու դեմ, բանտապահներից մեկը բառացիորեն ասում է հետևյալը. «Ոչինչ էլ չես կարող անել, քո գլխի համար մենք միլիոններ ենք վճարել»<sup>55</sup>:

Արկադի Մանուչարովին Շուշիի բանտում պահեցին 45 օր: Պարզ է, թե ինչպես էին վերաբերվում նրա հետ: Առաջին օրերին մերկացնում էին և օրական երեք անգամ տանում բակ, ուր ջերմաստիճանը զրոյից ցածր էր: Նրա մենախցից հանել էին ջեռուցման մարտկոցները, ներքնակի փոխարեն լաթի կտոր էին տվել, քնում էր մետաղացանցի վրա: Ամեն պահի նրան ստորացնում էին, ծաղրում, գնդակահարության և նրա ընտանիքի անդամներին ձերբակալելու սպառնալիքով փորձում կեղծ ցուցմունքներ կորզել: Ստորությունների էին դիմում ԽՍՀՄ դատախազության քննիչներ Մայդանյուկը, Կարտաշևը և Խիտրիկը: Նրա գործով ձերբակալվել էին մոտ 150 գործընկերներ, որոնց նույնպես ծեծել էին և ստիպել տալ կեղծ ցուցմունքներ: Ոմանք չեն դիմացել ֆիզիկական ու բարոյական ճնշմանը: Սակայն հետագայում հրաժարվել են իրենց ցուցմունքներից:

Հայաստանի և Ղարաբաղի հասարակայնության պահանջներից հետո միայն Մանուչարովին փոխադրեցին Մոսկվայի բանտը, որտե-

ղից 1,5 ամիս անց կրկին բերում են Շուշիի բանտը: Արկադի Մանուչարովը Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր էր: ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ԳԽ պատգամավորներ Ջորի Բալայանը, Վաչագան Գրիգորյանը, Հայաստանից ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր Գալինա Ստարովյուտովան, ակադեմիկոս Անդրեյ Սախարովը հարցապնդում են մտցնում ազատել «Ղարաբաղ» կոմիտեի 11 անդամներին, ինչպես և Իգոր Մուրադյանին, Խաչիկ Ստամբուլցյանին և Արկադի Մանուչարովին: 1989 թվի նոյեմբերի 4-ին ակադեմիկոս Սախարովը և Գալինա Ստարովյուտովան այցելեցին Բուսիդյան բանտը և Մանուչարովին հանձնեցին նույն թվականի օգոստոսի 27-ին Չարենցավանի 194-րդ ընտրական տարածքից Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր ընտրված լինելու վկայականը<sup>56</sup>: Արկադի Մանուչարովը կալանքից ազատվեց 1990 թվականի մայիսի 29-ին: Այդ նույն օրը նախ Բուսիդյան բանտի, ապա «Մոսկվա» հյուրանոցի մոտ տեղի ունեցան միտինգներ: Եվրոպայից եկած մի լրագրող այսպես բնութագրեց այդ երևույթը. «Մեր ժողովուրդներին ոգեշնչեց փոքրիկ Ղարաբաղի պայքարն ընդդեմ հսկայական ոստիկանական պետության: Ղարաբաղը մեզ ուժ տվեց ու հույս, որովհետև մենք զգացինք՝ վախը կարելի է հաղթահարել, որ համակարգը երեքացել է: Այսօր մենք արդեն ազատ ենք, իսկ դուք՝ ազատագրական շարժումը նախաձեռնողները՝ ոչ»<sup>57</sup>:

Ղարաբաղում իրադարձություններն ավելի բարդացան 1988-ի նոյեմբերի վերջին տասնօրյակում և դեկտեմբերի սկզբին: Այդ առթիվ Համլետը պատմում է.

– Արկադի Մանուչարովի ձերբակալությունը մեծ հարված էր Ծարժմանը: «Կոունկը» համարյա դադարել էր գործելուց: Տնօրենների խորհուրդը թույլ էր աշխատում: Չկար նաև Ծարժման կենտրոններից մեկը՝ մանկավարժական ինստիտուտը, դասախոսների մեծ մասը և ուսանողները տեղափոխվել էին Կիրովական: Անհրաժեշտ էր դուրս գալ գործադուլից: Տնօրենների խորհրդում պաշմանավորվեցին դեկտեմբերի 5-ից վերսկսել աշխատանքները: Ամեն օր հարյուրավոր բռնագաղթված ընտանիքներ էին գալիս Ղարաբաղ: Նրանց տեղավորման գործին լծվեցին մարզային իշխանությունները, հասարակական ուժերն ու մտավորականությունը: Մեր աչքի առաջ Խոջալուն, Մալիբեյլուն, Խոջալենդը, Ջանհասանն ու Լեւոնա-

յան արագորեն լցվում էին թորքերով: Էլ չեմ խոսում Ստեփանակերտին կապած կրկնակի մասին: Դեռևս շարունակում էինք հույներ կապել Վոլսկու հետ: Այդպես էլ մինչև վերջ չհասկացանք նրա աճապարությունները: Հայաստանից ստացվող շինանյութով փախստականների համար տներ էին կառուցվում: Այդ ուղղությամբ աշխատանքներն արագ էին ընթանում Հայկավանում: Հաղթանակի հրապարակում տեղի ունեցող ցույցերն ու հանրահավաքները չէին ընդհատվում: Քանի գնում, աչքքան խորանում էր մեր ատելությունը խորհրդային զինված ուժերի նկատմամբ: Այդ վիճակում էինք, երբ Հայաստանում տեղի ունեցավ աշխարհացունց երկրաշարժը...

Այո՛, երկրաշարժը նոր չափանիշ մտցրեց ստեղծված բարդ իրավիճակում: 1988-ի դեկտեմբերի 7-ին հայ ժողովրդի գլխին պայթեց աղետներից ահավորագույնը, հիմնովին ավերվեցին Լեռնականը, Սպիտակը, հսկայական վնասներ ստացան Կիրովականը, Ստեփանավանը և այլ բնակավայրեր: Զոհերի թիվը հասավ 25 հազարի, 530 հազար մարդ մնաց անօթևան: Պահը ծանր էր, կորուստներն՝ ահռելի, հայ ժողովրդի վիշտը՝ անսփոփ:

Արցախահայությունը սգո մեջ էր: Դեկտեմբերի 8-ից սկսեցին աշխատել բոլոր ձեռնարկությունները:

– Կոչով դիմեցինք երկրամասի բնակչությանը՝ ով ինչով և ինչքանով կարող է՝ օգնություն ցույց տա, – շարունակում է Համլետը: – Ասացին՝ արյուն է հարկավոր: Առաջիններից մեկը ես գնացի արյուն հանձնելու: Հանգանակությանը մասնակցում էին բոլորը: Մեր ցավը մոռացել էինք: Նաև պատրաստակամություն հայտնեցինք Արցախում տեղավորել անօթևան մնացած մի քանի հազար ընտանիքի: Ստեփանակերտի բնակսոցքանկում բացվեց 114253 հաշվի համարը: Արդեն դեկտեմբերի 19-ի դրությամբ այդ հաշվին փոխանցվեց 4 միլիոն 477 հազար 800 ուրվի, իսկ դեկտեմբերի վերջի դրությամբ՝ հինգ միլիոն ուրվի: Ստեփանակերտից աղետի գոտի մեկնեց ավտոշարայուն: Հարյուրավոր արցախցիներ մասնակցեցին փրկարարական աշխատանքներին:

Երկրաշարժի գոտու փրկարարական աշխատանքները ղեկավարող ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը և ԽՍԿԿ Կենտկոմի քարտուղար Ն. Սլյունկովը դեկտեմբերի 16-ին Հայկոմկուսի Կենտկոմում ընդունեցին Լեռնային Ղարաբաղից եկած

պատվիրակությանը՝ մարզգործկոմի նախագահի տեղակալ Ծմավոն Պետրոսյանի գլխավորությամբ<sup>58</sup>: Մասնավորապես քննարկվեց Ղարաբաղի և Հայաստանի միջև անվտանգ ավտոբուսային հաղորդակցության ապահովման հարցը: Ն. Ռիժկովը խոստացավ այդ հարցը կարգավորել: Սակայն դա մնաց միայն խոստում, որովհետև դեկտեմբերի 19-ից սկսած գրեթե լրիվ դադարեց ավտոբուսների երթևեկությունը: Օդային ճանապարհը ևս համարյա փակվեց, երկու օրվա ընթացքում՝ լավագույն դեպքում լինում էր մեկ ուղերթ: Երևանի «Էրեբունի» օդանավակայանում և երկաթուղային կայարանում դարաբաղի հազարավոր մարդիկ պասսում էին ու չէին կարողանում մեկնել հայրենիք, որովհետև նրանց համար ստեղծվել էին արհեստական արգելքներ:

Ղարաբաղյան շարժմանը նոր շունչ հաղորդվեց, երբ 1988-ի դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղ այցելեցին Անդրեյ Սախարովը, Ելենա Բոները և Գալինա Ստարովոյտովան: Նրանք եղան Ստեփանակերտում և Օուշիում, հանդիպումներ ունեցան Արցախի մտավորականության և երկրամասի ղեկավարության հետ: Ամենուր նրանք պաշտպանում էին արցախահայության արդար դատը:

\* \* \*

«Ղարաբաղ» կոմիտեի անդամներին Արկադի Մանուչարովին և Իգոր Մուրադյանին ձերբակալելով, կենտրոնական իշխանությունները կարծում էին, թե Ղարաբաղյան շարժումը կմարի: Սակայն չարաչար սխալվում էին: Կայսերապետության կապանքներով շղթայված Արցախ-Հայաստանը ոչ մի դեպքում նահանջելու միտում չուներ: Մոսկվան շտապում էր Լեռնային Ղարաբաղում կառավարման հատուկ ձև մտցնել, պատճառաբանելով, թե իբր այն բխում է Ղարաբաղի, Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդների շահերից:

ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը 1989 թ. հունվարի 12-ին քննարկելով ԼՂԻՄ-ի հարցը, ընդունեց հրամանագիր, ըստ որի ԼՂԻՄ-ում ժամանակավոր մտցվում էր կառավարման հատուկ ձև՝ պահպանելով Լեռնային Ղարաբաղի, որպես Ադրբեջանական ԽՍՀ կազմում ինքնավար մարզի, կարգավիճակը: Դադարեցվում էին ԼՂԻՄ 20-րդ գումարման ժողովրդական պատգամավորների խորհրդի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացու-

մը: Այնուհետև սահմանվում էին ԼՂԻՄ կառավարման հատուկ կոմիտեի իրավունքներն ու պարտականությունները: Այդ հրամանագրով դադարեցվում են նաև մարզի ժողովրդական պատգամավորների շրջանային, քաղաքային, գյուղական, ավանային խորհուրդների, նրանց գործադիր և կարգադիր մարմինների լիազորությունները: Հրամանը պետք է կիրարկվեր 1989-ի հունվարի 20-ից: Հաստատվում է կառավարման հատուկ կոմիտեի՝ բաղկացած ութ հոգուց: Կոմիտեի նախագահ է հաստատվում Ա. Ի. Վոլսկին:

Հատուկ կոմիտեի ստեղծումը նպատակ էր հետապնդում պայմաններ ստեղծել և Ղարաբաղը կրկին հանձնել Ադրբեյջանի տնօրինությանը, նրա հոշոտմանը և լրիվ ոչնչացմանը: Դա նաև Ադրբեյջանի ռազմավարական նպատակն էր:

– Դա այդպես է, – հաստատեց Համլետը, – մարզը զրկվեց պետական ու կուսակցական մարմիններից, և մեր վզին փաթաթեցին օտար մարմին: Այդ մասին բացեիքաց ասացի Արկադի Իվանովիչին կոմիտեի նախագահ նշանակվելուց մի քանի օր անց նրա հետ ունեցած հանդիպման ժամանակ: Մենք խոսեցինք ու վիճեցինք առանց որևէ դիվանագիտական երանգների: Ես բարձրացրի Արկադի Մանուչարովին ազատելու, «Կոունկը» վերականգնելու, երկրամասը Մոսկվայի ենթակայության տակ թողնելու, մանկավարժական ինստիտուտը Ստեփանակերտ վերադարձնելու և էլի ուրիշ կարևոր խնդիրների մասին: Ես նրան ասացի, Արկադի Իվանովիչ, ի՞նչ հիմք կա «Կոունկի» գործիչ, մեր Ծարժման ղեկավարներից մեկին կաշտակել և ոմն կոչել՝ ամենատարբեր մակարդակներով, հանցագործ ու մաֆիական մկրտել զանազան եղանակներով, նամանավանդ, որ նա Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր է: Մի մոռացեք, որ մեկ ամիս առաջ Ծուշի եկած ակադեմիկոս Սախարովը չվախեցավ հանդիպում պահանջել Մանուչարովի հետ: Միայն թույլատրեցին ընդամենը նայել բանտախցի դռնակի փոքրիկ անցքից: Մի՞թե սա է Մոսկվայի քարոզած խորհրդային ժողովրդավարությունը: Մի քիչ բորբոքվեցի և էլի շատ բաներ ասացի: Հետագայում արդեն, 90-ական թվականների կեսին, երբ կրկին հանդիպեցի Արկադի Իվանովիչի հետ, նա հիշեց մեր այդ խոսակցությունը և մի տեսակ տխուր ասաց, թե այն ժամանակ ինչ-որ մտածում էր՝ չէր կարող իրագործել Ղարաբաղում, չէին թողնում. պարզապես ձեռքերը կապված էին:

Այնուամենայնիվ, Ղարաբաղում կառավարման հատուկ ձև մտցնելով, ինչ-որ աշխուժություն էր նկատվում, նամանավանդ կազմակերպություններ, կոուպերատիվներ, ազատ ներդրումներ, ազատ խոսք ստեղծելու ու զարգացնելու ուղղությամբ: Օրինակ, հունվարին ստեղծվեց «Ամարաս» բարեգործական կազմակերպությունը, որի կոմիտեի նախագահն էր Բորիս Դադամյանը: Այդ կազմակերպության օրգան «Ամարաս» թերթը չնայած կարճատև գոյությունն ունեցավ, բայց կարևոր դեր խաղաց Ծարժմանը ազդակ հաղորդելու գործում: «Ամարաս» բարեգործական վարչության որոշմամբ կապեր հաստատվեցին Հայաստանի «Գթություն» բարեգործականի հետ և ծավալվեց համատեղ գործունեություն: Երևանում ստեղծվեց «Ամարասի» ներկայացուցչություն՝ լրատվական կենտրոնով, տելեֆաքսով, երևանյան հեռախոսահամարներով: Կենտրոնը ճշգրիտ տեղեկություններ էր տալիս, թե ինչ է առաքվել Արցախ և ինչի կարիք կա: Բեռները Արցախից Երևան և հակառակը տեղափոխվում էին բարեգործականի սեփական ավտոմեքենաներով: Կենտրոնը համագործակցում էր նաև Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Պարգև Եպիսկոպոս Մարտիրոսյանի հետ: Նույն, 1989 թ. մարտի 5-ին Ստեփանակերտում մարզկոմի քաղլուստանը տեղի ունեցավ «Ամարասի» հիմնադիր համագումարը, որին մասնակցեցին մարզի բոլոր շրջաններից 300 ակտիվիստներ: Համագումարը միաձայն վարչության նախագահ ընտրեց Բ. Վ. Դադամյանին: Այդ համագումարին մասնակցեցին նաև Հայաստանի պատվիրակությունը և Հատուկ կոմիտեի ներկայացուցչությունը: Նույն թվականի մայիսի 31-ին «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում Սուրեն Զոյլանը հանդես գալով «Բարի երթ» «Ամարասին» հողվածով, կոչ է անում բոլորին՝ օգնել «Ամարասի» ծրագիրը կենսագործելու, որը բխում էր արցախահայության շահերից:

Կրկին դիմեցի Համլետի պատմածի իմ գրառմանը.

– Իրոք, մարզում կյանքի որոշ աշխուժացման նախանշաններ կային: Բայց, ընդհանուր առմամբ մարզը աղքատանում էր, տնտեսությունը դոփում էր տեղում: Օր օրի ավելանում էր փախստականների թիվը: 1989-ի փետրվարի սկզբի տվյալներով մարզում կային 11,5 հազար փախստականներ, որոնցից 8,5 հազարը՝ Ստեփանակերտում: Դպրոցներում արտասովոր ծանրաբեռնվածություն կար.



մեկ դասարանում պարապում էր 60 երեխա, մանկապարտեզներում 2-3 փոքրիկների բաժին էր ընկնում մեկ մահճակալ: Քաղաքային գրադարանը, երաժշտական դպրոցը և մշակույթի այլ օջախներ գտնվում էին վթարային վիճակում: Հատուկ կառավարման կոմիտեի անդամ Վալերի Սիդորովը փորձում էր բնակչությանը համոզել, թե այդ ամենը կհարթվի, կհայտնաբերվեն բոլոր մեքենայությունները:

Արցախահայերի համար խիստ անտանելի էր անձնագրային ռեժիմ մտցնելը: Ռ՞վ էր մտածել այդ զզվելի միջոցառումը: Ղարաբաղում միայն 1989 թ. հունվար-փետրվար ամիսներին, իբրև զանազան խախտումների և ոմանց անձը պարզելու համար, ուժային մարմիններ են տարվել 10 հազար մարդ, որոնցից կեսից ավելին անձնագրային ռեժիմը խախտելու համար<sup>59</sup>:

1989 թ. փետրվարի 27-ին լրացավ սումգայիթյան ողբերգության մեկ տարին: Հուշահամալիրում կազմակերպվեց սգո հավաք, որին քաղաքի բնակչության հետ մասնակցեցին 2070 սումգայիթցի հայեր: Ելույթ ունեցավ նաև Համլետը: Նրա պատմելով՝ շատ դժվար էր խոսելը: Ի՞նչ պիտի ասվեր այդ բարբարոսության մասին, երբ հանցագործների մեծ մասը, մանավանդ հիմնական կազմակերպիչները, գտնվում էին ազատության մեջ:

1989 թ. մարտի 21-ին ԽՍՀՄ ԳԽ ընտրությունների օրն էր: ԼՂԻՄ-ից թեկնածուներ առաջադրվեցին Հենրիխ Պողոսյանը, Ջորի Բալայանը, Վաչագան Գրիգորյանը, Բորիս Դադամյանը, Վահան Գաբրիելյանը, Արկադի Վոլսկին և Վազիֆ Ջաֆարովը: Քաղաքական նշանակություն ունեցող այդ միջոցառումը Ղարաբաղում կազմակերպվեց բարձր մակարդակով և բոլոր թեկնածուներն էլ ընտրվեցին ԽՍՀՄ ԳԽ պատգամավորներ:

Օրերը ծանրանում էին: Մայիսի առաջին օրը մարզում տարածվեցին թոռուցիկներ, որոնցում կոչ էր արվում դադարեցնել աշխատանքը, սկսել համընդհանուր գործադուլ և ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեին ներկայացնել մի շարք պահանջներ: Մայիսի 3-ից Ստեփանակերտի արդյունաբերական ձեռնարկություններում և հիմնարկների մեծամասնությունում դադարեցվեցին աշխատանքները: Այս գործադուլը բոլորից երկարատևն էր, որը շարունակվեց ավելի քան 3,5 ամիս: Արցախահայությունը գտնում էր, որ «կառավարման հատուկ ձևը չպետք է փոխարինի տեղական, կուսակցական և

խորհրդային մարմինների կառուցվածքին, այլ պետք է վեր կանգնի նրանցից՝ փոխարինելով հանրապետության ղեկավարությանը, որը լրիվ վարկաբեկել է իրեն և նախկին շովինիստական քաղաքականությունն է շարունակում Լեոնային Ղարաբաղի նկատմամբ»: Նրանք պահանջում էին քաղաքական գնահատական տալ Սումգայիթի կոտորածին և պնդում ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ ենթակայությունից և միավորել Հայաստանի հետ<sup>60</sup>:

Հիմա լսե՛ք Համլետին.

– Ամենախոցելին այն էր, որ այդ օրերին Արցախում չկար քաղաքական ուժ, որն իր վրա վերցնէր ազատագրական պայքարի գլխավորումը: Ընդհատակում գտնվող «Կոունկը», բացահայտ գործող ՏԱՕրենների խորհուրդը, ճիշտ է, քիչ աշխատանք չէին կատարում, սակայն չկարողացան վեր բարձրանալ և իրագործել համընդհանուր ղեկավարություն: Այդ տեսակետից ավելի խայտառակ վիճակում էր գտնվում «Ղարաբաղ» կոմիտեն, որի բացերը Ղարաբաղից ավելի տեսանելի էին: Պայքարն իր օրենքներն էր թելադրում, պրպտում էինք ու ելք փնտրում: Հատուկ կառավարման կոմիտեն փորձում էր արցախահայությանը հրապուրել ինչ-որ շինարարական, տնտեսական վերափոխումների և Հայաստանի հետ կապերն ամրապնդելու ծրագրերով: Մեր հիմնական խնդիրը Արցախի վերամիավորումն էր Մայր Հայաստանի հետ: Մնացած բոլորն ածանցյալ էին: Արկադի Վոլսկին մաշկից դուրս էր գալիս երկու ժողովուրդների միջև հիմնելու վստահության կամորջ, չհասկանալով, որ այդ կամորջի հիմքերը վաղուց են քանդվել:

1989 թ. մայիսյան այդ օրերին տեղի ունեցավ մեկ ուրիշ իրադարձություն, որի մասին Համլետը լավ է հիշում.

– Առաջին անգամ մայիսի 28-ին Ստեփանակերտում մասսայականորեն նշեցինք Հայաստանում պետականության վերականգնման օրը: Հազարավոր ստեփանակերտցիներ, դուրս գալով շքերթի, հավաքվեցինք քաղկոմի շենքի դիմաց, հետո շարժվեցինք դեպի Ս. Ծափումյանի անվան մարզադաշտ, որտեղ և տեղի ունեցավ բազմահազարանոց միտինգ: Միտինգավորներս մեկ թուպե լուռությամբ հարգեցինք երկրաշարժից, Սումգայիթում և Թբիլիսիում ողբերգական իրադարձությունների հետևանքով զոհվածների հիշատակը: Ապա ելույթ ունեցողներս կոչ արեցինք ԽՍՀՄ ԳԽ առաջիկա

համագումարում քննարկել Լեոնային Ղարաբաղի հարցը և նրան տալ ազատություն: Այդ մասին խոսվեց նաև հունիսի 1-ին Հաղթանակի հրապարակում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ: Հունիսի 4-ին նույն հրապարակում, ուր ժողովուրդը հավաքվել էր «Միացում», «Արցախահայերը պահանջում են ազատություն», «Ազատություն Բանուչարովին և կոմիտեականներին» և այլ կարգախոսներով ու կոչերով, ելույթներ ունեցան բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը, պետական թատրոնի տնօրեն Աշոտ Ստեփանյանը, մետաքսի կոմբինատի կուսկազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանը, աշխատանքի վետերան Իշխան Ավետիսյանը, Ստեփանակերտի քաղկոմի քարտուղար Հասմիկ Միքայելյանը և ուրիշներ: Բոլորն էլ հույս էին հայտնում, որ Արցախի հիմնախնդիրը կլուծվի դրականորեն, և անպայման կվերամիավորվենք Մայր Հայրենիքի հետ:

Մինչև հիմա չեմ խոսել Ստեփանակերտում կազմակերպված Բանվորական խմբի մասին: Այդ խմբի ղեկավար, Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի արտադրամասի պետ Ռաֆիկ Գաբրիելյանի հուշերը հրապարակել ենք «Ազատ Արցախ» թերթի 1999 թվականի մայիսյան համարներում: Թերևս հետաքրքրություն ներկայացնի նրա հուշերից որոշ քաղվածքներ կատարել:

– Մեզ՝ Շարժման ակտիվիստներին, բոլորից շատ անհանգստացնում էին զենքն ու բանվորների կազմակերպվածությունը: Չենք ունենալու համար կապ հաստատեցինք դաշնակցության ներկայացուցիչների հետ: Նրանք խոստացան զենք բերել: Ղարաբաղում էլ ի՞նչ է հարկավոր, եթե նա ձեռքին զենք ունի, Աստված էլ չի փակի նրա ճանապարհը: Մեզ համար ընդունելի էին այն ուժերը, ովքեր զենք էին բերում, և նրանք մեզ համար պաշտելի էին:

1988 թվականի գարնանն էր: Որոշեցինք ստեղծել Բանվորական խումբ: Այդ գաղափարը ծնվել էր իմ մեջ: Գնում էի քաղաքի ձեռնարկությունները և ընտրում «մաքուր բանվորների»: Այդ նույն թվականի մայիսին քաղաքային պոլիկլինիկայի դիմաց գտնվող սպայի տանը հրավիրում ենք առաջին ժողովը: Մինչ այդ մետաքսակոմբինատի կուսկազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանը հանդիպել էր ինձ, և ցանկություն հայտնել կապ հաստատել Բանվորական խմբի հետ: Նա մասնակցեց խմբի առաջին ժողովին և ելույթ ունեցավ: Հիմնականում խոսեց բանվորների կազմակերպվածության և

մի բռունցք լինելու կարևորության մասին: Խմբի երկրորդ ժողովը տեղի ունեցավ մի քանի ամիս անց, որին մասնակցեցին 38 հոգի: Այստեղ ինձ ընտրեցին խմբի նախագահ: Հետո բանվորական խումբը շատ գործեր կատարեց. միտինգների և շքերթների կազմակերպում, զենքի ձեռք բերում, Ստեփանակերտում տեղավորված գործմասների հետ կապի հաստատում, Օուշի տանող ճանապարհի շրջափակում, կամուրջների պայթեցում, զինվորականների և թուրքոմանկանների դեմ քարով «կոպել», ընդհատակյա ուղիտկայանի ստեղծում, թոռուցիկների պատրաստում և տարածում, մարզխորհրդի շենքի վրայից Ադրբեջանի դրոշի իջեցում և Հայաստանի դրոշի բարձրացում, պարետների և Վոլսկու հետ հանդիպումներ... Ո՞ր մեկը թվարկես:

\* \* \*

1989 թ. մայիսի 25-ին Մոսկվայում իր աշխատանքներն սկսեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը: ԽՍՀՄ Գերագույն դատախազության որոշմամբ մայիսի 31-ին կայանքից ազատվում են «Ղարաբաղ» կոմիտեի անդամները: Այդ իրադարձությունները ոգևորում են հայ ժողովրդին: Հայաստանից և Լեոնային Ղարաբաղից հարյուրավոր նամակներ, հեռագրեր ու դիմումներ են ուղարկվում համագումարի հասցեով և խնդրում Լեոնային Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի հետ. մինչև ժամանակ շնորհակալություն են հայտնում «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ազատելու համար: Արցախահայությունը խնդրում ու պահանջում էր ազատ արձակել նաև Արկադի Մանուչարովին: Ղարաբաղյան շարժման ղեկավարները սերտ կապի մեջ էին արցախցի պատգամավորների հետ և գրեթե ամեն օր տեղեկություններ էին հաղորդում նրանց ու սպասում բարի լուրի: Մ. Ս. Գորբաչովը, կատարելով ԼՂԻՄ-ի շրջանների ղեկավարների մայիսի 3-ին գրած նամակի խնդրանքը և հայ պատգամավորների պահանջը, հունիսի 19-ին ընդունեց մարզի մի խումբ աշխատողների (Վալերի Աթաջանյան, Ջորի Բալայան, Սեմյոն Բաբայան, Վահան Գաբրիելյան, Վաչագան Գրիգորյան, Մաքսիմ Միրզոյան, Հենրիխ Պողոսյան, Վլադիմիր Թովմայան): Ընդունելությանը ներկա էին Ն. Ի. Ռիժկովը, Վ. Մ. Չեքրիկովը և Ա. Ի. Վոլսկին: Այդ հանդիպումը կարծես հուսադրող էր: Մ. Գորբաչովը խոստացավ մոտակա օրերին վերականգնել ժողովրդա-

կան պատգամավորների մարզխորհուրդը և մարզխորհրդի գործկոմը, իսկ մի որոշ ժամանակ անց կուսակցության մարզկոմը: Խոստացավ նաև ընդլայնել ԼՂԻՄ-ի հատուկ կոմիտեի իրավունքներն ու լիազորությունները: Պարզվում է, որ պարոն Գորբաչովը այս անգամ ևս անամոթաբար ստում էր և իզուր հույսեր ներշնչում արցախահայությանը:

- Իհարկե, մենք այլևս չէինք հավատում այդ մեծագույն ստախոսին, - հետո կծպտա Համլետը: - Ընդհակառակը, մարզում վիճակն ավելի ծանրացավ: Արդեն երկու ամիս էր մարզի արդյունաբերական ձեռնարկությունները չէին աշխատում: Աղբրեջանական զինված ավազակային ջոկատները շարունակում էին անասնազոդությունն ու սահմանամերձ գյուղերի կողոպուտները: Հայաստանից ստացվող օգնությունը խիստ սահմանափակ էր դարձել: Ծախումյանի անվան պուրակում մի խումբ երիտասարդներ հունիսի 21-ից նստացույցի էին, պահանջում էին Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի հետ, Արկադի Մանուչարովին ազատել կալանքից: Օր-օրի ավելանում էր փախստականների և բռնագաղթվածների թիվը: Արդեն 1989 թ. հունիսի 1-ի դրությամբ նրանց թիվը հասել էր 18.525-ի: Ազգամիջյան հողի վրա շարունակվում էին սպանությունները: Հուլիսի 6-ին Կրկ-ժանի հայերի և աղբրեջանցիների միջև տեղի ունեցավ առաջին ընդհարումը: Հուլիսի 8-ին Հաղրութի շրջանում գյուղխորհուրդների շենքերից իջեցվեցին Աղբրեջանի դրոշմերը: Աղբրեջանից Ծուշի գնացող և Ստեփանակերտ եկող ավտոմեքենաների վրա քարեր էին նետում և ջարդում ապակիները: Անհրաժեշտ էր մարզում ստեղծել որևէ կազմակերպություն, որը կարողանար գլխավորել ժողովրդական շարժումը: Ուրեմն՝ կրկին հրապարակ:

1989 թ. հունիսի 27-ին Հաղթանակի հրապարակում տեղի ունեցավ այս անգամ արտոնված հանրահավաք, որին մասնակցեցին Ստեփանակերտի գրեթե ողջ բնակչությունը և մարզի շրջաններից եկած պատվիրակությունները: Հանրահավաքում ելույթ են ունենում հունիսի 19-ին Մ. Գորբաչովի ընդունելությանը մասնակցած, ԼՂԻՄ-ի հատուկ կոմիտեի անդամներ Սեմյոն Բաբայանը և Վլադիմիր Թովմայանը, Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Վալերի Աթաջանյանը, Մարտունու և Մարտակերտի կուսըջրկոմների առաջին քարտուղարներ Վաչագան Գրիգորյանն ու Վահան Գաբրիելյա-

նը: Նրանք միտինգավորներին հաղորդեցին հանդիպման ժամանակ Գորբաչովի տված խոստումների մասին և հույս հայտնեցին, թե ճանապարհ է հարթվում մարզը կենտրոնին ենթարկվելու և Աղբրեջանին ԼՂԻՄ-ի ներքին գործերին խառնվելուց զրկելու ուղղությամբ: Ղարմետաքսկոմբինատի կուսկոմիտեի քարտուղար Ռոբերտ Քոչարյանի ելույթը ավելի գործնական էր: Նա պահանջում էր, որպեսզի ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը նախ և առաջ վճռի ԼՂԻՄ-ի կարգավիճակի հարցը: Նա առաջարկեց մարզում ստեղծել ժողովրդական ճակատ:

1989 թ. հուլիսի 8-ին Ղարմետաքսկոմբինատի ակումբում տեղի ունեցավ Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման քաղաքային հիմնադիր կոնֆերանսը: Այն բացեց նախաձեռնող խմբի անդամ Սերժ Սարգսյանը: Նախաձեռնող խմբի գործունեության, առաջարկությունների և եզրակացությունների մասին հանգամանակից տեղեկատվությամբ հանդես եկավ Ռոբերտ Քոչարյանը: Կոնֆերանսը քննարկեց աշխատակարգի, Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման կանոնադրության, Ծարժման ղեկավար մարմինների ընտրության, տպագիր օրգանի խմբագրի ընտրության, Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժումը Հայոց համագային շարժման մեջ միավորելու մասին հարցերը:

Կոնֆերանսը փակ գաղտնի քվեարկությամբ ընտրեց Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման քաղաքային խորհուրդ, բաղկացած 11 հոգուց (Աղաջանյան Ռոյտ, Աֆանեսյան Գրիգորի, Գրիգորյան Համլետ, Դանիելյան Արմեն, Հայրապետյան Էդնեստ, Ղուկասյան Էդուարդ, Միրզոյան Լևոն, Պետրոսյան Գարիկ, Պետրոսյան Գեորգի, Սարգսյան Սերժիկ, Քոչարյան Ռոբերտ): Բաց քվեարկությամբ խորհրդի նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը, իսկ տեղակալ՝ Համլետ Գրիգորյանը:

Մինչ այդ, հունիսի 28-ին, ժողովրդական պատգամավորների Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործկոմի մի որոշմամբ գրանցվել էր Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման կանոնադրությունը, որի բնորոշմամբ Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժումը ժողովրդի քաղաքացիական նախաձեռնության վրա հիմնված ազգային-քաղաքային ինքնակազմակերպմանն է, որը ղեմնկրատական սկզբունքներով նպաստում է սոցիալիս-

տական հասարակության համակողմանի վերակառուցմանը, ընտրովի մարմինների միջոցով ժողովրդի կամքի իրագործմանը, հասարակական նախաձեռնության զարգացմանը»:

Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման առաջնահերթ նպատակը «ԼՂԻՄ-ի վերամիավորումն է Հայկական ԽՍՀ-ին», որովհետև այդ խնդրի լուծումը մարզի հասարակական-քաղաքական կյանքը բնականոն հունի մեջ կմտցնի և թույլ կտա ըստ փուլերի վճեղ համազգային ու համադեմոկրատական խնդիրները: Կանոնադրությունը, որն իր մեջ ընդգրկում էր ավելի շատ ծրագրային խնդիրներ, քան կանոնադրական պահանջներ, առաջ էր քաշում շարժմանն առնչվող մի շարք էական խնդիրներ: Կանոնադրությունը արգելում էր շարժման քաղաքային խորհրդի անդամներին զբաղեցնել ղեկավար պաշտոններ՝ կուսակցական, խորհրդային, արհմիութենական ու կոմերիտական մարմիններում: Նման սահմանափակումն ընդունվել էր գիտակցաբար, որպեսզի շարժումը գերծ մնար պաշտոնամոլներից և պաշտոնական կառուցվածքների հետ հնարավոր միահյուսումից:

Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման հիմնադիր կոնֆերանսը ընդունում է նաև «Հոչակագիր հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժում ստեղծելու մասին», որում նշված է, որ Ստեփանակերտ քաղաքում ստեղծվել է նոր հասարակական-քաղաքական կազմակերպություն, որը ներկայացնում է բնակչության բոլոր խավերը և իր շարքերում միավորում է համազգային բնույթ ընդունած շարժման բոլոր մասնակիցներին: Հոչակագրում նաև ասվում է, որ «Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժումը համերաշխ է ինքնորոշման, դեմոկրատիայի և սոցիալական արդարության սկզբունքները հարգող բոլոր շարժումների հետ, մերժում է ազգային խտրականությունը և շովինիզմը՝ նրանց ցանկացած դրսևորումներով»:

Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման Ստեփանակերտի հիմնադիր կոնֆերանսը հանդես է գալիս նաև հայ ժողովրդին ուղղված դիմումով, որում մասնավորապես ասված է, որ «հայ ժողովրդի երկու՝ արհեստականորեն բաժանված հատվածների նպատակներն ու ձգտումները չեն կարող անջատ լինել իրարից և դիմում են Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժումը Հայոց

համազգային շարժման բաղկացուցիչ մասը ճանաչելու խնդրանքով»: Այնուհետև ասված է, որ «աչտր ամեն մի հայ, անկախ իր քաղաքական համոզմունքներից, ապրում է Հայաստանի հետ Արցախի վերամիավորման... գաղափարով»: Դիմումում դատապարտվում են Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի անբարոյական որոշման քաղաքական հետևանքները, ինչպես և Ռուսաստանի ու Թուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ի Մոսկովյան պայմանագիրը, որի համաձայն բուն Հայաստանի մաս կազմող Նախիջևանը հանձնվել է Ադրբեյջանի հովանավորությամբ: Վստահություն է հայտնվում, որ «Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման ներգրավումը ՀՀԾ-ի մեջ կդառնա Մայր Հայաստանի հետ Արցախի միավորման նախագուշակ»:

Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման Ստեփանակերտի քաղաքային խորհրդի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, պատասխանելով շարժման «Միացում» տեղեկագրի խմբագրության հարցերին, նշում է, որ Արցախում ևս միաձուլված են տնտեսական, քաղաքական և ազգային խնդիրները: Հենց վերակառուցման սկզբից էլ հասկացվում էր, որ ԼՂԻՄ-ում ժողովրդի զարթոնքը անխուսափելիորեն կստանա ազգային-ազատագրական շարժման ձև, իսկ դա չգիտակցվեց վերակառուցման գաղափարախոսների կողմից: Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու ազգային-ժողովրդական պայքարը, ըստ էության ուղղված էր կաստայացած քաղաքական համակարգի փոփոխմանը: Ստացվեց այնպես, որ Ղարաբաղյան հիմնախնդրի անհիմն ձգձգումը հայ բնակչության մեջ ձևավորեց քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային հարցերի լուծման նկատմամբ սեփական ուժերի վստահության հաստատուն համոզմունք<sup>61</sup>:

Հայոց արցախյան «Միացում» ժողովրդական շարժման Ստեփանակերտի խորհրդի նախագահի տեղակալ Համլետ Գրիգորյանն այսպես մեկնաբանեց այդ իրադարձությունը:

– «Միացում» ժողովրդական շարժման ծնունդը խիստ կարևոր էր: Վերջապես ծնվեց մի մարմին, որը կարող էր գլխավորել արցախահայության ազգային-ազատագրական շարժումը: Մեր խորհուրդն օգտվում էր հեղինակությունից: Ամեն օր բազմաթիվ նամակներ ու դիմումներ էին ստանում, որոնց հեղինակները հանդես էին գալիս



խելացի առաջարկություններով: Ծարժման բաժանմունքներ ստեղծվեցին մարզի բոլոր շրջաններում և խոշոր բնակավայրերում: «Միացում» տեղեկատուն ձեռքից ձեռք էր անցնում: Օր օրի ավելի էր կարծրանում մարզում իշխանությունների վերականգնման և Հայաստանի հետ վերամիավորման պահանջը: Ադրբեջանում կատարյալ հիստերիա էր. հակահայկական մոլուցքը համակել էր բոլորին: Նրանց աչքին հայերը դահիճներ են, մարդակերներ և, չգիտեմ, թե էլ ինչեր: Լուրեր հասան, որ վայրենացած ամբոխը Օւոշիում քանդել է Խորհրդային Միության կրկնակի հերոս, օդաչու Նելսոն Ստեփանյանի և ականավոր պետական գործիչ Իվան Թևոսյանի կիսանդրիները: Բարբարոս մարդիկ նույն կերպ էին վարվել նաև Կիրովաբադում Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի կիսանդրու հետ: Էլ չենք խոսում, թե ինչպես վարվեցին Բաքվում Ստեփան Ծափունյանի և ուրիշ հայ գործիչների հուշարձանների հետ: Բաքվում ինչ-որ հայկական էր, վայրագորեն ոչնչացնում էին: Այնտեղի հանրահավաքներում կոչ էին անում ոչնչացնել բոլոր հայերին: Էլ չեմ խոսում պատմության հայտնի կեղծարար Զիա Բուրիաթովի և, ընդհանրապես, բուրիաթովչիների հակահայկական քարոզչության մասին\*: Այդ ամենը կուլ էին տալիս: Ինչ անեինք, նամանավանդ, որ Մոսկվան բացահայտորեն հակահայկական դիրք ուներ: Նրա հանձնակատար Վոլսկին և մյուսները գործնականորեն գործը տեղից չէին շարժում: Մոսկվա ուղարկվող բոլոր հեռագրերն ու բողոք-նամակները մնում էին անպատասխան: Լեոնային Ղարաբաղի գծով Արցախ եկած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը նույնպես լուր էր: Ղարաբաղում նոր պարետ Մուսատովը հուլիսի 11-ին դիմում հղեց Ստեփանակերտի և մարզի բնակչությանը՝ կոչ անելով չխանգարել հանձնաժողովի աշխատանքներին, չընդհարվել զինվորականների և միլիցիայի աշխատողների հետ, մինչդեռ այդ նրանք էին սադրանքներ ստեղծում, անհիմն ձերբակալում մարդկանց, ծեծում կամ այլ պատիժներ տալիս: Տեսեք, 1989 թ. յոթ ամսում տարբեր խախտումների համար կալանավորվել էին երկու ազգության 15200 մարդ, որից՝ 14836-ը՝ հայ: ԽՍՀՄ դատախազության տվյալներով 1988-ից

մինչև 1992 թվականի մայիսը ԼՂԻՄ-ում և Հայաստանի սահմանամերձ գյուղերում սպանվել են 388 և բռնագաղթվել 302 հազար հայ: Նման փաստերը շատ են...

1989 թ. հուլիսի 20-ին Ստեփանակերտ է ժամանում ԼՂԻՄ-ի գծով ԽՍՀՄ ԳԽ Ազգությունների խորհրդի հանձնաժողովը, որի խնդիրն էր լսել մարդկանց և նյութեր ժողովել:

– Հանձնաժողովի անդամների հետ հանդիպումների և զրույցների ժամանակ. – պատմում է Համլետը. – մենք հասկացանք, որ հանձնաժողովը իրավասու չէր տեղում որևէ կոնկրետ որոշում ընդունել: Ինչ որ ասում, խոսում էինք, նրանք բարեխղճորեն գրի էին առնում, նյութեր կուտակում, հետո տանում Մոսկվա: Գորբաչովի սարքած այս նոր խաղից շատ շուտ հիասթափվեցինք: Հանձնաժողովը կոնկրետ ոչինչ չարեց, մենք դարձյալ մնացինք մեր յուրում տապակված: Ի՞նչ Մոսկվա, ի՞նչ հանձնաժողով: Այդ ամենը նոր բլեֆ էր, բացահայտ աչքակապություն: Հետո, երբ հանձնաժողովի կատարած աշխատանքները գնահատվում էին, Բորիս Օլեյնիկովը, ելույթ ունենալով ԽՍՀՄ ԳԽ նստաշրջանում, գրեթե շուտ տվեց ամեն ինչ: Ըստ էության, նա հաղորդեց վերևի պահանջներն ու ցանկությունները, այլ ոչ թե այն, ինչ տեսել ու լսել էին: Այդ նիստի տեսագրությունը, ինչպես և Բորիս Դադարյանի ելույթը, ադրբեջանական կողմի խնդրանքով, չհաղորդվեցին հեռուստատեսությամբ: Այդ ամենի մասին Ղարաբաղում իմացանք «Խորհրդային Հայաստան» թերթի օգոստոսի 8-ի համարում տպագրված Զորի Բալայանի «Կանխել կարելի էր ճշմարտությամբ» հոդվածից: Այդ մասին հանգամանորեն խոսել էինք օգոստոսի 4-ին Հաղթանակի հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում:

Այդ օրերի կարևոր իրադարձություններից էր շահումյանցիների համարձակ քայլը: Ծափունյանի շրջանային խորհրդի նստաշրջանը հուլիսի 26-ին որոշում ընդունեց խնդրել Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ-ին քննարկել «Ադրբեջանական ԽՍՀ Ծափունյանի (գյուղական) շրջանը Ադրբեջանական ԽՍՀ-ի Լեոնային Ղարաբաղի ինքնավար Մարզի մեջ մտցնելու» հարցը: Ծափունյանցիների նախաձեռնությունը Ստեփանակերտում և ամբողջ մարզում ընդունվեց ուրախությամբ: Իմիջիայնոց, այդ օրերին Խանլարի շրջանի Գետաշենի նստաշրջանը՝ Գետաշեն, Ազատ, Մարտունաշեն, Կամո և ուրիշ գյու-

\* Զիա Բուրիաթովը սպանվել է Բաքվում 1997 թվականի փետրվարին (Հ. Ա.):

ղեր նույնպես պահանջեցին Օսթրոմյանի շրջանի հետ միասին վերամիավորվել ԼՂԻՄ-ի հետ:

Ծանր կացության մեջ գտնվող Ղարաբաղի շարունակում էր օգնություն ստանալ առանց այն էլ երկրաշարժի և շրջափակման հետևանքով դժվարին օրեր ապրող Մայր Հայաստանից: Արցախահայերը օգնություն էին ստանում նաև երկրի այլ շրջաններից: Հուլիսի վերջին Ստեփանակերտ հասավ հատուկ ավտոշարասյուն՝ բաղկացած յոթ բեռնատար ավտոմեքենաներից, որոնք 600 կմ ճանապարհ կտրելով, Վրաստանի Բոգղանովկայի շրջանից Ղարաբաղ հասցրին 36 տոննա սննդամթերք՝ 20 տոննա ալյուր, 2 տոննա շաքար, 2 տոննա արևածաղկի յուղ, պանիր, բրինձ և այլն: Արցախահայերն իրենց շնորհակալությունը հայտնեցին Բոգղանովկայի շրջանի աշխատավորներին եղբայրական այդ օգնության համար:

## ԱՄՊԵՐԸ ՆՈՐ ԳՈՒԾԵ ԵՆ ԱՏԱՆՈՒՄ

«Միացում» համաժողովրդական շարժումը ևս չկարողացավ վեր բարձրանալ և կանգնել Արցախի ազատագրական պայքարի գլուխ: Արցախահայությունը դեռևս գտնվում էր գործադուլի մեջ: Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակում օգոստոսի 4-ին տեղի ունեցած հանրահավաքում գրեթե բոլոր ելույթ ունեցողները աշխատավորներին կոչ արեցին դադարեցնել գործադուլը, վերականգնել աշխատանքային ուղիները, մանավանդ շինարարական օբյեկտներում, որպեսզի փախստականների համար կառուցեն բնակարաններ: Բայց ո՞վ կարող էր իր վրա վերցնել գործադուլավորներին համոզելու պարտականությունը: Այստեղ է, որ օգնության հասավ Ղարաբաղի հերոսական անցյալը, որին դիմեցին հենց իրենք՝ արցախահայերը: Դեռևս 1918 թվականին, երբ Ղարաբաղը գտնվում էր բոլոր կողմերից կտրված և մեն-մենակ կանգնած թուրք-մուսավաթական դահիճների դեմ, արցախահայերը հրավիրեցին համագումար, որը ստեղծեց Ազգային խորհուրդ և կառավարություն երկրամասը ղեկավարելու համար: Մինչև 1920 թվականի մայիսը հրավիրվեց ազգային տասը համագումար, որոնք հանդիսացել են օրենսդիր և գործադիր մարմիններ, մի բան, որը յուրահատուկ էր Ղարաբաղին:

և նմանը գոյություն չի ունեցել մեկ այլ տեղ: Եվ ահա, 1989 թ. ամռանը, Ղարաբաղում հիշեցին... ու որոշեցին ընդօրինակել իրենց պապերի այդ փորձը:

Ահա թե այդ մասին ինչ է պատմում Համվետը.

– Ղարաբաղի դահիճ Սուլթանովից հեռու լինելու համար դարաբաղցիներն հաճախ իրենց համագումարները հրավիրում էին Օռոզյուղում: Այդ մասին մենք գիտեինք Ջեր հողվածներից: Որպեսզի Ղարաբաղի նոր Սուլթանովից՝ Մուսկվայի հանձնակատարներից հեռու լինեինք, որոշեցինք հավաքվել Օռոզյում: Օգոստոսի 7-ին այստեղ են հավաքվում Ասկերանի, Հաղրութի, Մարտունու և Մարտակերտի կուսըղջկոմների բյուրոների անդամները, Լեռնային Ղարաբաղի մարզային, քաղաքային և շրջանային խորհուրդների ժողովրդական պատգամավորները, մարզային արհմիության խորհրդի նախագահության անդամները, մարզկոմերի տեղյուրդի անդամները, ոչ պաշտոնական «Միացում» կազմակերպության վարչության անդամներս և քննարկեցինք մարզում ստեղծված նման դժվարին պայմաններում այդ բոլոր մարմինների ու կազմակերպությունների գործունեության միասնությունն ապահովելու հարցը: Ելույթներ ունեցան երկու տասնյակից ավելի մարդիկ, և արվեցին բավականին գործնական առաջարկություններ: Ի վերջո եկանք մի ընդհանուր եզրակացության, հրավիրել ԼՂԻՄ-ի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար՝ հետագա գործողությունների ծրագիր մշակելու համար: Մարզի լիազոր ներկայացուցիչների առաջին համագումարը նախապատրաստելու համար ստեղծեցինք կազմկոմիտե մարզգործկոմի նախագահի տեղակալ Օմավոն Պետրոսյանի գլխավորությամբ: Նաև որոշեցինք համագումարը չհետաձգել և այն հրավիրել առաջիկա օրերին: Ասեմ, որ այդ աշխատանքները կազմակերպվելու գործում կարևոր դեր է խաղացել Բազմիկ Պետրոսյանը:

1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտի դրամատիկական թատրոնում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը: Այն բացեց համագումարը նախապատրաստող հանձնաժողովի նախագահ Օմավոն Պետրոսյանը: Մարզում ստեղծված իրավիճակի մասին գեկուցումով հանդես եկավ ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի անդամ Վ. Հ. Թոպմասյանը: Մտքերի փոխանակությանը մասնակցեցին շուրջ

քան հոգի: Համագումարն ընդունեց մի շարք կոնկրետ փաստաթղթեր. ընտրեց Ազգային խորհուրդ՝ 80 հոգի կազմով և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նախագահություն՝ 21 հոգի կազմով: Ազգային խորհրդի նախագահությանն նախագահ ընտրվեց Մարտունու կուսաշրջկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր Վաչագան Գրիգորյանը: Համագումարի կոչով Լեոնային Ղարաբաղի բնակչությունը դադարեցրեց երկարատև գործադուլը: Արդեն օգոստոսի 28-ին վերականգնվել էր աշխատանքային դիմից: Այդ ամենից կատարած՝ Ադրբեջանի ԳԽ-ի սեպտեմբերի 23-ին որոշում է ընդունում արձակել Լեոնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների կողմից ընտրված Ազգային խորհուրդը: Դա նման էր այն բանին, երբ ջրում խեղդվողը փրկուրից է բռնում:

Աննահանջ Արցախը շարունակում էր իր հերոսական դիմադրությունը: 1989 թ. սեպտեմբերի 8-ին Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքում ելույթ ունենալով՝ Սերժ Սարգսյանը, Համլետ Գրիգորյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչիկ Բեգլարյանը, Էդնեստ Հայրապետյանը և ուրիշներ պահանջեցին վերջ տալ մարզի շրջափակմանը, թուրքերի կողմից շարունակվող անօրեն շինարարությանը, բոլոր ուժերը կենտրոնացնել երկարատև գործադուլի հետևանքով բացթողումները լրացնելու համար: Ելույթ ունեցողները նաև կոչ արեցին չենթարկվել սադրանքների ու խուճապի, դրսևորել կազմակերպչաժողովուն և շրջահայացություն, ամրապնդել մարզի և ամբողջ հայ ժողովրդի միասնությունը: Որոշվեց հանրահավաքի անունից դիմել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին, խնդրելով անհապաղ հրավիրել հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմնի արտահերթ նստաշրջան և քննարկել Լեոնային Ղարաբաղը Մայր Հայաստանի հետ վերամիավորելու հարցը<sup>62</sup>:

Արցախն ու Հայաստանը մնում էին շրջափակման մեջ, որից դուրս գալը դարձել էր ամենահրատապ խնդիրը: Մոսկվան մնում էր աննահանջ: Ղարաբաղի մասին յուրաքանչյուր դրական խոսք ընդունվում էր սվիններով: Երբ հոկտեմբերի 10-ին ԽՍՀՄ ԳԽ նստաշրջանում քննվում էր Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարության կողմից ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ շրջափակման հացը, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը իր ելույթում դա-

տապարտեց շրջափակումը, մինչդեռ ԳԽ-ի նախագահ Ա. Լուկյանովը համարյա պաշտպանեց շրջափակումը: Վերջում ընդունվեց մի որոշում, որը հասկացնում էր, թե շրջափակումը կարելի է շարունակել: Հաջորդ առավոտյան ԼՂԻՄ-ի պատգամավորների անունից Զոքրի Բալայանը Լուկյանովին հանձնեց կատարվածը դատապարտող հաշտարարություն, և մեր պատգամավորները հեռացան դահլիճից:

Այդ օրերի իրադարձություններն այսպես է մեկնաբանում Համլետը.

– Մենք անհավերհ հետևում էինք Մոսկվայում և մեր տարածքում տեղի ունեցող դեպքերին: Երևի 1989 թ. հոկտեմբերի առաջին կեսը մեր շարժման պատմության ամենադժվարին էլերից էր: Ադրբեջանը ջանում էր այդ ծանր շրջափակումով մեզ ծնկի բերել: Մի ավտոշարասյուն հոկտեմբերի 10-ին պետք է Սվերդլովսկ քաղաքի ռազմական ուսումնարանի սաներին Օուշիից փոխադրեր Գանձակ: Ավտոշարասյունը փոխանակ ուղիղ ճանապարհով գնար, մտնում է Ստեփանակերտ, նախօրոք տեղյակ չպահելով մարզի և քաղաքի ղեկավարությանը: Մեքենաներն անցնում էին սուլիչների ոռնոցներով: Այդ վայրենի տեսարանը դիտելու համար փողոց դուրս եկած բնակչության վրա մեքենաներից սկսեցին կրակել: Վիրավորվեցին մեկ տասնյակի չափ անմեղ մարդիկ, որոնցից մեկը՝ բանվոր Սպարտակ Հակոբյանը մահացավ: ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչության պետ, գնդապետ Իրեբերտ Թումանյանի հաղորդումից պարզ է դառնում, որ այդ օրը կրակոցները ուղեկցել են ավտոշարասյան ամբողջ շարժման ընթացքում, մինչև քաղաքից դուրս գալը: Կալաշնիկով ինքնաձիգից կրակել են 21 կուրսանտ և 3 սպա: Այդ մասին ժամանակին գրվել է մամուլում: Եվ մինչև անգամ կարծիք է հայտնվել, որ այդ սադրանքը նախօրոք պլանավորվել էր Հատուկ շրջանի պարետ գեներալ Սաֆոնովի կողմից: Հետո, օր օրի վրա ավելի ծանրացավ ընդհանուր վիճակը: Մեզ մնում էր դիմանալ և աննահանջ պայքարել:

1989 թ. հոկտեմբերի 11-ին, այդ ողբերգության հաջորդ օրը, ամբողջ Ստեփանակերտը դուրս եկավ փողոց իր գայլույթը արտահայտելու: Արցախահայությունը այդ օրը կնքեց «Արյունոտ երկուշաբթի» անունով: Հաղթանակի հրապարակում տեղի ունեցած չարտոնված հանրահավաքում ելույթ ունեցողները դատապարտեցին այդ վանդալիզմը, պահանջեցին խստագույնս պատժել կազմակերպիչներին

և մարդասպանին, ԼՂԻՄ-ը անհապաղ դուրս բերել Ադրբեջանի կազմից: Ստեփանակերտում կազմակերպված այդ սադրանքը դատապարտվեց նաև հոկտեմբերի 15-ին Երևանում վերսկսված Հայկական ԽՍՀ ԳԽ-ի նստաշրջանի կողմից. որտեղ զեկուցեց Հայկոմկոմի Կենտկոմի երկրորդ քարտուղար Օլեգ Լորբովը: Նստաշրջանը դատապարտում է խաղաղ բնակչության դեմ կիրառված հանցագործությունը և պահանջում ստեղծել հատուկ հանձնաժողով՝ ստուգելու կատարվածը և հանցագործների նկատմամբ համապատասխան միջոցներ գործադրել:

Արցախ աշխարհի համար ազգային վերածնունդ էր հոկտեմբերի 16-ը: Այդ օրը (Գանձասարի վանքը բացվելուց 15 օր հետո) խզվեց 60-ամյա լուրջությունը և վերաբացվեց Ամարասի վանքը, որի զանգի դողանքները դադարել էին հնչելուց 1930-ական թվականներից:

-Այդ օրն աչնտեղ էի,- պատմում է Համլետը:- Նման հրճվանք երևի առաջին անգամ էի ապրում: Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարզ եպիսկոպոս Մարտիրոսյանը օրհնության մատթանք հղեց ամեն տեղից եկած բազմությանը: Այնուհետև տեղի ունեցավ ամուսնության սուրբ պսակի օրհնություն: Հետո ներկաներից շատերը մկրտվեցին: Գանձասարի վանահայր Միքայել վարդապետ Աջապահյանն իր ելույթում հիշեցրեց, թե հայոց այս հողի վրա եկեղեցու վերաբացումը պետք է հավատ ու նեցուկ դառնա ամեն տեսակի շրջափակումների հաղթահարման համար:

1989 թ. հոկտեմբերի 19-ին տեղի ունեցած ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նիստը քննարկեց «Ինքնորոշված ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի կազմ մտցնելու՝ մարզի հայ բնակչության արտահայտած կամքի գործնական իրականացման միջոցառումների մասին» հարցը և նշեց, որ 1988 թվականի փետրվարից սկսած՝ երկրամասի սմբողջ հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքը կառուցվում է այդ ժամանակաշրջանում մարզխորհրդի ընդունած որոշումների համապատասխան: Ներկայումս Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը առաջին հերթին հայ ժողովրդին՝ միմյանց ձգտող երկու մասերի բռնի տարանջատվածության հարցն է: Նրա առավել բնական լուծումը հանդիսանում է ինքնորոշված ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ կազմ մտցնելու ուղղությամբ արակտիկ գործողություններ: Ղարաբաղի Ազգային խորհուրդը որոշում է խնդրել Հայկական ԽՍՀ ԳԽ-ին քն-

նարկել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու ուղղությամբ գործնական միջոցներ իրականացնելու հարցը: Ազգային խորհուրդը դատապարտեց հոկտեմբերի 10-ի իրադարձությունները և պահանջեց պատասխանատվության ենթարկել մեղավորներին<sup>63</sup>:

1989-ի հուլիսի 20-ից մինչև 28-ը Լեռնային Ղարաբաղում գտնված Գ. Ս. Տարազևիչի գլխավորած ԽՍՀՄ ԳԽ-ի հանձնաժողովը առաջարկություն էր մտցրել ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ կազմից: ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությունը հոկտեմբերի 19-ին քննարկելով հանձնաժողովի զեկուցումը, որոշեց մեկ շաբաթվա ընթացքում լրամշակել որոշման նախագիծը: Եվ ահա, նոյեմբերի 9-ին, կրկին Ստեփանակերտ ժամանեց ԽՍՀՄ ԳԽ-ի ազգային քաղաքականության և ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Գեորգի Ստանիսլավովիչ Տարազևիչը: Արցախահայերը մերժեցին Տարազևիչի ներկայացրած առաջարկությունները, որովհետև, ըստ փաստաթղթի, մարզը թողնվում էր Ադրբեջանական ԽՍՀ կազմում: Մոսկվա մեկնելուց առաջ Գ. Ս. Տարազևիչը լրագրողներին խոստովանեց. «Իրավիճակը մարզում բարդ է, հակասությունը շատ խոր»<sup>64</sup>:

Այդ օրերի իրադարձությունների մասին Համլետի խոսքը.

- Տարազևիչի գալն ավելի շիկացրեց մթնոլորտը: Այդ մասին ուղղակի ասացինք ելույթ ունեցողներս, երբ հանդիպեցինք նրա հետ: Նոյեմբերի 10-ին Հաղթանակի հրապարակում, ժամը 15-ին, կազմակերպեցինք 50 հազարանոց հանրահավաք: Հրավիրեցինք Տարազևիչին, որպեսզի ելույթ ունենա ժողովրդի առաջ ու լսի նրանց ձայնը: Մինչդեռ նա գերադասեց գնալ Խոջալու: Հանրահավաքի մասնակիցներս միահամուռ մերժեցինք ԽՍՀՄ ԳԽ-ի հանձնաժողովի առաջարկությունը և պահանջեցինք մարզը վերամիավորել Հայաստանի հետ: Հիմնախնդրի լուծման մյուս բոլոր տարբերակները մերժեցինք և այդ մասին գրավոր ներկայացրեցինք Տարազևիչին: Նրան ասացինք պարզ ու հստակ, որ ոչ մի արցախահայ չի ցանկանում լսել Ադրբեջան անունը: Այդ անունից միայն խորշում ենք և ստեղծությամբ լցվում:

Այդ օրերի մամուլը գրել է, թե 1989 թվականի նոյեմբերի 11-ին նորից բազմամարդ էր Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակը: Արտոնված հանրահավաքի էին եկել տասնյակ հազարավոր ստե-

փանակերոցիներ և մոտակա գյուղերի բնակիչներ: Ելույթ ունեցողների «Միացում» շարժման անդամներ Սերժ Սարգսյանի, Լևոն Միրզոյանի, Համլետ Գրիգորյանի և այլոց խոսքերում խիստ բողոք արտահայտվեց ԽՍՀՄ ԳԽ-ի նստաշրջանի քննարկման համար նախապատրաստվող Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման նախագծի դեմ: Նրանք պահանջեցին մարզային կուսակցական և պետական մարմինները վերականգնել նոր կարգավիճակով՝ դրանք մտցնելով Հայկական ԽՍՀ համապատասխան համակարգի մեջ: Հանրահավաքի մասնակիցներն իրենց բողոքի ձայնը բարձրացրին Մոսկվայի Բուսիրյան մեկուսարանում գտնվող Հայկական ԽՍՀ ԳԽ-ի պատգամավոր Արկադի Մանուչարովին պահելուն դեմ:

1989 թ. նոյեմբերի 4-ին Երևանում, Ստեփան Ծափունյանի անվան պալատում, իր աշխատանքներն սկսեց Հայոց համազգային շարժման (ՀՀԾ) հիմնադիր համագումարը, որին մասնակցեց Արցախի պատվիրակությունը՝ 12 հոգուց բաղկացած: Համագումարում ելույթ ունեցավ «Միացում» կազմակերպության ներկայացուցիչ Սերժ Սարգսյանը և շարադրեց արցախահայության պահանջները: ՀՀԾ վարչության անդամ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը:

Համագումարը հայտատարեց, որ մարզի անկախության դեմ ռոնձգություններ լինելու դեպքում հայ ժողովուրդը հնարավոր բոլոր միջոցներով սատար կկանգնի արցախահայության ազգային-ազատագրական պայքարին: Ընդունված որոշման 6-րդ կետով՝ «ԼՂԻՄ և Հայկական ԽՍՀ պատգամավորները չեն ստորագրի որևէ փաստաթուղթ, որը կարող է ուղղված լինել Լեոնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքի դեմ»<sup>65</sup>:

ՀՀԾ լիագումար միստից հետո աշխատանքները շարունակվեցին 12 հանձնախմբերի միստերում, որոնք տեղի էին ունենում տարբեր տեղերում:

– Մեր հանձնախմբի միստը, – հիշում է Համլետը, – տեղի էր ունենում պետական համալսարանի միստերի դահլիճում: Մենք՝ արցախցի պատվիրակներս, համագումարի հենց սկզբից զգում էինք, որ մեր երևակայած ու տեսած «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, որոնք արդեն Հայոց համազգային շարժման պարագլուխներից էին, այն չէին, շատ էին փոխվել: Պարզապես հիասթափվեցինք: Այդ ժամանակվանից էլ ես այլևս ոչ մի առնչություն չունեցա հիշականների

հետ: Հանձնախմբի աշխատանքները դեռ չավարտված՝ ես հեռացա համալսարանի դահլիճից՝ համոզված լինելով, որ Ղարաբաղը հիշականների համար լուրջ շիրմա է, այքակապության միջոց: Իմ տպավորությունը և կարծիքը չթաքցրեցի մեր պատվիրակության անդամներից: Հիշականների վերաբերյալ իմ բացասական կարծիքը հրապարակայնորեն արտահայտեցի Ստեփանակերտ վերադառնալու հենց հաջորդ օրը:

1989 թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ ԳԽ-ը ընդունեց «Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» որոշում, որով Լեոնային Ղարաբաղը թողնվում էր Ադրբեջանի կազմում, վերացվում է ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեն, ստեղծվում է հանրապետական կազմկոմիտե, վերականգնվում է ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի և նրա գործադիր կոմիտեի գործունեությունը, ապահովվում է ԼՂԻՄ-ի իրական ինքնավարության կարգավիճակի բարձրացումը և բոլոր ծագող խնդիրների սահմանադրական լուծումը և այլն<sup>66</sup>:

Այդ որոշման նկատմամբ արցախահայությունը արտահայտվեց բացասաբար: Նոյեմբերի 29-ին տեղի ունեցած ԼՂԻՄ Ազգային խորհրդի նախագահության միստը որոշում է դիմել գործնական քայլերի: Մինչ այդ թե՛ Լեոնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը և թե՛ ՀՀԾ-ն առաջ էին քաշել հրավիրել Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ Ազգային խորհրդի համատեղ միստ և վճռել Լեոնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Այդ քայլի կատարումը արագացրեցին ԽՍՀՄ ԳԽ-ի վերոհիշյալ որոշումն ու Ադրբեջանում նոր թափ առած հակահայկական սադրանքները:

1989 թ. նոյեմբերի 30-ին Երևանի Ծափունյանի անվան պալատում իր աշխատանքներն սկսեց Հայկական ԽՍՀ ԳԽ արտահերթ նստաշրջանը՝ Լեոնային Ղարաբաղի Ազգային խորհրդի մասնակցությամբ: Դեկտեմբերի 1-ի երեկոյան ընդունվեցին «Հայկական ԽՍՀ-ի և Լեոնային Ղարաբաղի վերամիավորման մասին», ինչպես և «Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 28-ի որոշման մասին» որոշումները<sup>67</sup>:

Նստաշրջանը հայտարարում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նո-



յնքերի 28-ի որոշումը «անվավեր Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի համար և ոչ մի իրավական հետևանքներ չստեղծող»: Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը «Հռչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը»: Հայկական ԽՍՀ ԳԽ-ը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Ծափումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը: Պահանջվում է ընդունված որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումների իրագործում՝ «Իրականացնելու համար Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքների իրական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում»:

Համիտի տրտունջը միանգամայն տեղիւ է.

– 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումն ընդունեցինք մեծ ցնծությամբ: Բայց հետո՞: Մինչև հունվարի 10-ը, այսինքն՝ Գորբաչովի նոր հրաման ստորագրելը, որով բեկանում էր դեկտեմբերի 1-ի որոշումը, անցել էր 40 օր: Եվ այդ ժամանակաշրջանում Հայաստանի իշխանությունները գործնական քայլեր չկատարեցին դեկտեմբերի 1-ի որոշումն իրագործելու համար:

\* \* \*

1990 թ. հունվարի 2-ին Ադդամից Ծուշի էր գնում մի ավտոշարասյուն, որն, իբր, 150 խաղաղ ադրբեջանցիներ էր փոխադրում Կրասնոյարսկի միլիցիայի դպրոցի սաների ուղեկցությամբ: Պարզապես կրկնվում էր նույն սցենարը, երբ հոկտեմբերի 10-ին Սվերդլովսկի ռազմական ուսումնարանի սաները Ստեփանակերտում արյունոտ քայլեր կատարեցին: Ծարասյունը փոխանակ ուղիղ Ծուշի գնալու, շրջվում, մտնում է Ստեփանակերտ, որը առաջ է բերում քաղաքի բնակչության զայրույթը: Ջղագրգիտ որոշ քաղաքացիներ քարկոծում են շարասյունը: Զինվորականները կրակ են բացում, որի հետևանքով զոհվում են Ղարաբաղյան պայքարի ակտիվիստներից քանդակագործ Արմեն Հակոբյանը և քոլատակցի Բոգա Բաբայանը: Այս անամոթ ոճիրը պաշտպանության տակ է վերցնում «Իզվեստիա» թերթը: Ռուպես այդ կեղտոտ արարքի շարունակություն, իրենց հակահայկական գործունեությունն ավելի են ուժեղացնում Կրկժանի, Խո-

չալուի և մյուս ադրբեջանական գյուղերում բուն դրած թուրք ավազակները: Նրանք փակում են ճանապարհները և զնդակոծում հայկական բնակավայրերը: Իբր նոյեմբերի 28-ի որոշման կատարում, ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությունը Վ. Կ. Ֆոտեևին նշանակում է ԼՂԻՄ-ում միութենական վերստուգող դիտորդ հանձնաժողովի նախագահ: Ի պատասխան այդ ամենի, հունվարի 7-ից «Սորհրդային Ղարաբաղ» և «Սովետսկի Կարաբախ» թերթերը դառնում են ԼՂԻՄ Ազգային խորհրդի օրգան: Ահա այդպիսին էր ընդհանուր վիճակը 1990-ի սկզբի երկու տասնօրյակում:

Հակառակորդի կողմից օր օրի ակտիվացող ճնշումը կանխելու նպատակով, ամենուր աշխատանքներ էին տարվում մարզի տարածքում ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծելու ուղղությամբ: Արցախում ծնվում է ֆիդայական շարժումը, որին լայն թափ են հաղորդում Հայաստանից և այլ տեղերից եկած քաջագունները:

Հունվարի 8-ին Մոսկվայից Ստեփանակերտ է ժամանում Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Վոյսկին: Նա մարզի ակտիվին և իր ղեկավարած անփառունակ կոմիտեի անդամներին տեղյակ է պահում, որ հունվարի 9-ին Ստեփանակերտ կժամանեն ԽՍՀԿ Կենտկոմի քարտուղար Գիրենկոն, ԳԽ-ի Ազգությունների խորհրդի նախագահ Նիշանովը և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Պոլյանիչկոն: Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը և «Միացումը» որոշում են թույլ չտալ այդ «պատվարժան հյուրերին» Ստեփանակերտ մտնել: Այդ առթիվ հատուկ հանձնարարություն է տրվում Բանվորական խմբի ղեկավար Ռաֆիկ Գաբրիելյանին, որը և կատարում է այն ամենայն պատասխանատվությամբ<sup>68</sup>: «Հյուրերը» Ստեփանակերտի օդանավակայանից ստիպված հետ են վերադառնում ու չեն փորձում մտնել քաղաք, չնայած այդ օրը օդանավակայանից մինչև քաղաք ամբողջ ճանապարհը բռնված էր գործով:

– Ամբողջ քաղաքն անհանգիստ էր,– պատմում է Համիտը:– Քաղաքի ակտիվը հավաքվում է քաղկոմի առաջին քարտուղար Աթաջանյանի մոտ և առաջարկում «հյուրերին» չընդունել ու հետ դարձնել, եթե նրանց նպատակն է արցախահայության վզին փաթաթել նոյեմբերի 28-ի որոշումը և Ստեփանակերտ մտցնել Պոլյանիչկոյի կազմկոմիտեն: Այս ամենի մասին Աթաջանյանը տեղյակ է պահում

Գիրենկոյին և Նիշանովին: Նրանք էլ Պոլյանիչկոյի խմբին ուսումնական ուղղաթիռով ուղարկում են Օուշի, իրենք վերադառնում Բաքու և հայտարարում, թե հակամարտող կողմերը իրենք պետք է լեզու գտնեն իրար հետ և լուծեն իրենց բարդացած հարցերը:

Այդ օրը ծանր լուր ստացանք մահ Օահումյանից: Օրջանի 19 ղեկավար աշխատողներ շրջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Աղաջանյանի գլխավորությամբ հունվարի 9-ին գնացել էին Գետաշեն՝ թուրքերի կողմից սպանված երկու գետաշենցու թաղման արարողությանը մասնակցելու: Վերադարձին թուրքերը նրանց պատանդ էին վերցրել: Հաջորդ օրը Լեոնային Ղարաբաղի մարզային և շրջանային ղեկավարության անունից բողոք է ներկայացվում Գիրենկոյին, որը դեռևս գտնվում էր Ադրբեջանում և խնդրվում է միջոցներ ձեռնարկել Օահումյանի շրջանի ղեկավարներին փոխելու համար: Մենք գիտեինք, որ Վլադիմիր Աղաջանյանը ակտիվորեն մասնակցում էր Ղարաբաղյան շարժմանը և կարևոր դեր է խաղացել Օահումյանի շրջանը ԼՂԻՄ-ի կազմի մեջ մտցնելու գործում: Ադրբեջանի իշխանությունների կողմից նրանից վրեժ լուծելը երբեք էլ պատահական չէր: ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությունը 1990 թվականի հունվարի 10-ին հատուկ որոշումով բեկանեց Հայկական ԽՍՀ և ԼՂԻՄ Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի՝ Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի վերամիավորման մասին, ինչպես և 1990 թ. հունվարի 9-ի Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի բյուջեները միավորելու վերաբերյալ որոշումները: ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությունը բեկանեց մահ Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ-ի նախագահության 1989 թ. դեկտեմբերի 4-ի որոշման որոշ կետեր, որոնք անմիջապես վերաբերում են Լեոնային Ղարաբաղին<sup>69</sup>:

Ադրբեջանի ԳԽ-ի նախագահությունը, ելնելով ԽՍՀՄ ԳԽ-ի 1989 թ. նոյեմբերի 28-ի և ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի 1990 թվականի հունվարի 10-ի ընդունած որոշումներից, հունվարի 10-ին որոշում ընդունեց ստեղծել Ադրբեջանի կազմկոմիտե, որն, իբր, պիտի գործի ԼՂԻՄ-ում՝ նրա կուսակցական և խորհրդային ղեկավար մարմինները վերականգնելու և տնտեսական ու վարչական կյանքը կարգավորելու ծրագրով: Եվ այդ կոմիտեն պետք է ղեկավարեր Վիկտոր Պոլյանիչկոն:

Հենց այդ օրերին Բաքու ժամանեցին Ե. Մ. Պրիմակովը և ազգա-

յին հարցերի գծով ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Ն. Գիրենկոն: Նրանք ոչինչ չձեռնարկեցին հունվարի 12-ից Բաքվում սկսված հայկական ջարդերը կանխելու համար: Բաքվում բնակվող 300 հազար հայերի կյանքը լիովին վտանգված էր: Հունվարի 15-ին Հայկոմկուսի Կենտկոմը, Գերագույն խորհրդի նախագահությունը և Նախարարների խորհուրդը կենտրոնական իշխանություններից պահանջեցին վերջ տալ չդադարող բռնություններին, որ դաժանորեն իրագործվում էին հայերի նկատմամբ Ադրբեջանի տարածքում և կատարվածին տալ քաղաքական գնահատական<sup>70</sup>: Ժողովրդին ուղղված հատուկ կոչով հանդես է գալիս Լեոնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը, որում Բաքվի հայերի մասսայական կոտորածը բնորոշվում է որպես «Սունգայիթի» շարունակություն: Ազգային խորհուրդը նշում է, որ այդ դժվարին և ծանր օրերին հայ ժողովուրդը պետք է ավելի համախմբվի ու արիանա, որպեսզի կարողանա պաշտպանել հայոց հողը:

Ադրբեջանում հակահայկական հիստերիան կոխկրտեց բոլոր սահմանները: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Վեզիրովը պահանջում էր ազգովին միանալ և ջախջախել Լեոնային Ղարաբաղն ու Ստեփանակերտը: Հունվարի 13-ին Բաքվի փողոցներում թափված էին ցեղասպանության ենթարկված տասնյակ հայերի դիակներ, իրենց բնակարաններից դուրս շարտված, կողոպտված ու ջարդված տասնյակ հազարավոր հայեր լաստանավերով փոխադրվում էին Կրասնովոդսկ, որպեսզի այնտեղից էլ տարվեն անհայտ ու անորոշ ուղիներով: Հայ ժողովուրդը դատապարտեց ազերիների կազմակերպած ու կենտրոնի թուլլովությամբ հայերի նկատմամբ իրականացվող եղեռնը: Գորբաչովյան Գերագույն խորհրդի նախագահության 1990 թվականի հունվարի 15-ի որոշմամբ արտակարգ դրություն է հայտարարվում Լեոնային Ղարաբաղում և նրան սահմանափակ գոտում: Հայերին կոտորում էին Բաքվում, իսկ Գորբաչովը արտակարգ դրություն է հայտարարում Լեոնային Ղարաբաղում: Սա, պարզապես, խեղկատակություն էր:

ԽՍՀՄ ԳԽ-ի հունվարի 15-ի հրամանից թխած՝ արգելվեց Լեոնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը, «Միացում» կազմակերպությունը, խիստ հսկողություն սահմանվեց Տնօրենների խորհրդի և տեղեկատվության միջոցների նկատմամբ: Այդ ամենը իրագործում էր

գինվորականությունը: Եվ այսպես. Լեոնային Ղարաբաղը դարձյալ մնաց առանց իշխանության: Ձերբակալություններն ու բռնությունները մասսայական բնույթ կրեցին: Այդ մասին Ռուդիկ Ազարյանը 2000 թ. օգոստոսի 11-ին Ստեփանակերտում ունեցած մեր հանդիպման ժամանակ պատմեց.

– 1990 թ. հունվարի 17-21-ը Արկադի Ղուկասյանին, Ռազմիկ Պետրոսյանին, Ռոլես Աղաջանյանին, Ավետիք Գրիգորյանին և ինձ ձերբակալեցին Ստեփանակերտում: Ինձ և Ռոլեսին հատուկ ինքնաթիռով, խիստ հսկողության տակ տարան Թիֆլիս և նետեցին ՊԱԿ-ի մեկուսարան, որտեղ պահեցին երկու օր: Ոչ մի հարցաքննություն, ոչ մի սնունդ, միայն օրական մի բաժակ ջուր էին տալիս: Երբ մեզ տանում էին բանտային մեքենա, տեսանք այնտեղ են Արկադին, Ռազմիկը և Ավետիքը: Մեզ օդանավով տարան Ռոստով, այնտեղից էլ՝ Նովոչերկասկի թիվ երրորդ բանտը: Պայմանները շատ ծանր էին: Ակզբում բոլորիս պահում էին նույն բանտախցում: Հետո մեզ իրարից բաժանում են ու տանում տարբեր բանտախցեր, քրեականների մոտ: Իմանում ենք, որ Ղարաբաղից բերել են նոր կալանավորներ՝ Վիգեն Ծիրիկյանին (Մարտակերտից), Կամո Սաֆարյանին (Մարտունուց), Խոսրովին (Խոսրովը ծննդով Հայաստանից էր, Քարաղբյուր գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարը: Զոհվել է Քարաղբյուրի պաշտպանության համար մղված մարտերում՝ Հ. Ա.): Մեզ պահում են 31 օր: Հարցաքննությունների ժամանակ անընդհատ հարցնում էին, թե ովքեր են պայթեցրել Ստեփանակերտի կամուրջը և գերի վերցրել չորս թուրք ոստիկաններին: Մենք պնդում էինք, որ կամուրջը պայթեցրել են թուրքերը, իսկ ոստիկաններին գերի վերցնելու մասին տեղեկություն չուներք: Քանի անգամ ինձ հարցրել են, թե ձեր այդ հակախորհրդային գործողություններին ինչ մասնակցություն ունեն Համլետ Գրիգորյանը, Ռոլես Աղաջանյանը, Արկադի Մանուչարովը և էլի ուրիշների անուններ էին տալիս: Ես ժխտում էի ու պնդում, որ մենք հակախորհրդային ոչ մի գործողություն չենք կատարում: Մեզ ազատելուց առաջ մի որոշում են դեմ տալիս, թե իբր մեզ ձերբակալել են պարետային ժամը խախտելու համար:

Հունվարի 23-ին Ստեփանակերտում հայտնվեց արտակարգ դրության շրջանի ռազմական պարետի պաշտոնում վերահաստատված գեներալ-մայոր Վլադիսլավ Սաֆոնովը: Մարզը լրիվ կտրվեց

դրսի աշխարհից: Հունվարի 26-ին Ստեփանակերտ ժամանեցին ԽՍՀՄ պաշտպանության նախարար Յազովն ու ՆԳ նախարար Բուկատին: Նրանց կարգադրությամբ դադարեցրին ուղղաթիռների չվերթը Երևանից Ստեփանակերտ, Ծառուսյան, Գետաշեն: Կտրվեց Արցախի վերջին կապը արտաքին աշխարհի հետ: Հաջորդ օրը, հունվարի 27-ին, Ստեփանակերտ հասավ Վ. Պոլյանիչկոյի գլխավորած կազմկոմիտեն: Նրա աջակիցը ռազմական պարետ Վ. Սաֆոնովն էր, որն իր վարչապություններով գերագահեց 1906 թ. հունվարին Ղարաբաղ եկած ցարական գեներալ Գոլոշչակովին: Այդ նա էր, որ Անդրկովկասի փոխարքային ուղարկած հեռագրում պարծեանում էր Ղարաբաղի գյուղերն անխնա ոմբակոծելու համար<sup>71</sup>:

Կազմկոմիտեն տեղավորվեց կուսակցության մարզկոմի շենքում: Ի նշան բողոքի, մարզկոմի դեռևս պահպանվող բաժինների աշխատակիցները լքեցին շենքը: Մարզի աշխատավորներն իրենց անհնազանդությունը դրսևորեցին հունվարի 29-ին սկսած մասսայական գործադուլով:

– Այդ օրերին,– դառնությամբ հիշում է Համլետը,– հավաքվեցինք մշակելու մեր ռազմավարությունը: Որոշեցինք, որ Ստեփանակերտում ոչ ոք չպետք է համագործակցի Ադրբեջանի այդ օտար մարմնի հետ: Փետրվարի 1-ին մարզգործկոմի բաժինների աշխատողները տեղափոխվեցին Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի շենքը: Մինչ այդ գեներալ Սաֆոնովի հրամանով գինվորականները մարզգործկոմի շենքից իջեցրել էին Հայկական ԽՍՀ դրոշը և այնտեղ տնկել Ադրբեջանի դրոշը: Մարզգործկոմի աշխատողները հայտարարել էին, թե իրենք երբեք չեն աշխատի Ադրբեջանի դրոշի ներքո: Այդ օրերին «Խորհրդային Ղարաբաղ» թերթը ԽՍՀՄ 200 քաղաքներում ուներ 60 հազար բաժանորդ: Ռազմական պարետ Սաֆոնովը հրամայել էր թերթը տպագրել և տարածել միայն մարզում: Թերթի գրեթե լրիվ տպաքանակը տպագրվում էր Երևանում, որովհետև մարզում համապատասխան հնարավորություններ չկային: Ծարունակում էինք բողոք-հեռագրեր և նամակներ ուղարկել Հայաստան, Մոսկվա և այլ տեղեր: Գուցե դա մեր վերջին ճիչն էր...

– Լսել էինք,– շարունակում է Համլետը,– որ փետրվարի 5-7-ը պիտի տեղի ունենա ԽՄԿԿ Կենտկոմի պլենում: Հույս ունեինք, որ պլենումը հօգուտ մեզ որևէ քայլ կձեռնարկի: Գորբաչովը բավակա-

Ան խոսեց Լեոնային Ղարաբաղի հարցի մասին: Բայց դատարկ, կոնկրետությունից զուրկ էին նրա խոսքերը: Իր էություն գրեթե ոչինչ չսասց նաև Սուրեն Հարությունյանը: Նա միայն ասաց, որ ԼՂԻՄ-ի հարցը տարածքային վեճ է: Այն ոչ թե Հայաստանն է բարձրացրել, այլ Լեոնային Ղարաբաղի բնակչությունը: Ի՞նչ էր ուզում ասել: Այդպես էլ չհասկացանք:

Արցախում սկսվեցին բռնություններն ու ձեռքակալությունները: Ռազմական պարետ Կոստյայովի և Սաֆոնովի հրամաններով ձեռքակալվեցին, ինչպես ասվել է, Ղարաբաղյան շարժման ակտիվիստներ Արկադի Ղուկասյանը, Ռազմիկ Ազարյանը, Բոլես Աղաջանյանը, Ռաշիդ Մանգասարյանը, Ռուդիկ Ազարյանը, Ավետիք Գրիգորյանը և ուրիշներ: Անջատվել էր Ստեփանակերտի հեռախոսային կապը արտաքին աշխարհի հետ: Տասներկու ավտոմատավորներ օր ու գիշեր հսկում էին, որպեսզի մարզխորհրդի գործկոմի շենքի վրայից չիջեցվի Ադրբեջանի դրոշը<sup>72</sup>:

Այդ օրերին արցախահայերին խիստ անհանգստացնում էր Հյուսիսային Արցախի վիճակը: Ադրբեջանի իշխանությունների, ժողովրդական ճակատի, խորհրդային բանակի և ներքին գործերի ստորաբաժանումների հովանավորությամբ եռանդուն գործունեություն էր ծավալվում Խանլարի շրջանի Ազատ, Կամո, Մարտունաշեն և Գետաշեն հայաբնակ գյուղերի բնակչությանը տեղահանելու համար: Լուր հասավ Ստեփանակերտ, թե մարտի 2-ից սկսվել է Կամո գյուղի բնակիչների բռնի տեղահանությունը: Նույնը սպասվում էր Մարտունաշեն, Գետաշեն, Ծահունյանի շրջանի հայկական գյուղերին: Տեղահանության ընթացքը սկսվել էր միայն այն բանից հետո, երբ այդ գյուղերում տեղաբաշխվել էին խորհրդային բանակի և ներքին գործերի ստորաբաժանումները: Խորհրդային Հայաստանի իշխանությունները պահանջեցին վերջ տալ այդ բարբարոսությանը և խորհրդային զինված ուժերը դուրս բերել Հյուսիսային Արցախից:

1999-ի գարնան սկզբին տեղի ունեցավ մի ուրախայի երևույթ. մարտի 3-ին հրապարակվեց Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը, որով Հայաստանի Գերագույն խորհրդի առաջիկա ընտրություններին ԼՂԻՄ-ը ներկայացվում էր 12 ընտրական տեղամասերով: Այդ կապակցությամբ Ադրբեջանում վայնասում բարձացվեց, և ամեն կերպ փորձում էին խափանել ընտ-

րությունները Լեոնային Ղարաբաղում՝ իբր Ղարաբաղի մասնակցությունը Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրություններին ունեցություն է Ադրբեջանի ինքնիշխանության դեմ: ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությունը ևս ապօրինի համարեց Հայկական ԽՍՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը Լեոնային Ղարաբաղում ընտրական տեղամասեր ստեղծելու մասին: Ստեփանակերտում անընդհատ պատվում էին մեքենաներ, որոնց վրա դրված բարձրախումբերով հաղորդվում էին Պոլյանիչկոյի և Սաֆոնովի հրամանները: Նրանք արցախահայությունից պահանջում էին ենթարկվել Ադրբեջանին կամ էլ թողնել մարզն ու հեռանալ:

– Դարձյալ շարունակում էինք բողոքներ ուղարկել վերև, Մոսկվա, – ժպտում է Համլետը, – չէինք խրատվել, հույսներս չէինք կտրել: Այդ օրերին բողոք-նամակներ ուղարկեցին կուսակցական վերահսկողության մարզային կոմիտեն, արցախցի թոշակատուները, մայրերը, շատ անհատներ: Ղարաբաղում լուր էր տարածվել, թե մտցնում են նախագահական կարգ: Գորբաչովը ժխտեց այդ լուրը և պնդեց, թե կենտրոնական իշխանությունները հավատարիմ են նույնների 28-ի որոշմանը: «Բակինսկի ուսրոչի» թերթի մարտի 15-ի համարում տպագրվեց Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ նախագահ Էլմիրա Կաֆարովայի հայտարարությունը, որտեղ ասված է, թե Լեոնային Ղարաբաղում նախագահական կարգ չի նախատեսվում: Հետո Լուկյանովը փորձեց ժխտել Կաֆարովայի հայտարարությունը. նշելով, թե իբր Գորբաչովն այդ առթիվ «ոչ մի մտրհակ էլ չի տվել»:

Բայց, ըստ երևույթի, կեղծում էր Լուկյանովը: Այդպես է. այդ մարդիկ ստից ստեղծված և ստի մեջ թաղված էին: Մարզխորհրդի նախագահ Սեմյոն Բաբայանը մարտի 19-ին Գորբաչովին ուղարկած հեռագրում բողոք է հայտնում և շեշտում, որ դարձյալ շարունակվում է «ադրբեջանական ֆակտորը» անվերջ տեղի ունեցող ցույցեր, սպանություններ, բռնության գործադրում, սակայն այս անգամ ավելի լայն չափանիշներով: Ինչպես միշտ, այս անգամ ևս անպատասխան մնաց արցախահայության այդ արդարացի պահանջը: Այո՛, Գորբաչովը կարող էր Ղարաբաղում մտցնել նախագահական իշխանություն, օրենքը դա թույլատրում էր: Այդ դեպքում ամբողջ պատասխանատվությունը վերցնում էր իր վրա և, մեր կարծիքով, Ղարաբաղը գերծ կմնար հետագա դժոխքային վիճակից:

Ամենակարևոր հարցը մարզում խորհրդային մարմինների վերականգնումն էր: 1990 թ. մարտի 17-ին Ստեփանակերտում գումարվեց ԼՂԻՄ-ի մարզխորհրդի նստաշրջան, որին մասնակցեցին նաև մարզից ԽՍՀՄ ԳԽ-ի պատգամավորները: Ելույթ ունեցողները նշեցին, որ իրենք կատարում են ԽՍՀՄ ԳԽ-ի նոյեմբերի 28-ի որոշումը, անկախ նրանից, թե ինչ են մտածում Ստեփանակերտում բուն դրած Պոլյանիչկոն և Սաֆոնովը:

Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին նոր քարտուղար ընտրված Այազ Մուրթալիբովը, որը մինչ այդ զբաղեցնում էր Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը, ամեն կերպ փորձում էր Լեոնային Ղարաբաղում վերականգնել Ադրբեջանի իշխանությունը: Ադրբեջանը Ղարաբաղում բացահայտորեն շարունակում էր վրեժխնդրության և աստրապի քաղաքականություն: Այազ Մուրթալիբովը նույնիսկ պահանջում էր, որ Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը մեկնի Բաքու՝ իբրև մասնակցելու Կենտկոմի բյուրոյի նիստին: Անկասկած, նրան սպասվում էր ձերբակալություն: Ուստի մերժեց:

– Դա ոչ միայն Վաչագան Գրիգորյանի ցանկությունն էր, այլև բոլորիս պահանջը, որ նա չգնա Բաքու:– Մի պահ լռելուց հետո Համլետը շարունակում է:– Դրսում շատերը մեզ պաշտպանում, գնահատում էին մեր պահանջի արդարացի լինելը, ԽՍՀՄ ԳԽ-ի ամբիոնից հնչող բազմաթիվ ելույթներ մեղադրում էին Կենտրոնական իշխանություններին ժամանակին Լեոնային Ղարաբաղի խնդիրը չլուծելու համար: Մարտի 15-ին, երբ քննարկվում էր Լիտվայի հարցը, այդ մասին հստակ արտահայտեց Գալինա Ստարովոյտովան, որը<sup>73</sup> Ղարաբաղի և ընդհանրապես հայ ժողովրդի ջերմ բարեկամն էր: Հարցը կամա թե ակամա շոշափում էր նաև Ղարաբաղի հիմնախնդիրը: Իսկ դա չէր գոհացնում Ադրբեջանի իշխանություններին: Հենց նրանց հրամանով Սաֆոնովը մինչև ատամները զինված մի ջոկատ ուղարկեց Մարտակերտի շրջանի Չայլու գյուղի դեմ: Գնդակահարվեց 12-ամյա Արմեն Մկրտչյանը: Այդ զարհուրելի արարքը ավելի բոլորեց մարզի բնակչությանը: Արցախահայության ատելությունն այլևս սահման չուներ: Ամենուր մեղադրվում էր Սաֆոնովը և բնորոշվում որպես դահիճ...

Անզերեցնի լեզվի ուսուցչուհի Ելենա Նիկոլաննա Բաղյակինան գեներալ Սաֆոնովին հասցեագրված նամակում պաշտպանում է

արցախահայությանը, նրա պատմական իրավունքները իր հողի վրա, իսկ վերջում՝ «Եվ հուսալ, թե այդ հպարտ ու խիզախ ժողովրդին կարելի է ծնկաչոք անել պատճառալիքներով կամ շրջափակումներով, առնվազն միամտություն է: Ավելի լավ կլինի, եթե կառավարությունը վերջ է վերջո լսի ժողովրդի ձայնը և ճանաչի ինքնորոշման նրա օրինական իրավունքը»<sup>74</sup>:

Հիմա վերադառնանք Ղարաբաղյան հորձանուտ և կրկին լսենք Համլետին.

– Նախընտրական քարոզչությունը տանում էինք շատ զգույշ, որպեսզի Պոլյանիչկո-Սաֆոնով դահճախումբը ավելի չընդլայնեն իրենց բարբարոս գործողությունները: Բայց ահա, «Բակինսկի ութույն» թերթի ապրիլի 22-ի համարում ընթերցում ենք, որ Ադրբեջանական Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունը քննարկել է Լեոնային Ղարաբաղում ստեղծված վիճակի հարցը և որոշել արգելել մարզի բնակչությանը մասնակցելու Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրություններին: Բացի այդ, որոշվեց մարզի վարչատարածքային բաժանման մեջ մտցնել հետևյալ փոփոխությունները. Խոջալու գյուղը հայտարարվեց քաղաք՝ ստեղծելով Խոջալուի քաղխորհուրդ և ստեղծվեց Մեշայի գյուղխորհուրդ: Նմանատիպ փոփոխություններ են կատարվում նաև մյուս շրջաններում: Հետաքրքրական էր նաև այն, որ Ստեփանակերտից առանձնացվում էր Կրկժանը և այնտեղ ստեղծվում ավանային խորհուրդ:

Թուրքերի այդ անօրինության դեմ մարզխորհրդի գործադիր կոմիտեի և շրջխորհուրդների նախագահների ստորագրությամբ բողոք ենք ուղարկում ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությանը, ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեին և ԽՍՀՄ դատախազությանը: Այդ բողոքը ևս մնաց անհետևանք:

Մինչև 1990 թ. Արցախում չենք մշել հայոց ցեղասպանության հիշատակի օրը: Լրանում էր այդ ողբերգության 75-ամյակը: Որոշեցինք օգտագործել առիթը և Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում կազմակերպել հավաք: Տնետուն իմաց տվեցինք բոլորին: Քաղաքի բնակչության զգալի մասը ժամանակին հավաքվեց եղբայրական գերեզմանոցում: Իմիջիպայոց, «Միացումը», որը գործում էր ընդհատակում, հրահանգել էր համանման հավաքներ կազմակերպել նաև մարզի բոլոր շրջկենտրոններում և բնակավայրերում: Ռազմական պարետ, գեներալ Սաֆոնովը, իմանալով այդ մասին, կտ-



րուկ արգելել էր հավաքման, երթերի և համահամա միջոցառումների կազմակերպումը: Այնուամենայնիվ, սգո միտինգի և ներկա էր մի քանի տասնյակ հազար մարդ...

Սգո միտինգը բացում է Համիլետը: Ապա ելույթ են ունենում բազմաստեղծներ Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչիկ Բեգլարյանը, Սոկրատ Խանյանը, Արկադի Թովմասյանը, Ռոնա Բալայանը և ուրիշներ: Ելույթ ունեցողները խստորեն դատապարտում են ցեղասպանությունը, մերկացնում թուրք բարբարոսների արարքները հայ ժողովրդի նկատմամբ, որոնց մեր օրերում կրկնում էին նրանց ազգակից ազդեցիկները:

Ստեփանակերտի այս գործողությունը Վ. Սաֆոնովին և Վ. Պոլյանիչկոյին հանում է համբերությունից: Նրանց կարգադրությամբ հաջորդ օրերին ձերբակալվում են սգո միտինգում բոլոր ելույթ ունեցողները և մի շարք ուրիշ մտավորականներ: Ձերբակալվածներին տուգանում են հազարական ռուբլի, իսկ Համիետ Գրիգորյանի և Արկադի Թովմասյանի համար սահմանում են 10-ական օրվա կալանք: Այդ առթիվ Լենա Գրիգորյանը հիշել է.

– Ապրիլի 25-ին զինվորներ եկան ինստիտուտ Ռոնա Բալայանի, Սոկրատ Խանյանի և Համիետ Գրիգորյանի հետևից: «Եկել են մեր դասախոսներին տանելու...»: Եվ այդ լուրը գնալով հզորացավ, և կալանավորելու մասին լուրը ևս օձի պես սողաց ինստիտուտի միջանցքներով: Եվ ուսանողությունը բացատրություն պահանջեց, թե ինչու են ուզում կալանավորել սգո արարողության ժամանակ ելույթ ունեցողներին: Ձե՞ որ ամբողջ աշխարհն է դատապարտում եղե՞նք՝ մարդկային այդ դաժան ոճիսը:

– Հավաքի հաջորդ օրը,– պատմում է Ռաֆիկ Գաբրիելյանը,– երբ սգո միտինգի կազմակերպիչներին կանչում են պարետատում, բոլորս, մանավանդ Բանվորական խմբի անդամները, հավաքվում ենք պարետատան մոտ և պահանջում ազատել կալանվածներին: Մեզ պատասխանում են, թե իբր նրանք խախտել են արտակարգ դրության կանոնները: Ասում ենք՝ հավաքին ներկա է եղել մի քանի տասնյակ հազար մարդ, այդ դեպքում բոլորին ձերբակալեցեք: Համիետն ինձ ասում է՝ տղաներին վերցրու գնա, ոչինչ էլ չի լինի: Ցրվում ենք: Սակայն չանցած կես ժամ, ինձ հայտնում են, թե Համիետին ու Արկադիին տարել են, իսկ մնացածներին ազատել: Արագ վերադառնում են պարետատում և փորձում հանդիպել մարզմիլիտետ Թումա-

նյանի հետ: Չի հաջողվում: Շուտապ հավաքում են Բանվորական խումբը: Գնում ենք «Միացումի» նախագահ Ռոբերտ Քոչարյանի մոտ: Նրան հարցնում են. ի՞նչ անենք, նա էլ թե՛ ինչ ուզում եք արեք: Երկու մեքենայով գնում ենք մանկավարժական ինստիտուտ, ուսանողներին և դասախոսներին ոտքի հանում ու գալիս հրապարակ, ուր արդեն հավաքվել էր մի քանի հազար մարդ: Աղմուկ-աղաղակը լսվում էր ամբողջ քաղաքում: Ձինվորները մեզ խփում էին ուտիներ մահակներով: Մի կերպ դուրս պրծանք: Լավ ծեծ կերանք: Ես դրա Սաֆոնով մերը... Իմ ձեռքն ընկներ՝ ես նրա հերը կանիծեի, այնքան էի վառված... Պատկերացնո՞ւմ եք, այդ վայրենությունները կատարվում էին խորհրդային Միության Գերագույն խորհրդի ստուգող-դիտորդ հանձնաժողովի նախագահ Ֆոտեևի աչքի առաջ, որն այդ օրերին գտնվում էր Ստեփանակերտում:

Այդ վանդալիզմի մասին է խոսվում Մոսկվա՝ կենտրոնական իշխանություններին և կենտրոնական մամուլին ուղարկված՝ մարզի ղեկավարների և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ԳԽ-ի պատգամավորների ստորագրությամբ բողոք-նամակում, որում մերկացվում էին կենտրոնական իշխանությունների մասնակցությամբ և թույլտվությամբ Լեռնային Ղարաբաղում իրագործվող այդ վայրագությունները և պահանջում անհապաղ վերջ տալ նման բարբարոսական գործողություններին<sup>75</sup>:

Այդ օրերին գեներալ Վ. Սաֆոնովը պարետատում է հրավիրում Ստեփանակերտում աչքի ընկնող ղեկավարներին և հասարակական-քաղաքական կազմակերպությունների մի շարք անդամների ու առանց հիմնավորված մեղադրանք ներկայացնելու բոլորին տնային կալանքի ենթարկում 10 օրով: Ապրիլի 30-ից տնային բանտարկության մեջ էին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամ, Հայկական ԽՍՀ ԳԽ պատգամավոր Ռոբերտ Քոչարյանը, Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի տնօրեն, «Արցախ» երգահանների կազմակերպության նախագահ, ԽՍՀՄ երգահանների միության անդամ Էդուարդ Ղազարյանը, «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրի տեղակալ Արկադի Ղուկասյանը, կահույքի ֆաբրիկայի տնօրեն Էոնեստ Հայրապետյանը, մանկավարժական ինստիտուտի դոցենտներ Արզիկ Մխիթարյանը և Համիետ Մովսիսյանը, մարզային ճանապարհաշինարարական թիվ 28 վարչության պետ Ռոլես Աղաջանյանը, քաղաքային մարզադաշտի տնօ-

րեն հազմիկ Պետրոսյանը, պահեստի փոխգնդապետ Արսեն Լաչի-  
նյանը, Արմո Մատուրյանը, մի խումբ գրողներ և այլոք, թվով 37  
հոգի<sup>76</sup>:

Հիմա լսենք Համլետին.

- Ապրիլի 26-ի ինձ հրավիրեցին քաղաքի պարևատուն հար-  
ցաքնության, թե ինչու եմ կազմակերպել սգո միտինգ: Սպառնացին  
կամ 15-օրյա կալանք, կամ էլ 1000 ո. տուգանք: Այստեղ էլ ինձ ձեր-  
բակալեցին: Ձերբակալել էին նաև Արկաղի Թովմասյանին: Ձերբա-  
կալության հաջորդ օրը մեզ տարան Կիրովաբադ, այնտեղից էլ ուղ-  
մական բեռնատար ինքնաթիռով՝ Մինվոդի, որտեղից էլ՝ Պյատի-  
գորսկ, «Սպիտակ կարապ» բանտը: Այնտեղ մեզ պահեցին 15 օր:  
Միշտ է, մեզ հետ կուպիտ չէին վարվում, բայց խիստ անհանգիստ  
էինք: Առաջին անգամ Ղարաբաղը պետք է մասնակցեր Հայկական  
ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններին: Դեպուտատության իմ  
թեկնածությունը առաջադրվել էր Ստեփանակերտի 251-րդ ընտրա-  
տարածքում: Ռազմական դրության պայմաններում բացահայտ քա-  
րոզչություն տանելը հնարավոր չէր: Մարզի տարածքում թեկնածու-  
ների կողմից քարոզչությունը տարվում էր գաղտնի: Պուլցանիչկո-  
Սաֆոնով ճահճախմբի լրտեսներն ամենուր խցկվում և հոտոտում  
էին: Աղբբեջանի իշխանությունները ոչնչի առաջ կանգ չէին առնում  
Ղարաբաղում ընտրությունները տապալելու համար: Ստեփանա-  
կերտի 251-րդ ընտրատարածքում դեպուտատության թեկնածու էր  
նաև «Ագրոարդշին» միավորման կոլեկտիվի կողմից դեպուտատու-  
թյան թեկնածու առաջադրված այդ միավորման արտադրատեխնի-  
կական բաժնի ինժեներ Կառլոս Աշոտի Գրիգորյանը: Չէ, դա ինձ չէր  
անհանգստացնում, պարզապես վախենում էի՝ մինչև ընտրություն-  
ների օրը բաց չթողնեին:

Համլետը Հայկական ԽՍՀ ԳԽ դեպուտատության թեկնածու էր  
առաջադրվել Կիրովականի մանկապարծական ինստիտուտի Ստե-  
փանակերտի մասնաճյուղի կոլեկտիվի կողմից: Նա մինչ այդ, 1989  
թ. հուլիսին, ելնելով «աշխարհայացքային անհամատեղելիություն-  
նից», հրաժարվել էր կոմունիստական կուսակցության անդամակ-  
ցությունից: Նրա՝ այդ օրերին Ստեփանակերտում լինելը խիստ  
անհրաժեշտ էր:

Մոտենում էր մայիսի 20-ը: Բանվորական խմբի ղեկավար Ռա-  
ֆիկ Գաբրիելյանը պատմում է, որ ընտրությունների համար բոլոր

արկղերը պատրաստել էին կահույքի ֆաբրիկայում, հենց իր գլխա-  
վորած արտադրամասում: Համլետն ու Արկաղին բանտից վերա-  
դարձել էին ընտրություններից մի քանի օր առաջ: Դեպուտատու-  
թյան բոլոր թեկնածուներն էլ ընտրողների հետ հանդիպում էին  
գաղտնի բնակարաններում կամ էլ շենքերի միջնահարկերում ու մի-  
ջանցքներում: Գյուղական վայրերում և շրջկենտրոններում թեկնա-  
ծուները ընտրողների հետ հանդիպում էին համեմատաբար ազատ  
պայմաններում: Այնուամենայնիվ, գաղտնիության բոլոր պայմաննե-  
րը պահպանվում էին: Ընտրական բոլոր տեղամասերում էլ ընտրու-  
թյունները տեղի ունեցան կազմակերպված: Պայքարի նվիրյալները,  
արկղերը գրկած՝ գիշերը բնակարանից-բնակարան էին անցնում և  
բնակիչներին քվեարկելու հնարավորություն տալիս: Այդ գործում  
առավել ակտիվ էր իմաստոտուտի դասախոս Հենրիխ Պետրոսյանը:  
Նրանք գործում էին շատ զգույշ, որովհետև գեներալ Վ. Սաֆոնովը  
զինվորական նոր ջոկատներ էր մտցրել երկրամաս և ամեն կերպ  
փորձում էր ձախողել ընտրությունները: Ձինվորականները շրջա-  
պատել էին բոլոր ընտրական տեղամասերը, և Ստեփանակերտում  
անընդհատ շրջող գրահամեքենաներից բարձրախոսներով սպառ-  
նում էին բանտարկել բոլոր նրանց, ովքեր կմասնակցեն ընտրու-  
թյուններին: Այդ ամենը արհամարհելով, արցախահայության 100  
հազար ընտրողների 94 տոկոսը մասնակցեց Հայկական ԽՍՀ ԳԽ-ի  
ընտրություններին: Ըստ էության, արցախահայությունը մի անգամ  
ևս անցկացրեց հանրաքվե և ձայնը տվեց Մայր Հայրենքի հետ վե-  
րամիավորելու օգտին: Արցախից դեպուտատների գրանցումը կա-  
տարվեց Հայկական ԽՍՀ ժողովրդական դեպուտատների ընտրու-  
թյան կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ: Հայկա-  
կան ԽՍՀ ԳԽ-ի պատգամավորներ ընտրվեցին Սերժիկ Սարգսյա-  
նը, Գեորգի Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Լիլիկ Ղուկասյանը,  
Վահրամ Աթանեսյանը, Սլավիկ Առուշանյանը, Մանֆրեդ Բախշյա-  
նը, Ռազմիկ Դանիելյանը, Գրիշա Բաղյանը, Վիգեն Թիրինյանը և  
Զավեն Իշխանյանը: Բացի այդ, Չարենցավանի հ. 143-րդ ընտրա-  
տարածքում կրկին պատգամավոր ընտրվեց արցախյան շարժման  
առաջամարտիկ, դեռևս Մոսկվայի Բուստիլյան մեկուսարանում գտն-  
վող Արկաղի Մանուչարովը, Կիրովականի 199-րդ ընտրատարած-  
քում՝ Ռոբերտ Քոչարյանը: Հայկական ԽՍՀ պատգամավորներ են  
ընտրվում նաև արցախիցիներ Վլադիմիր Աղաջանյանը, Ռազմիկ

Պետրոսյանը և Բոլես Աղաջանյանը: Այդ ժամանակ Հայկական ԽՍՀ ԳԽ-ի կազմում 16 արցախցի պատգամավորների ընտրվելը կարևոր երևույթ էր:

## ԱՐՑԱԽԸ ԹՊՐՏՈՒՄ ԷՐ

Վիճակը ծանրանում էր օր օրի, ժամ առ ժամ, ոչ միայն Ստեփանակերտում, այլև ամբողջ Արցախում: Աշխարհից կտրված Արցախը վիրավոր թոչնի պես թաքտում էր, փրկության ելք որոնում: Ղարաբաղում տեղակայված խորհրդային ուժերը հետզհետե դահիճների կերպարանք էին ստանում: Մոսկվայի ռադիոն անօրեն հայտարարեց մայիսի 20-ին Արցախում անցկացված ընտրությունները: Սաֆոնովի և Պոլյանիչկոյի հրամանով Ստեփանակերտում և այլ բնակավայրերում կազմակերպում էին սադրանքներ: Այդ օրերին խորհրդային երկրի զինվածուժերը և ազերի-օմոնականները անմարդկային ու վայրագ գործունեություններ կատարեցին Ավդուտ, Մյուրիշեն, Մաճկալաշեն, Քաջապան, Քարին տակ և այլ գյուղերում: Անձնագրային ռեժիմի ստուգման և զենք առգրավելու անվան տակ նրանք ավերեցին տասնյակ բնակավայրեր, պետական ու հասարակական շինություններ, տասնյակ կոլտնտեսությունների զրկեցին հազարավոր հեկտար հողատարածություններից և մի քանի հազար զլուխ անասուններից:

Արցախցիները որսխությամբ ընդունեցին մայիսի 30-ի Մոսկվայի ռադիոյի հաղորդումը Բուսիբյան կալանատնից Արկադի Մանուչարովի ազատվելու մասին:

Բանտի մուտքի մոտ Ղարաբաղյան շարժման առաջամարտիկին դիմավորեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Գալինա Ստարավոյտովան և Բորիս Դադամյանը:

1990 թ. հունիսի 1-ի առավոտյան Ստեփանակերտը վեր էր անվել ռազմական ճամբարի: Գեներալ Սաֆոնովն այդքան զինվորներ, տանկեր ու զրահամեքենաներ չգիտես որտեղից էր լցրել քաղաք: Միայն հաջորդ օրը պարզ դարձավ, որ Ադրբեջանի նախագահ Ալյազ Մութալիբովը ժամանել էր Ստեփանակերտ և պարզևազին հաձնել դահիճ Սաֆոնովին, ռազմական պարետության քաղբաժնի պետ, գնդապետ Բոգոդոլյովին և մարզի անվտանգության կոմիտեի նա-

խագահ, գնդապետ Վոլկովին: Մութալիբովը Խոջալուում մասնակցեց գործվածքային ֆաբրիկայի բացման արարողությանը: Նա չմոռացավ իր ելույթում հայտարարել, թե արցախահայերը Ղարաբաղում եկվորներ են և հյուրեր: Պատկերացնում եք, իր օրրանում, իր հողի վրա, իր ծննդավայրում ապրող արցախահայը հյուր է և եկվոր, իսկ երեկվա եկած թափառական թուրքը՝ բնիկ ու հողատեր:

Եվ դա բուրբը չէր: Ադրբեջանի տիրակալները ձգտում էին Լեռնային Ղարաբաղում վերացնել կուսակցական ու խորհրդային մարմինները և մարզի վարչական կառուցվածքը զծել ըստ իրենց ցանկության: Այդպես վարվեցին Հաղրութի և Մարտունու շրջաններում: Արտակարգ դրության տեր, գեներալ Սաֆոնովի հրամանով հունիսի 21-ին Հաղրութի շրջանում ձերբակալվեցին տասնյակ ակտիվիստներ և տարվեցին Ֆիզուլու շրջան:

– Ահա այսպես շարունակվում էր Ղարաբաղի օկուպացումը, – ատանները սեղմում է Համլետը և շարունակում, – Արցախի հողը տնքում էր այդ դաժան ծանրությունից: Այո՛, տնքում էր, բայց, հերոսաբար դիմանում: Դա մեր նակատագիրն էր: Թուրքը որքան փորձում էր մեզ մասնատել, այնքան էլ կրկնապատկվում, բազմապատկվում էր մեր ուժը, մեր դիմադրությունը, մեր ատելությունը: Վերջապես մեր թիկունքում մայր Հայաստանն էր, աշխարհասփյուռ հայ ժողովուրդը, մեզ համակրող միլիոնավոր ազնիվ մարդիկ: Սաֆոնովի և Պոլյանիչկոյի անանները միշտ էլ գոյություն են ունեցել: Նրանց արարքը մեզ մղում էր պատասխան գործողությունների և անասելի հերոսությունների: Մենք պետք է հաղթեինք, ուրիշ ելք չունեինք: Դա նաև Աստծու կամքն էր:

Այդ օրերին Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Նախարարների խորհուրդը հանդես եկան հայտարարությամբ, որտեղ ասված է, որ Ադրբեջանի իշխանությունների կողմից փաստացիորեն վերացվում է ԼՂԻՄ-ը: Այնտեղ իրագործվող ազերիների քաղաքականությունը ամբոխավարական է և անբարոյական, հակասահմանադրական, կուսակցության կանոնադրությանը հակասող: Իսկ այդ ամենը կատարվում էր երկրի ղեկավարության լուր համաձայնության պայմաններում: Հայաստանի իշխանությունները կոչ էին անում վերականգնել ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի իրավունքները, վերացնել ավտոնոմապարհների շրջա-

փակումը Հայաստանի և ԼՂԻՄ-ի միջև, 1990 թ. հունվարի 15-ից մտ-  
ցված արտակարգ դրությունը, լուծարել հանրապետական կազմովի-  
տեն և վերականգնել կուսակցության մարզկոմի գործունեությունը<sup>77</sup>:

1990 թ. հունվարի 15-ից հետո Լեոնային Ղարաբաղում վերացվել  
էին օրինական իշխանությունները: Այդ ժամանակվանից էլ երկրա-  
մասը թևակոխեց իր նորագույն պատմության ամենածանր ժամա-  
նակներից մեկը: Ղարաբաղում համատարած քաղաքացիական  
անհնազանդությունը դարձել էր նրա ազգային-ազատագրական  
պայքարի ամենագորեղ զենքը, որն իր կիրառումը գտավ Արցախում  
տեղի ունեցող համընդհանուր գործադուլի և Ադրբեջանի կազմկոմի-  
տեի աշխատանքի բացարձակ վիժեցման ձևով: Եվ այդ ամբողջ ժա-  
մանակաշրջանում Հայաստանը հանդիսացել է արցախահայության  
անվտանգության միակ երաշխավորը: Ամենակարևորը Արցախի  
բարդույթի քաղաքական լուծումն էր, որի համար ջանքեր չէին խնա-  
յում ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ Ղարաբաղում:

Արցախից ընտրված պատգամավորները պատրաստվում էին  
մեկնել Երևան՝ մասնակցելու հուլիսի 20-ին սկսվելիք Հայկական  
ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանին: Սակայն Սաֆոնովը ու  
Պոլյանիչկոն ամեն կերպ փորձում էին արգելել նրանց Երևան մեկ-  
նելը և դիմում էին սադրանքների: Հենց այդ օրերին, հուլիսի 18-ին,  
Պոլյանիչկոյի կազմկոմիտեն հրապարակեց արցախահայությունը  
տեղահանելու գաղափարը: Ըստ նրա, այդ հրեշավոր գործողությու-  
նը պետք է իրականացվեր մարդատար ավտոմեքենաներով և երկա-  
թուղով միաժամանակ: Դահլիճ Պոլյանիչկոն չէր թաքցնում, որ այդ  
ոճիրը նախօրոք քննարկվել էր Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի  
բյուրոյում: Հարցը հիմնականում առաջ էին քաշել Ադրբեջանի ղե-  
կավարությունը և ժողովրդական ճակատը: Այդ պլանի համաձայն  
նախ պետք է արտաքսվեին Ղարաբաղյան շարժման ղեկավարները,  
ակտիվիստները և առանձին անձինք: Այնուհետև պետք է հաշվե-  
հարդար տեսնեին մնացած բնակչության հետ: Ի պատասխան ազե-  
րիների այդ ոճրագործ պլանի, արցախահայությունը հայտարարում  
է. «Թող բոլորն իմանան, որ ղարաբաղցիները, ինչպես դա եղել է բո-  
լոր ժամանակներում, չեն լքի հայրենի հողը, կպաշտպանեն հարա-  
զատ օջախները»<sup>78</sup>:

1990 թ. հուլիսի 20-ին Հայաստանի խորհրդարանն սկսեց իր աշ-

խատանքները: Օգոստոսի 4-ի նիստին մասնակցած 218 պատգամա-  
վորներից 140-ը քվեարկեցին Լեոն Տեր-Պետրոսյանի օգտին, և նա  
ընտրվեց Հայաստանի խորհրդարանի նախագահ: Շատ խոստում-  
նալից և ինքնապատահ էր հայ ժողովրդին ուղղված Լեոն Տեր-Պետ-  
րոսյանի դիմումը և խորհրդարանում արտասանած ճառը:

Հետո Համիլետը կպատմի.

— Արցախցի պատգամավորներս մասնակցեցինք նստաշրջանին:  
Ես և իմ մի քանի ընկեր պատգամավորներ զգուշացանք հենց առա-  
ջին նիստերից: Տեսանք, որ թե «Ղարաբաղ» կոմիտեն և թե նորըն-  
տիր նախագահ Լեոն Տեր-Պետրոսյանը լոկ խաղեր են. միայն թե  
նվաճեն իշխանությունը և տիրանան կառավարման բոլոր օղակնե-  
րին: Երբ հասկացա նրանց բռնապարտիզներ, ձգտեցի զգույշ լինել:  
Սակայն լինելով խորհրդարանի պատգամավոր և հանձնաժողովի  
անդամ՝ չէի կարող հեռու մնալ ու չաշխատել իմ ուժերի ներածին  
չափ: Ցավոք, նաև տեսա, թե ինչպես երկու-երեք տարում Հայաստա-  
նը պատառ-պատառ դարձավ, ծնվեցին հարյուրավոր կուսակցու-  
թյուններ-համայնքներ-միություններ-կազմակերպություններ, որոնք  
պինդ բռնեցին իրար կոկորդից, մինչդեռ Ղարաբաղում շարունակում  
էինք մնալ մեկ միասնական ժողովուրդ: Մի անգամ ևս համոզվեցի,  
որ դրա մեջ է արցախահայության հարատևության ուժը:

Հայաստանի խորհրդարանը ստեղծեց Արցախի հարցերով Հա-  
տուկ հանձնաժողով, որի կազմի մեջ մտան Համիլետ Գրիգորյանը,  
Սլավիկ Առուշանյանը, Գրիշա Բաղյանը, Լդիկ Ղուկասյանը, Ռո-  
բերտ Քոչարյանը, Գեորգի Պետրոսյանը, Ռազմիկ Պետրոսյանը և  
Վիգեն Ծիրիկյանը:

1990 թ. աշնանը բողոքի բարձրագույն կետը հանդիսացավ  
ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, գրող-հրապարակախոս Զորի  
Բալայանի կողմից Մոսկվայում, «Մոսկվա» հյուրանոցի իր համա-  
րում սեպտեմբերի 9-ից հացադուլ սկսելը: Սեպտեմբերի 12-ին նրան  
միացավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ,  
աստղաֆիզիկոս, աշխարհահռչակ գիտնական, Սոցիալիստական  
աշխատանքի կրկնակի հերոս Վիկտոր Համբարձումյանը, 13-ին՝  
ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Սոս Սարգսյանը, Լեոնային  
Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագահ, ԽՍՀՄ ժողովրդական  
պատգամավոր Վաչագան Գրիգորյանը, ԼՂԻՄ-ի մարզխորհրդի

նախագահ Սեմյոն Բաբայանը, Լեոնային Ղարաբաղում խորհրդային մարմինների մի շարք աշխատողներ, տաջիկ գիտնական Ռոստամ Օուքուրովը և ուզբեկ գիտնական Սուրաբ Օարաֆուտովինովը:

Այդ առթիվ Համլետը պատմում է.

– Ես էլ պատրաստ էի մեկնել Մոսկվա և միանալ հացադուլավորներին: Սակայն ընկերները չերաշխավորեցին: Ստեփանակերտից տասնչակ հուսադրող հեռագրեր ուղարկեցինք հացադուլավորներին: Նրանք քաղաքական այդ գործողությունը ոտքի էր հանել ամբողջ արցախահայությանը: Օտտ էինք վախենում հատկապես Ջորի Բալայանի համար: Չէ՞ որ նրա սիրտը հիվանդ է:

Հայկական ԽՍՀ ԳԽ արցախցի պատգամավորները աշնանային նստաշրջանում ավելի ակտիվ էին: Գերագույն խորհրդում ստեղծվում է «Արցախի կանչ» խումբ, որի համանախագահներ են ընտրվում Համլետ Գրիգորյանը, Սուրեն Ջոլյանը և Սամվել Օահմուրադյանը, քարտուղար՝ Մանֆրեդ Բախշյանը: Խմբի անդամներն էին Վահրամ Աթանեսյանը, Վլադիմիր Աղաջանյանը, Կիմ Բալայանը, Սեյրան Բաղդասարյանը, Գրիշա Բաղյանը, Ռազմիկ Դանիելյանը, Էդիկ Ղուկասյանը, Արկադի Մանուչարովը, Վիգեն Օիրիճյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ռաֆիկ Պետրոսյանը և ուրիշներ: «Արցախի կանչ» խորհրդարանական խմբի կանոնադրության համաձայն խումբը «ընդունելու է ժողովրդական դիրքորոշում, նպատակ է հետապնդում 1989 թ. դեկտեմբերի 1-ի Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեոնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման արագ ու գործնական իրականացումը»: Խումբը պարտավոր էր ծավալուն աշխատանք տանել Արցախում, Հայաստանում և նրանց սահմաններից դուրս:

Համլետը նաև ընդգրկված էր Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կրթության և գիտության, լեզվի և մշակույթի մշտական հանձնաժողովում, որի նախագահն էր ակադեմիկոս, Օարթման նվիրյալ Ռաֆայել Ավետիսի Ղազարյանը: Համլետը և արցախցի մյուս պատգամավորները ծավալուն աշխատանք էին տանում Ղարաբաղում և նրա սահմաններից դուրս, ներառյալ Մոսկվայում, Հյուսիսային Կովկասում և հայաշատ ուրիշ վայրերում: Սերտ կապի մեջ էին ուս և այլազգի շատ մտավորականների, գիտնականների, ռազմական, քաղաքական և հասարակական գործիչների հետ:

Նրանց ուղարկում էին Ղարաբաղին վերաբերող պատմական և քաղաքական փաստաթղթեր, գրքեր, լրագրեր, նամակներ, կոչեր և այլ նյութեր: Այդ տեսակետից լայն աշխատանք էին տանում մանավանդ Արցախից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները Ջորի Բալայանի գլխավորությամբ: Այս ամենն, անկասկած, կատաղեցրել էր Ադրբեջանի իշխանություններին: 1990 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ընդունեց թ. 1916-11 որոշումը՝ «Ադրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ-ից Հայաստանի Գերագույն խորհրդում անօրեն ընտրված անձանց վրա պատգամավորական անձեռնմխելիությունը չտարածելու մասին», որը բացահայտ սադրանք էր: Համաձայն այդ որոշման, անօրինական էր ճանաչվում մայիսի 20-ի ընտրությունները և, որ Ղարաբաղից Հայաստանի Գերագույն խորհրդի պաղգամավորներ ընտրված անձիք չեն օգտվում անձեռնմխելիության իրավունքից, իբր նրանք ընտրվել են անօրեն: Ադրբեջանի հանրապետական կոմիտեն այդ որոշման մասին պաշտոնական գրությամբ ( 10. 10. 1990 թ. թ. 142) տեղյակ է պահել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին<sup>79</sup>: Հենց այդ որոշումն էլ հիմք հանդիսացավ Պոլյանիչկոյի և Սաֆոնովի համար՝ որսալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արցախցի պատգամավորներին: Առաջինը, հոկտեմբերի 9-ի երեկոյան, իր տանը, կնոջ և երեխաների ներկայությամբ ձերբակալվեց Ռուխ Աղաջանյանը:

– Հոկտեմբերի 9-ի երեկոյան, – հետո պատմեց Ռուխը, – զանգեցին մեր տուն ու հայտնեցին, թե զինվորները շրջապատել են գործարանը և պնդում են, թե իբր այն ականապատել ենք ու պատրաստվում ենք պայթեցնել: Չնայած մի քանի րոպե՝ դուրը ծեծում են: Բացում եմ ու տեսնում՝ միջանցքում կանգնած են մի խումբ զինվորներ: Նրանք դուրս են կանչում ինձ, անմիջապես ձերբակալում և տնային հագուստով ու նույնիսկ հողաթափերով նստեցնում մեքենա, տանում մեկուսարան: Այնտեղ մեկ օր պահելուց հետո ինձ տանում են Օուշիի բանտը, հանձնում թուրքերին ու գնում: Դե պատկերացրեք իմ վիճակը: Մանրամասն խուզարկելուց հետո ինձ տարան բանտի այն բաժանմունքը, որտեղ պահում էին կալանավորված հայերին: Մի ամբողջ օր սոված պահելուց հետո ինձ տանում են օդանավակայան:

Ռուխի հարազատները, քաղաքի հասարակայնությունը,



«Մորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունը փորձեցին իմանալ, թե ովքեր են ձեռքարկել ժողովրդական պատգամավոր Ռոյնես Աղաջանյանին և որտեղ է գտնվում նա: Պարենատունը հրաժարվեց որևէ տեղեկություն հաղորդել: Ռոյնեսի ձեռքարկման մասին հաղորդվում է Երևան, Գերագույն խորհուրդ: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Զորի Բալայանը, Վահան Գաբրիելյանը, Վաչագան Գրիգորյանը, Բորիս Դադայանը, Հենրիխ Պողոսյանը, Հայաստանի Հանրապետության ԳԽ պատգամավորներ Արկադի Մանուշարովը, Համլետ Գրիգորյանը և Ռոբերտ Քոչարյանը հոկտեմբերի 10-ին դիմում են հղում ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահ Ա. Լուկյանովին, Ազգությունների խորհրդի նախագահ Ռ. Նիշանովին, ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Վ. Կրյուչկովին, ԽՍՀՄ ՆԳ նախարար Վ. Բազադյանին, Հայաստանի Հանրապետության ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին՝ ձեռքարկված պատգամավոր Ռոյնես Աղաջանյանի հարցով զբաղվելու խնդրանքով: Այդ նույն օրը հոկտյան 22 ԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հեռագրում է ԼՂԻՄ արտակարգ դրության պարետ գեներալ Վ. Սաֆրոնովին. «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունը կտրականապես բողոքում է Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավոր Ռոյնես Գևորգի Աղաջանյանի ձեռքարկության առթիվ: Ձեր կողմից ձեռնարկված հակահրավակյան ձեռնարկումը գործող սահմանադրության, Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրական ակտերի և հանրաճանաչ միջազգային նորմերի կոպիտ խախտում է: Պահանջում ենք անհապաղ ազատել նրան»<sup>80</sup>:

ՀՀ ԳԽ պատգամավոր Ռոյնես Աղաջանյանի ձեռքարկության լուրը ստեփանակերտցիներն ընդունեցին խիստ գայրույթով: Աշխատավորական շատ կոլեկտիվներ հոկտեմբերի 10-ին հայտարարեցին երկժամյա նախազգուշական գործադու: Նրանք պահանջում էին անհապաղ ազատել Ռոյնես Աղաջանյանին: ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանը կոչ է անում նոր սադրանքներից խուսափելու համար գործել զգույշ և մտածված<sup>81</sup>:

ՀՀ ԳԽ ժողովրդական պատգամավոր Համլետ Գրիգորյանն այդ օրերին գտնվում էր Երևանում և մասնակցում էր ԳԽ նստաշրջանի աշխատանքներին: Ռոյնեսի ձեռքարկության մասին նա իմացավ

հոկտեմբերի 10-ի վաղ առավոտյան: Այդ նույն օրը Համլետը պետք է վերադառնար Ստեփանակերտ: Նրան զգուշացնում են չվերադառնալ, բայց չի լսում: Ասում էմ.

– Կողահաստությունդ թող, ինչ ասում են, լսիր:

– Կողահաստությունը դարաբաղցիներին անգերագանցելի հատկանիշն է, լավ գիտես, – ժպտալով արտասխսանում է ու արագարագ կարգավորում ճամպրուկը:

Հետո «Հայաստանի Հանրապետություն» թերթի հոկտեմբերի 23-ի համարում նա կատարմի.

– Հոկտեմբերի 10-ին, նստաշրջանի աշխատանքից հետո վերադառնում էի Ստեփանակերտ: Հենց օդանավակայանում, շարժասանդղքի մոտ ինձ շրջապատեցին, ձեռքարկեցին, խցկեցին ավտոմեքենայի մեջ և տարան Ստեփանակերտի մոտ գտնվող մեկուսարանը: Այստեղ մի օր պահելուց հետո ռազմական ուղղաթիռով Ռոյնեսի հետ տեղափոխեցին Կիրովաբադ, այնտեղից էլ՝ Սարատով: Մեզ ոչ մի լուրջ մեղադրանք չէին ներկայացնում, չէին ասում, թե ուր են տանում: Երբ բացատրություն էինք պահանջում, ասում էին, թե իբր մարզում անկարգություններ եք կազմակերպել:

Համլետի ձեռքարկության մասին որոշ մանրամասնություններ հիշում է որդիս՝ Հովհիկը, որը քեռու հետ մեկնում էր Ստեփանակերտ:

– «Էրեբունի» օդանավակայանում սպասում էինք թռիչքի հրավերի: «Ցակ-40» օդանավի այդ օրվա 14-րդ թռիչքն էր: Մեզ հետ էին նաև Արմավիրի պահածոների գործարանի տնօրեն Ադուլյանը և նրա երկու աշխատակիցներ: Ադուլյանի և Համլետի միջև մտերմիկ կապ էր հաստատվել մի քանի ամիս առաջ: Ադուլյանը ցանկանում էր Ղարաբաղում բացել իր տնօրինած գործարանի մասնաճյուղը: Պայմանավորվել էին այն բացել Հերհերում, որի համար կային ճնարավոր բոլոր պայմանները: Մասնաճյուղում պետք է մթերելն անտառային հատապտուղներ, ամենից առաջ մասուր ու արտադրելի մուրաբաներ և հյութեր: Քեռու հետ Ադուլյանի և նրա երկու աշխատակիցների Արցախ մեկնելու նպատակն էր ընտրել մասնաճյուղի տեղը և իշխանությունների հետ պայմանավորվել շինարարությունը սկսելու համար:

Բարձր տրամադրությամբ նստեցինք օդանավ: Երբ հասել էինք Գորիսի օդային տարածք, օդանավի ուղեկցորդուհին դուրս եկավ

անձնակազմի խցիկից ու հարցրեց.

– Օդանավում կա՞ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր:

– Այո՛, ես եմ, – հանգիստ պատասխանեց քեռին:

Ուղեկցորդուհին գնաց խցիկ: Քիչ անց դուրս եկավ օդանավի հրամանատարը, մոտեցավ քեռուն, որի կողքին նստած էի ես: Նա ցածրաձայն ասաց, թե Ստեփանակերտի օդանավակայանում սահմանվել է ուժեղ հսկողություն, և սպասում են ինչ-որ կարևոր անձնավորության, որը պետք է ժամանի Երևանից: Հրամանատարը քեռուն ասաց՝ կարող է օդանավը հետ շրջել ու վերադառնալ Երևան կամ էլ վայրէջք կատարել Գորիսում: Քեռին շնորհակալություն հայտնեց և խնդրեց վայրէջք կատարել Ստեփանակերտի օդանավակայանում: Չօգնեցին նաև Ադուլյանի և իմ խնդրանքները: Նա պատճառաբանում էր այսպես. եթե որոշել են ինձ ձերբակալել, ապա շատ հեշտությամբ կձերբակալեն նաև Երևանում, ինչպես ձերբակալեցին Արկադի Մանուչարովին: Չգիտե՞ք այս իշխանություններին, որտեղ, ինչպես ասում են, նապաստակը սալլով են բռնում:

Նա ճամպրուկը, ժամացույցը, մատանին հանձնեց ինձ, հանձնարարեց օդանավակայանում չմոտենալ իրեն և չմիջամտել: Ադուլյանի հետ պայմանավորվածությունը մնում էր ուժի մեջ, միայն այն տարբերությամբ, որ ես պիտի նրան ուղեկցեի Հերհեր:

Օդանավը վայրէջք կատարելուց հետո, այն անմիջապես շրջապատեցին թուրք օմոնականները և կարմիր բերետներով զինվորները: Տեսա օդանավին մոտեցող կրտսեր քեռուս՝ Մավրիկին, որը եկել էր մեզ դիմավորելու: Ուղևորների անձնագրերի ստուգումից երևում էր, որ հատուկ հանձնարարություն են կատարում: Հետո իմացանք, որ նախօրոք նրանց բաժանել էին Համլետի լուսանկարը: Օդանավի հրամանատարը քեռուս առաջարկեց չիջնել, մնալ խցիկում, որպեսզի հետ տանեն Երևան, բայց նա մերժեց: Զինվորականներից մեկը, վերցնելով նրա անձնագիրը, մոտեցավ քիչ հեռու կանգնած սպային, ցույց տվեց նրան, ինչ որ բան փսփսացին: Սպան մոտեցավ քեռուն և պահանջեց հետևել իրեն: Չորս զինվորների ուղեկցությամբ նրան նստեցրին «Ուրալ» զինվորական ավտոմեքենայի թափքում ու տարան գտման կետ:

– Սարատովի բանտում, – վերադառնալով Համլետի պատմածի

շարունակությանը, – առաջին երկու օրերին մեզ հետ շատ կոպիտ էին վարվում: Բանտի հսկիչը մեզ ուղեկցելով 100-րդ խուցը, քթի տակ ծպտալով ասաց, թե պատգամավորների պատիվ են անում ու տանում այն խուցը, որտեղ նստել է ակադեմիկոս Վավիլովը: Հետո մեզ տեղափոխեցին համեմատաբար տանելի խուց, և փոխվեց վերաբերմունքը մեր նկատմամբ: Հենց առաջին օրը դիմեցինք Սարատովի մարզային դատախազությանը, նամակ ուղարկեցինք ՌԽՖՍՀ ԳԽ նախագահ Բորիս Ելցինին: Մենք պահանջում էինք վերջ տալ մեր նկատմամբ կիրառվող հալածանքներին և ազատել կալանքից:

Լրատվական միջոցները աշխարհով մեկ հաղորդեցին Հայաստանի ԳԽ պատգամավորներ Համլետ Գրիգորյանի և Ռոլես Աղաջանյանի անօրեն ձերբակալության մասին: «Իզվեստիա» թերթի հոկտեմբերի 17-ի համարում տպագրվեց հաղորդում այն մասին, որ Ստեփանակերտում առանց դատախազության հաստատման և մեղադրանք ներկայացնելու, ձերբակալվել են Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներ Համլետ Գրիգորյանը և Ռոլես Աղաջանյանը: Այնուհետև ասված է, որը այդ առթիվ Հայաստանի Գերագույն խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ, հանրապետության ԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը բողոքի հեռագիր է ուղարկել ԼՂԻՄ արտակարգ դրության շրջանի պարետ գեներալ Սաֆոնովին:

Դա հին գեներալը փորձեց թաքցնել իր կատարած հանցագործությունը: Դեպքից մի քանի օր անց նրա ստորագրությամբ հրապարակված հաղորդագրության մեջ կարդում ենք. «Սադրիչ լուրերի սխտեմատիկ տարածման, բնակչությանը զանգվածային անկարգությունների հրահրելու, ԼՂԻՄ կազմկոմիտեի, արտակարգ դրության շրջանի զինվորական պարետատան ներքին զորքերի անձնակազմի հասցեին արված սպառնալիքների համար իրավապահ մարմինների կողմից ձերբակալվել են քաղաքացիներ Ռ. Գ. Աղաջանյանը և Հ. Վ. Գրիգորյանը: Նրանք 30 օրվա կալանքով վարչական պատասխանատվության են ենթարկվել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի միման վրա, իսկ հակաիրավական գործողությունների մի շարք սադրիչների պաշտոնական նախազուգումներ են արվել»<sup>82</sup>:

Արցախահայությունը ոտքի ելավ իր նվիրյալ զավակներին

պաշտպանելու և սատար կանգնելու համար: Ստեփանակերտում հոկտեմբերի 12-ին քաղաքացիական անհնազանդության զանգվածային նախազգուշական ակտ ձեռնարկվեց: Մեկ օրով կանգնեցին քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները, շինհրապարակները, տրանսպորտը: Պարապմունքները դադարեցվեցին դպրոցներում և մյուս ուսումնական հաստատություններում: Չէին աշխատում նաև մանկական նախադպրոցական հիմնարկները, բնակչության կենցաղային սպասարկման կետերը, մշակութային հիմնարկները: Մարզի աշխատավորական կոլեկտիվների և կազմակերպությունների անունից հոկտեմբերի 11-ին հետագիր ուղարկվեց պարետ. գեներալ-մայոր Վ. Ի. Սաֆրոնովին, իսկ պատճենները՝ ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին, ԽՍՀՄ ՆԳ նախարար Վ. Վ. Բազադինին, ՀՀ ԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին, որտեղ սսված է. «Ս/թ. հոկտեմբերի 9-ին, առանց կալանման հրամանի, բռնի ուժի գործադրմամբ (որի անհրաժեշտությունը չկար) Ստեփանակերտում, իր բնակարանում ձերբակալվել է Հայաստանի ժողպատգամավոր Ռոյխ Աղաջանյանը: Ս/թ. հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտի օդանավակայանում, դարձյալ օրենքով նախատեսված կարգի խախտումով, կալանվել է Հայաստանի մի այլ պատգամավոր՝ Համլետ Գրիգորյանը: Նշված գործողությունները ժողպատգամավորի կարգավիճակի, մարդու իրավունքների և ազատության կոպիտ խախտումներ են, ունեն սադրիչ բնույթ և նպատակ են հետապնդում ապակայունացնել դրությունը մարզում: Մենք պահանջում ենք անհապաղ կալանքից ազատել ժողովրդական պատգամավորներ Բ. Աղաջանյանին և Հ. Գրիգորյանին: Մեր այս հիմնավոր և օրինական պահանջը չկատարելու դեպքում քաղաքի բոլոր աշխատանքային կոլեկտիվները ս/թ. հոկտեմբերի 12-ին կանցկացնեն քաղաքական անհնազանդության զանգվածային գործողություն:

Դեպքերի հետագա զարգացման համար պատասխանատվությունն ընկնում է այն մարդկանց վրա, ովքեր նախաձեռնել և իրականացրել են այդ սադրիչ գործողությունները»<sup>83</sup>:

Անշուշտ, չկատարվեց արցախահայության պահանջը: Ուստի հաջորդ օրը, ի նշան բողոքի և քաղաքացիական անհնազանդու-

թյան, աշխատավորները հրաժարվեցին դուրս գալ աշխատանքի: Հենց այդ օրերին Ստեփանակերտում էին գտնվում Ղարաբաղից ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական պատգամավորները, ինչպես և միութենական դիտորդ-վերահսկիչ հանձնաժողովի նախագահ Վ. Ֆոտենը և Ուկրաինայից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Վիլեն Մարտիրոսյանը: Նրանք բոլորն էլ խիստ զայրացած էին Ղարաբաղում տեղի ունեցող անօրեն գործողությունների համար:

Արցախահայության համար ստեղծված այդ ծանր ժամանակաշրջանում վճռական էր գործում նաև ՀՀ Գերագույն խորհուրդը: Այն նախ հանդես եկավ մի հայտարարությամբ, որում մերկացվում էին ՀՀ ժողովրդական պատգամավորների նկատմամբ իրագործված անօրենությունները<sup>84</sup>, ապա հոկտեմբերի 16-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների ապօրինի կալանավորման մասին» որոշումը, որը ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովից պահանջում էր միջոցներ ձեռնարկել անօրինական կալանքի վերցված ՀՀ ժողովրդական պատգամավորներ Ռոյխ Աղաջանյանին և Համլետ Գրիգորյանին անհապաղ ազատելու և կալանավորման մեջ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու<sup>85</sup>:

Հոկտեմբերյան այդ մտայն օրերին Հայաստանի Գերագույն խորհրդի հանձնարարությամբ մի հանձնաժողով է մեկնում Սարատով, հանդիպում կալանավորների, բանտապետի և Սարատովի իրավապահպան մարմինների հետ: Իսկ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Վիլեն Մարտիրոսյանը վերադառնալով Մոսկվա, հոկտեմբերի 19-ին ԽՍՀՄ նախագահին պատգամավորական հարցապնդում է հանձնում զինվորական իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղում ՀՀ երկու ժողովրդական պատգամավորների՝ Ռոյխ Աղաջանյանի և Համլետ Գրիգորյանի ապօրինի կալանման մասին: Մ. Գորբաչովը, ծանոթանալով փաստաթղթերին, կարգադրում է անհապաղ ազատ արձակել կալանավորված պատգամավորներին:

– Ձերբակալության տասներորդ օրը, – շարունակում է Համլետը, – մեզ տարան բանտապետի առանձնասենյակը: Այստեղ էր նաև Սարատովի մարզի դատախազության ներկայացուցիչը: Նա ասաց,

թե մեզ ձերբակալել են առանց որևէ փաստարկված մեղադրանքի. պարեն Սաֆոնովի կատարած քայլը անօրինական է, մենք ազատ ենք:

Այդ առթիվ ահա թե ինչ պատմեց Ռուդիկ Ազարյանը վերոհիշյալ մեր հանդիպման ժամանակ.

– Հոկտեմբերի 17-ին Հայաստանի Գերագույն խորհրդից զանգում են և ասում, թե Գերագույն խորհուրդը հատուկ պատվիրակություն է ուղարկում Սարատով ծանոթանալու կալանավորված պատգամավորների պայմաններին: Այդ հանձնաժողովի մեջ ընդգրկված էին Հայաստանի Գերագույն խորհրդի Պաշտպանական և իրավական հանձնաժողովի նախագահ Կիմ Բալայանը, Հայաստանի կալանավարների վարչության պետ Ռուդոլֆ Մարտիրոսյանը և ես: Մեկնում ենք Սարատով: Մեզ հետ էին նաև Համլետի փոքր եղբայր Մավրիկը և Ռոլեսի մտերիմ ընկեր Կարոն: Օդանավակայանում մեզ դիմավորում են Սարատովի հայկական համայնքի ներկայացուցիչները՝ համայնքի նախագահ, ծննդով Մարտակերտի շրջանից Վոլոդյա Սարգսյանի գլխավորությամբ, ինչպես և բանտի ղեկավարությունը: Նրանք 15-20 ակտոմեքենայով մեզ ուղեկցում են բանտ: Բանտապետին ցույց ենք տալիս Հայաստանի Գերագույն խորհրդի որոշումը՝ կալանավորված պատգամավորների պայմաններին ծանոթանալու վերաբերյալ: Մեր գնալու մասին Սարատովի բանտում իմացել էին մեկ օր առաջ: Համլետին ու Ռոլեսին սափրել էին, ուղարկել բաղնիք, փոխել հագուստները, բանտախուցը: Բանտապետի հետ գրույցի ժամանակ Սարատովի քաղաքային դատախազությունից զանգում են և նրան հայտնում, թե Մոսկվայից գաղտնի ծրար է ստացվել, եկեք տարեք: Մի քանի րոպեից հետո այդ ծրարը բանտապետի ձեռքին էր: Ծրարում կար Գորբաչովին ուղարկված Հայաստանի Գերագույն խորհրդի որոշումն ու Վիլեն Մարտիրոսյանի հարցապնդումը: Հայաստանի Գերագույն խորհրդի որոշման վրա Գորբաչովը մակագրել էր՝ «Բանտարկված պատգամավորներին անհնապաղ ազատել»:

Մինչ դատախազությունից կրեթվեր Մոսկվայից ստացված ծրարը, բանտապետը կարգադրում է իր մոտ բերել կալանավորված

պատգամավորներին: Առաջինը ներս են բերում Ռոլեսին, հետո Համլետին: Բանտապետը նրանց հարցնում է, թե բանտում ինչպես են վերաբերվել նրանց հետ: Բնական է, նրանք չեն բողոքում: Հետո երկուսին էլ ստորագրել են տալիս, թե իբր բանտից ոչ մի բողոք չունեն: Բանտապետը հայտնում է, թե ազատ ենք: Մենք գրկախառնվում ենք...

Այդ նույն երեկոյան Սարատովի հայկական համայնքը կազմակերպում է մեծ ճաշկերույթ, որտեղ ներկա էին նաև բանտապետն ու մի քանի աշխատողներ: Հաջորդ օրը Սարատովի հայկական համայնքի ներկայացուցիչները ինչպես մեզ դիմավորել, այնպես էլ ճանապարհում են Երևան:

«Իզվեստիան» հոկտեմբերի 24-ին ստիպված էր հաղորդել, թե առանց դատախազի հրամանի ձերբակալված Հայաստանի խորհրդարանի պատգամավորներ Ռոլես Աղաջանյանն ու Համլետ Գրիգորյանը ազատվել են կալանքից և շարունակում են իրենց աշխատանքը Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում: Իսկ մինչ այդ, հոկտեմբերի 22-ի միստում, Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարել էր.

– Այսօր Ռոլես Աղաջանյանն ու Համլետ Գրիգորյանը մեզ հետ են: Թույլ տվեք ողջունել նրանց և հույս հայտնել, որ մեր պատգամավորների նկատմամբ այդպիսի անօրինություն էլ չեն փորձի ձեռնարկել:

Ի կատարումն Հայաստանի Գերագույն խորհրդի վերոհիշյալ որոշման, այդ օրերին Ղարաբաղում էին գտնվում խորհրդարանի իրավական հարցերի հանձնաժողովի անդամներ Կիմ Բալայանն ու Համլետ Հովսեփյանը, որոնց նպատակն էր հետազոտել Համլետ Գրիգորյանի և Ռոլես Աղաջանյանի ձերբակալության հանգամանքները: Նրանք հանդիպեցին Ստեփանակերտի կայազորի դատախազ Ի. Լազուտկինի և արտակարգ դրության շրջանի պարեն Սաֆոնովի հետ, փորձեցին պարզել պատգամավորներին ձերբակալելու պատվիրատուին: Սաֆոնովն իր անօրեն գործողության համար արդարացում չգտնելով, բացատրում է, որ եթե միտյենական դիտորդ-վերահսկիչ հանձնաժողովի նախագահ Վ. Ֆոտենը նստեր Ստեփանա-

կերտում, ապա ինքը ամեն մի հարցում կոչվեք նրան, այլ ոչ թե կկատարեք Պոլյանիչկոյի ղեկավարած կոմիտեի հանձնարարությունները: Իսկ այն հարցին, թե ինչու մինչև հիմա չի վերացվել Գորիս-Լաչին ճանապարհի շրջափակումը, գեներալը պատասխանում է, թե «վերնից» հրաման չկա: Մինչդեռ շրջափակումը վերացնելու վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշումներ էր ընդունել 1989 թ. հոկտեմբերի 9-ին և 1990 թ. մարտի 5-ին<sup>86</sup>:

## ՂԱՌԸ ՄՈՒԾԼՈՒԹՅՈՒՆ

1991-ը արցախահայության համար սկսվեց նույն դառը մոայլությամբ: Ստեփանակերտի օդանավակայանում, որը Հայաստանի հետ կապի միակ ուղին էր, շարունակում էին տնօրինել ազերի օմոնականները: Արցախի հասցեով ուղարկված բոլոր բեռները դարձյալ անհետանում էին Ադրբեյջանում, լրատվության հանրապետական բոլոր միջոցները բացահայտ պատերազմ էին հայտարարել Ղարաբաղին և «շանթ ու կրակ» էին թափում աչ ու ձախ: Միայն թե ստեն, կեղծեն, խաբեն: Արցախահայության դեմ թուրքերի կողմից սարքվող սադրանքները մանրամասն ծրագրավորվում էին Բաքվում: Ադրբեյջանի իշխանությունները նպատակ չունեին հրաժարվել Ղարաբաղի նկատմամբ ունեցած կեղտոտ քաղաքականությունից: Ինչպես միշտ, այս անգամ ևս ժողովրդի բողոքները մնում էին անհետևանք:

\* \* \*

Համլետը կալանքից ազատվելուց հետո մի որոշ ժամանակ նվիրվում է խորհրդարանական աշխատանքներին: Նա, լինելով կրթության, գիտության, լեզվի և մշակույթի մշտական հանձնաժողովի անդամ, այդ օրերին կատարում էր հանձնաժողովի մի շարք հանձնարարություններ: Ուսումնասիրում էր Արցախում կրթական համակարգի հետագա զարգացման հարցը: Նա իր հետազոտությունները հրատարակեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1991-ի հունվարի 23-ի համարում՝ «Արցախին՝ ազգային բուր» վերտառությամբ: Մանկավարժ-գիտնականը երկրամասի կրթության զարգացման խնդիր-

ների լուծումը կապում էր արցախահայության ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի հետ: Նա տեսնում էր, որ ժողովրդական կրթության, ինչպես նաև բուհական ուսուցման համակարգը ապրում էր խոր նգնաժամ, որը պայմանավորված էր նախ և առաջ երկրի սոցիալ-քաղաքական և տնտեսական անկայունությամբ: Նա դիպուկ նկատել էր, որ երկրում նկատելիորեն իջել էր մանկավարժի հեղինակությունը: Կանխագգում էր, որ սպասվող շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում ժողովրդական կրթությունը և մշակույթը կնահանջեն, այդ բնագավառներում աշխատողների նյութական ապահովությունը էլ ավելի կցածրանա: Նա գտնում էր, որ նման պայմաններում անհրաժեշտ է լրջորեն խորհել և կոնկրետ ուղիներ որոնել՝ ձեռնամուխ լինելու «Արցախին շուրահատուկ ձևով ու բովանդակությամբ ազգային դպրոցի ու բուհի ստեղծման հույժ կարևոր գործին»: Համլետի պարզաբանմամբ՝ կենտրոնը և մեր հարևանները փորձում էին «խոր ու դաժան շրջափակման ճիւղաններում շնչահեղձ անել և ծնկի բերել ինքնորոշման և ազգային ազատագրության ուղին բռնած արցախահայությանը»: Դրսի աշխարհից ամբողջովին կտրված Արցախն ինքը պետք է հոգա իր կրթական և բուհական համակարգը կատարելագործելու և լիովին համապատասխանեցնելու երկրամասի պայմաններին: Ասել է, թե բուհը պետք է ունենա մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը խթանող ուղղվածություն: Այդ նշանակում է՝ մանկավարժական կադրեր պատրաստելուն զուգընթաց, մարզի բուհական համակարգը պետք է մասնագետներ պատրաստի նաև ժողովրդական տնտեսության համար: Մարզը նման մասնագետների խիստ կարիք ուներ: Հեղինակն այդ ամենի հիման վրա եզրակացություն էր անում, որ Արցախում գործող բուհը պետք է լինի բազմապրոֆիլ և ունենա ճկուն կառուցվածք: Նա նպատակահարմար էր գտնում մարզում մասնագետների պատրաստումը կազմակերպել պայմանագրային հիմունքներով՝ հայտեր ներկայացնելու միջոցով:

Ամենակարևորը, որ առաջարկում էր հեղինակը, նպատակահարմար է մարզում ունենալ համալսարանային բնույթի բուհ, որը պետք է պատրաստի և՛ մանկավարժներ, և՛ ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող մասնագետներ: Մարզը խիստ կարիք ուներ մշակույթի տարբեր ճյուղերի՝ բարձրագույն կր-



թությամբ մասնագետների: Մարզը կարիք էր զգում տնտեսագետների և ագրոարդյունաբերական ճյուղի աշխատողների: Այս բոլորից հետո հեղինակը հանգում է այն մտքին, որ մարզում բազմապրոֆիլ բուհի ստեղծումը կունենա ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ու սոցիալական բացառիկ նշանակություն: Այդ հիմքի վրա էլ անում է մի շարք կոնկրետ առաջարկություններ:

\* \* \*

... 1991 թվականի փետրվարը պակաս տաղտուկ չէր նախորդ ամիսներից: Արցախում ստեղծված անասելի դժվարին վիճակը արցախցիներին հարկադրեց մի անգամ ևս պատվիրակություն ուղարկել Մոսկվա:

– Տնօրենների խորհրդի որոշմամբ, – գիրքը տպարան հանձնելուց մի քանի օր առաջ իմ բազմաթիվ հորդորանքներից հետո ի վերջո ստացա Համլետի այն շարադրանքը, – փետրվարի 12-ին Մոսկվա մեկնեց մի պատվիրակություն հետևյալ կազմով. Գեորգի Պետրոսյան, Համլետ Գրիգորյան, Մաքսիմ Միրզոյան և Կարեն Բաբուրյան: Մոսկվայում մեր պատվիրակությանը միացան ԽՍՀՄ ԳԽ պատգամավորներ Զորի Բալայանը, Բորիս Դադամյանը, Վահան Գաբրիելյանը և Հենրիխ Պողոսյանը: Ինչ-ինչ պատճառներով Արցախից ԽՍՀՄ ԳԽ պատգամավորների միջև կար անհամաձայնություն: Փորձում էինք մեր միջամտությամբ վերացնել այդ տհաճ երևույթը:

Ինչևհետև: Առաջին հանդիպումը տեղի ունեցավ ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Վիտալի Պավլովի հետ: Հիմնականում խոսեցինք Արցախում գարնանացանը կազմակերպելու հարցի շուրջը: Նրան տեղյակ պահեցինք, որ Արցախում ոչ մի գրամ վառելիք չկա: Այդ հանդիպման ժամանակ ներկա էր նաև Հայաստանի ԳԽ պատգամավոր Լոբոսը: Նա Արցախում ստեղծված ծանր վիճակի մասին հանգամանորեն պատմեց Պավլովին և իր հերթին խնդրեց հնարավոր բոլոր միջոցներով օգնել արցախցիներին: Լոբոսը հանելի տպավորություն թողեց արցախցի պատվիրակներին վրա: Մեզ վրա բավականին լավ տպավորություն թողեց նաև Պավլովը: Հենց նրա կարգադրությամբ Ղարաբաղ ուղարկվեց 12 հազար տոն-

նա վառելիքի և հաշոդրությամբ կատարվեց 1991 թվականի գարնանացանը:

Մեր հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ Ազգությունների խորհրդի նախագահ Ռաֆիկ Նիշանովի հետ: Նա շատ սահմանափակ և անլուրջ պետական գործի տպավորություն թողեց մեզ վրա: Հանդիպումը տեղի ունեցավ առավոտյան ժամը 9-ին: Նա եկավ աշխատասենյակ, շալվարի կոճակների մի մասը բաց, որտեղից ցցված էր սպիտակ վերնաշապիկի մի ծայրը: Տղաների դիտողությունից հետո միայն իրեն կարգի բերեց: Ինչ խոսում էինք, չէր ուզում լսել, մի բերան «եղբայրություն» և «բարեկամություն» էր քարոզում: Նիշանովի հետ ոչինչ էլ չստացվեց:

Հետո հանդիպեցինք Լուկյանովի հետ: Նրանից պահանջեցինք Ղարաբաղն ազատել շրջափակումից: Օեշտը դրեցինք Լաչինի նախապահի վրա, որպեսզի կապ ունենանք Հայաստանի հետ: Հետո խոսեցինք դարաբաղցիների իրավունքների ոտնահարման, նրանց նվաստացնելու և այլ հարցերի մասին: Այդ սառը և ձանձրալի խորհրդային պաշտոնյան մեզ սպառնում էր, մեղադրում և նույնիսկ ասում.

– Պատկերացնո՞ւմ եք, կարող է մի օր էլ Ղարաբաղի 160 հազար բնակչությունը չլինի:

Այդ անպատկառ արտահայտության որպես պատասխան Զորի Բալայանը, հետո ես և Մաքսիմ Միրզոյանը, գրեթե նույնը ասացինք. Ղարաբաղը չլինելու դեպքում նույնը սպասվում է նաև Ռուսաստանին: Զրույցի ժամանակ երկու անգամ զանգեց Գորբաչովը, երևի հետաքրքրվում էր մեր խոսակցության ընթացքի մասին և խորհուրդներ տալիս, գուցե և ցուցումներ:

Լուկյանովի կարիներից դուրս եկանք ծանր մտքերով: Բայց բարոյական հաղթանակով: Ազգերի ինքնորոշման մասին այդ իրավաբանին լավ դաս տվեցինք, որպեսզի մոսկովյան նորահայտ խլորդը երբեք չկարծի, թե մենք լոկ գավառական գործիչներ ենք:

Մեր մյուս հանդիպումը տեղի ունեցավ Բորիս Պուգոյի հետ: Հիմա եմ մտածում. ավելի լավ կլիներ, եթե չտեսնեինք այդ դաժան, ապակե հայացք, հոշոտողի տեսք ունեցող նախարարին: Յուրաքան-

չյուր խոսքի համար սատուում էր մեզ: Կողքին նստած գեներալ Գրոմովը լուռ էր և անձայն: Մենք Պուգոյին պատմում էինք թուրք օմոնականների կողմից Ղարաբաղում կատարվող սանձարձակությունների և անմարդկային արարքների մասին, սակայն նա մնում էր նույն անզգամ: Միայն սպառնում էր մեզ: Տեսա, որ ոչինչ չի ստացվում, չհամբերեցի և գալրացած ասացի.

— Ընկեր նախարար, Ստեփանակերտի օդանավակայանում սարսափելի գործողություններ են կատարվում, հայերը ենթարկվում են թալանի և նվաստացումների: Թուրքերը ինքնաձիգեր են բարձրացնում նույնիսկ ռուս զինվորների վրա, ովքեր փորձում են պաշտպանել հայերին:

Գրոմովը վեր թռավ տեղից և ասաց.

— Ես նրանց ցույց կտամ: Ո՞վ է նրանց իրավունք տվել ձեռք բարձրացնել ռուս զինվորի վրա:

Ես գոհ էի, որ գոնե կարողացա շարժել ռուս գեներալին: Հետո ասացի.

— Ընկեր գեներալ, ես համոզված եմ, որ Ստեփանակերտ վերադառնալուց հենց օդանավակայանում մեր պատվիրակության անդամներին կձերբակալեն:

Գրոմովը նայեց Ջորի Բալայանին.

— Ջորի Հայկի, գնալուց առաջ ինձ տեղյակ կպահեք, որպեսզի կարգադրեմ պատվիրակությանը չձերբակալեն:

Նրա ասածից մենք շատ բան ենթադրեցինք: Մոսկվայից վերադարձանք փետրվարի 25-ին: Իրոք, Ստեփանակերտի օդանավակայանում ոչ ոք չմտնեցավ մեզ:

\*\*\*

1991 թ. գարնանը վիճակը խիստ բարդացավ Բերդաձորի, Գետաշեն-Շահումյանի և Հաղբուրթի հարավ արևմտյան տարածքներում: Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը դարձել էին ամենօրյա ավազակային հարձակումների վայրեր: Ադրբեջանական սպառազեն կազմավորումները համառորեն ձգտում էին հասնել հայ բնակչության բռնի տեղահանության ծրագրի իրականացմանը: Հայկական բնակավայրերը ուժեղացան ընդհանուր առմամբ էին ենթարկվում գեներալ թուր տե-

սակներից, օգտագործվում էին նույնիսկ հրանոթներ: Բերդաձորցիները հերոսաբար դիմակայում էին միջև ատամները զինված ազերի զրոհայիններին: Զինվորականները կազմակերպում էին «չարդեր տներում և բակերում, վերահերկում դաշտերն ու կիրճերը», կատարում անօրեն ձերբակալություններ<sup>87</sup>:

Գեռես մեկ տարի առաջ հայաթափվել էին Գետաշենի ենթաշրջանի Կամո և Ազատ գյուղերը: Այդ գյուղերի հայերի տները ադրբեջանցիներին վաճառվել էին զինվորականների ճնշման տակ<sup>88</sup>: Ուղիղ մեկ տարի անց նույնը կրկնվում էր ենթաշրջանի մյուս գյուղերի նկատմամբ, սակայն այս անգամ ավելի դաժան ձևով: Գյանջալում (Կիրովաբադը վերանվանվել էր Գյանջա) գտնվող ռուսական բանակի ուժերը ապրիլի 18-22-ին հրազենի տարբեր տեսակներից գնդակոծեցին Գետաշենը, Մարտունաշենը և Շահումյանի շրջանի մի շարք գյուղեր: «Գոլոս Արմենիի» թերթի ապրիլի 24-ի համարում հրատարակվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի բողոք-նամակը՝ ուղղված ԽՍՀՄ նախագահ Մ. Ս. Գորբաչովին և այլ հասցեներով: Հայաստանի խորհրդարանի նախագահը բողոքի իր ձայնն էր բարձրացնում Գետաշեն-Շահումյանում, Բերդաձորի ենթաշրջանում և հայկական այլ բնակավայրերում խորհրդային ուժերի և ադրբեջանական օմոնի կողմից այստեղի հայերի համար ստեղծված անտանելի ծանր պայմանների առթիվ: Լևոն Տեր-Պետրոսյանը պահանջում էր պատասխանատվության ենթարկել հանցագործներին:

Արցախահայերին այդ օրերին բոլորից շատ անհանգստացնում էր Գետաշենը, որի պաշտպանությանը Հայաստանի իշխանությունները նայում էին մատների արանքով: Նրանք զգում էին, որ ֆիդայական պայքարի ձևով չեն կարող փրկել ո՛չ Գետաշենը և ո՛չ էլ մյուս հայկական շրջանները: Անհրաժեշտ էր պետական միջամտություն: Բայց ինչպե՞ս: Հայաստանը շատ էր ուշացնում, բանակ չուներ, Ղարաբաղն էլ բացահայտ ոչինչ չէր կարող անել, նրա պաշտպանական ուժերը նոր էին ձևավորվում ընդհատակում...

Թուրք օմոնականները մարտի 25-ից սկսած անընդհատ ուժեղացնում էին Գետաշենը: Պարզվում է, որ Գետաշենի ենթաշրջանից դուրս էին բերել ԽՍՀՄ ներքին գործերի ստորաբաժանումները, պատճառաբանելով, թե իբր Գետաշենի ենթաշրջանը չի հարում

ԼՂԻՄ-ին: Ադրբեջանի օմոնը Գետաշեն է մտել, հենց որ այնտեղից հեռացել են խորհրդային զինված ուժերը: Հենց այդ օրերին Անդրկովկասի օդային պաշտպանության հրամանատար Ա. Պ. Արխանովի հրամանով արգելվում են ուղղաթիռների թռիչքները Գետաշեն, Ծափումյան և ԼՂԻՄ: Անգամ չէր թույլատրվում բժիշկներ ուղարկել Գետաշեն: Այդ վանդալիզմը կատարվում էր ԽՍՀՄ պաշտպանության նախարար Յագովի հրամանով:

Անհրաժեշտ էր հրավիրել Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջան: Դրա կարևորությունը զգում էին բոլոր պատգամավորները: Արցախիցի պատգամավորները շտապ մեկնեցին Երևան: Ապրիլի 25-ին հրավիրվում է ՀՀ ԳԽ արտահերթ լիագումար փակ նիստ: Բննարկվեցին Արցախում, Ծափումյանի շրջանում, Գետաշենի ենթաշրջանում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության բարձրաստիճան որոշ ներկայացուցիչների կողմից հակաժողովրդական գործողություններ հրահրելու փաստերն ուսումնասիրելու և համապատասխան ընթացք տալու նպատակով Գերագույն խորհրդի պատգամավորական հանձնաժողով կազմելու, ինչպես նաև Հայաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների սրման և միութենական մի շարք գերատեսչությունների կողմից դրան ուղղակի նպաստելու խնդրի քննարկման նպատակով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի արտահերթ նիստ հրավիրելու մասին հարցերը: ՀՀ ԳԽ արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշումներ՝ «Արցախում, Ծափումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության որոշ պաշտոնատար անձանց կողմից հակաիրավական գործողությունների հրահրման փաստերն ուսումնասիրելու մասին» (հանձնաժողովի նախագահ՝ Սուրեն Զոլյան), «ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի արտահերթ նիստ գումարելու վերաբերյալ հարց հարուցելու մասին»<sup>89</sup>:

– Նիստից անմիջապես հետո, – հիշում է Համլետը, – արցախցի պատգամավորներս վերադարձանք Ղարաբաղ և ձեռնամուխ եղանք գետաշենցիներին օգնելու գործին: Այնտեղ է մեկնում արցախահայների ջոկատը: Ուղարկում ենք նաև սննդամթերք և պաշտպանության միջոցներ: Որոշում ենք Գետաշենի կանանց ու երեխաներին տեղափոխել Ստեփանակերտ: Այդ նպատակով Տնօրենների խորհուրդը

առանձնացնում է մի քանի տասնյակ ավտոմեքենաներ, որոնք պետք է ուղևորվեին Գետաշեն: Գետաշենցիներին օգնության են հասնում նաև շահումյանցիները, չնայած նրանք ևս գտնվում էին ծանր վիճակում:

1991 թ. ապրիլի 25-26-ին Արցախում և Ծափումյանի շրջանում տեղի ունեցան իսկական պատերազմական գործողություններ: Փոխհրաձգություններ տեղի ունեցան Ստեփանակերտի և Կրկժանի, Ծուշիի և Քարին տակի միջև: Այլադ Մուրալիբովը, ապրիլի 27-ին հանդես գալով Ադրբեջանի հեռուստատեսությամբ, հայտարարում է, թե ԼՂԻՄ-ում և Ադրբեջանի մյուս շրջաններում ապրող հայերը կամ պետք է ընդունեն Ադրբեջանի օրենքները, կամ էլ հեռանան հանրապետության տարածքից:

Ապրիլի 29-ի գիշերը սկսվեց Գետաշենի և Մարտունաշենի աննախադեպ հրթիռակոծումը: Ապրիլի 30-ից սկսած՝ խորհրդային բանակի, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գործերի ուժերը Ադրբեջանի ՆԳՆ օմոնի հետ համատեղ սկսում են լայնածավալ «Կոլցո» («Օղակ») գործողության իրագործումը, իբր անօրինական զինված միավորումները զինաթափելու համար: Մինչդեռ դրա իսկական նպատակն էր իրագործել հայերի բռնազաղթը: Այդ գործողությունը փաստորեն հայ ազգաբնակչության ցեղասպանություն էր, որն իրագործվեց ԽՍՀՄ և Ադրբեջանի ղեկավարության կողմից:

100-120 զրահամեքենա շրջապատել և անընդհատ գնդակոծում էին գյուղն ու շրջապատը: Գետաշենը վառվում էր: Թուրք-ուս դահիճները բարձրախոսով պահանջում էին գետաշենցիներին զենքը հանձնել և հեռանալ գյուղից: Դրությունը ահապոր ծանր էր. զոհվեցին անվեհեր մարտիկներ Թաթուլ Կրպեյանը, Արթուր Կարապետյանը, Մուշեղ Մխոյանը, Վալերի Նազարյանը, Սիմոն Աչիկզոզյանը, Զարգանդ Դանիելյանը և ուրիշներ: Գյուղի հիվանդանոցի բժիշկները գերի են տարվում Գյանջայի բանտը, որտեղ 17 օր շարունակ նրանց ենթարկում են կտտանքների:

Ինքնապաշտպանական շտաբի որոշմամբ ամբողջ զենքը դուրս է բերվում Գետաշենից: Մայիսի 7-ին 3 հազար կին, երեխա, ծեր ուսուցիչական ինքնաթիռներով տեղափոխվում են Ստեփանակերտ, որտեղից մի քանի օր հետո՝ Հայաստան: 700 տղամարդկանց ավտոբուսներով տանում են Իջևան:

Այդ ծանր օրերի մասին Համիլտը հիշում է .

– Քաղաքի բոլոր բնակիչներին մոբիլիզացրել էինք ընդունելու բռնագաղթված գետաշենցիներին: Ստեփանակերտցիները ցուցաբերեցին չտեսնված նվիրվածություն: Իրենց տներում տեղավորում էին նույնիսկ երեք-չորս ընտանիքներ: Մեր տանը տեղավորեցինք 20 հոգու և պահեցինք 2 օր: Երրորդ օրը մեկնեցին Երևան: Այդ օրերին Ադրբեջանը Մուրթալիբովի գլխավորությամբ ոռնոց էր բարձրացրել, թե ինչու բռնագաղթվածներին տեղավորել ենք Ղարաբաղում...

1991-ի մայիսը Հայոց աշխարհի, մանավանդ Արցախի համար ծանր ու մղձավանջային ամիս էր: Դատարկվեցին Գետաշենն ու Մարտունաշենը: Մայիսի 15-ին Լեռնային Ղարաբաղում մտցվեց արտակարգ դրություն: Մարզխորհուրդը այդ մասին տեղյակ պահեց ՄԱԿ-ին և մի շարք պետությունների:

1991 թ. մայիսի 16-ի գիշերը Ստեփանակերտում իրագործվեց մի նոր դաժանություն: 1999 թ. հոկտեմբերի 27-ին Հայաստանի խորհրդարանում ողբերգաբար զոհված Լեռնարդ Պետրոսյանի և ուրիշների վկայությամբ Պոլյանիչկոյի կոմիտեմ ծրագրել էր ձեռքալայել Ստեփանակերտ քաղաքի 200 ակտիվիստների: Տղաներին հաջողվել էր ձեռք բերել այդ ցուցակը և զգուշացնել բոլորին: Համիլտի անունը այդ ցուցակում չկար: Դրա համար վստահ էր, որ իր հետ ոչինչ չի պատահի: Հնարավոր է, որ Համիլտի անունը ցուցակի մեջ չմտցնելը գործադրված խորամանկություն էր: Անգամ հնարավոր է, որ այդ ցուցակը մեկին էր տրվել Պոլյանիչկոյի իմացությամբ: Այս թնջուկը երևի ժամանակին կպարզվի և լույս կսփռվի մի շարք մութ հարցերի վրա: Հիմա լսենք Համիլտի կնոջը՝ Բելային:

– Դեռ երեկոյան, երբ արդեն գիտեինք այդ գիշեր հնարավոր ձեռքալայությունների մասին, Համիլտին խնդրեցինք տանը չմնա, բայց նա հրաժարվեց, մեզ չլսեց, ասաց՝ ինձ ոչինչ էլ չի պատահի, իմ անունը ցուցակում չկա:

Սիրտս դողում էր, չէի կարողանում քնել: Ականջս անընդհատ ձայնի էր: Դուրը ծեծեցին: Անմիջապես նայեցի ժամացույցին: Ժամը 4-ից տասը թույլ էր պակաս: Համիլտը գիշերային հագուստով մտնեմու է դռանը և հարցնում՝ ո՞վ է: Պատասխանում են, թե պարետատնից է, անձնագրային ստուգում է:

– Արդեն ինձ համար պարզ էր, – Բելային շարունակում է Համիլ-

տը, – դուրը բացում են: Ներս են խուժում ռազմական հագուստով, ավտոմատներով զինված, դիմակավորված երեք հոգի: Ասում են՝ աղմուկ չհանեք, անձնագրային ստուգում է, կգաք մեզ հետ: Հասկացա, որ դիմադրելը իմաստ չունի: Դրսում աչքերս կապում են և անանց համարանիշի «Նիվա» ավտոմեքենայով տանում: Ջզում էի, որ մեքենան պանում է Խոջալուի ուղղությամբ: Հետո իմացա, որ ինձ տարել է «Ալֆա» խումբը: Խոջալուում ինձ նետում են մի գետնախուց:

Հիմա լսենք այդ նույն գիշերը նույնպես Պոլյանիչկոյի «Ալֆա» խմբի կողմից ձեռքալայված Ռաֆիկ Գարրիելյանին: Ռաֆիկի անունն էլ չի եղել վերոհիշյալ ցուցակում:

– Իմ կյանքում ամենադաժան պահը 1991-ի մայիսյան այդ գիշերն էր: Դուրը ծեծեցին ու ներս մտան թուրք և ռուս զինվորներ, թե վեր կաց, անձնագրային ստուգում է, տասը թույլով տանում ենք պարետատուն: Դրսում աչքերս կապում են ու հրում ավտոմեքենայի մեջ: Տանում էին դեպի Խոջալու: Այդտեղ ինձ զցում են մի գետնախուց: Քիչ հետո քերում են նաև Համիլտին: Մեզ տանում են երկրորդ հարկ: Քննում էր մի թուրք զննալետ: Հարցնում է՝ սիրո՞ւմ եք Գորբաչո-վին, ինչպե՞ս եք ռուսների հետ: Ներս են մտնում 6-7 օմոնակաև ու սկսում ծեծել մեզ: Երկուսիս բերանները արյունով լցվել էին: Մեզ ջարդուփշուր են անում, ոտքերի տակ կոխկրտում: Ներս է մտնում մի գազանացած թուրք, դանակը դնում ականջիս, թե կտրում են: Ծանորդին ոտքով այնպես հարվածեց, որ քիչ էր մնում շունչս կտրվեր... Հետո մեզ զցում են մի վագոնետկա, մեր գրպանները լցնում հողով ու թե՛ հող եք ուզում, վերցրեք, ինչքան ուզում եք կերեք:

Դեռ լույսը չբացված մեզ տանում են Խրամորթի վառված ջրաղացը: Ծատ էինք ծարավ: Ելք չկա, ստիպված լիզում ենք խոտերի վրա նստած ցողը... «ԳԱԶ-69» ավտոմեքենայով Ադդամ տանելու ժամանակ վարորդն անընդհատ շրջվում և հարվածում էր մեզ: Հսկիչ զինվորները ոչ մի ձայն չէին հանում: Ադդամի օդանավակայանից ուղղաթիռով տանում են Բաքու, Բիանայի օդանավակայան, այնտեղից էլ՝ Բաջիլովի բանտ: Այնտեղ մեզ չընդունեցին: Հետո մեզ տանում են Մարդաբյանի Օուվիլյանի բանտը, որտեղ մեզ տանցում են 34 օր: Ամեն օր ծեծում էին մի քանի անգամ, ջարդում մեր ձեռքերի և ոտքերի մատները: Համիլտը 49-րդ խցիկում էր, իսկ ես՝ 46-ում: Երեք օր հետո երկուսիս տանում են 50-րդ խոցը: Այն էլ ասեմ, որ բանտում

կար մի թուրք, որի հերթապահության ժամանակ մեզ քիչ էին ծեծում: Այդպես էլ չկարողացա իմանալ նրա անունը: Այո՛, թուրք էր, բայց խիղճ ունեք:

Համլետ Գրիգորյանի և Ռաֆիկ Գաբրիելյանի՝ Բաքվի Օուլեյան բանտում կրած տառապանքների մասին գրել է Նվարդ Սողոմոնյանը իր «1991 թ. «Կոլցո» գրքում:

Ստեփանակերտի օկրուգի դատախազ կապիտան Ա. Պ. Վլասյուկը 1991 թվականի հուլիսի 8-ի Ռ. 758 գրությամբ, պատասխանելով Համլետի կնոջ՝ Բելա Գրիգորյանի կողմից ԽՍՀՄ պաշտպանության նախարար Գ. Տ. Յազովի հասցեով մայիսի 16-ին ուղարկված դիմումին, նշել է, որ Համլետ Վաղարշակի Գրիգորյանը չի ձերբակալվել ԽՍՀՄ ՆԳՆ զինծառայողների կողմից:

ՀՀ ԳԽ պատգամավոր Համլետ Գրիգորյանի այդ նոր ձերբակալությունը խիստ անհամզատացրեց խորհրդարանին: Մայիսի 17-ին Համլետին անհայտ ուղղությամբ տանելու հաջորդ օրը ՀՀ ԳԽ-ը ընդունում է որոշում նրա պատգամավորական անձեռնմխելիությունը ապահովելու պահանջով ԽՍՀՄ գլխավոր դատախազին դիմելու մասին: «Դիմել, – ասված է այդ որոշման մեջ, – ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ն. Տրուբինին Ստեփանակերտ քաղաքում առանց դատախազի հրամանի և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի համաձայնության անօրինական ձերբակալված՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր Համլետ Վաղարշակի Գրիգորյանի պատգամավորական անձեռնմխելիությունն ապահովելու պահանջով»<sup>90</sup>:

\* \* \*

Մայիսի 16-ի գիշերը, առավոտյան մոտ, զանգում են մեր տուն: Զանգողը անծանոթ մի կին էր: Նա բացատրում է.

– Գիտեք ինչ, Ստեփանակերտից զանգել է ձեր դուստրը՝ Նաիրան և պատահաբար միացել մեր տուն: Խնդրել է զանգել ձեզ և հայտնել, որ Համլետին ձերբակալել ու տարել են անհայտ ուղղությամբ:

Բոլորիս, համար այդ դաժան լուրը ծանր հարված էր: Անմիջապես զանգում ենք Ստեփանակերտ: Պատասխանում են, որ ոչ ոք չգիտե, թե ուր են տարել Համլետին: Պարետատնից պատասխանել

էին, որ իբր իրենք ոչ մի տեղեկություն չունեն:

Զանգում են Զորի Բալայանին: Պարզվում է, որ նա արդեն գիտեր այդ ձերբակալությունների մասին: Նրան խնդրում են տեղյակ պահել Ազգային ժողովին: Զուլիետայի հետ Նորքի զանգվածից իջնում ենք քաղաք: Զուլիետան ուղիղ գնում է Ազգային խորհրդի նախագահի տեղակալ Գագիկ Հարությունյանի ընդունարանը: Նա ընդունում է Զուլիետային, լսում նրան, հետո օգնականին հանձնարարում՝ նշտել, թե ուր են տարել Համլետին:

Հաջորդ օրերն անցնում են վազվզոցի մեջ: Զուլիետան զանգում է Ազգային խորհրդի պատգամավոր Սամվել Թահմուրադյանին, որը Համլետի մոտիկ ընկերներից էր: Նա, իմանալով, որ զանգողը Համլետի քույրն է, ասում է.

– Ոչ մի ներողություն խնդրել, ցանկացած պահի կարող ես զանգել: Համլետի քույրը նաև իմ քույրն է...

Ապա խորհուրդ տվեց զանգել Մոսկվա, Հայաստանի ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանին: Հետո թելադրեց հեռախոսագրի մի տեքստ ու ասաց՝ ուղարկիր Ռաիսա Գորբաչովային: Խոստացավ հետաքրքրվել, թե ուր են տարել Համլետին:

Այնուամենայնիվ, ո՞ր էին տարել ձերբակալվածներին: Ո՛չ Ստեփանակերտում և ո՛չ էլ Երևանում չգիտեին: Բաքուն էլ համառորեն լուում էր: Բոլոր դեպքերում ենթադրվում էր, որ նրանց տարել են Բաքու: Հանդիպեցինք նաև Աշոտ Մանուչարյանի և այն ժամանակ Հայաստանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Արամ Սարգսյանի հետ: Աշոտ Մանուչարյանը էլույթ ունեցավ Գերագույն խորհրդում, պահանջեց լրջորեն զբաղվել Ազգային խորհրդի պատգամավոր Համլետ Գրիգորյանի ճակատագրով և պարզել նրա որտեղ լինելը: Համլետի ձերբակալության հաջորդ օրը Ալբերտ Բաղդասարյանը Մերգելյանի ինստիտուտի աշխատողների հետ ցուցապատառներով իջնում են Ազատության հրապարակ միտինգի և կենտրոնական իշխանություններից պահանջում ազատել Հայաստանի խորհրդարանի պատգամավոր Համլետ Գրիգորյանին և դաբաբաղցի մյուս բանտարկյալների:

Սահմոկեցուցիչ լուրեր էին հասնում մեզ: Հեռախոսները չէին աշխատում, Ստեփանակերտի հետ կապը անջատված էր: Մի ուրիշ երեկոյան Համլետի փոքր եղբայր Մավրիկը ինչ-որ ձևով զանգում է



քրոջը հայտնում, թե Ստեփանակերտում լուր է տարածվել, որ Համլետի երիկամներից մեկը հանել են: Դե, պատկերացրեք բոլորիս, մանավանդ Ջուլիետայի վիճակը: Նորքի հիմնգերորդ զանգվածից վազում ենք կենտրոնական փոստ: Ծանապարհին նկատում եմ, որ Ջուլիետան կիսաբոթիկ է: Մի կերպ զանգում ենք Ստեփանակերտ և ճշտում, թե իբր այդ մասին լսել են կալանքից ազատված մի կնոջից: Մինչ այդ կապի մեջ էի իմ համագյուղացի, մանկության ընկեր, Հայաստանի ՊԱԿ-ի փոխգնդապետ Պարզև Զիվանյանի՝ այդ ազնվագույն մարդու հետ: Նա կապ ուներ Բաքվի ՊԱԿ-ի իր ծանոթ տղաների հետ և փորձում էր նրանց միջոցով պարզել Համլետի տեղը: Ստեփանակերտում տարածված լուրերի մասին հեռախոսով հայտնում եմ Պարզևին:

Պարետային ժամ էր, պետք է ոտքով վերադառնայինք տուն: Օրջանայինում մի ավտովարորդ խոստանում է Զեյթուն թաղամասով մեզ հասցնել մինչև Ավանի կամուրջ: Ա՛յ քեզ գործ: Զեյթունում կանգնեցնում են մեքենան ու՝ թե պարետային ժամը խախտել եք, պետք է տուգանք մուծեք, և մեքենան տարվի պարետատուն: Ջուլիետան մոտենում է զինվորականին, արտասուքն աչքերում արագ-արագ պատմում եղելությունը և խնդրում ավտովարորդին չտուժել:

– Դե լավ, գնացեք, էլ չխախտեք պարետային ժամը,– ժպտում է զինվորականը:

Մի առիթով Կիմ Բալայանը խորհուրդ տվեց հանդիպել ՊԱԿ-ի նախագահ Հուսիկ Հարությունյանի հետ: Այդ միտքը բավականին անուր էր նստել Ջուլիետայի ուղեղում:

Հունիսի 15-ին Հուսիկ Հարությունյանի ընդունարանում էինք: Ասացին, թե ՊԱԿ-ի նախագահը գտնվում է Գերագույն խորհրդում: Այդ ՊԱԿ կոչեցյալի մասին իմ՝ պատմաբանիս պատկերացումն այլ է: Ջուլիետան չէր ընդունում իմ թերահավատությունը: Նա մոտենում է ընդունարանի հեթապահին և ասում, որ իրեն ուղարկել են Գերագույն խորհրդից և Հուսիկ Հարությունյանը պիտի իրեն ընդունի: Խնդրում է՝ հենց որ գա, տեղյակ պահել, որ նրան սպասում են:

Այդ ընթացքում հանդիպում եմ ընկերոջս՝ Պարզևին: Նա ասում է, որ ինքը մի քանի թույլ առաջ է դուրս եկել նախագահի մոտից, այստեղ է, Գերագույն խորհրդից շուտ է եկել: Ստիպեցեք, որ նա ընդունի: Ջուլիետան կրկին մոտենում է հեթապահին և խնդրում

հաղորդել նախագահին, որ իրեն սպասում է պատգամավոր Համլետ Գրիգորյանի քույրը: Մի տասը թույլ անց իջնում է սպայական հագուստով մեկը և հարցնում, թե ով է Ջուլիետա Խաչատրյանը: Ապա առաջարկում է հետևել իրեն: Ջուլիետայի պատմելով, ՊԱԿ-ի նախագահի առանձնասենյակը լայն էր ու երկար: Հուսիկը վեր է կենում տեղից, մոտենում, դռան մոտ դիմավորում, հրավիրում նստել աթոռին ու խնդրում պատմել: Ջուլիետան արտասուքն աչքերում խոսում է.

– Պարոն Հարությունյան, ես պատգամավոր Համլետ Գրիգորյանի քույրն եմ: Բազմաթիվ պաշտոնյաների մոտ եմ եղել, շատերին դիմել: Միակ և վերջին հույսս դուք եք: Որևէ տեղեկություն ունե՞ք, թե որտեղ է գտնվում եղբայրս: Ախր, մի ամիս է՝ ոչ մի ստույգ տվյալ չունենք:

– Ջուլիետա, ես չեմ ստի: Ինքս էլ կոնկրետ տեղեկություն չունեմ, թե որտեղ է գտնվում Համլետը: Աշոտ Մանուշարյանը Ազգային ժողովում հայտարարել է, թե պատգամավոր Համլետ Գրիգորյանը գտնվում է Բաքվի ՊԱԿ-ի մեկուսարանում...

– Աշոտն ինքն էլ ճիշտը չգիտի, նա ենթադրել է իմ ասածներից,– չհամբերելով, Հուսիկին ընդհատում է Ջուլիետան:

– Երկու օրից կհանդիպեմ Ադրբեջանի ՊԱԿ-ի ներկայացուցիչների հետ: Կաշխատեմ նրանցից ստույգ իմանալ և տեղյակ պահել ձեզ:

Ապա վերցնում է մեր տան և Ջուլիետայի աշխատանքային հեռախոսահամարները ու կրկին վստահեցնում, որ անուշադրության չի մատնի:

Փողոցում Ջուլիետային հարցրի, թե պարոն Հարությունյանն ի՞նչ պատասխանեց, նա թե՛ խոստացել է երկու օրից զանգել մեր տուն:

Ես տարակուսանքով ժպտացի, որը նշանակում էր՝ հազիվ թե ՊԱԿ-ի նախագահը նման քաչյ կատարի: Բայց ո՛վ զարմանք, ուղիղ երկու օր անց զանգում են մեր տուն:

– Հուսիկ Հարությունյանն է: Համլետը գտնվում է Բաքվի Օուլիյան բանտում, ողջ և առողջ է, երկու օրից կլինի տանը...

Դե պատկերացրեք մեր ուրախության չափը:

Ուղիղ երկու օր հետո ժամը տասնմեկին Բելյան զանգում է Ստե-

փանակերտից ու հայտնում, որ Համլետը վերադարձել է: Փա՛ռք Աստծո, քրոջ դեմքին հազիվ ժպիտ երևաց:

Հունիսի 21-ին Հայաստանի մամուլը հաղորդեց, որ Բաքվի բանտից ազատվել և Արցախ են վերադարձել ՀՀ ԳԽ պատգամավոր Համլետ Գրիգորյանը և կահույքի ֆարրիկայի արտադրամասի պետ Ռաֆիկ Գաբրիելյանը, որոնք այժմ գտնվում են մարզային հիվանդանոցում: Այնուհետև ասված է, որ, ինչպես տեղեկացրին վիրաբուժական բաժանմունքից, բանտում ավելի քան մեկ ամիս նրանք ենթարկվել են անմարդկային բռնությունների և դաժան խոշտանգումների, ուստի նրանց առողջությունը վերականգնելու համար տեսական բուժում է պահանջվում<sup>91</sup>:

\* \* \*

Համլետն ու Ռաֆիկը մարզային հիվանդանոցում փոքր-ինչ ապաքինվեցին: Սակայն ձեռքակալության վտանգը կրկին կախված էր նրանց գլխին: Այնտեղ՝ Ղարաբաղում ոչ մի օրենք չէր գործում: Եվ պատահական չէր, որ Խարկովում տպագրվող «Օրիններում» Անդրեյ Կապուստինը գրում է, որ օրենքը ոչ մեկին չի հետաքրքրում: Եվ որպես դրա հաստատման օրինակ բերում է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Համլետ Գրիգորյանի ձեռքակալումը, որի հետևանքով չգիտես ինչու, նա հայտնվեց Բաքվի ՊԱԿ-ի քննչական մեկուսարանում: Այնուամենայնիվ, դահիճների աչքից որոշ ժամանակ հեռու լինելու համար Ռաֆիկը տեղափոխվեց Խաչմաչ գյուղը, իսկ Համլետը՝ հայրենի Հերհեր: Մայրը, որին ոչինչ չէին ասել, զարմացավ, որ Համլետը որոշ ժամանակ պիտի մնար գյուղում:

1991-ի հունիս-հուլիս ամիսները չափազանց ծանրաբեռնված էին մի շարք իրադարձություններով. ընկավ Բերդաձորը, պաշարման մեջ էին Հաղարթի շրջանի խճաբերդ և Հին թաղեր գյուղերը, հուլիսի 5-ին հանձնվեցին Մարտակերտն ու Հաթերքը: Հուլիսի 6-ին Ծահույանի շրջանի հայկական գյուղերից դուրս բերվեցին ներքին զորքերի ուժերը, թուրքերը փորձում էին ներխուժել Մանաշիդ, Էրքեջ և Բուզլուխ, որն իրագործեցին հուլիսի 14-ին: Ընդհատվեց Երևանից օդային կապը Ծահույանի և Արցախի հետ: Դահիճ Պոլյանիչկոն Մոսկվայից պահանջում էր նոր պատժիչ զործողություններ իրագործել Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում: Արցախից նոր պատ-

վիրակություն մեկնեց Մոսկվա, որը ոչ մի հաջողության չհասավ:

Օգոստոսի 10-ին Ստեփանակերտում, ցերեկով ավտոմատի կրակոցներից սպանվեց մարզկոմի կազմբաժնի վարիչ Վալերի Գրիգորյանը: Մինչև հիմա մարդասպանները մնացել են անհայտ: Անշուշտ, դա եղել է քաղաքական շարժառիթներով: Կրակել են փողոցով անցնող մեքենայից և անհետացել: Անժխտելի է, որ այդ սպանությունը իրագործվել է Պոլյանիչկոյի և նրա կազմկոմիտեի կողմից: Այդ օրերին Ստեփանակերտում խոսվում էր այն մասին, որ Պոլյանիչկոն իր մոտ է կանչել Վալերի Գրիգորյանին և նրանից պահանջել Ղարաբաղում կազմակերպել սեպտեմբերի 8-ին Ադրբեջանի նախագահի ընտրություններին մասնակցելու աշխատանքները: Իբր, ստանալով մերժում, սպանել են նրան:

1991 թ. օգոստոսի 19-ին Մոսկվայում տեղի ունեցած «Հեղաշրջումը» («Պուտչ») ողջունեց Վիկտոր Պոլյանիչկոն: Նա Բաքվի ռադիոկայանին տված հարցազրույցում հայտարարեց. «Ես պատրաստ եմ Խորհրդային Միության ԳԿԶՊ-ին հանձնել Ղարաբաղյան հարցը»<sup>92</sup>:

1991 թ. օգոստոսի 29-ին Բաքվում հրապիրված Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը ընդունեց հոչակագիր՝ Ադրբեջանական պետության անկախության վերականգնման մասին: Ըստ էության դա նշանակում էր, որ Ադրբեջանը դուրս է գալիս ԽՍՀՄ կազմից: Հոչակագրում ասված է, որ նորանկախ Ադրբեջանի հանրապետությունը ընդգրկված է լինելու 1918-20 թթ. մուսավաթական Ադրբեջանի հանրապետության սահմաններում: Փաստորեն Բաքուն հրաժարվեց լինել Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը: Նույն թվականի հոկտեմբերին Բաքուն, ընդունելով նոր սահմանադրություն, վերականգնեց Մուսավաթական Ադրբեջանական Հանրապետությունը, մի պետություն, որը ոչ մի պետության իրավահաջորդ չէր, մինչ այդ չունեք այլ պետությունների կողմից ճանաչված սահմաններ և իր կազմում չունեք ո՛չ Նախիջևանը և ո՛չ էլ Լեռնային Ղարաբաղը<sup>93</sup>:

Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանի կողմից ընդունված հոչակագիրը արցախահայությանը կանգնեցրեց նոր ու ճակատագրական խնդրի առաջ: Ադրբեջանն իրեն դուրս բերելով ԽՍՀՄ կազմից, հույս ուներ իր հետ տանել նաև ԼՂԻՄ-ը: 1990 թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ ԳԽ-ի կողմից ընդունված որոշմամբ Միությունից դուրս ե-

կող հանրապետության սահմանների մեջ գտնված ազգային-վարչական միավորները բավարար իրավունք ունեին տնօրինելու իրենց ճակատագիրը՝ ԽՍՀՄ-ից դուրս գալով բաժանվող հանրապետության հետ միասին և մնալով ԽՍՀՄ կազմում կամ տնօրինելով սեփական բախտը, նույնիսկ իրավունք ունեին դառնալ ինքնակառավարող սուվերեն պետություն: Այդ որոշումը արցախահայությանն իրավունք էր տալիս միանգամայն օրինական ճանապարհով բաժանվել նորանկախացած Ադրբեջանից և դառնալ սեփական ճակատագրի տերը, կիրառել անկախության իր իրավունքը<sup>94</sup>:

Արդեն միանգամայն հստակ էր, որ փլուզվում էր նախկին գաղութային Ադրբեջանը: Փլուզվում էր նաև Խորհրդային Միությունը, հետևապես պետք էր շտապել և ստեղծված պատմական պահը բաց չթողնել ձեռքից:

– Հակառակ դեպքում, – բացատրում է Համլետը, – աններելի սխալ կլինեք: Ինքը՝ պատմությունը մեզ հուշում և պահանջում էր գործել արագ, ավելի կազմակերպված, ավելի համարձակ: Պոլյանիչկոյի ռմակից շատերն արդեն փախել էին Արցախից... Ինքնապաշտպանական ջոկատները դուրս էին եկել ընդհատակից: Արդեն պետք է գործեինք ճակատ առ ճակատ: Ուրիշ ելք չէինք տեսնում:

Այո՛, ճակատ առ ճակատ կռվել յոթ միլիոնանոց Ադրբեջանի դեմ: Հեշտ է ասել կռվել, պայքարել գոյատևության և ինքնահաստատման համար: Այլապես ի՞նչ պիտի արվեր...

1991 թվականի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Ծախումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը՝ բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ: Նստաշրջանը բազմակողմանի քննության առնելով ստեղծված իրավիճակը, ընդունեց որոշում և Հոչակագիր՝ ԼՂԻՄ և դրան կից Ծախումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) հռչակելու մասին<sup>95</sup>:

Նստաշրջանը քննարկեց նաև մարզային խորհրդի խնդիրներն ու անելիքները՝ կապված հեղաշրջման հետևանքով երկրում ստեղծված իրավիճակի հետ: Այդ նույն օրը տեղի ունեցավ նաև ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նիստ: Այն մարզխորհրդի գործկոմի նախագահ ընտրեց Լեռնարդ Պետրոսյանին, որը մինչ այդ մարզխորհր-

դի նախագահի պաշտոնակատարն էր:

Այսպիսով, արցախահայության հերոսական պայքարը բարձրացավ նոր աստիճան և ստացավ նոր որակ, իսկ դա չէր կարող չկատարեցնել Բաքվին: Ադրբեջանական ելուզակները մասսայական հարձակումներն ուժեղացրին Ծախումյանում և Լեռնային Ղարաբաղի շրջաններում: Սակայն նրանք ամենուր ստանում էին արժանի հակահարված: Ադրբեջանական ԳԽ նախագահությունը սեպտեմբերի 3-ին որոշում ընդունեց, որում Արցախում տեղի ունեցած այդ իրադարձությունը բնորոշվեց դավադրություն «Ադրբեջանի ամբողջականության ու անկախության դեմ»: Ադրբեջանի իշխանություններն ամեն կերպ փորձում էին խափանել ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանի ընդունած հռչակագրի իրականացումը և պատասխանատվության ենթարկել դրա հեղինակներին:

Ամբողջ հուլիս-օգոստոսին Համլետը գտնվում էր գյուղում: Ստեփանակերտի հետ կապը պահպանում էր եղբայրների և մյուս հարազատների միջոցով: Բանտային տանջանքների հետքերը դանդաղ էին վերանում:

Ջուլիետայի հետ մեկնեցինք Արցախ՝ Համլետին տանելով Ջորի Բալայանի, Սուրեն Ջուլյանի, Արշակ Սադոյանի, Վազգեն Մանուկյանի, Սամվել Ծախումբադյանի, Կիմ Բալայանի և էլի ուրիշ ժողովրդական պատգամավորների քաջալերող ողջույններն ու բարի ցանկությունները:

Դեռ Երևանում որոշել էինք Համլետի հետ չխոսել բանտային օրերի և նրա կրած տառապանքների մասին: Այդպիսի ջերմությամբ իրար չէինք հանդիպել: Ըստ երևույթին մայրն արդեն գիտեր Համլետի բանտարկության մասին և նույնպես լուր էր, ոչ մի խոսք չէր ասում: Ժամերով առանձնացած, Համլետի հետ խոսում էինք, նրան հաղորդում էի որոշ նորություններ, կենցաղային առանձին հարցեր քննարկում:

Եղբոր՝ թուրքի դժոխքից կենդանի վերադառնալու կապակցությամբ Ջուլիետան խոստացել էր ոչխար մատաղ անել: Հարցը մեր աթեիստ լինելու կամ չլինելու մեջ չէր, այլ բան, որ այդ օրը ոչխարի խորոված պիտի ուտեինք: Տեսնում էի, որ բոլորի ախորժակը տեղն էր: Միջնակ եղբայրը՝ Վալերիկը, զբաղված էր խորովածով: Մինչ ասմեն ինչ պատրաստ կլինեք, Համլետի հետ քայլեցինք եկեղեցու կող-

մը, որը տևից երկու հարյուր մետր հեռավորության վրա է գտնվում: Համաձայն շինարարական արձանագրության, Հերհերի եկեղեցին կառուցվել է 1667-1676 թվականներին, Պետրոս կաթողիկոսի հրամանով, Բարսեղ արքեպիսկոպոսի ղեկավարությամբ: Ըստ եկեղեցու պատերին պահպանված արձանագրությունների՝ Հերհերը եղել է Ամարասի միաբանների ամառանոցը և Վարանդայի ու Քոչիզի վիճակների միացյալ կենտրոնը: Խորհրդային իշխանության տարիներին այն սկզբում հանդիսանում էր կոլտնտեսության պահեստ, հետո օգտագործվում էր որպես ակումբ: Դեռ 50-ական թվականների վերջին, երբ Հերհերի միջնակարգ դպրոցում աշխատում էի որպես ուսուցիչ, բազմաթիվ միջոցառումներ էինք կազմակերպում եկեղեցում:

Մեկ տարի առաջ, 1990-ի հոկտեմբերին «Հայրենիքի ձայն» թերթում տպագրված «Արցախյան հանդիպումներ» ակնարկում գրել եմ.

«Մեկնեցի Հերհեր: Գիտեի, որ փետրվարից սկսած վերականգնվում է այնտեղի Ս. Գրիգորիսի եկեղեցին: Այդ օրը Հերհեր էին եկել նաև Հայաստանի հեռուստատեսության նկարահանող խումբը, Արցախի հուշարձանների վերականգնման բաժանմունքի աշխատողները և Գանձասարի երգչախմբից մի քանի հոգի: Մենք այստեղ եղանք այն պահին, երբ ավագ ճարտարապետ Էդուարդ Ֆրանգուլյանը խորհուրդներ էր տալիս վերականգնողներին: Այդ ընթացքում ճարտարապետ Անուշը խնամքով չափումներ էր անում, ինչ որ գրառումներ կատարում: Իսկ ահա եկեղեցու ներսում Գանձասարի երգչախմբի ղեկավար Արկադի Բարսեղյանը, նույն երգչախմբի երգչուհի Լյուդմիլա Գրիգորյանը և խմբավար Նինան եկեղեցական ոգեշունչ մի երգ էին կատարում: Քիչ հետո երգողներին միացավ ավագ ճարտարապետ Էդուարդը»:

Եկեղեցու վերանորոգման և վերականգնման հարցը շատ էր մտահոգում Համլետին: Նաև նրա ակտիվ միջամտությամբ է, որ սկսվել էին վերանորոգման աշխատանքները: Սակայն շուտով աշխատանքները դադարեցվեցին: Հիմա կանգնած մայրն էինք քանդվող հենասյուներին և այստեղ-այնտեղ թափված շինանյութերին: Ոչինչ չէինք խոսում, լուռ մայրն էինք, դանդաղ պտտվում եկեղեցու շուրջը: Ներսում, թերևս, այդքան թափթփվածություն չկար: Առաջ անցնելով ասեմ, որ 1995 թվականի հոկտեմբերի 28-ին այս եկեղեցին մարդկանցով լեցուն էր: Այդ օրը Համլետի ազատամարտիկ որդու՝ Պա-

րույրի հարսանիքն էր: Նախօրոք կարգի էր բերվել եկեղեցին: Համլետի խնդրանքով Արցախի թեմի առաջնորդ Պարզև սրբազանը Հերհեր էր ուղարկել Վրթանես հոգևորականին, որը և կատարեց Պարույրի ու Զարինեի պսակադրությունը: Եկեղեցու հարևանությամբ ապրող այեհեր Անդրանիկ Ստեփանյանը հետո իր բաժակաճառում ասաց, որ իրենց գյուղի եկեղեցում վերջին անգամ պսակադրություն է կատարվել 80 տարի առաջ:

... Համլետի կրտսեր որդի Գեղամը վազելով եկավ ու ասաց՝ սեղանը պատրաստ է, մեզ են սպասում: Գնացիք: Հանելի խորովածը ճաշակելուց հետո Համլետի հետ մեր զրույցը շարունակեցինք գերեզմանոցի ճանապարհին: Պարզապես պիտի այցելելինք Համլետի հոր՝ Վաղարշակի շիրիմին: Ծանապարհին Համլետին պատմեցի Հայաստանում գործող քաղաքական ուժերի, «Արցախ» հայրենակցական միության, արտասահմանյան մամուլի հաղորդումների, ինչպես և մոսկովյան լուրերի մասին: Ինչ գիտեի: Ախր ավելի քան երկու ամիս նա կտրված էր դրսի աշխարհից, պարզապես կարոտ էր նորությունների:

«Արցախ» հայրենակցական միությունից բավականին հանձնարարություններ ունեի: Կատարելուց հետո, երկու շաբաթ անց պիտի վերադառնայի Երևան: Համլետից ստացած հանձնարարությունը կազմում էր երկու էջ՝ ում գանգել, ինչ ասել, ինչ խնդրել, ում մամակ տանել, անձամբ ում տեսնել: Պայմանավորվեցինք, որ առայժմ նա մնա ընդհատակում, մինչև Ստեփանակերտ վերադառնալու համար պայմաններ կստեղծվեն: Այդ մտքին էին նաև Թարծման ղեկավարությունը, ՀՀ ԳԽ մի շարք պատգամավորներ:

Առանձնապես շատ էր տանջվում մայրը: Երբ երկուսով էինք մնում, իսկ դա հնարավոր էր միայն բանջարանոցում աշխատելու ժամանակ, խնդրում էր Համլետին հանդգել հետ կանգնել պայքարից ու լուռ մնալ: Ես նրան բացատրում եմ.

– Տիկի՛ն Բնարիկ, դա հնարավոր չէ: Համլետն այդ քայլին չի գնա: Դա կնշանակի դավաճանել իր ժողովրդին, Ղարաբաղին, իր համոզմունքներին:

– Ախր հորս սպանեցին Ծուշիի բանտում, նույնիսկ դիակն էլ չտվեցին, – արտասվում էր նա:

– Համլետն ընտրել է իր անդարձ ուղին, այնպես որ, տիկի՛ն Բնա-

րիկ, մնում է հաշտվել ճակատագրի հետ, ուրիշ ելք չեմ տեսնում:

Տիկին Քնարիկի հետ այդ հարցի շուրջ մեր վերջին գրույցն էր: Հետո, 1992-ի հունվարի 10-ին, երբ Համլետի և Օռչ գյուղի ինքնապաշտպանական ջոկատի մի քանի տղաների հետ մտանք Հերհեր, ընդամենը երկու ժամով, վերջին անգամ տեսա Քնարիկին: Ասես հաշտվել էր ճակատագրի հետ: Պարզապես ոչինչ չխոսեց: Միայն ճանապարհելուց առաջ բոլորիս համբուրեց ու պայքարում հաղթանակ մաղթեց:

Մոսկվայում բարձրացված խոսվությունը ճնշվելուց հետո իրադրությունը փոխվեց ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Ղարաբաղում: Դահիճ Պոլյանիչկոյի օրերը հաշվված էին:

Զնայած ընդհանուր վիճակը մնում էր խառնիխուռն, այնուամենայնիվ, 1992-ի օգոստոսի վերջին Համլետը վերադարձավ Ստեփանակերտ և կրկին ակտիվորեն մերթաշվեց քաղաքական աշխատանքի մեջ: Նա մասնակցեց սեպտեմբերի 2-ին տեղի ունեցած նստաշրջանին և ողջունեց ԼՂՀ կազմավորումը: Այս իր նպաստը բերեց հանրապետության կայացմանը:

Մի անգամ ինչ-որ առիթով խոսք բացվեց Ղարաբաղի և Բաքվի բանակցությունների մասին: Նա այդ առիթով վրդովված էր:

– Թե՛ ես և թե՛ Օարծման մի շարք ղեկավարներ չէինք հավատում, որ Ադրբեջանի իշխանությունների հետ հնարավոր է բանակցությունների միջոցով դուրս գալ ճգնաժամից: Այդ կարծիքին էին նաև Հայաստանի Հանրապետության Արցախի հանձնաժողովի գրեթե բոլոր անդամները: Բոլորն ի վերջո համոզվեցին, որ ամենահիշուրդ պայքարի ճանապարհն է:

Համլետը կողմնակից էր ինքնապաշտպանական ջոկատների ամրապնդմանը: Ամռանը, երբ գտնվում էր ընդհատակում, երկու անգամ բարձրացել էր Մավաս, ուսումնասիրել տեղանքը, խորհրդակցել Հերհերի, Ծովատեղի և Խերխանի կոլտնտեսությունների ու գյուղական խորհուրդների նախագահների հետ և պայմանավորվել վտանգի դեպքում գյուղերի բնակիչներին տեղափոխել Մավաս: Տեղանքի աշխարհագրական կառուցվածքը շատ հարմար է ամուր ինքնապաշտպանություն կազմակերպելու համար: Իսկ Ստեփանակերտ վերադառնալուց հետո, փոքր անց, մեկնում է Երևան՝ մասնակցելու Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքներին:

## ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՌՈՒՄԲԵՐԻ ՊԱՅԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱԿ

1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որի արդյունքների հիման վրա Հայաստանի Գերագույն խորհուրդը սեպտեմբերի 23-ին հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Ի դեպ ասեմք, որ անկախության հռչակագիրը կազմող հանձնաժողովի անդամներից մեկը Համլետն էր: Հոկտեմբերի 16-ին տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները: Հանրապետության առաջին նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

Արցախահայերը ուշադրությամբ հետևում էին Հայաստանում տեղի ունեցող այդ իրադարձություններին և ուրախանում ամեն մի հաջողության համար, չնայած Ղարաբաղյան հիմնախնդրի հետ կապված լուծումները հետզհետե բարդանում էին: Ղարաբաղի ռազմական նոր պարետ Նիկոլայ ժենկինը փորձում էր որոշ կնճոտ հարցեր լուծել հարթ: Տող գյուղից հեռացած ազերիները փորձում էին վերադառնալ այնտեղ: Հարցը դրվում է կտրուկ, դա հնարավոր է, եթե Օսոունյանի, Օուշիի և Հադրութի շրջանի 24 գյուղերից բռնագաղթված բոլոր բնակիչները վերադառնան իրենց հարազատ գյուղերը: Այդ հարցում Ն. ժենկինը վճռական էր: Նա շատ արժանավոր մարդ էր, որի համար էլ ղարաբաղցիները հարգում էին նրան ու անվանում «մեր ոռու գեներալը»:

1991 թ. նոյեմբերի 20-ին Մարտունու շրջանի Բերդաշեն (Ղզղալա) գյուղի տարածքում աղետի ենթարկվեց «ՄԻ-8» ռազմական ուղիաթիռը, որի մեջ գտնվող բոլոր 23 հոգին, որոնց թվում նաև գեներալ-մայոր Ն. ժենկինը, զոհվեցին: Ամբողջ Ղարաբաղը սգում էր Նիկոլայ ժենկինի՝ այդ արդար ու բարեկիրթ զորականի մահը:

– Ես հանդիպեցի ժենկինի հետ, – հիշում է Համլետը: – Իրոք նա նման չէր Ղարաբաղ եկած ոչ մի գեներալի: Ղարաբաղցիներս նրա հետ բավականին հույսեր էինք կապում: Նա անարդարացի էր համարում Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմում գտնվելը: Ես նրան հիշեցրի 1813 թվականի Գյուլիստանի պայմանագիրը և ասացի, որ արցախցիներս համաձայն ենք նույնիսկ առանձին մտնել Բուսաստանի կազմի մեջ, միայն թե երբեք թուրքի անուն չլսենք: Իսկ երբ հիշեցրի Լյուդ Զորջի՝ «Թուրքը խոց է, որտեղ իր վրանն է խփում, այնտեղ կա-



նաչ խոսքը չորանում է» արտահայտությունը, երկար ծիծաղեց և ասաց. «Արդարությունը չի մեռնի, ի վերջո այն կհաղթանակի: Թող ձեր ունք դրանում համոզված լինեմ»:

1991-ի հոկտեմբերի 28-ին տեղի է ունենում Տնօրենների խորհրդի նիստ Արկադի Մանուչարովի նախագահությամբ, որը սկսել էր ղեկավարել կալանքից ազատվելուց հետո: Արկադի Մանուչարովը հիշում է.

– Այդ նիստին մասնակցում էին նաև հանրապետության ղեկավարները և շրջանների ներկայացուցիչները: Բոլորիս համար պարզ էր, որ Ադրբեջանը ստեղծում էր բանակ Ղարաբաղ ներխուժելու համար: Նրանք առաջին անգամ սեպտեմբերի 25-ին Օուշիից «Ալազան» հրթիռներով գնդակոծել էին Քարին տակը: Դա ցույց տվեց, որ թուրքերը լրջորեն էին նախապատրաստվում պատերազմին: Իրավիճակի քննարկումը մեզ բերեց այն համոզման, որ Ադրբեջանն իր զավթողական պլաններն իրագործելու համար, անկասկած, կօգտագործի նաև Խորհրդային Միության ՆԳ նախարարության ուժերը: Նրանք կձգտեն տեղահան անել արցախահայությանը: Ամեն կերպ պետք է դիմակայեմք, փրկության ելք որոնեմք: Մեռնեմք, բայց մեր հողում: Սա էր բոլորիս անշրջելի կամքը: Տնօրենների խորհուրդը հանրապետության ղեկավարների առաջ հարց դրեց ստեղծել ԼՂՀ Պաշտպանության խորհուրդ և բոլոր զինված ջոկատները միավորել հայրենիքը պաշտպանելու համար:

Այնուամենայնիվ, Արցախում վիճակն ավելի ու ավելի էր ծանրանում: Որոշ տվյալներով 1990 թվականին Արցախում թուրքի գնդակից զոհվեցին 43 հոգի, 1991-ին այդ թիվը հասավ 153-ի: 1991-ի աշնան վերջի տվյալներով Ադրբեջանի բանտերում պահվում էին 250-ից ավելի պատանդներ, որոնց աշխատեցնում էին Դաշքեսանի լեռնամետալուրգիական քարհանքներում և ուրիշ ծանր աշխատանքներում: Օգոստոսի 24-ից կրկին դադարեցվել էին ինքնաթիռների թռիչքները, սեպտեմբերից Ստեփանակերտի երկաթուղային կայարան մուտք չէր գործել ոչ մի շարժակազմ, վառելիքի բացակայության պատճառով սեպտեմբերի 19-ից չէին աշխատում Ստեփանակերտի ավտոձեռնարկության ավտոմեքենաները, Ստեփանակերտում անջատվել էր էլեկտրականությունը, խիստ վտանգի տակ էր գազի անջատումը: Ադրբեջանն ուժեր էր կենտրոնացնում մարզի

տարածքում գտնվող գյուղերում, Աղդամ, Ֆիզուլի և Միրբաշիր քաղաքներում: Արցախը, բոլոր կողմերից հայտնվել էր Ադրբեջանի կողմից կազմակերպված ռազմական և տնտեսական շրջափակման մեջ: Ստեփանակերտի շուրջը գտնվող ադրբեջանական բոլոր բնակավայրերը, ինչպես և Օուշի քաղաքը, վեր էին ածվել ռազմական խոշոր հենակետերի: Նոյեմբերի 26-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց լուծարել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը և Ստեփանակերտ քաղաքը վերանվանել Խանքենդի: Արցախցիները Ադրբեջանի ԳԽ այդ որոշումը բնորոշեցին որպես նոր սադրանք:

1991-ի վերջին Լեռնային Ղարաբաղը ներառվեց պատերազմի մեջ: Թուրքը բացահայտ պատերազմ սկսեց Արցախը նվաճելու համար: Օուշիից, Կրկմանից, Ջանհասանից, Մալիբեյլուից և Խոջալուից ադրբեջանական զինյալ կազմավորումները հրանոթներից և «Ալազան» հրթիռներով անընդհատ ուժակոծում էին Ստեփանակերտը և մոտակա հայկական բնակավայրերը: Ավերվեցին տասնյակ բնակելի շենքեր, պետական օբյեկտներ, այդ թվում մարզկոմի և մարզխորհրդի նախկին շենքերը, կենտրոնական հեռագրատունը: Մարզխորհրդի և ինքնապաշտպանական ուժերի ղեկավարության հրահանգով կարգի էին բերվում քաղաքի բնակելի և հասարակական շենքերի ներքնահարկերը որպես ապաստարաններ: Զորի Բալայանի արտահայտությամբ, 1991-ի ղեկտեմբերից նկուղներ մտավ Ստեփանակերտը:

Արցախի բոլոր բնակավայրերում գործում էին ինքնապաշտպանության ջոկատներ, ստեղծվում էին պաշտպանական դիրքեր, ամրապնդվում կոլտնտեսությունների ֆերմաների և այլ օբյեկտների պաշտպանությունը: Այդ շրջանում ամենակարևորը զենք ձեռք բերելն էր: Արցախը զենք ստանում էր Հայաստանից՝ պետական աջակցությամբ և որոշ քաղաքական ուժերից: Առանձնապես պետք է շեշտել ՀՀԴ և «Արցախ» հայրենակցական միության գործադրած ջանքերն այդ ուղղությամբ: Զինամթերքն ու սննդամթերքը Արցախ էին բերվում ուղղաթիռներով: Հոգ էր տարվում նաև կապի և ճանապարհների մասին: Թշնամին անընդհատ ուժակոծում էր նաև Օոշ, Քարին տակ, Մխիթարաշեն, Քարաշեն, Քոսանի տանող ճանապարհները: Օտսապ կարգով, համարյա պայթյունների տակ, կառուց-

վեցին Ստեփանակերտից Օռշ և Քարին տակ տանող ճանապարհները: Դա ռազմավարական կարևոր նշանակություն ուներ, մասնավանդ Մարտունու և Հաղարթի շրջանների, ինչպես և Ասկերանի համար: Արդարությունը պահանջում է ասել, որ եթե այդ օրերին խորհրդային ուժերի ճնշումը չլիներ, ապա ադրբեջանական օմոնականները լիովին կավերեին Ստեփանակերտը: Արցախահայությունը ընդմիշտ կհիշի նաև նրանց այդ բարի գործը:

– Ղարաբաղում ռազմական նոր պարետ, գնդապետ Վ. Ժուկովը,– հիշում է Համլետը,– փորձում էր Օուշի և Կրկժանի կողմից կրակը դադարեցնել: Ստեփանակերտում տեղակայված 366-րդ հրաձգային գնդի անձնակազմի աչքի առաջ ավերվում էին Ստեփանակերտը և հարևան հայկական գյուղերը: Ուրքի էր կանգնել Հայաստանը: Արթնացավ սիլուրը: Արցախը մագնիսի պես իրեն էր ձգում նաև այլազգիների գավակներին: Ի վերջո հասկացանք, որ Ֆիդայությունը սվյալ պահին չէր կարող փրկել Արցախը: Բանակ, միայն կազմակերպված, ուժեղ, մարտունակ բանակ: Դրա հետ միասին պետք է կայացվեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Այդ նպատակով էլ նոյեմբերի 26-ին գումարված ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհրդի նստաշրջանը որոշեց դեկտեմբերին հանրաքվե անցկացնել հանրապետությունում: Նաև ընդունվեց ժամանակավոր կանոնադրություն ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունների մասին:

ԼՂՀ հանրաքվեի օրն ընտրվեց 1991-ի դեկտեմբերի 10-ը: Մարդու իրավունքների պաշտպանության օրը արցախահայությունը պետք է համաժողովրդական քվեով հաստատեր վաղ հռչակված ԼՂՀ անկախությունը: Այլ երկրներից 40 անկախ դիտորդներ եկան: Դեկտեմբերի 10-ին, ժամը 19-ին քվեարկությունը լրիվ ավարտված էր: Քվեարկության իրավունք ունեցող 132328 մասնակիցներից քվեարկությանը մասնակցեց 108736-ը, այսինքն՝ 82,2 տոկոսը: Նրանցից 108615-ը, կամ 99,89 տոկոսը «Այո» պատասխանեցին: Հանրաքվեին մասնակցեցին ԼՂՀ տարածքում ապրող բոլոր ազգությունները, բացի թուրքերից, չնայած նրանց ուղարկվել էին բոլոր անհրաժեշտ քվեաթերթիկներն ու փաստաթղթերը<sup>96</sup>: Հանրաքվեի դիտորդները դիմում հիղեցին աշխարհի բոլոր խորհրդարաններին և Ռուսաստանի նախագահին, որում նշվում է, որ հանրաքվեի օրը

ադրբեջանական կողմը ամեն կերպ փորձել է խանգարել հանրաքվեն և որ նա «վարում է զավթողական պատերազմ՝ ազատության և ժողովրդավարության համար մարտնչող Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ»: Դիտորդները գտնում էին, որ Ռուսաստանը պետք է հավաստի Գյուլիստանի պայմանագիրը կատարելու իր պատրաստակամությունը և լինի Ղարաբաղի ժողովրդի խաղաղ կյանքի երաշխավորը: Առաջարկվում է մինչև բանակի հեռանալը Ղարաբաղից, հայերին վերադարձնել իր աջակցությամբ զավթած 24 գյուղերը<sup>97</sup>:

Ադրբեջանը հրաժարվում էր ընդունել ԼՂՀ գոյությունը և իր ծավալապաշտական նկրտումները իրագործելու համար շարունակում էր օր օրի ուժեղացնել ճնշումը արցախահայության նկատմամբ: Ազերիները հարձակումներ գործեցին Ասկերանի շրջանի գյուղերի և Քարին տակի վրա: Սակայն, ստանալով արժանի հակահարված, հետ նահանջեցին:

Հանրաքվեից հետո արցախցիների հիմնական խնդիրը Գերագույն խորհրդի ձևավորումն էր: ԼՂՀ առաջին Գերագույն խորհրդում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան, իսկ հիմա՝ ԼՂՀ Ազգային ժողով, պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օրը նշանակվեց դեկտեմբերի 28-ը: Ընտրությունների անցկացման կարգը քննարկվեց ԼՂՀ գործկոմի խորհրդի դեկտեմբերի 19-ի նիստում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ հաստատվեց Էդվարդ Պետրոսյանը: Հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունների մասին տեղյակ պահվեցին Օուշի և հանրապետության ադրբեջանաբնակ գյուղերի բնակիչներին: Բնական է, ադրբեջանցիները կատարեցին Մութալիբովի հրամանը և չմասնակցեցին ընտրություններին, ինչպես չմասնակցեցին հանրաքվեին: Դեռ ավելին, անընդհատ աղմուկ էին բարձրացնում արցախցիների դեմ, հորինում հազար ու մի գրպարտություն, վարկաբեկում հայ ժողովրդին: Օուշիից տրվող հեռուստահաղորդումները լրիվ կեղտաչոր էին, ուրիշ ոչինչ:

Համլետը ԼՂՀ Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավորության թեկնածու առաջադրվեց Մարտունու շրջանի թիվ 66 ընտրատարածքում:

Ահա նրա նախընտրական ծրագրի հիմնական թեզիսները՝  
«1. Սոցիալ-տնտեսական բնույթի հարցեր.

Ներկայումս ԼՂՀ էկոնոմիկան և սոցիալական ոլորտը գտնվում են իսպառ քայքայման վիճակում, չկա հանրապետության էկոնոմիկայի և սոցիալական զարգացման հատուկ ծրագիր: Ստեղծված կացությունից դուրս գալու ելքը ես տեսնում եմ Հայաստանի և ԼՂՀ տնտեսությունների ինտեգրացման մեջ:

2. Քաղաքական բնույթի հարցեր.

...Ամեն կերպ օժանդակել պետականության շուտափույթ ստեղծմանը՝ անհրաժեշտ հանրապետական կառուցվածքների միջոցով: Դրա մեջ առաջնահերթ տեղ է զբաղեցնում ազգային զվարդիայի ստեղծումը, որը կկարողանա կատարել ինքնապաշտպանական և ԼՂՀ սահմանի ամբողջականության պահպանման ֆունկցիաներ:

...Ժողովուրդների հավասարությունը պետք է բոլորի կողմից ընդունվի որպես քաղաքական և բարոյական հիմնարկային:

3. Հոգևոր բնույթի հարցեր.

...Բարեփոխել ժողովրդական կրթության բնագավառում ներկա կառուցվածքների համակարգը: Հանրապետության մեջ առաջնայինը պետք է լինեն հայկական դպրոցները՝ օտար լեզուների խորացված ուսուցմամբ, որտեղ լավ դրվածք պետք է ունենա ֆիզիկական, ռազմահայրենասիրական, աստվածաբանական և բարոյական դաստիարակությունը:

Ելնելով հանրապետության պահանջներից, անհրաժեշտ է մանկավարժական ինստիտուտը վերածել ազգային համալսարանի, որտեղ պատրաստվեին ինչպես մանկավարժներ, այնպես էլ ազգաբայիներ, ինժեներներ և հանրապետությանն անհրաժեշտ այլ մասնագետներ»<sup>98</sup>:

Չնայած հանրապետությունում ռազմական դրություն էր և անընդհատ պայթում էին թշնամու ռումբերը, նախընտրական հանրահավաքները անցնում էին մարդաշատ, գործնական զրույցի պայմաններում: Ընտրատարածքում Համլետին բոլորը լավ գիտեին և երբեք չէին կասկածում, որ նա ամենայն պատասխանատվությամբ կկատարի պատգամավորի իր պարտականությունները: Պատահական չէ, որ Արամայիս Սահակյանը իր «Խորհրդավոր խորհրդարան» գրքում գրել է. «Համլետ Գրիգորյան. արցախցի պատգամավոր, որ ավելի շատ բնակուում է նստում, քան... նստաշրջանում»:

Ընտրությունների նախօրյակին, դեկտեմբերի 27-ին, «Խորհրդա-

յին Ղարաբաղ» և «Սովետսկի Կարաբախ» թերթերում հրատարակվեց հանրապետության պաշտպանական ուժերի պատասխանատու աշխատողների «Ապավինենք մեր ուժին, պաշտպանենք հայրենին» կոչը՝ ուղղված արցախահայությանը: Նրանում ասված է, որ ինչպես 1918 թ. ռուսական բանակը հայ ժողովրդին թողեց զինված թուրքական խուժանի երախում, նույն ձևով էլ 1991-ի արտակարգ դրության գործերը, որոնք կազմակերպեցին հայ ինքնապաշտպանական ուժերի զինաթափում ու ձերբակալություններ, Գետաշենի, Բերդաձորի և Հադրութի շրջանի գյուղերի բռնի տեղահանությունը, վերադառնում են իրենց նախկին տեղերը: Սակայն մենք չպետք է հուսահատվենք և այդ փաստից ողբերգություն սարքենք: Ազատագրական շարժման վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ հույսը դրել ենք դրսի վրա, սուտ ու պատիիր պատմմաների վրա, դաժանորեն հուսախաբվել ենք: Մենք պետք է ապավինենք մեր ուժին, միահամուռ, ազգովին պաշտպան կանգնենք մեր ընտանիքներին, մեր օջախներին, մեր Արցախ հայրենիքին:

Այնուհետև ասված է, որ ԼՂՀ գործկոմի որոշմամբ ստեղծված է ինքնապաշտպանության խորհուրդ, որի դրոշի տակ հավաքվում են մեր լավագույն զավակները: Այսօր խնդիրն այն է, որ բոլորը, ովքեր կարող են զենք վերցնել, պետք է կանգնեն հայրենիքի պաշտպանության դիրքերում: ԼՂՀ գործկոմի անունից կոչ ենք անում, որպեսզի 18-40 տարեկան արցախահայերը զինվորագրվեն ինքնապաշտպանական բանակին: Ինքնապաշտպանական ուժերին պետք են ոչ միայն զինվորներ ու զենք, այլև՝ հաց: Հետևապես, ամեն մեկս պետք է մեր պաշտպաններին օգնենք ինչով կարող ենք՝ սննդամթերքով և այլ միջոցներով:

Ինքնապաշտպանության ուժերի պատասխանատու աշխատողները հավաստիացնում են, որ հետ կշարունակեն բոլոր նրանք, ովքեր կփորձեն զենքի ուժով նվաճել Արցախը և նրա բնակչությանը ստրկության մատնել: «Մենք, - ավարտվում է կոչը, - բավականին քաջագուն զավակներ և զենք ունենք, որպեսզի կարողանանք պաշտպանել հայրենիքը:

Արցախը փտանգի մեջ է, Արցախը պետք է պաշտպանենք»:

1991-ի դեկտեմբերի 28-ին ԼՂՀ ԳԽ ընտրություններն անցան հաջողությամբ. Համլետը պատգամավոր ընտրվեց ձայների ճնշող

մեծամասնությամբ: Ընտրությունների օրն անցավ թշնամու հրետա-  
նային և օդային ուժակոծությունների ներքո, որի հետևանքով արցա-  
խահայությունը տասնյակ վիրավորներ և զոհեր տվեց, ավերվեցին  
ավելի քան չորս տասնյակ բնակարաններ, մարզային մանկական  
հիվանդանոցը, Արցախի թեմի առաջնորդ Պարզև Մարտիրոսյանի  
տունը և այլն:

1992-ի Ամանորը Արցախը դիմավորեց հրե բոցերի մեջ:

Դեկտեմբերի 30-ին Միևնույն հավաքված ԱՊՀ երկրների ղեկա-  
վարները, դիմելով Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարներին, կոչ  
արեցին Ղարաբաղի հիմնահարցը լուծելու համար արագացնել բա-  
նակցությունները, սակայն Այազ Մութալիբովը չընդառաջեց կոչին և  
պահանջեց չմիջամտել Ադրբեջանի անկախ հանրապետության ներ-  
քին գործերին:

Դաժան, շատ դաժան էր 1992 թվականը: Հենց առաջին օրը,  
հունվարի 1-ին, Ադդամի կողմից թուրքական ուժերը տանկերով ու  
մարտական մեքենաներով ներխուժեցին Ասկերանի շրջանի Խրա-  
մորթ գյուղը, 42 տուն ջնջեցին հողի երեսից, գլխատեցին տասնյակ  
ծերունիների, որոնք չէին հասցրել հեռանալ գյուղից: Ոմանց էլ տա-  
րան ու անասելի կտտանքների ենթարկեցին: Բարբարոսները մի քա-  
նի հոգու էլ կենդանի նետեցին նրանց վառվող տների բոցերի մեջ:  
Եվ չնայած հալ ազատամարտիկներին հաջողվեց մեկ ժամ անց  
գյուղը ազատագրել վանդալներից, բայց և այնպես հետևանքը սար-  
սափելի էր: Այդ ամենը արցախցին, հայր տեսնելով՝ կարո՞ղ էր առե-  
լությամբ և վրեժխնդրությամբ չլցվել բարբարոսի դեմ:

1992 թվականի հունվարի 6-ին Ստեփանակերտի նախկին մարզ-  
խորհրդի նիստերի դահլիճում, ընտրված 51 պատգամավորից 48-ի  
մասնակցությամբ (ճանապարհները փակ լինելու պատճառով 3  
պատգամավոր չէին կարողացել հասնել Ստեփանակերտ) և 80 դի-  
տորդների ու լրագրողների ներկայությամբ, «Հայր մերով» իր աշխա-  
տանքներն սկսեց ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը: Մի քա-  
նի օր անց, հունվարի 11-ին, տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ լրացուցիչ ընտ-  
րություններ: 11 թափուր տեղի համար ընտրվեց 9 պատգամավոր, ո-  
րոնց իրավունքները հաստատվեցին հունվարի 17-ի նիստում:

Գերագույն խորհրդի նստաշրջանի առաջին օրը ընդունվեց «Լեռ-  
նային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության  
հռչակագիրը», ըստ որի ԼՂՀ հաշտարարվեց անկախ պետություն, ո-  
րի տարածքի վրա պիտի գործեն ԼՂՀ Սահմանադրությունն ու օ-  
րենքները: Այնուհետև սաված է, որ ԼՂՀ-ում ամբողջ իշխանությունը  
պատկանում է ժողովրդին, նրա տարածքում ապրող բոլոր բնակիչ-  
ները հանդիսանում են հանրապետության քաղաքացիներ, հանրա-  
պետության տարածքում թույլատրվում է երկքաղաքացիությունը,  
բոլոր քաղաքացիները գտնվում են ԼՂՀ պաշտպանության տակ, ե-  
րաշխավորվում են նրանց իրավունքներն ու ազատությունը, անկախ  
ազգային պատկանելությունից: Հանրապետության ամբողջ  
տարածքը և նյութական ու հոգևոր հարստությունները պատկանում  
են հանրապետությանը և նրա ժողովրդին: Հայրենիքը պաշտպանե-  
լու համար ստեղծվում են սեփական զինված ուժեր և հանրապետու-  
թյան քաղաքացիները զինծառայություն են անցկացնում ԼՂՀ  
տարածքում: Այլ երկրների քաղաքացիների զինծառայությունը ԼՂՀ  
տարածքում անցկացնելը իրագործվում է միջպետական պայ-  
մանագրերով և համաձայնագրերով: ԼՂՀ պետական լեզուն  
հայերենն է:

Հանրապետության սահմանները պաշտպանելու և բնակչության  
անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որո-  
շվեց ստեղծել հանրապետության իշխանության բարձրագույն մար-  
միններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական  
կարգի ու պետական անվտանգության մարմիններ: Այդ օրերին  
Արցախն ուներ տասից ավելի դասակներ ու վաշտեր, որոնց մեջ  
ընդգրկված էին մոտ 1000 կամավորական:

Հունվարի 7-ի նիստում սկսեցին զբաղվել հանրապետության նա-  
խագահի ընտրության հարցով: Առաջադրվեցին 7 թեկնածուներ՝  
Լեոնարդ Պետրոսյան, Օլեգ Եսայան, Ռոբերտ Քոչարյան, Արթուր  
Մկրտչյան, Լևոն Մելիք-Ծահնագարյան, Արկաղի Մանուչարով և  
Ծահեն Մեղրյան: Երկար վիճաբանությունից հետո թեկնածուներից  
հինգը ինքնաբացարկ հայտարարեցին: Վերջում մնացին Արթուր  
Մկրտչյանն ու Լեոնարդ Պետրոսյանը: Մի քանի անգամ քվեարկվե-

լուց հետո 42 ձայնով ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց 33-ամյա Արթուր Ասլանի Մկրտչյանը: Հետո Գերագույն խորհուրդը իր աշխատանքները շարունակեց հունվարի 17-20-ին: Նախագահի տեղակալ ընտրվեց ՀՀԴ անդամ Գևորգ Միքայելի Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու Վլադիկ Աշոտի Հակոբյանը: Նախագահի առաջին տեղակալի տեղը մնաց թափուր: Ընդունվեց արտակարգ դրության մասին օրենք և կազմեցին հանձնաժողովներ: Ըստ որում, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ ընտրվեց Վալերի Բաբայանը, արտաքին հարաբերությունների նախագահ՝ Լևոն Մելիք-Շահնազարյանը, կրթության, գիտության, լեզվի, մշակույթի և լրատվական հանձնաժողովի նախագահ՝ Համլետ Գրիգորյանը: Մարզային դատարանն ու դատախազությունը համապատասխանաբար վերանվանվեցին ԼՂՀ-ի Գերագույն դատարան և Գերագույն դատախազություն: ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանում ստեղծեցին հանրապետության նախարարների խորհուրդ, որի նախագահ հաստատվեց Օլեգ Եսայու Եսայանը: Տեղակալ հաստատվեց Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Բորիս Սերգեյի Առուշանյանը:

**Տնտեսվանք.** Արթուր Ասլանի Մկրտչյանը ծնվել է 1959 թ. փետրվարի 16-ին, Հաղրութի շրջանի Ուխտաձոր (Էդիլու) գյուղում:

Ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ազգագրության բաժնում:

Ապա ավարտել է Մոսկվայի Միկլուխտ-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան և 1987-ի թեկնածուական թեզ պաշտպանել «Ղարաբաղի հայերի հասարակական կենցաղը» թեմայով: 1986 թվականից աշխատում էր որպես Հաղրութի պետական թանգարանի տնօրեն: Արթուրը Շարժման ակտիվիստներից էր: Նա կարևոր դեր է խաղացել կամավորական ջոկատների կազմակերպման գործում: 1991 թ. նշանակվել է Հաղրութի ինքնապաշտպանական ջոկատի շտաբի պետ:

ՀՀԴ անդամ Արթուր Ասլանի Մկրտչյանը, 1992 թվականի հունվարի 8-ին ընտրվելով ԼՂՀ ԳԽ-ի նախագահ, իր վրա մեծ պատաս-

խանատվություն վերցրեց:

ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանը կոչով դիմեց ՄԱԿ-ին. աշխարհի բոլոր պետություններին, ԱՊՀ երկրներին՝ խնդրելով ճանաչել ԼՂՀ-ն և նրան օգնություն ցույց տալ, կանխել արցախահայության ցեղասպանությունը:

Այսպիսով, Արցախի պատմության մեջ սկսվեց անկախ հանրապետության գոյության շրջանը: Իշխանության եկան Արցախյան պայքարում կոփված երիտասարդ ուժեր: Նրանց վիճակված էր պետություն ստեղծել առանց լույսի, էլեկտրական հոսանքի, առանց ջրի, առանց գազի, առանց մամուլի, կիսագործող մշակույթի օջախներով, ֆիդայական և դեռևս չամբողջականացած պայքարով, նկուղներ մտած բնակիչներով:

Այստեղ չենք կարող անուշադրության մատնել հետևյալը. ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանն սկսվելուց մի քանի օր առաջ, հունվարի 3-ին, Ստեփանակերտ էր ուղարկվել Հայաստանի Հանրապետության ԳԽ դիմումը, որը կարելի է բերորշել որպես ՀՀ խորհրդարանի ամենօրյա պաշտոնական գրություն: Այդ փաստաթղթում նշված է, որ արցախահայության ազգային ազատագրական պայքարը թեև կոխել է նոր, պետականության հաստատման շրջան: ՀՀ ԳԽ համոզված էր, որ այն կրճաթանա միջազգային իրավունքի հանրաճանաչ ժողովրդական նորմերին համապատասխան, դրանով օրինական հիմքի վրա դնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Այնուհետև ասված է, թե ՀՀ ԳԽ ողջ հայ ժողովրդի անունից հավաստիացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդին, որ բոլոր միջոցներով զորավիզ կլինի Արցախի պետականության հաստատմանն ու ամրապնդմանը:

Սակայն մի քանի օր անց պարզվեց, որ կարմիր կովը իր կաշին փոխելու ցանկություն չունի, և վերոհիշյալ դիմումը պարզապես հերթական նոր աչքակապություն էր: Հունվարի 12-ին, երկուշաբթի, երբ ՀՀ ԳԽ նախագահությանն Գիստի ժամանակ առաջարկվեց շնորհավորանքի խոսք հղել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նորընտիր իշխանություններին, 12 ներկաներից Էդվարդ Եգորյանը և



Աշոտ Ոսկանյանը դեմ քվեարկեցին, շատ լավ իմանալով, որ որոշում ընդունելու համար անհրաժեշտ էր 11 ձայն: Այսպիսով, ՀՀ Գերագույն իշխանությունը չընդունեց ԼՂՀ նորընտիր իշխանություններին: Պատճառը պարզ է. Արցախում ԳԽ նախագահ էր ընտրվել Հայ հեղափոխական դաշնակցության անդամ, իսկ դա Լեոն Տեր-Պետրոսյանի սրտովը չէր:

Հիմա մեջքերում կատարեմ այդ օրերի իմ գրառումներից. 1992-ի հունվարը Արցախում գարնանային էր: «Արցախ» հայրենակցական միության նախագահ Յուրի Հովհաննիսյանի, նախագահության անդամներ Գրիգոր Խաչատրյանի և Արիկ Սամվելյանի հետ մեկնում ենք Արցախ: Մեր խնդիրն էր հանդիպել ԼՂՀ նորընտիր ղեկավարների հետ: Մեզ հետ Արցախ ենք տանում հեղուկ վառելիք, կաթի փոշի, մանկական սնունդ, դեղորայք: Ուղղաթիռը վայրէջք է կատարում Ստեփանակերտի մարզադաշտում: Հավաքվել էին մեծ թվով մարդիկ: Եկել էին ճանապարհելու ԼՂ Հանրապետության առաջին նախարհի նախնիներին մասնակցելու եկած Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսին, քրիստոնեական միջազգային ընկերության ներկայացուցիչ Այրնեթին, տասնյակ հյուրերի և լրագրողների: Արցախահայության դատը և մարդու իրավունքները արդարացիորեն պաշտպանելու համար «Արցախ» հայրենակցականը որոշել էր իր անկեղծ շնորհակալական խոսքն ասել տիկին Քոքսին: Մեր տարած՝ արցախյան բնակատեղիներով նկարը, որը միանգամայն խորհրդանշական իմաստ ուներ, հենց այստեղ, մարզադաշտում, «Արցախ» հայրենակցականի պատվավոր նախագահ Ջորի Բալայանը հանձնում է բարոնուհի Քոքսին և նրան շնորհակալություն հայտնում հայ ժողովրդի անունից: Արցախի կաթիլները ուլունքների մեջ գլորվում էին Քոքսի այտերով:

Մեզ դիմավորելու եկած ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Համլետ Գրիգորյանի հետ մարզադաշտից քաղաքի կենտրոն ենք բարձրանում ոտքով: Քաղաքի ծառերը խիստ նոսրացել էին, չկար գազ, էլեկտրաէներգիա, հաց, չէին գործում հիմնարկ-ձեռնարկությունները, փակ էին մշակույթի օջախները...

Հանրապետության Գերագույն խորհրդի շենքի առաջ մարդիկ, խումբ-խումբ կանգնած տաք-տաք գրուցում էին, քննարկում օրվա նորությունները: Կրկնակի և Շուշիի կողմից լավող կրակոցները չէին լուռ:

Հաջորդ օրը, հունվարի 9-ին, «Արցախ» հայրենակցականի պատվիրակությանն ընդունեցին հանրապետության նորընտիր նախագահ Արթուր Մկրտչյանը և վարչապետ Օլեգ Եսայանը: Ես մտածում էի. այսպիսի ծանր պայմաններում մեզնից պատասխանատվություն վերցնել իրենց ուներին, հավասար է կամ ինքնագոհության, կամ էլ մեծագույն խիզախության: Ավելի ճիշտ վերջինն է:

...Արցախ աշխարհի վրա գրոհում է գիշերային խավարը: Պատշգամբում կանգնած Համլետի հետ նայում էինք Շուշիի կողմից Ստեփանակերտի ուղղությամբ եկող հրե գնդերին, որոնցից շատերը մարում էին կես ճանապարհին:

– Հենց այս գնդերն են «Ալազան» կոչվածը, որոնք այդքան վնաս են հասցնում մեր քաղաքին, – բացատրում է Համլետը:

Հետո նրա հետ իջնում ենք նկուղ: Շենքի ամբողջ նկուղը բաժանված էր մասերի, հարմարեցված և վառարաններով ապահովված: Մեր առջև դուռը բացում է 12-ամյա «պարետ» Գեղամը՝ Համլետի կրտսեր որդին: Նա ընկերոջ՝ Արմենի հետ արդեն հասցրել են վառել վառարանը, կարգի բերել լամպը, ներսը ավելի, ջուր բերել: Քիչ հետո գալիս են կանայք, երեխաները, մեծահասակները: Գեղամն ինձ բացատրում է, որ իրենց բաժանմունքում գիշերում են մինչև 30 հոգի: Այդ գիշեր կավելանանք ես և իր հորաքույր Ջուլիետան: Ուրեմն՝ կլինեն 32: Այստեղ կար ուղի, հեռախոս, հեռուստացույց: Հենց այստեղ ուղիով լսեցի, որ Կարմիր շուկայի բնակիչներն այդ նույն օրը քաղաքի հիվանդանոցի և ազատամարտիկների համար ուղարկել են 1200 հաց:

Պիտի Մարտունու շրջան գնայինք: Մեքենայի հարցը պետք է լուծեր «Արցախ» հայրենակցականի նախագահ Յուրի Հովհաննիսյանը: Ջուլիետան պնդեց, որ ինքն էլ է գալիս մորը և գյուղում գտնվող եղբորը տեսնելու: Մերժել հնարավոր չէր: Մեզ տանելու համար եկել էր Յուրայի բարեկամ, Շոշի գյուղխորհրդի նախագահ, գյուղի ինք-

նապաշտպանական ջոկատի հրամանատար Սեմյոն Հայրյանը: Այդ նա էր, որ հետո, երկու շաբաթ անց, հունվարի 26-ին, Քարին տակ գյուղի պաշտպաններին առաջին օգնության հասաք և հերոսաբար զոհվեց: Սեմյոնի հետ եկած ազատամարտիկները քաղցած էին, ուղղակի դիրքերից էին եկել: Բելան շտապ ուտելու բան դրեց սեղանին: Տնավարի, աշխույժ գրուցելով հաց կերանք: Հետո «Գազ-69» մեքենայով ճամփա ընկանք: Այդ փոքրիկ մեքենայում տեղավորվել էինք ես, Ջուլիետան, Համլետը, փոքր եղբայրը՝ Մավրիկը, Համլետի ընկեր Ռաֆիկը, երկու ազատամարտիկ: Գնում ենք նորակառուց ճանապարհով, որովհետև Ստեփանակերտ-Շոշ հիմնական ճանապարհը փակ էր և օմոնականները Շուշի կողմից կրակի տակ էին վերցրել: Մեքենան վարում էր ինքը՝ ջոկատի հրամանատար Սեմյոնը:

– Պետք է շուտ վերադառնանք, – զգուշացնում էր նա:

Հիմա, երբ հիշում եմ Սեմյոնի բարի ժպիտը, նրա առնական դեմքը, նրա հավատը հաղթանակի նկատմամբ, նա իմ աչքին էլ ավելի է բարձրանում ու դառնում անհասանելի: Նրա զոհվելուց մի քանի օր անց Երևանում, երբ գրուցում էի Սեմյոնի ջոկատի մարտիկ Ալվինայի հետ, վերջինս մեծ հարգանքով էր խոսում իր հրամանատարի մասին:

– Այդպիսիները հազվագյուտ են լինում, ամբողջ մեր գյուղը պաշտում էր նրան:

Երբ վերադարձանք Շոշ, արդեն մութ էր: Սեմյոնը մի պահ միացրեց ավտոմեքենայի լույսերը: Շուշի կողմից լսվեց կրակահերթ: Սեմյոնը ծիծաղեց.

– Ասացի՛ ստուգեմ:

Մինչև հիմա իմ ականջում հնչում է մեր բաժանումից առաջ նրա ասածը.

– Պարոն Արբահամյան, մեկ էլ որ եկաք՝ մենք իսկական բանակ կունենանք:

Ես տեսա և համոզվեցի, որ Արցախում բոլորը զինվորներ էին և պաշտպանում էին իրենց սուրբ հողը՝ արհամարհելով դժվարությունները: Նաև ճնշված էի, որովհետև Արցախում մարդ էր զոհվում:

Մանապարհելուց առաջ Համլետն ինձ ասաց.

– Մեր ամենահրատապ խնդիրը Ստեփանակերտը ոմբակոծող բոլոր կրակակետերի վերացումն է: Եվ դա չենք ուշացնի...

Թշնամին Ծախումյանի, Ստեփանակերտի և այլ բնակավայրերի նկատմամբ օգտագործում էր «Գրադ», «Ալազան», «Նուրս» զինատեսակներ, ինչպես և 100 միլիմետրանոց հրանոթներ: Հունվարի 20-ի գիշերը ուժեղ հրետակոծության ենթարկվեցին Ստեփանակերտն ու Մարտունին: Օր օրի ավելանում էին զոհերի թիվը: ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանը հունվարի 15-ին լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարեց, որ Ղարաբաղում կանոնավոր բանակի կողքին կշարունակեն գործել նաև աշխարհագործային միավորումները՝ սահմանային գոտու բնակչության անվտանգությունն ապահովելու համար:

– Այդ օրերին, – հիշում է Համլետը, – միջոցառումներ էինք ձեռնարկում մարզի բնակչության կենցաղային ծանր պայմանները թեթևացնելու համար: Պատկերացրեք. մի կողմից Ստեփանակերտն անընդհատ ոմբակոծվում էր, իսկ մյուս կողմից էլ քաղաքի փողոցներից հավաքում էինք կուտակված կենցաղային աղբի կույտերը: Քաղաքում միշտ պտտվում էին մեքենաներ, որոնք բնակչությանը ջուր էին բաժանում: Բնակչությանը մատակարարվում էր մոմ, նավթավառներ, որոնք ուղղաթիռներով բերվում էին Հայաստանից: Քաղաքի բնակչությանը այլուր էր վաճառվում կտրոններով: Ծարքից դուրս էր եկել հանրապետության հեռախոսային կապը արտաքին աշխարհի և հանրապետության շրջանների հետ: Մենք՝ պատգամավորներս, օր ու գիշեր ոտքի վրա էինք, ոմանք՝ ուղղաթիռներում, ոմանք՝ շրջաններում, ոմանք էլ՝ քաղաքում: Բոլորս մի բունցք էինք դարձել, մի անտիկ ամրոց, ամբողջովին հայրենիի հոգսերով վառված: Մահ կամ ազատություն՝ ուրիշ կարգախոս չկար:

Արցախի պաշտպանական ուժերը, չնայած միջոցների ծայրահեղ պակասությանը, մեկ-մեկ լոնցնում էին Ստեփանակերտը գնդակոծող կրակակետերը: Հունվարի 20-ի լույս 21-ի գիշերը արցախցի ազատամարտիկները ոչնչացրին Կրկծանի բարձունքներում կառուցված թշնամու հենակետերը և տիրապետեցին ադրբեջանական թաղամասին: Կրկծանի բարձունքների գրավումով վերջ տրվեց այդտե-

դից Ստեփանակերտը գնդակոծելուն: Ազատամարտիկներին հա-  
ջողվում է նաև խափանել Օուշիի և Քյոսալար-Ջանհասան-  
Յալոբաքենդ գյուղերի միջև կապը: Ազատամարտիկները պայթեց-  
րին Օուշի-Կուրաթի բարձր լարման էլեկտրահոսանքի գծի աշտա-  
րակներից մեկը: Նրանք պայթեցրին և անանցանելի դարձրին Օու-  
շի-Լաչին ավտոճանապարհի մի հատված՝ Օուշին զրկելով արտա-  
քին աշխարհի հետ ցամաքային վերջին կապից: Հայ մարտիկներին  
հաջողվում է մտնել Օուշիի մոտակայքում գտնվող Նաբիլյար գյուղը  
և այն դարձնել անվտանգ: Ի պատասխան թուրքերի գործողության,  
Օոշ գյուղից ուժակոծվեց Օուշին, իսկ Մարտունոց՝ Ամիրանլարը:

1992 թ. հունվարյան այդ օրերին ամենամոժեղ մարտերը տեղի ու-  
նեցան Քարին տակի՝ Արցախի Վաթերլոյի մատույցներում: Օուշիի  
բարձունքից թուրքերը գրոհում էին, իսկ ներքևում Քարին տակը  
մնում էր անառիկ և զարմանք պատճառում համայն աշխարհին: Քա-  
րին տակի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր ԼՂՀ  
Գերագույն խորհրդի պատգամավոր Վաղինակ Առուշանյանը: Ադր-  
բեջանի ազգային բանակը Քարին տակի դեմ նոր, լայնածավալ հար-  
ձակում սկսեց 1992 թ. հունվարի 26-ին: Մինչև ատամները զինված  
250 թուրք բաշիրոզուկներ, 3 գրահամեքենաների օգնությամբ մտնե-  
ցում են գյուղի մատույցներին: Գյուղի ինքնապաշտպանական ջոկա-  
տի մարտիկները ստիպված նահանջում են: Ստեփանակերտից օգ-  
նության է հասնում 2 գրահամեքենա: Մինչ այդ, Քարին տակի վրա  
հարձակվող թուրքերի թիվը հասել էր 500-ի: Նրանց մի մասին հա-  
ջողվում է մտնել գյուղի ծայրամասը և հրդեհել 5 տուն: Քարին տա-  
կին առաջին օգնության է հասնում, ինչպես ասվեց, Օոշի ինքնա-  
պաշտպանական ջոկատը Սեմյոն Հայրյանի գլխավորությամբ: Ա-  
հեղ մարտերում հայ ինքնապաշտպանական ուժերը տալիս են 20  
զոհ և 20 վիրավոր: Ջոհվում է նաև Վաղինակ Առուշանյանը: Սեպ-  
տեմբերի 26-ի երեկոյան թշմանին, թողնելով 74 սպանված և 70 միա-  
վոր զենք, նահանջում է:

ԼՂՀ Ազգային խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը հուն-  
վարի 27-28-ին կատարեց պաշտոնական առաջին այցը Երևան:  
Նրա հանդիպումը Լևոն Տեր-Պետրոսյանի հետ խիստ սառն էր:

- Երևանից վերադառնալուց հետո, - պատմում է Համլետը, - Ար-  
թուրն իր խոհերը կիսեց ինձ հետ: Մենք երկար խոսեցինք: Նա խիստ  
դժգոհ էր Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանից: Վերջի-  
նիս համար հաճելի կլիներ, եթե Ղարաբաղում նախագահ ընտրվեր  
ՀՀԾ-ական: Այդպես էլ ասել է Արթուրին և պահանջել, որ նա հրա-  
ժարական տա:

\*\*\*

Ստեփանակերտի շուրջը գտնվող ադրբեջանաբնակ գյուղերում  
տեղակայված կրակակետերի ոչնչացումը դարձել էր հրատապ խն-  
դիր: Միայն փետրվարի 19-ին Ստեփանակերտի վրա ընկավ ավելի  
քան 300 հրթիռ, կեսից ավելին՝ «Գրադ»: Մինչ այդ, փետրվարի 11-ին,  
հայ ազատամարտիկները լուեցրել էին Մալիթեյլուի կրակակետերը  
և ընդհուպ մոտեցել Ղուշչուպարին, որը գրավեցին փետրվարի 12-ին:  
Այդ երկու ռազմավարական կետերի չեզոքացման ժամանակ հայ ա-  
զատամարտիկները ոչ մի զոհ չտվեցին, մինչդեռ որոշ տվյալներով  
թուրքերը տվել էին մինչև 100 զոհ: Այսպիսով, Ստեփանակերտն  
նպատակեց արևելյան կողմից հրետակոծությունից, և բացվեց Ստե-  
փանակերտ-Ննգի-Մարտունի մայրուղին, որը փակվել էր շուրջ եր-  
կու տարի առաջ: Սակայն Մարտունու ճանապարհին դեռևս խոչըն-  
դոտ էր հանդիսանում Ղարադաղլու գյուղը, որտեղ գտնվող ավազա-  
կային խմբերը մեծ վնաս էին հասցնում հարևան Մուշկապատ, Հա-  
ղորտի, Կաղարծի, Սպիտակաշեն և Գիշի գյուղերին: Փետրվարի 17-  
ին ազատամարտիկները ազատագրեցին Ղարադաղլուն: Ծարտար  
գյուղից Մարտունի տանող ճանապարհին խոչընդոտ էր հանդիսա-  
նում Ֆիզուլու շրջանի մեջ մտնող Վերին Վելյալու գյուղը: Ծարտա-  
րի ազատամարտիկները փետրվարի 22-ին ազատագրում են այդ  
գյուղը և բացում ճանապարհը: Այսպիսով, լրիվ ավարտվում է Մար-  
տունու շրջանի ներքին ճանապարհների բացումը:

Հաջորդ հրատապ խնդիրը Խոջալուի գրավումն էր և այնտեղի  
կրակակետերի լուեցումը: ԼՂՀ ուժերը, լուրջ նախապատրաստական  
աշխատանքներից հետո, փետրվարի 26-ին անցնում են գրոհի և մի  
քանի ժամվա ընթացքում ջախջախում ավանում գտնվող ադրբեջա-

նական ուժերին:

1992 թ. մարտի սկզբին 366-րդ գումդը դուրս բերվեց Արցախից, մի բան, որը ցավալի էր արցախահայության համար: Հենց այդ ժամանակ էլ, փետրվար-մարտին, միջազգայնացվեց Լեռնային Ղարաբաղի հարցը, որում, ըստ երևույթին, բոլորից շատ շահագրգռված էր Հայաստանի Հանրապետությունը, մանավանդ նրա նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Այդ օրերին արցախահայության հիմնական խնդիրը հանրապետության պաշտպանության հարցն էր և «ԼՂՀ Նախարարների խորհրդի մասին» օրենքի հիման վրա, մինչև ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմակերպումը, ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր պաշտպանության կոմիտեի ստեղծումը: Մարտի 26-ին Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց ստեղծել Պաշտպանության կոմիտե: Մինչ այդ գոյություն ունեւ Գերագույն խորհրդի և կառավարության համատեղ պաշտպանության խորհուրդ՝ Արթուր Մկրտչյանի նախագահությամբ: Նորաստեղծ ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախագահ է նշանակվում Սերժ Սարգսյանը: Նպատակահարմար գտան՝ Արթուր Մկրտչյանը մի անգամ ևս հանդիպում ունենա Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Արթուրը Երևան մեկնեց, մարտի 30-ին և հաջորդ օրը հանդիպեց Լևոնի հետ: Նա Երևանից վերադարձավ մի տեսակ հուսահատված և զայրացած: Նրա և Լևոնի միջև տեղ էր ունեցել տհաճ զրույց: Վերջինս նրան կրկին հասկացնել է տվել, որ իր տեղը զիջի ՀՀԾ-ական մեկին: Նախագահության մի շարք անդամներ դեմ էին նախագահի պաշտոնից Արթուրի հրաժարվելուն: Նա ամեն կերպ փորձում էր նախագահության անդամներին համոզել, որ չի ցանկանում տեսնել իր պատճառով Արցախը տանուլ տված: Մինչդեռ առանց Հայաստանի ամենաբարձր օգնության հնարավոր չէ պաշտպանել Արցախը: Նախագահ Լևոնը Արթուր Մկրտչյանին նաև հասկացրել էր, որ նույնիսկ կարող է լրիվ հրաժարվել Արցախին ռազմական օգնություն ցույց տալուց:

\* \* \*

Ապրիլի 9-ին Ջուլիետայի հետ ուղղաթիռով մեկնեցինք Ստեփանակերտ: Մարտի 3-ին տիկին Քնարիկը մահացել էր, մեզ ուշ էին տեղեկացրել: Ապրիլի 12-ին լրանում էր մահվան քառասուն օրը: Ստեփանակերտի օդանավակայանում մեզ դիմավորեց Համլետը: Նրան խնդրեցի մեքենան դանդաղ վարել, ուզում էի մի քիչ լավ տնտղել Խոջալուն և Հասանաբաղը:

Գյուղ պետք է գնայինք հաջորդ օրը: Իմ ծրագրի մեջ կար անպայման լինել Մարտունիում: Բանն այն է, որ 1991-ի նոյեմբերի 17-ին ստեղծել էինք «Վարանդա» հայրենակցական ընկերությունը, որի նախագահը ես էի: Վարանդան պատմական Արցախի մեյլքություններից մեկն էր, որի տարածքն ընդգրկում էր ներկայիս ամբողջ Մարտունու շրջանը և Ասկերանի շրջանի հարավային տարածքը: Մեր ընկերության նպատակն էր հնարավորին բոլոր միջոցներով օգնել Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ջոկատներին և գյուղերին: Գիտեի, որ Մարտունու շրջանի ինքնապաշտպանությունը հունվարից ղեկավարում էր Մոնթե Մելքոնյանը: Նրա հետ կապ էի հաստատել նամակագրությամբ և ռադիոհեռախոսով: Նա տեղյակ էր, որ ես պիտի գնայի Ղարաբաղ: Պայմանավորվել էինք հանդիպել:

Մարտունի պիտի գնայինք Ստեփանակերտ-Ննգի-Մարտունի ճանապարհով: Համլետն ասաց, թե ճանապարհին պիտի կանաչեղեն վերցնի իր ծանոթ բանջարաբույծից: Գնում էինք օդանավակայան տանող ճանապարհով: Ավտոբուսն անցնում ենք ու ճանապարհի ձախ կողմի վրա գտնվող բանջարանոցի մոտ կանգնում: Նոր էինք բանջարեղենով լի պարկը տեղավորել մեքենայում, երբ Ծուշիի կողմից եկող հրե մի գումդ պայթեց մեզնից մոտ 100 մետր հեռավորության վրա: Ջուլիետան ու Բելան բարձրաձայն ճչացին: Համլետը շտապ գործի գցեց մեքենան, ու գնացինք Մալիբեյլուի կողմը: Մի քանի րոպե կանգնեցինք գյուղի կողքով անցնող ճանապարհին: Ոմանք սայլերով վառելափայտ ու շինանյութ էին տանում Ստեփանակերտի կողմը: Այ քեզ Մալիբեյլու: Ու ժպտացի...

Ծարունակում ենք ճանապարհը: Առջևում էին Ղարադաղլուն ու Խոջավենդը: Խիստ ցանկություն ունեի տեսնել նաև այդ գյուղերը,

որտեղից անընդհատ ուժակոծում էին հայկական գյուղերն ու Մարտունու շրջկենտրոնը: Դրանք հիմա ավեր են և գետնին հավասար:

Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ուժերի շտաբը տեղավորված էր քաղաքի պրոֆուտուրանի շենքում: Հերթապահ ազատամարտիկը, իմանալով իմ ով լինելը, ուղեկցեց մի փոքրիկ սենյակ, որտեղ մահճակալի վրա պառկած էր փոքրամարմին, մորուքավոր, ժպտուն աչքերով, ֆիդայական հագուստով մի երիտասարդ: Նա անմիջապես վեր կացավ ու մենք գրկախառնվեցինք: Հետո իմանալով, որ ինձ հետ է ԼՂՀ և ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Համլետ Գրիգորյանը, հերթապահին ուղարկեց ճրագն մեր հրավիրելու:

Մեր գրույցը գործնական էր՝ կապված շրջանի պաշտպանության հետ: Ես լսեցի Մոնթեի խնդրանքը, ներկայացրի մեր հնարավորությունները: Բաժանվելուց առաջ տվեց կնոջ՝ Սեդայի հեռախոսի համարը և խնդրեց կապ հաստատել նրա հետ, մանավանդ զենք ու պաշտպանության այլ միջոցներ ձեռք բերելու հետ կապված հարցերով:

Չնայած հաճելի էր Մոնթեի մոտ լինելը, բայց ժամանակը սուղ էր, պետք է շարունակեինք ճանապարհը: Մոնթեի խորհրդով գնացինք Մարտունի-Վերին Վեյսալու-Մարտար ճանապարհով: Վեյսալուի մոտ մի պահ կանգնեցինք: Ծունչ-արարած չկար: Այն ոչնչով չէր տարբերվում մեր տեսած մյուս աղբեղանական բնակավայրերից: Հերհերի ճանապարհին շրջվեցինք ու մտանք մեր գյուղը՝ Բերթ: Մեկ ժամ հայրենի գյուղում մնալուց և այնտեղ գտնվող իմ արխիվից որոշ նյութեր ընտրելուց հետո շարունակեցինք ճանապարհը: Հերհեր հասանք այն ժամանակ, երբ արևն արդեն թաքնվել էր Բիրսի հետևում: Այստեղից Ֆիզուլին երևում էր ոնց որ արհիղ մեջ, իսկ քիչ հեռվում Արաքսն էր փայլում, ուր մի ժամանակ հասնում էին Վարանդայի սահմանները: Մեր հանդիպման ժամանակ Մոնթեն ասել էր, թե հավատացեք, կվերականգնենք պատմական Վարանդայի սահմանները: Այդ նշանակում է, որ դուրս կգանք Արաքսի ափ:

Թող Աստված խոսքդ լսի:

Առավոտյան Վայերիկի հետ գնացինք Կարմիր շուկա: Ավանի

կյուևնտեսության անասնաշենքում, որտեղ տեղավորված էր ինքնապաշտպանության շտաբը, հանդիպեցի Սերժ Սարգսյանին և Սամվել Բարսեղյանին: «Արցախ» հայրենակցական միության նախագահ Յուրի Հովհաննիսյանի հանձնարարությամբ մի կտոր գումար պիտի հանձնեի նրանց: Նոր էինք վերադարձել Հերհեր, երբ Ղաջարի կողմից սկսվեց հրաձգությունը: Օդում երևաց մի ուղղաթիռ: Այն թռչում էր Կարմիր շուկայի կողմը: Մեկ էլ՝ մի ուժեղ պայթյուն, ուղղաթիռը ծխի մեջ կորած ընկավ ցած: Համլետի հեռադիտակով դիտում էի Վարանդա գետի ափին վառվող, սև ծխի մեջ կորած ուղղաթիռն ու հրճվանք զգում:

...Ստեփանակերտ, վերադարձանք արարողությունն ավարտելուց անմիջապես հետո: Առավոտյան պետք է մեկնեինք Երևան: Արթուր Մկրտչյանը Համլետից իմացել էր, որ ես գտնվում եմ Ղարաբաղում: Խնդրել էր մեկնելուց առաջ անպայման հանդիպել իրեն: Եվ ահա Համլետի հետ մտնում ենք Արթուրի մոտ: Նա իրեն հատուկ սիրալիր ժպիտով դիմավորեց մեզ: Ինձ թվաց, որ այդ պահին նրա աչքերն ավելի թախծոտ էին, քան տեսել էի վերջին անգամ, երբ եկել էր Երևան: Օրը կիրակի էր: «Արցախ» հայրենակցականի նախագահ Յուրի Հովհաննիսյանը դեռ երեկոյան զանգել էր ու խնդրել վաղը լինել միությունում, կարևոր գործ կար: Ժամը 12-ի մոտ մտա Յուրիի առանձնասենյակը ու տեսա Արթուր Մկրտչյանն այնտեղ նստած: Նա խիստ անտրամադիր էր: Մեզ ապաց, որ այլևս Երևան չի գա: Իմացա, որ Լևոն Տեք-Պետրոսյանը շատ վատ էր ընդունել նրան և կտրուկ պահանջել հրաժարական տալ: Իսկ հիմա, Ստեփանակերտում, իր առանձնասենյակում խնդրում է իր շնորհակալական խոսքը հայտնել «Արցախ» հայրենակցական միությանը ԼՂՀ ցույց տված օգնությունների համար: Նաև ապաց, որ իր տանդոները միշտ էլ բաց են միության անդամների առջև, երբ էլ գամ աչքիս վրա տեղ ունեն: Ապա կանչում է իր վարորդին և հանձնարարում մեզ տանել օդանավակայան: Համլետը չէր կարող գալ, որովհետև նախագահության անդամները պետք է հավաքվեին և կարևոր հարց վճռեին:

Արթուրի հետ որոշագուրվում և բաժանվում ենք: Մինչև օդանավակայան անընդհատ նրա մասին էի մտածում: Հենց առաջին պա-



հից օդանավակայանը աչքիս անհանգիստ երևաց: Հսկիչ բաժնի՝ ինձ ծանոթ տղաներից մեկն ասաց, թե երեկոյան Երևանի «Էրբրունի» օդանավակայանից գինված մի ջուկատ է եկել և Ստեփանակերտի օդանավակայանի ամբողջ հսկողությունը վերցրել իր ձեռքը: Նաև իմացա, որ ինքնաթիռներն ընդունում և թռիչքը թույլատրվում էր այդ խմբի կողմից: Խորհուրդ տվեց հանդիպել խմբի ղեկավարի հետ: Փնտրեցի ու գտա նրան: Տեսա զինվորական հագուստով մի փոքրիկ գնդիկ: Ախր սա Մերգեյանի Ալբերտ Բաղդասարյանն է, ի՞նչ գործ ունի այստեղ: Ալբերտին ընդհանրապես գիտեի: Նրա հետ հանդիպելու և խոսելու առիթը ստեղծվել էր 1991-ին, երբ Համլետի ձերբակալության առիթով Մերգեյանի աշխատողները եկել էին Թատերական հրապարակ:

Ինչևհից: Ալբերտն ինձ ասաց, թե կոչչեք օրվա վերջին: Վերջին ինքնաթիռով թռանք Քերոլայն Քոքսի հետ: Հաջորդ օրը, ապրիլի 14-ի երեկոյան, լուրերի հաղորդման ժամանակ լսեցի, որ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը սպանվել է իր բնակարանում: Ես ծանր տարա այս գույժը: Անմիջապես զանգեցի Ստեփանակերտ: Համլետը տանը չէր: Նրա հետ կապվեցի զիշերը և որոշ բաներ իմացա: Հաջորդ օրը Հայաստանի մամուլում երևաց հետևյալ հաղորդագրությունը.

*«ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը և Նախարարների խորհուրդը հայտնում են, որ սույն թվականին ապրիլի 14-ի երեկոյան դժբախտ պատահարի հետևանքով ընդհատվեց Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Ասլանի Մկրտչյանի կյանքը:*

*Կատարված հանգամանքների հետաքննության նպատակով ստեղծված է կատարական հանձնաժողով: Ապրիլի 15-ը, 16-ը և 17-ը հանրապետությունում հայտարարվում են սգո օրեր»:*

Ապրիլի 15-ի երեկոյան տեղի է ունենում ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության և ինքնապաշտպանության ուժերի հրամանատարական կազմի համատեղ նիստ: Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը խնդրում է ինքնապաշտպանության ուժերի հրամանատարներին, ինքնապաշտպա-

նության ուժերի ամբողջ անձնակազմին տեղեկացնել հետևյալը. «Համազգային սգի այս օրերին և ընդհանրապես հանրապետության համար ներկա ժամանակահատվածում անսահման կարևոր է ամբողջ ժողովրդի միասնությունն ու խմբվածությունը: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը պիտի ունենան միասնական հրամանատարություն, որպեսզի բացառվի ինքնակամ գործունեությունը:

Արթուր Մկրտչյանի մահը պիտի ստիպի լինել ավելի համախումբ, ավելի զգոն և ավելի վճռական՝ դիմակայելու համար բոլոր դավերին, ի շահ մեր սուրբ նպատակների»:

ԼՂՀ ԳԽ նախագահության որոշմամբ ԼՂՀ ԳԽ նախագահի պարտականությունները ժամանակավոր ստանձնեց նախագահի տեղակալ Գեորգի Պետրոսյանը: Դեռևս ապրիլի 14-ի ուշ երեկոյան ԼՂՀ ԳԽ նախագահությունը և Նախարարների խորհուրդը հանրապետության բնակչությանն ուղղել էին հետևյալ կոչը.

### Հայրենակիցներ

*Սույն թվականի ապրիլի 14-ի երեկոյան, մոտավորապես ժամը 19-ին, դժբախտ պատահարի զոհ դարձավ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Ասլանի Մկրտչյանը: Դիմում ենք ձեր ողջախոհությանը, իմաստությանը և հոգու կորույթին. հանրապետության համար այս ճգնաժամային օրերին առավել ևս կարևորվում է մեր ժողովրդի միասնությունն ու համախմբվածությունը: Ծանր կորուստը չպիտի խախտի մեր շարքերը, չպիտի ջլատի մեր ուժերը: Մենք ձեզ կոչ ենք անում մնալ ստունասիրտ, չենթարկվել սադրանքներին ու դիմակայել բոլոր դավերին: Մեր սպաքարը արդարացված է: Մեր որոշումը՝ անդառնալի: Արցախի ազատության և անկախության սուրբ գաղափարին նվիրաբերեց իր կյանքը Արթուր Մկրտչյանը: Թող արյամբ սրբագործված այս գաղափարը միավորի մեր ուժերը, համախմբի մեր շարքերը: Արթուր Մկրտչյանի կամքի լավագույն կատարումը նրա որդեգրած ուղուն հավատարիմ մնալն է:*

բ. Ստեփանակերտ, 14 ապրիլի 1992 թ.

Ցավակցական հայտարարությամբ հանդես եկավ նաև ՀՀԴ Հայաստանի կենտրոնական կոմիտեն: Ցավակցական հեռագիր ուղարկեց նաև Քերոլայն Քոքսը. «Ես իմ խորին ցավակցությունն եմ ուղարկում Արթուր Մկրտչյանի ընտանիքին նրա ողբերգական մահվան կապակցությամբ: Ես պատիվ ունեի ճանաչել նրան և կիսում եմ նրա բարեկամների ու Ղարաբաղի ողջ ժողովրդի վիշտը: Դուք իմ սրտում և աղոթքներում եք այս մտայլ, տխուր օրերին: Պատմությունն ապացուցում է, որ նա, ով մեռնում է հանուն ազատության և արդարության, երբեք չի մոռացվում: Նրանց արյունը կյանք է բերում ուրիշներին: Ես հարգանքի տուրք եմ մատուցում Արթուր Մկրտչյանին, որը պատմական դեր է խաղացել Ղարաբաղի պատմության մեջ, և ես ամբողջովին նեցուկ կկանգնեմ ձեզ»<sup>99</sup>:

ՀՀ ԳԽ նախագահությունը պաշտոնական պատվիրակություն է ուղարկում ԼՂՀ՝ Բաբկեն Արարքցյանի ղյխավորությամբ: Հայաստանից և աշխարհի այլ տեղերից հարյուրավոր ցավակցական հեռագրեր են ստացվում Ստեփանակերտում: Ցավակցական հեռագրեր ստացվեցին նաև ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կառավարություններից: Արթուր Մկրտչյանի թաղումը տեղի ունեցավ ապրիլի 17-ին, Ստեփանակերտի հուշահամալիրում: Նրա մահը սգում էր ողջ Արցախը:

Մի քանի օր անց ՀՀ ԳԽ նստաշրջանին մասնակցելու եկավ Համլետը: Ամբողջ երեկոյան խոսում էինք միայն Արթուրի մասին: Նա իր խոսքն այսպես ամփոփեց.

– Արթուրի մահը մնաց հանելուկ: Այդ չարաբաստիկ ապրիլի 14-ի երեկոյան ես և ինքը երկար նստեցինք: Մշակում էինք առաջիկա օրերի աշխատանքային պլանը: Իրարից բաժանվելուց մոտ 20 րոպե անց զանգում են մեր տուն ու հայտնում Արթուրի մահվան մասին: Լավ է, որ այդ պահին ինձ ինֆարկտ չխփեց: Ընդամենը մի 20 րոպե առաջ նա վճռականորեն խոսում էր Օուշիի ազատագրման, Արցախի խնդրի միջազգայնացման, հանրապետության ինքնիշխանության դեմ հնարավոր հարձակումները կանխելու և ուրիշ շատ կարևոր հարցերի մասին...<sup>100</sup>:

Օուշիի գրավումը և Արցախը մայր հայրենիքի հետ ցամաքային միջանցքով միացնելը, այսինքն՝ կյանքի ճանապարհի բացումը, պատմական անհրաժեշտություն էր, որի հետաձգումը և դանդաղումը կլինեք մեծագույն սխալ: Այդ մարտական գործողություններին նախապատրաստվում էին դեռևս 1991 թվականից: Սակայն մի շարք հանգամանքների պատճառով այն հետաձգվել էր: Իսկ մինչ այդ, այսինքն՝ մինչև Օուշիի ազատագրումը, տեղի էին ունեցել որոշ իրադարձություններ, որոնց հիշելը, թերևս, անհրաժեշտ է:

Հակառակորդը Ֆիզուլու կողմից ճնշում էր գործադրում Ամարասի ձորակի և Կարմիր շուկայի ճղղղությամբ: Մի շարք գյուղերի բնակիչներ ստիպված էին ժամանակավորապես հեռանալ իրենց գյուղերից և ապաստանել լեռներում:

Համլետը Ստեփանակերտից շտապ մեկնում է Հերհեր, հանդիպում գյուղի ղեկավարների և բնակչության հետ: Քննարկում են գյուղի բնակիչներին տեղափոխելու հարցը: Համլետը առաջարկում է բոլոր երեխաներին, կանանց, ծերունիներին, ինչպես նաև անասունները տեղափոխել Մավաս լեռը և ապաստանել անցյալում այդտեղ գոյություն ունեցած Մավաս գյուղի տեղում: Ոմանք հակառակում ու պնդում են, թե թույլտվություն կա կանանց, երեխաներին և ծերունիներին Հայաստան տեղափոխելու վերաբերյալ: Համլետը կտրուկ մերժում է Հայաստան տեղափոխվելու տարբերակը, բացատրում դրա բացասական հետևանքները և պնդում բարձրանալ միայն Մավաս:

– Այնուամենայնիվ, – հետո կհիշի Համլետը, – միևնույն ժամանակներքուստ ինչ-որ վախ էի զգում, հանկարծ որևէ սարսափելի բան չպատահի<sup>101</sup>: Եվ որպեսզի համագյուղացիները որևէ կասկած չունենան, կնոջս և փոքր տղայիս Ստեփանակերտից տեղափոխում եմ Մավաս: Ի վերջո ստացվում է, որ ես ճիշտ էի: Այսպես, Հերհերի բնակիչները բարձրացան Մավաս լեռը և մոտ երկու շաբաթ մնացին այնտեղ: Այդ օրերին Համլետի փոքր եղբոր կինը՝ Լյուդմիլա Բեզյարյանը պահել է օրագիր, որը և մեջ ենք բերում կրճատումներով ու



Վրանն էլ ինչ վրան, հարյուր տարվա թթի շալ է:

**1 մայիսի:** «Օան օր է»: Օարունակում են գրել գյուղի տանն Ակուղում: Առավոտյան վեր կացանք և ինչ տեսանք, որ լավ լինի. մի մետր ձյուն է նստել վրանի դեմը: Սրբաբթում ենք: Մինչդեռ երեխաները շատ ուրախացան: Դե մայիսին ձյուն և երեխա: Մեծերս շատ վատ դիմավորեցինք զարնանային այդ անկոչ «հյուրին»: Բռնեցինք գյուղի ճամփան: Ինչ լինում է թող լինի: Բնությունը մեզ չի պաշտպանում: Միշտն ասած՝ շատ էլ չհուսահատվեցինք: Ոտից գլուխ թաց երեխաները ոգևորված, հայրենասիրական երգեր երգելով իջնում ենք գյուղ: Մեծերս էլ վարակվեցինք ու սկսեցինք երգել երեխաների հետ...

**2 մայիսի:** Գյուղում ենք: Թշնամին ավելի կատաղի է ուժակոծում: Արևը ժպտաց առավոտյան, շոյեց ծառ ու ծաղիկ, ասես կատակ էր, անցավ, աչքով արեց ու գնաց իր գործին: Որոշել ենք վաղը կրկին բարձրանալ Մավաս: Ես չեմ ուզում գնալ, ճակատագրից չեմ փախչում:

**3 մայիսի:** Նորից Մավասում ենք: Մենակ հաց ունենանք, կլոր տարին այստեղ կարող ենք ապրել: Չորս կողմը լիքը կանաչի է, էն էլ ինչ կանաչի՝ կնձմնձուկ, անանուխ, խազազ, ճոճոկ, ավելուկ, բանջար, թրթնջուկ... Մասրենիները՝ կարմիր կրակ, անցած տարվա մատուրն է վրան չորացած: Թե՛ն ենք պատրաստում: Երևի Աստծու կողմից ուղարկված մանանա է: Զավարով ճաշ ենք եփում և ժինգալով հաց թխում:

Ամեն օր «Ամերիկայի ձայն» ենք լսում: Մեր տղաները լավ էլ կոպում են: Շուշին պիտի ազատագրվի մոտ օրերս:

Անընդհատ թնդանոթների որոտներ: Այս ե՞րբ պիտի վերջանա: Զարմանալի բան. մարդիկ իրար հետ խոսելիս չեն ասում, թե երբ ենք հարձակվելու Շուշիի վրա և երբ պիտի այն վերցնենք:

**4 մայիսի:** Ասում են վարուժանը կառավարանի ճամփին «Հացին երգն» էր երգում: Առաջ զարմանում էի, հիմա չեմ զարմանում: Դեռ ավելին, բա ինչ պիտի աներ: Չէ՛, իմ ազգը կգոյատևի: Շուշիի գրավումն անպայման կլինի:

**5 մայիսի:** Այսօր քաղաքից մարդիկ են եկել: Ասում են Շուշիի գրավումը օրերի հարց է: Գիշերները հեռադիտակով նայում ենք.

հիանալի երևում է մեր բարձունքից: Մոտիկ, շատ մոտիկ թնդաց հողը: Երևի գյուղում էր պայթյունը:

**6 մայիսի:** Իրոք, երեկ գյուղի վրա էին խիել: Փառք Աստծո, զոհ չկա: Իսկ գյուղում մարդ կա՞, արդյոք. չէ՞ որ անասուններն էլ ենք այստեղ պահում: Կովը կթում և առավոտյան թարմ կաթ ենք խմում: Քաղցրավենիքի պակասի պատճառով դոշաբի «ռնչոտնգը» բարձրացել է...<sup>101</sup>:

Այստեղ ընդհատվում է Լյուդմիլայի օրագիրը: Որպես լրում, նշենք, որ այդ օրերին Համլետը կարողացել էր կարմիր խաչից ձեռք բերել վրաններ, դեղորայք, որոշ քանակի սննդամթերք և Սարուշենից Մավաս տանող լեռնային դժվարանցանելի ճանապարհով հասցնել տեղ:

\*\*\*

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումից հետո, մանավանդ երբ արդեն կազմավորվում էր հանրապետության բանակը, երբ Շուշին և մյուս արդրեջանական բնակավայրերը դարձել էին Ստեփանակերտն ու հարևան գյուղերը բնաջնջելու հանցավոր գործողությունների վայր, հրամանատարությանը հանձնարարվեց մշակել Շուշին ազատագրելու և հակառակորդի բոլոր կրակակետերը լուեցնելու ռազմավարական պլան: Հստ բոլոր տվյալների և վկայությունների, Շուշին պետք է ավելի շուտ ազատագրվեր, սակայն «Գործողությունը հետաձգված է միայն ու միայն եղանակի պատճառով, տարվա այդ ժամանակի համար աներևակայելի ձյան տեղումների հետևանքով»<sup>102</sup>:

Գնդակոծություններն ու ավերածությունները չեն դադարում: Ստեփանակերտն անընդհատ կրակի տակ էր: Ամեն պահի նոր ավերածություններ, նոր զոհեր և վիրավորներ: Կրակը չէր դադարում նաև Օահուսյանի, Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու և Հաղրութի շրջաններում:

Շուշին և Զանհասանը արցանի մեջ էին անել Ստեփանակերտը: Այլևս չնշելու հնարավորություն չկար: ԼՂՀ բանակի գլխավոր հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանը վաղուց հանձնարարություն

ուներ նախապատրաստվել այդ կրակետերը լուեցնելու համար: Իմ ձեռքի տակ է ԼՂՀ բանակի հրամանատարության կազմած «Օուշի քաղաքի ազատագրման ռազմական գործողություններին մասնակցող անձնակազմի ցուցակը» փաստաթղթի պատճեն. Օուշիի ազատագրմանը մասնակցելու էին 48 տարեք տեսակի զորամասեր: Մշակված պլանի իրագործման ընդհանուր պատասխանատվությունը կրում էր Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը, ինչպես նրան անվանում էին Արցախում:

Ահա թե ինչ է պատմում Համլետը.

– 1992 թ. մայիսի 7-ի ուշ երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության արտահերթ նիստ, որտեղ քննարկեցինք հանրապետության ռազմատնտեսական վիճակը: Պահանջեցինք անմիջապես հրափիրել պաշտպանության խորհրդի նիստ, որը որոշեց հանրապետության բնակչության անվտանգությունը և բնականոն ինքնագործունեությունը ապահովելու համար միջոցներ ձեռնարկել ադրբեջանական զինյալ կազմավորումների կրակակետերը լուեցնելու համար: Արոշման իրագործումը պետք է սկսվեր անմիջապես: Եվ ահա մայիսի 7-ի լույս 8-ի գիշերը ժամը երկուսն անց 30 րոպեին Կոմանդոսը հրաման արձակեց սկսել այդ պատմական գործողությունը:

Մայիսի 8-ի վաղ առավոտյան Արցախի ազատագրական ուժերը շարժվում էին Օուշիի և Ջանհասանի ռազմական հենակետերի ուղղությամբ: Թշնամու պաշտպանությունը ճեղքված էր հյուսիսից և արևելքից:

– Ծառ ծանր տարանք, – շարունակում է Համլետը, – Ջանհասանի ուղղությամբ գործող ջրկատներից մեկի պաշարման մեջ ընկնելը: 13 հոգու զոհվելը և մի քանիսի գերի ընկնելը մեծ վիշտ էր: Գերի ընկածները տանջամահ արվեցին:

Օուշին ազատագրելու հաջորդ օրը Գերագույն խորհրդի նախագահության մի շարք անդամներ գնում ենք այնտեղ. ուզում էինք մեր աչքերով տեսնել ազատագրված հարազատ քաղաքը: Ես այդտեղ եմ ավարտել մանկավարժական ուսումնարանը: Յուրաքանչյուր տուն ու փողոց ինձ ծանոթ է: Հիշո՞ւմ ես, վերջին անգամ միասին Օուշի

էինք գնացել 1988-ին, տեսնելու Սիբիրից հանգստանալու եկած ընկերոջս դստերը՝ Վանդային...

Ծտապեցինք Ղազանչեցոց եկեղեցի: Արդեն այնտեղ էին Ջորի Բալայանը, Իգոր Մուրադյանը, հարյուրավոր ազատամարտիկներ: Եկեղեցում և շուրջը կուտակված էին «Գրադի» արկերի դատարկ արկերները: Ծաբաթօրյակ հայտարարվեց և 1500 արկը հանեցինք եկեղեցուց: Եվ այդ բոլորը դատարկվել էին ստեփանակերտցիներիս զլխին:

Արցախահայությունը ցնծության մեջ էր: Ազատագրվել էր Օուշին, և ընդմիջտ լուեցվել Ստեփանակերտն ու հարևան հայկական գյուղերն ավերող կրակակետերը: Մայիսի 10-ի դրությամբ վերացվեցին նաև Ջանհասանի, Քյոսալարի, Ջավադլարի և Ծուլանի կրակակետերը:

Այնուհետև դարաբաղյան ուժերի առջև խնդիր դրվեց կարճ ժամանակահատվածում իրականացնել կենսական ամենահույժ կարևորություն ունեցող Օուշի-Լաչին-Ջաբուղ ճանապարհի բացման մարտական առաջադրանքը, որը հնարավորություն կտար ճեղքել Արցախը շրջափակող օղակը և ապահովել բնակչության բնականոն կենսագործունեությունը: Հայ ազատամարտիկները մայիսի 15-ին ազատագրեցին Լիսագորը, իսկ մայիսի 17-ին՝ Բերդաձորի ենթաշրջանը, որը հայաթափվել էր մեկ տարի առաջ: Արդեն բաց էր Լաչին մտնելու ճանապարհը:

Ղարաբաղյան ուժերը առաջ շարժվելով, մայիսի 18-ին մտան Լաչին, ապա դուրս եկան Հայաստանի Հանրապետության սահմանը: Այսպիսով, 3 տարի պահանջվեց շրջափակման օղակը զենքի ու ժով վերացնելու համար:

Այդ օրերին ցնծության մեջ գտնվող հայության հոգսերը այլ էին՝ բացված միջանցքով անհրաժեշտ օգնություն ցույց տալ տառապյալ արցախահայությանը: Հայաստանից Արցախ էր շտապում առաջին ավտոշարասյունը, որը գլխավորում էր ՀՀ ԳԽ Ղարաբաղից պատգամավոր, Հայաստանի ԳԽ տնտեսական հարաբերությունների և տնտեսական ինքնուրույնության հանձնաժողովի անդամ Բազմիկ Դանիելյանը: Ծարապունը, որը բաղկացած էր ավելի քան 100 բեռ-

նատար ավտոմեքենաներից, Արցախի հասցրեց մեծ քանակությամբ վատելիք, սննդամթերք, առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ:

— Դա առաջին մարդասիրական օգնությունն էր, որ ստանում էինք Գորիս-Ստեփանակերտ մայրուղով.— պատմում է Համլետը:— Հրապարակում դիմավորեցինք Ռազմիկին և գրկախառնվեցինք: Ավտոշարասյան հետ Արցախ էին ժամանել նաև արտասահմանյան լրագրողներ, քաղաքական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներ: Վերջապես լիաթոք շունչ քաշեցինք:

Այդ օրերին Հայաստանի տարբեր շրջաններից և քաղաքներից Արցախ ուղարկվեցն բազմաթիվ ավտոշարասյուններ՝ բարձրված ամենամահրաժեշտ ապրանքներով:

Գորիս-Ստեփանակերտ կյանքի ճանապարհը բացվելու հաջորդ օրն ինձ մտո՝ «Վարանդա» հայրենակցական ընկերություն եկավ ընկերության նախագահության անդամ: «Հայկուլտո» մեծածախ առևտրական բազայի տնօրեն, Արցախյան պայքարի նվիրյալ Սանթուր Ավանեսյանը, որը ծննդով Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղից է, և ասաց:

— Ասում եմ, մենք էլ մի ավտոշարասյուն կազմակերպենք և մթերքներ ու վատելանյութ հասցնենք Մոնթեին:

Առաջարկությունն արժանացավ ընկերության նախագահության հավանությանը: Այդ հույժ կարևոր գործի կազմակերպման պատասխանատվությունը դրվեց Սանթուրի վրա: Նրա հետ գնացինք առևտրի նախարարություն: Նախարարը ուշադիր լսեց մեզ և խոստացավ հնարավոր բոլոր միջոցներով օգնել: Առևտրի նախարարության աշխատողների հանգանակած միջոցներով նախարարության պահեստներից և այլ տեղերից ձեռք բերված երկու միլիոն ռուբլու սննդամթերք, վատելանյութ և արդյունաբերական այլ ապրանքներ ձեռք բերվեցին: Եվ ահա 1992 թ. հունիսի 6-ին 8 ավտոմեքենաներից կազմված մեր ավտոշարասյունը դուրս եկավ Երևանից և ուղղություն վերցրեց դեպի Արցախի Մարտունի քաղաք: Ստեփանակերտում մեզ դիմավորեց Համլետը: Նա ԼՂՀ իշխանությունների անուանից շնորհակալություն հայտնեց «Վարանդա» հայրենակցական ըն-

կերությանը և Սանթուր Ավանեսյանին, տղաների համար ճաշկերույթ կազմակերպեց իր տանը, հետո մինչև Մալիբեյլու ուղեկցեց մեզ:

Գնում ենք ծանոթ Ստեփանակերտ-Ննգի-Մարտունի ճանապարհով: Մարտունի հասանք կեսօրին: Մոնթեն տեղում չէր, ասացին Ստեփանակերտ է գնացել, շտաբից կանչել են: Մարտունու պաշտպանության շտաբից նրա հետ խոսեցին ռադիոկապով: Չանցած մեկ ժամ, նա արդեն Մարտունիում էր:

— Հենց իմացա ձեր գալու մասին, խնդրեցի գլխավոր հրամանատարին ու շտապեցի,— ուրախացած ասաց նա և անմիջապես կաք-գաղբեց ավտոմեքենաները դատարկել ռազմական բազայում:

Ծարապան բեռնաթափումն ավարտելուց հետո, մենք բռնեցինք ետդարձի ճանապարհը, մեզ հետ տանելով Մոնթեի շնորհակալությունն ու երախտապարտ-ժպիտը: Ստեփանակերտում կրկին մեզ դիմավորեց Համլետը: Նա մեր արածի մասին հանգամանորեն հաղորդել էր ԼՂՀ կառավարությանը:

Որոշել էինք վերադառնալու ճանապարհին մտնել Ծուշի և մոմ վատել Ղազանչեցոց տաճարում: Ովքեր առաջին անգամ էին տեսնում տաճարը, հիացմունքից չէին կարողանում խոսել: Երբ դուրս էինք եկել Ծուշիից, Երևանյան դարպասների մոտ մի պահ կանգնեցինք, նայեցինք ետևում մնացող Ծուշիի, ապա Ստեփանակերտի կողմը ու հպարտ շարունակեցինք ճանապարհը:

Ադրբեջանը, օգտագործելով իր նյութական առավելությունը, 1992 թ. հունիսի 12-ին ռազմաճակատի հյուսիսարևելյան, արևելյան և հարավարևելյան հատվածներում անցնելով հարձակման, շուրջ 120 կմ երկարությամբ և կարողանալով ռազմական գործողությունների մեջ ներքաշել նախկին ԽՍՀՄ 4-րդ բանակի ուժերը, զրավեց Ծահուվյանի շրջանը և Մարտակերտի ու Ասկերանի շրջանների մի շարք գյուղեր: Հայկական ինքնապաշտպանական ուժերը հունիսի 18-ին կանգնեցրին թշնամու առաջխաղացումը և ռազմաճակատի որոշ հատվածներում իրենք անցան հակահարձակման:

— Փաստորեն,— մեկնաբանում է Համլետը,— 1992 թվականի հունիսից սկսած, մեր հանրապետությունը մտավ պաշտպանական



մարտերի շրջան, որը շարունակվեց մինչև տարվա վերջը: Այդ ամե-  
նի հետևանքով երկրամասում ստեղծվեց ծանր կացություն: Հակա-  
ռակորդն ընդհուպ մոտեցել էր Ասկերանին, առաջ էր շարժվում կի-  
չան-Նարեշտար-Արխավենո ճակատային հատվածում և փաստորեն  
Մարտակերտը Ստեփանակերտի հետ կապող մայրուղին հայտնվել  
էր փակման վտանգի տակ: Իսկ դա նշանակում էր Մարտակերտ-  
Ծափունյան ամբողջ տարածքի անջատում հանրապետությունից:

Այդ ժամանակաշրջանում մենք քիչ բացեր չունեցանք: Ամենից  
առաջ կյանքի ճանապարհի բացումը մի քանի օր ձգձգվեց, և այդ  
օրերին հրամանատարությունը քիչ ուշադրություն դարձրեց մյուս  
ճակատներին: Հայաստանի ռազմական օգնությունը նշանակալից  
չէր: Հետո, ամենակարևորը, ուշացավ հանրապետության բանակի  
ստեղծման գործընթացը, որի համար էլ, իրոք, պատժվեցինք: Հան-  
րապետության գոյությունը հարցականի տակ էր: Այդ զգացումը հա-  
վաքագրեց բոլոր ուժերին, և երկրամասի պաշտպանությունը դար-  
ձավ յուրաքանչյուրիս սուրբ գործը:

Հունիսի 18-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության և  
նախարարների համատեղ միջոցով ընդունեց մի որոշում, որով կոչ էր  
արվում զենք կրելու ընդունակ բոլոր շահումյանցիներին, բոլոր  
նրանց, ում համար թանկ է հայրենիքն ու ազատությունը, պարտի-  
զանական պայքար ծավալել թշնամու կողմից զավթված ամբողջ  
տարածքում<sup>103</sup>:

Բոլոր դեպքերում հանրապետության վիճակը մնում էր ծանր և  
լուրջ վտանգի տակ: Ելնելով դրանից, ԼՂՀ ԳԽ նախագահության և  
Նախարարների խորհրդի հունիսի 18-ի որոշմամբ ԼՂՀ տարածքում  
մտցվեց արտակարգ դրություն: Հանրապետության ամբողջ տա-  
րածքում հունիսի 20-ին անցկացվեց մասնակի զորահավաք՝ 18-40  
տարեկան զինապարտների, իսկ սպաները՝ մինչև 50 տարեկան,  
հատուկ պատրաստություն ունեցող կանանց՝ 19-ից մինչև 30 տարե-  
կան: Քաղաքացիներին արգելվեց առանց արտոնության մեկնել  
հանրապետությունից:

– Այդ օրերին էր, – հիշում է Համլետը, – որ տապալեցինք արցա-  
խահայությանը 70-ամյա ճորտության դատապարտած մարդու՝ Լե-

մինի արձանը: Ախր 1988-ի փետրվարյան ձյունախառն օրերին չոքել  
էինք այդ արձանի դիմաց, ասֆալտի վրա և Լեմին ու Գորբաչով  
էինք գոչում: Չէ, այլևս չէինք կարող հանդուրժել այդ արձանի գոյու-  
թյունը մեր քաղաքում:

Արթուր Մկրտչյանի ողբերգական մահից հետո նախագահի և  
նրա առաջին տեղակալի տեղերը մնում էին թափուր: 1992 թ. հունի-  
սի 2-ին սկսված ԼՂՀ ԳԽ նստաշրջանը հիմնականում պետք է  
գրադվեր նախագահի և նրա առաջին տեղակալի ընտրության հար-  
ցով: Նստաշրջանին մասնակցելու համար Երևանից եկել էին ՀՀ  
ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը, Վահան Ծիրխանյանը և  
պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը: ԼՂՀ ԳԽ նա-  
խագահ ընտրելու վերաբերյալ նրանց պահանջը հայտնի էր: Նս-  
տաշրջանը շարունակվեց մինչև հունիսի 6-ը: Նախագահի համար  
փակ քվեարկությամբ դրված էին Գեորգի Պետրոսյանի և Ռոբերտ  
Քոչարյանի թեկնածությունները: Քվեարկությունը կրկնվեց մի քանի  
անգամ, սակայն նրանցից ոչ մեկը չհավաքեց անհրաժեշտ քանակու-  
թյամբ ձայներ: Հետո առաջադրվեց Ծափեն Մեղրյանի թեկնածու-  
թյունը: Նա ևս չընտրվեց: Արցախի համար այդ դժվարին ժամանա-  
կաշրջանում չկարողանալ համաձայնության գալ և ԳԽ նախագահ  
ընտրել, անթույլատրելի էր: Հանրապետության բնակչությունը բա-  
ցասական գնահատեց Ազգային խորհրդի գործունեությունը:

Երկար վիճաբանություններից հետո որոշվեց Գերագույն խորհր-  
դի նախագահ ընտրել ԳԽ թափուր 19 տեղերը լրացվելուց հետո:  
Նիստն ընդհատվեց անբավարար թվով պատգամավորների ներկա-  
յության պատճառով: Սահմանային շրջաններում վիճակը վատթա-  
րանալու հետևանքով մի շարք պատգամավորներ շտապ մեկնել էին  
այնտեղ: Այդ նստաշրջանում որոշումներ ընդունվեցին հանրապե-  
տության քաղաքացիների զինվորական ծառայության, զինվորական  
հանցագործության, հանրապետության դրոշի մասին:

\* \* \*

Հակառակորդի ուժերն զգալիորեն գերազանցում էին Մարտա-  
կերտի ուղղությամբ: Մարտակերտը գրավելու համար թուրքերն օգ-

տագործում էին տանկեր, գրահամեքենաներ և օդուժ: Հայկական ինքնապաշտպանական ուժերը ստիպված նահանջեցին և հուլիսի 5-ին Մարտակերտը հանձնվեց թշանամուն: Այդ նույն գիշերը Քելբա-չարի կողմից Մարտակերտի շրջան ներխուժեցին ազերիների զորամիավորումները, գրավեցին Հաթերքն ու հրկիզեցին այն: Հայկական ուժերը հաջողություններ ունեցան Ասկերանի շրջանում՝ ազատագրելով մի շարք գյուղեր:

Հայաստանում իշխանությունը զավթած ՀՀԾ-ականները փորձում էին իրենց կամքը թելադրել արցախահայությանը: Հայաստանի Գերագույն խորհրդում բազմիցս քննարկվեց Ղարաբաղի հարցը: Ծոշափվեց Ծախումյանի շրջանի հանձնման հարցը: Նախագահի անվտանգության գծով խորհրդական Աշոտ Մանուչարյանը և պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը փորձեցին բուրքին համոզել, թե իբր Ծախումյանի հանձնումը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ Ռուսաստանը Ադրբեջանին է հանձնել երկու մոտոհրաձգային դիվիզիայի տեխնիկան: Այս պնդեցին, թե տվյալ ժամանակաշրջանում Ծախումյանը հանձնելու մեղավորներ փնտրելու պահանջը ոչ մի օգուտ չի բերի:

Հայաստանի խորհրդարանը Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ չունի հստակ կարծիք: Նստաշրջանում առաջարկվեցին իրարամերժ տարբերակներ: Երդվյալ ՀՀԾ-ական Աշոտ Բլեչյանը հայտարարեց, թե Ղարաբաղի հիմնահարցի լուծումը ԼՂՀ-ի ստեղծման կամ առավել կս միացման ճանապարհով՝ «Հայաստանի ուժերից վեր է» և որ իբր հակառակ դեպքում կասկածի տակ կորվի Հայաստանի Հանրապետության ապագան: Բլեչյանը՝ ըստ էության, պաշտպանում էր Ադրբեջանի ժողովրդական ճակատի դիրքորոշումը՝ «մշակութային ինքնավարության» կարգավիճակով Ղարաբաղը հանձնել Ադրբեջանին: ՀՀԾ-ական Էդվարդ Եգորյանը արցախահայությանը մեղադրեց, թե իբր նրանց ղեկավարությունը չի լսում և չի ենթարկվում Հայաստանի ղեկավարությանը: Այնուամենայնիվ, Ղարաբաղի վիճակին նվիրված հարցի նախնական քննարկումն ավարտվեց՝ ըն-

\* 2000 թ. դեկտեմբերին Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի դատարանի վճռով «լուրաշ» Բլեչյանը դրամական խոշոր չափերի հափշտակումներ կատարելու համար դատապարտվեց յոթ տարվա ազատազրկման:

դունելով այսպիսի բովանդակությամբ որոշում. հանձնարարել Արցախի անկախ պետականության, արտաքին հարաբերությունների, պաշտպանության և ներքին գործերի հարցերի մշտական հանձնաժողովներին՝ նախապատրաստել հարցի քննարկման հաջորդ փուլը:

Հենց այդ օրերին Հոտնում տեղի ունեցած Միակի խորհրդածողովի նախապատրաստական բանակցությունների ընթացքում Արցախի բարդության վերաբերյալ առաջ քաշվեցին մի շարք առաջարկություններ: Այդտեղ Հայաստանի պատվիրակությունը մեղադրեց Վաչինգտոնին և Մոսկվային ԼՂՀ-ի հանդեպ սանձազերծած ագրեսիայի համար Ադրբեջանի վրա բարեբար ճնշում չգործադրելու մեջ:

Այդ ամենի մասին խոսվեց հունիսի 22-ին սկսված Հայաստանի Գերագույն խորհրդի արտակարգ նստաշրջանում, որի աշխատանքներին մասնակցեցին ոչ միայն Արցախից ընտրված պատգամավորները, այլև ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամները: Փարիզից հենց նոր վերադարձած նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր ելույթում մեղադրեց Լեոնային Ղարաբաղի ղեկավարությանը, իբր նրանք ինքնագլուխ որոշումներ են կայացնում և անտեսում Հայաստանի կառավարության և տարբեր մարմինների տեսակետները: Օրինակ բերեց Եվրախորհրդի Հոտնի խորհրդածողովին Ղարաբաղից պատվիրակություն չուղարկելը: Նրա ասածից բխում էր այն, որ արցախցիների անհաջողությունների պատճառը այդ չարաբաստիկ Հոտն չգնալն էր: Արցախից պատգամավորները հասկացան, որ պարոն Լևոնը միանշանակ խուսափում էր պատասխանատվությունից: Նրանք շատ լավ էին հասկանում, որ նրա մեղադրանքը ուղղված էր ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի դեմ: Հետո ինչ, թե Գեորգին դաշնակցություն կուսակցության անդամ է: Այդ նստաշրջանում ելույթ ունեցավ նաև Գեորգին, մի քանի խոսք ասաց ու հեռացավ նիստերի դահլիճից:

ՀՀ ԳԽ նստաշրջանում ելույթ ունեցավ նաև Համլետ Գրիգորյանը: Նա քննադատեց հանրապետության լրատվական մարմինների անգործությունը, հեռուստատեսության ու նրա ղեկավար Սամվել Գևորգյանի դատապարտելի թմրած վիճակը, կոչ արեց միավորել Հայաստանի և Արցախի ղեկավար մարմինների ջանքերը, բացառել

առանձին, թեկուզ և շատ հարգելի մարդկանց միահեծան դերը: Նա անսրող խոսեց Երևանում Արցախին վերաբերող հարցեր քննելիս առանձին ընկերների (հատկապես ՀՀԾ-ականների) շահերը և ոչ թե ժողովրդի տրամադրությունը նկատի առնելու ցավը: Համիլտն իր խոսքն ավարտեց այսպես. «Ես միշտ էլ այն կարծիքին եմ եղել, որ Հազաստանի իրական անկախությանը կարող ենք հասնել ԼՂՀ ազատագրության ճանապարհով»<sup>104</sup>:

Պատգամավոր Գագիկ Հովհաննիսյանն իր ելույթում շեշտեց, որ Հայաստանը չունի Արցախի նկատմամբ ծրագրված ու հետևողականորեն կիրառվող գործունեություն: ՀՀ ղեկավարությունը միակողմանի և ծուռ հայացքով է նայում Արցախին: Ինչպես բացատրել, երբ Թեհրանում ու Հոնոլուսում ընդունվում են հակաարցախյան որոշումներ, կամ խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքցյանը հայտարարում է, թե մինչև օրս մեզ համար պարզ չէ Ծախումյանի շրջանի կարգավիճակը: Գագիկ Հովհաննիսյանը պահանջեց ճանաչել ԼՂՀ, նրա հետ կնքել ռազմաքաղաքական պայմանագիր: Նա նաև պահանջեց ՀՀ կառավարության հրաժարականը: Իսկ Աշոտ Նավասարդյանը, պաշտպանելով բլեյանեգորական տեսակետը, գտնում էր, որ Արցախը պետք է նվիրաբերել Ադրբեջանին, այսպես կոչված, մշակութային անկախության անվան տակ: Էդվարդ Եգորյանը ազատություն տալով իր անգուսպ «մտքերին», ի վերջո հանգում է այն բանին, որ Հայաստանը կընդունի ամեն մի որոշում, ինչ որ կընդունի ԼՂՀ իշխանությունը, իսկ դա պետք է պարտավորեցնի, որ նրանք որևէ որոշում ընդունելուց առաջ այն մեզ հետ համաձայնեցնեն:

Հետո ելույթ ունեցան շատերը: ԼՂՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լևոն Մելիք-Ծահնագարյանը մեջ, որ ՀՀ ԳԽ նստաշրջանը ցույց է տալիս, որ այստեղի բարբերը փոխանցվել են նաև ԼՂՀ Գերագույն խորհրդին և անպայման կարող են հասցնել ամենաաղետավոր հետևանքների: Բայց դա դեռ դուրս չի ելել Գերագույն խորհրդի սահմաններից, չեն վարակել ժողովրդին ու կոմյուներին: Ամենից առաջ պետք է ապահովել ժողովրդի միասնությունը: Այնուհետև նա մշտն է, որ Հոնոլուսի խորհրդաժողովին Ղարաբաղի չմասնակցելը չպետք է նակատագրական երևույթ համա-

րել: Ասենք գնացել ենք. այնտեղ ի՞նչ պիտի անեինք: Դժվար է հասկանալ Էդվարդ Եգորյանին, որը մեզմից պահանջում է միակողմանի ու անմոռնչ ենթարկվել ՀՀ ղեկավարությանը, նույնիսկ երբ մեզ հանձնում են Ադրբեջանի մարդակերների տնօրինությանը:

Աշոտ Բլեյանը Ծուշիի և Լաչիհի նվաճումը համարում էր վճարական սխալ, որի համար անընդհատ պիտի վճարենք: Մեր խնդիրն է արցախցուն պահել Արցախում, որից հետո կարգավորել հարաբերությունները հարևանների հետ, մասնավաճ, երբ գիտենք Թուրքիայի տրամադրությունն ու հնարավորությունները:

Արկաղի Մանուչարովը գտնում էր, որ ՀՀ ԳԽ անհասպաղ պիտի ճանաչի ԼՂՀ, նրա պաշտպանության աջակցությունը դարձնի իր գերագույն խնդիրներից մեկը:

Միանգամայն սկզբունքային և անառարկելի էր ակադեմիկոս Հրաչիկ Միմնյանի ելույթը: Նա մերկացրեց Հայաստանի իշխանությունների, մասնավաճ, նախագահի անգործությունն ու ապիկարությունը: Նա պնդեց, որ Արցախի հարցը պիտի լուծվի միայն զինված դիմադրությամբ, հետևապես պետք է ամեն գնով պաշտպանենք նրա ինքնապաշտպանությունը: Նախագահի հայտարարությունը, թե հրաժարվում է Արցախի խնդրից, որովհետև իբր թե այն տանում է դեպի մեծ պատերազմ, որը կբերի հայ ժողովրդի վերջը, լիովին ամբողջավարություն է: Իսկ ո՞վ պիտի պատասխան տա Ազատության հրապարակում նրա արած կոչերի համար:

Բորեերտ Բոչարյանը հայտնում է այն միտքը, թե իբր ՀՀ նախագահի և ընդդիմության՝ Արցախի վերաբերյալ տեսակետները իրար չեն մերժում, այլ լրացնում են միմյանց և կարելի է հաշտության գալ:

— Իրադրությունը բարդանում էր, — մեկնաբանում է Համիլտն: — Արցախցիներս ստիպված հեռացանք նիստերի դահլիճից: Մտածում էինք՝ թող որոշում կայացնեն իրենց խղճին համապատասխան: Սակայն ոչ մի որոշում էլ չընդունեցին, հետաձգեցին հաջորդ երկուշաբթի օրվան: Միայն, ի վերջո, հուլիսի 8-ին, ընդունվեց այսպիսի որոշում: «ՀՀ-ի համար անընդունելի է միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ ԼՂ Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը ստիպված էր հուլիսի 1-ին որոշում ընդունել մասնակցելու Եվրախորհրդարանի Մինսկի խմբի՝ Լեոնային Ղարաբաղին նվիրված խորհրդակցությանը: Հոսմ մեկնեցին ԼՂՀ ԳԽ նախագահության անդամներ Բորիս Առուշանյանը և Հրանտ Խաչատրյանը: Այնտեղ որոշում ընդունվեց պատերազմը դադարեցնել մեկ ամսով, սկսած հուլիսի 9-ից, որպեսզի հնարավոր լիներ հաջող կազմակերպել Մինսկի խորհրդատուական նախապատրաստումը: Սակայն, ինչպես ցույց տվեց հետագա ընթացքը, Ադրբեջանը չիրագործեց այդ որոշումը, իսկ ԱՄՆ-ն էլ հայտարարեց, թե դադարեցնում է օգնությունը Ադրբեջանին, եթե նա չիրաժարվի Լեոնային Ղարաբաղի նկատմամբ ուժ գործադրելու քաղաքականությունից:

Հոսմի հանդիպումներին մասնակցող ԼՂՀ պատվիրակությունը օգոստոսի 4-ին հեռանում է բանակցությունների սեղանից, երբ հայտնի է դառնում, որ միջնորդ իրավական կազմը սկսել էր խուսափել Ղարաբաղի պատվիրակությանը հատուկ կարգավիճակ տալու խոստումը կատարելուց:

1992-ի օգոստոս ամիսը բավականին ծանր էր: Օգոստոսի 11-ին հանրապետության նախարարների խորհրդի նախագահ Օլեգ Եսայանը դիմեց Գերագույն խորհրդի նախագահությանը՝ իր հրաժարականի հարցը քննարկելու խնդրանքով: Իր այդ քայլը նա բացատրում էր իշխանության գոյություն ունեցող կառույցների և ռազմական իրավիճակի պահանջների անհամապատասխանությամբ: Նա առաջարկեց հանրապետությունում ռազմական դրություն մտցնել մինչև 1992 թվականի վերջը: Նաև առաջարկեց ստեղծել Պաշտպանության խորհուրդ և ԼՂՀ Գերագույն խորհրդի ու Նախարարների խորհրդի լիազորությունները ժամանակավորապես հանձնել այդ մարմնին: Իրոք, հարցը շատ լուրջ էր: Գերագույն խորհրդի նախագահությունում հանգամանորեն քննարկվեց այդ առաջարկությունը: Մինչ վերջնական որոշում կընդունեին, ԼՂՀ Գերագույն խորհրդի օգոստոսի 12-ի հրամանագրով հանրապետությունում հայտարարվեց ռազմական դրություն վեց ամիս ժամկետով:

Այդ հրամանագրի համաձայն հայտարարվեց 1947-1974 թվա-

կաններին ծնված արական սեռի քաղաքացիների գորահավաք և առաջարկվեց միջոցառումներ ձեռնարկել մեկ շաբաթվա ընթացքում գորահավաքի ենթակա, ԼՂՀ-ի սահմաններից դուրս գտնվող բոլոր քաղաքացիներին վերադարձնելու համար: Նաև նշվեց, որ ընդունված որոշման մասին երեք օրվա ընթացքում տեղեկացնել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին: Օգոստոսի 13-ին ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը դիմեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին՝ խնդրելով նրա աջակցությունը՝ վերադարձնել ԼՂՀ-ի բոլոր այն բնակիչներին, որոնք ենթակա են գորակոչման ու հրաժարվում են զինվորական ծառայությունից, ինչպես նաև արգելել Հայաստանից այլ պետություններ արցախցիների մեկնումը<sup>105</sup>:

ԼՂՀ ԳԽ նախագահության և կառավարության համատեղ նիստը օգոստոսի 15-ին ընդունեց կառավարության նախագահ Օլեգ Եսայանի հրաժարականը և ստեղծեց Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ) Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ: Պետական կառավարման այդ կառույցի ստեղծման նպատակն էր կենտրոնացնել հանրապետության հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարումը, բոլոր հնարավորությունները և միջոցները ենթարկել պատերազմական կացությանը: Միայն այդ ձևով էր հնարավոր ապահովել հանրապետության պաշտպանությունը: ՊՊԿ-ին հանձնվեցին Նախարարների խորհրդի բոլոր գործառնությունները, ինչպես նաև ԳԽ լիազորությունների մի զգալի մասը: ԳԽ նախագահությունը պիտի զբաղվեր օրենսդիր գործունեությամբ և արտաքին քաղաքականության հարցերով, իսկ ՊՊԿ-ի վրա դրվում էին տնտեսական, պատերազմական և մի շարք այլ հարցեր: Ընդունվում է նաև այսպիսի սկզբունք. եթե ՊՊԿ-ի ինչ-որ որոշումներ չհամապատասխանեին նրան տրված լիազորություններին, ապա դրանք կարող էին բեկանվել ԳԽ-ի կողմից:

ՊՊԿ-ի ամենաանհրաժեշտ խնդիրը հանդիսացավ հանրապետության զինված ուժերի վերակազմավորումը: Անժխտելի է, որ միայն մարտունակ, կարգապահ և հայրենիքին նվիրված բանակն է ի վիճակի ազատագրել և պաշտպանել հայրենի հողը: Պայքարի ֆի-

դայական ժամանակն անցել էր, հարկավոր էր ունենալ իր բոլոր պահանջներին համապատասխան բանակ: Հանրապետության տարածքում ստեղծվեց վեց պաշտպանական շրջան: Զևավորվում են գումարտակներ, վաշտեր, դասակներ և ջոկեր: Ռազմական գիտությունը ուսուցանում է, որ միայն մարտական ստորաբաժանումների առկայության պայմաններում է հնարավոր ռազմական գործողություններն իրագործել միասնական, կենտրոնացված հրամանատարության ներքո: Սակայն պատերազմական պայմաններում, երբ չկա համապատասխան փորձառու սպայական կազմ, մարտերում կոփված զինվորականություն, երբ հանրապետության գրեթե երրորդ մասը զավթվել էր թշնամու կողմից, դժվար էր իսկական բանակ ստեղծելը: Նույնիսկ այդ պայմաններում արցախահայությունը չհուսահատվեց, հավաքագրեց իր բոլոր ուժերն ու հնարավորությունները և դիմակայեց մի քանի անգամ գերազանցող հակառակորդին: Արցախում գլխավոր հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանը, որը դեկավարում էր Մարտակերտի ուղղությամբ նահանջը, փորձում էր կայունացնել դիրքերը: Որոշ մասնագետներ այն կարծիքին են, որ Ծուշին ազատագրած և կյանքի ճանապարհ անցած հրամանատարների մի ամբողջ համաստեղություն իրավունք չունեն տարվել միայն հաղթանակով և մի պահ ուշադրությունից դուրս թողնել հյուսիսային ռազմաճակատը: Ծուշին ազատագրելուց հետո չորս օր անընդհատ կերուխում էին անում: Մի ուրիշ անգամ դա արժեր, իսկ այդ ժամանակ հակառակորդը օգտվեց իրեն տրված այդ դադարից: Եթե միմյև էլ չիբելի նախագահ ընտրվելը ռուսական բանակն օգնում էր Ադրբեջանի ուժերին, ապա 1992 թ. օգոստոսի կեսերին պարզ դարձավ, որ այդ օգնությունը ցույց էր տրվում ներքին կարգով՝ որպես վարձկաններ: Էլ չիբելը Ադրբեջանից դուրս քշեց ռուսական բանակը, առանց հասկանալու, որ դրանով իսկ կորցնում է Լեռնային Ղարաբաղը: Այսպիսով, Ծահումյանում և Մարտակերտում կրած պարտությունները, որոնք, մասնավորապես, «պայմանավորված էին Հայաստանի քաղաքական իշխանության պարտվողական և միևնույն ժամանակ հակառուսական տրամադրվածությամբ» բարոյալքեցին ֆիդայական շարժումը, նվազեցրին երկրապահ ջոկատների մարտունակու-

թյունը և խուճապ առաջ բերեցին ռազմաճակատի որոշ հատվածներում<sup>106</sup>: ԼՂՀ ՊՊԿ-ն հրամանատարության առաջ խնդիր դրեց կարճ ժամանակամիջոցում ուղղել այդ բոլոր բացերը ու նախ կայունություն հաստատել ռազմաճակատում, ապա նախաձեռնել հակահարված և ազատագրել հակառակորդի կողմից գրավված տարածքները:

Բայց և այնպես չէր վերանում հանրապետությունում տիրող լարվածությունը: Մարտակերտի շրջանում անընդհատ դիրքային փոփոխություններ էին տեղի ունենում: Ասկերանի, Մարտունու և Հադրութի շրջանների մի շարք բնակավայրեր, ինչպես և Ստեփանակերտը սխառեմատիկ ոմբակոծվում էին հակառակորդի ռազմական կետերից: Միայն օգոստոսի 5-ին թշնամու կողմից Ստեփանակերտի ոմբակոծության ժամանակ զոհվեցին 31 հոգի, 75-ն էլ վիրավորվեցին: Վիճակը ծանր էր նաև Լաչինի միջանցքի երկու կողմերում: Միջանցքի բացումից հետո հակառակորդը ջանք չէր խնայում այն փակելու համար: Դեռևս հուլիսի 16-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանով արտակարգ դրություն էր հայտարարվել Գորիսում և այնտեղ պարետ էր նշանակվել Պարույր Հայրիկյանը: Մի փոքր ուշ, հոկտեմբերի կեսերին, Լաչինի միջանցքը դարձել էր պատերազմական գործողությունների ամենաթեժ տեղամասերից մեկը: Թշնամին վճռել էր ինչ գնով էլ լինի գրավել մարդասիրական միջանցքը: Հոկտեմբերի 14-ին անեղ մարտեր սկսվեցին միջանցքի հյուսիսում՝ Ղոչազ լեռան ուղղությամբ: Պաշտպանության բանակի հարվածների տակ թշնամին նահանջեց, և այսպիսով ապահովվեց միջանցքի պաշտպանությունը:

Ծահումյանի շրջանում ծավալվում էին պարտիզանական գործողություններ, որը գլխավորում էր Ծահեն Մեղրյանը: Հայ հայդուկները ցուցաբերում էին սխրանքներ Գյուլիստանի շրջակայքում: Օգոստոսի 21-ին ՀՀԴ Հյուսիսային Արցախի կոմիտեն հայտարարեց, թե «մարտական հայդուկային խմբերն արդեն գործում են Ծահումյանի անտառներում և լի են վճռականությամբ»: Իսկ օգոստոսի 28-ին Ծահումյանի շրջանի ռազմական շտաբը հայտարարեց, թե հայդուկային ջոկատները ազատագրել են Գյուլիստանը:

ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը բավականին համարձակ

էին գործում Մարտունու շրջանում Մոնթե Մելքոնյանի հրամանատարությամբ: Հանրապետության ինքնապաշտպանության ուժերը սեպտեմբերի 4-ին գրավեցին Ավդալ և Գյուլափլու գյուղերը, որոնք սեպի պես խրված էին ԼՂՀ Մարտունու և Ասկերանի տարածքների միջև, և որտեղից անընդհատ ուժերով եր Ստեփանակերտը: Այդ օրերին ազատագրվեցին նաև Նախիջևանի, Փիրջամալ և Արանգամիս գյուղերը, իսկ հոկտեմբերի 2-ին Մարտունու ինքնապաշտպանական ուժերը ազատագրեցին Ամիրանլար, Մուղանլու և Կուրոպատկինո գյուղերը, որոնք ադրբեջանական ռազմական վերջին հենակետերն էին այդ շրջանում: Հոկտեմբերի 12-ին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը հաջողությունների հասան Հաղորթի հարավային տարածքում՝ իրենց հսկողության տակ առնելով Խժաբերդ գյուղի մոտ գտնվող Թոփաղաչ լեռը և հոկտեմբերի 14-ին բացեցին Հաղորթ-Գորիս ճանապարհը:

Վիճակը մնում էր ծանր Մարտակերտի շրջանում, մասնավորապես շրջանի հյուսիսային մասում: Հակառակորդը փորձում էր այդ կողմից ճանապարհ բացել դեպի Ստեփանակերտ: Օգոստոսյան այդ տագնապալից օրերին ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը հանդես եկավ հեռուստատեսությամբ և կոչ արեց կազմակերպել հատուկ, մահապարտների ջոկատներ: Արձագանքելով այս կոչին, Հայաստանի տարբեր շրջաններից Երևան ներկայացան կոփող տղաները: Նրանք հավաքվելով մայրաքաղաքային զնդում, ունենում են կարճատև պարապմունքներ և պատրաստվում մեկնել Ղարաբաղի Մարտակերտի շրջան, որտեղ դարաբաղիների հետ պետք է արգելափակեին ազերիների հետագա առաջխաղացումը: Մահապարտներից կազմավորվող այդ զորամիավորումներին շնորհվել էր «Արծիվ» անվանումը: «Արծիվ»-ի առաջին ջոկատը, որը բաղկացած էր 150 մարտիկներից, օգոստոսի վերջին մեկնեց ռազմաճակատ: «Արծիվ» երկրորդ ջոկատը Մարտակերտի ռազմաճակատ մեկնեց սեպտեմբերի երրորդ տասնօրյակի սկզբին: Մահապարտների ջոկատները ընդհանրապես Արցախի ամենաճգնաժամային պահին կարևոր դեր խաղացին և ԼՂՀ ռազմական ուժերի հետ միասին կարողացան խափանել ազերիների հետագա առաջխաղացումը և վերացնել Ստեփանակերտի մասնացող վտանգը:

\* \* \*

1992 թ. օգոստոսի երկրորդ կեսին կրկին Արցախում էի: Մինչ այդ, հուլիսի կեսերին երկու ուղղաթիռ սննդամթերք և պաշտպանության միջոցներ էի տարել Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ուժերի համար: Այն ժամանակ Մոնթեին չէի տեսել, ուղղաթիռները վայրէջք էին կատարել Գիշի գյուղի մոտ: Հենց այդտեղ էլ տարված ապրանքները հանձնել էի ինքնապաշտպանության ուժերի ներկայացուցչին ու անմիջապես վերադարձել Երևան: Մոնթեն ուղիակապով խնդրել էր վառելանյութ հասցնել: Ծիծաղելով՝

– Պարո՛ն Աբրահամյան, հասկանո՞ւմ ես, մեր թանկերը ծարավ են...

Այս անգամ հիմնականում տարանք սոլյարկա և բենզին: Գնալուց Ստեփանակերտ չմտանք, ուղիղ գնացինք Մարտունի: Մոնթեի հետ մեր գրույցը քիչ երկար տևեց և ավելի գործնական էր:

– Պարո՛ն Աբրահամյան, մենք շատ կարիք ունենք հեռադիտակների, հակաթանկային ականների, տարբեր տեսակի փամփուշտների: Բայց ամենից շատը՝ վառելիքի...

Երևան վերադառնալուց նրա խնդրանքը հաղորդեցի «Արցախ» հայրենակցականի նախագահ Յուրի Հովհաննիսյանին և Ջորի Բալայանին: «Վարանդա» հայրենակցական ընկերության ֆինանսական միջոցները չէին հերիքի այդ ամենը ձեռք բերելու համար: Առանց այն էլ մեր ընկերությանը բավականին ֆինանսական միջոցներ էր տրամադրում «Արցախ» հայրենակցականը: Մոնթեն առանձնապես շատ ուրախացավ, երբ «Արցախ» հայրենակցականում Ջորի Բալայանը նրան հանձնեց ամերիկյան սիստեմի հեռադիտակ: Այդ ժամանակ էլ նա իր օգնական Ժոզեֆի և տիկնոջ՝ Սեդայի հետ եկավ «Վարանդա» և շնորհակալություն հայտնեց խոստումս կատարելու համար:

Ինչևհետև: Համլետի հետ հեռախոսով պայմանավորվել էինք հանդիպել Հերհերում: Մոնթեն ինձ մեքենայով Մարտունուց ուղարկեց Հերհեր: Ճանապարհելուց առաջ ասաց.

– Իմ ջերմ ողջույնները հաղորդեցեք պարոն երեսփոխանին:

Համլետն արդեն սպասում էր ինձ: Հերհերից դուրս եկանք իրիկամաստին: Մարտունու և Ֆիզուլու կողմերից կրակոցները չէին լուռ: Կարմիր ջուկայի կենտրոնում Համլետը մեքենան կանգնեց-



րեց: Մի քանի օր առաջ, օգոստոսի 10-ին, Ֆիզուլու շրջանի Ղաջար գյուղի տարածքից, հրանոթներից և տանկերից հրետակոծել էին ավանը, արձակվել էր մոտ 50 արկ, որոնք առաջ էին բերել բավականին ավերածություններ: Մեծ վնաս էր կրել մանավանդ գինու գործարանը: Ավանի և շրջակա գյուղերի բնակչությունը խիստ նոսրացել էր, կանանց, երեխաների և ծերունիների մի մասը տեղափոխվել էր Ստեփանակերտ. Օուշի, Երևան և հանրապետության խորքի գյուղերը:

Մի 20 հոգի հավաքվեցին մեր շուրջը և սկսեցին տարբեր հարցեր տալ: Համէտը նրանց հարցերին պատասխանում էր հանգիստ ու վստահ, մեկ-մեկ էլ կատակում ու բարձրացնում նրանց տրամադրությունը:

– Դիմացեք, քիչ է մնացել: Հավատացեք, օձի գլուխը անպայման կջախջախենք, – առաջ ու ճամփա ընկանք:

Մի որոշ ժամանակ լուռ էինք: Երբ անցանք Սարուշենը, հարցրի.

– Այս նոր միջոցառումները որքանով են նպատակահարմար:

– Ծատ, – անմիջապես պատասխանեց, մի քիչ լռեց, ապա շարունակեց: – Այլ կերպ էլ հնարավոր չէ: Հիմա Գերագույն խորհրդում հիմնականում օրենքներ ենք մշակում և օգնում ՊՊԿ-ին: Նախագահության անդամներս մեկնում ենք ռազմաճակատ, օգնում զինակոչի աշխատանքներին, բարձրացնում մարդկանց բարոյական ոգին: Երեկ ես Մարտակերտի ռազմաճակատում էի: Այնտեղ դրությունը շատ է ծանր, բայց չենք վհատվում: Այս օրերին քիչ ենք լինում Երևանում, կարևորն այստեղ է: Մենք մարտնչող ժողովուրդ ենք, ռազմական վիճակում գտնվող հանրապետություն: Իսկ դա շատ բան է ասում: Ինչքան հոգսեր ունենք կապված բնակչության վիճակի բարելավման, ավերվածները վերականգնելու, ձեռնարկությունները կյանքի կոչելու, հանրապետության պաշտպանությունը ապահովելու, թուրքին մեր հողից դուրս քշելու և բազմաթիվ այլ հարցերի հետ:

Քիչ հետո հարցնում եմ.

– ՊՊԿ-ի պաշտոնում Ռոբերտ Քոչարյանից ավելի հարմար թեկնածու չկա՞ր:

Մի քիչ լուռ մնալուց հետո նա պատասխանեց.

– Ռոբերտից ավելի հարմար թեկնածու որոնելը իմաստ չունի.

մանավանդ, որ դա նախագահ Լևոնի սրտովն է:

Ստեփանակերտում որոշ գործեր ունեի: Հաջորդ օրն ավարտեցի և ուղղաթիռով վերադարձա Երևան:

\* \* \*

Արցախը շարունակում էր մարտնչել: Արցախցին մարտերում կոփվել էր, ամրապնդվել: Նա հավատում էր իր հաղթանակին, իր վաղվա լուսապայծառ օրվան: Նա հազարապատիկ համոզված էր, որ իր գործն արդար է: Թող ով ինչ ուզում է ասի, թող Բաբուն և Անկարան ավելի շատ աղմկեն: Միևնույն է, հարցը պիտի վճռվի ռազմի դաշտում: Ուժ ունես, բռունցք ունես, ցուցադրիր: Միայն այդ նախապահով կհասնես անկախության: Սա դարերի և պատմության դավանանքն է: Այրելու և գոյատևելու համար ամոթ է մտածել նահանջի մասին: 1992-ի հունվարից մինչև օգոստոսի վերջը Ադրբեջանը տվել է 5 հազար զոհ, վիրավորվել են 18 հազարը, դասալիք են դարձել շուրջ 20 հազար ասկյար: Այդ ժամանակաշրջանում Ադրբեջանի բանակը կորցրել է 115 հրասայլ և մեկ տասնյակից ավելի ինքնաթիռ ու ուղղաթիռ<sup>107</sup>: Սա է այդ օրերի վիճակագրությունը:

1992 թ. օգոստոսի 26-ին բազմաճակատ ստեփանակերտցիներ իրենց վերջին հրաժեշտը տվեցին օգոստոսի 24-ին Դրմբունի ազատագրության համար մղված մարտում հերոսաբար զոհված Աշոտ Հմայակի Ղուլյանին (Բեկոր), մի արցախցու, որը կովել է Գետաշենում, Ծախումյանում, մասնակցել Մալիբեյլուի, Խոջալուի, Օուշիի ազատագրության համար մղված մարտերին: Արցախցիներն ահա այսպես հպարտ ու ձիգ են հրաժեշտ տալիս իրենց արժանի զավակներին: Այդպես էլ երևանցիները երկու շաբաթ անց հրաժեշտ տվեցին սեպտեմբերի 11-ին Վաղուհասի մոտ իր հայրենասիրական պարտքի կատարման ժամանակ զոհված, ծննդով արցախցի, ՀՀ ԳԽ պատգամավոր, լրագրող, Ղարաբաղյան շարժման անմնացորդ նվիրյալ. «Սումգայիթյան ողբերգություն» գրքի հեղինակ Սամվել Սարգսի Ծախմուրադյանին: Այդպես է, բոլոր զոհված ազատամարտիկներին, հայրենիքի պաշտպանության համար նահատակվածներին թե՛ Արցախում և թե՛ Հայաստանում դեպի անմահություն են նախապահում հազարագույն ծով ծաղիկներով:

Այդպես է...

1992 թ. սեպտեմբերի 2-ին լրանում էր ԼՂՀ ստեղծման մեկ տարին: Այդ օրերին «Ազատամարտը» ազատ արտահայտվելու հնարավորություն ընձեռեց Արցախի իշխանությունների ներկայացուցիչներին: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը մշտն է, թե Հայաստանը պետք է լավ հասկանա, որ այս պատերազմը ճակատագրական է, և որ Արցախում է վճռվում հայ ժողովրդի բխախորհը:

Համլետ Գրիգորյանը շեշտում է, որ շատ ցավալի է, երբ այս օրը դիմավորում ենք այսպիսի անելաճեղի պայմաններում և դժվար է լավ բան ասել: Հայաստանում տեղի ունեցող բացասական երևույթները տարածվում են մեկ մեզ մոտ՝ Ղարաբաղում: Իմ ցանկությունն է՝ Հայաստանը շուտ ոտքի կանգնի և ավելի շատ հոգատարություն ցուցաբերի Արցախի նկատմամբ:

Իրենց սրտի խոսքն ասացին նաև ԼՂՀ ԳԽ պատգամավորներ Վլադիկ Հակոբյանը և Հրանտ Խաչատրյանը<sup>108</sup>:

Պատերազմի բոցերից ծնված ԼՂ Հանրապետության տնտեսությունը ծանր օրեր էր ապրում: 1989 թվականից մինչև 1992-ի ամառվա վերջը հանրապետության տնտեսությունը կրել էր 336 միլիոն 802 հազար ռուբլու վնաս, բնակելի ֆոնդի կորուստները կազմել են շուրջ 516 հազար քառակուսի մետր: Լիովին կազմալուծվել էր արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը: Հանրապետության տնտեսությունն սկսեց մի փոքր կարգավորվել Լաչինի միջանցքը բացվելուց հետո: Որոշ ձեռնարկություններ սկսեցին աշխատել, սակայն կենսական մշակակություն ունեցող մսի և կաթի կոմբինատները, հացի գործարանը չէին աշխատում: Այլուր չկար, կաթի փոշի չկար: Ակնկալվում էր Հայաստանից օգնություն: Ինչ հնարավոր էր՝ կոնյակի սպիրտ, գինի, օղի, միս և այլն, հանրապետությունից դուրս էին տանում, առանց թույլտվության: Մի տեսակ անիշխանություն էր: Կովոդ հանրապետությունից այդ ապրանքների, որոնցով շատ հարցեր կարելի էր լուծել, դուրս տարվելը, պարզապես հանցագործություն էր: Մինչև սեպտեմբեր Ստեփանակերտում յուրաքանչյուր անձ ամսական ստանում էր երկու կիլոգրամ ալյուր: Սեպտեմբերից սկսած, Ստեփանակերտի յուրաքանչյուր քաղաքացի ամսական ստանում էր 400-ական գրամ շաքար և արևածաղկի յուղ, օրական 300 գրամ հաց: Իշխանությունները հոգում էին նաև գյուղերի բնա-

կիչների և մտավորականության մասին:

Որոշ քայլեր կատարվեցին նաև հանրապետության մշակութային կյանքի աշխուժացման ուղղությամբ: ԳԽ-ում Համլետի ղեկավարած հանձնաժողովը ցուցում ստացավ զբաղվել բուհական ծրագրերի վերամշակումով: 1992 ուստարվա սկզբին Ստեփանակերտում գործում էին Երևանի պոլիտեխնիկական և Կիրովականի մանկավարժական ինստիտուտների մասնաճյուղերը: Պարապմունքներն սկսվեցին սեպտեմբերի 15-ից: Համլետն առաջարկեց այդ երկու մասնաճյուղերի բազայի վրա ստեղծել Արցախի համալսարան: Այդ մասին, ինչպես ասվել է, դեռևս առաջարկել էր նույն տարվա հունվարին: Հիմա հարցը հասունացել էր: Ուստի լայն աշխատանք ծավալվեց համալսարանի ստեղծման ուղղությամբ: Դրանում, անշուշտ, մեծ է Համլետ Գրիգորյանի ծառայությունը:

1992 թ. հոկտեմբերի 13-ին տեղի ունեցավ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը ԼՂՀ ԳԽ նախագահության անդամների և նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի հետ: Նախագահության անդամներից բոլորից «չարացածը» Համլետ Գրիգորյանն էր: Նրա խոսքը հետակ էր և ուղիղ: Նա շոշափեց Արցախում տիրող ընդհանուր վիճակը, Հայաստան-Լեռնային Ղարաբաղ հարաբերությունների բազմակողմանի զարգացումը և ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերն ամրապնդելուն առնչվող խնդիրները: Թե Համլետը և թե ԳԽ մյուս պատգամավորները վստահություն հայտնեցին, որ ԼՂՀ ընդհանուր կուրսը անփոփոխ է և ամեն ինչ կարվի հանրապետության անկախությունն ու ինքնորոշությունը ամրապնդելու համար:

– Այդ հանդիպման հետ մեծ հույսեր էինք կապում, – հետո կատարեցի Համլետը, – ասացի՝ Լևոն Հակոբյանի, վստահիք այս տղաներին: Այստեղ այդպես չի լինի: Ո՞ր է տանում ձեր վարած քաղաքականությունը: Չէ՞ որ թուրքն օգտվում է մեր յուրաքանչյուր բացթողումից: Հակառակորդին պետք է զրկել այդ հնարավորությունից: Հետո էլի շատ բաներ ասացի: Խիստ վրդովված էի... Նա մեզ պարզ հասկացրեց, որ ինքը բոլորից շատ վստահում է Ռոբերտ Քոչարյանին և Սերժ Սարգսյանին: Մեզ համար ամեն ինչ պարզ էր, էլ չուզեցինք «բազար» անել:

ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն այն համոզման էր, որ

Ղարաբաղյան հիմնախնդիրը պատերազմով չի լուծվի: Այդ մասին խոսեց նոյեմբերի 13-ին «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում: Նա հույս էր հայտնում, թե Ադրբեջանը ևս դա կըմբռնի և կհամաձայնի կրակը լրիվ դադարեցնել: Լեռնի կարծիքով միայն դրանից հետո «արդար, հանգիստ, խաղաղ իրավիճակում կարելի կլինի քննարկել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը»:

Պարզվում է, որ այս նվազի պատվիրողը և առաջին պարողը հանդիսանում էր ՀՀ ԳԽ պատգամավոր, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը, որը 1992 թ. նոյեմբերի 5-10-ը եղել էր Բաքվում:

Աշոտ Բլեյանի պրագմատիզմը հասնում էր ցինիզմի: Նա և նրա գաղափարակից Կորիճ Սարգսյանը, իրենց մեղքերը թաքցնելու նպատակով, 1992-ի նոյեմբերի 16-ին հայտարարեցին, թե հետանում են ՀՀԾ վարչությունից:

– Բլեյանի այցը Բաքու, – հետո իր կարծիքն ասաց Համլետը, – Արցախում գնահատեցի՞ք խիստ դժգույն: Դա իր գործն է, թող ջհաննամը գնար: Անկասկած, այդ նա է հանդիսացել 55-ի ստորագրության կազմակերպողը և որոշել «Ուղերձն» անձամբ հասցնել հասցեատերերին: Նա Երևանից գնաց Մոսկվա, նախ հանդիպեց Հասսանի ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանի հետ, հետո հանդիպեց Ադրբեջանի ներկայացուցիչ Հիքմետ Նաջիգադեի հետ: Վերջինս նրան ընդունեց սիրով և ճանապարհեց Բաքու: Ախր ո՞վ էր իրավունք տվել և երաշխավորել թուրքի հետ խոսել մեր խնդիրների մասին: Հենց դրա համար էինք շատ վրդովված: Հետո նա կգրի. «Ադրբեջանի հզորությունից սարսափեցի ու զարմացա՝ ո՞նց ենք կարողանում թերագնահատել այդպիսի ամուր պետությունն ու ինչպես ենք հանդգնում մեր թույլ թևերով ճոճել-ճեղքել այսպիսի գոյությունը»: Եթե պարոն Բլեյանը գեթ մի անգամ ձեռքը հրացան առներ և թուրքի դեմ կոպեր, կհասկանար նաև հայի, արցախցու ուժը և նման մարմաչի մեջ չէր ընկնի: Նա անամոթաբար հայտարարեց, թե Բաքվում «հայկական պետության, Լեռնային Ղարաբաղի, նրա ժողովրդի ու հայերի նկատմամբ չարություն չզգացի»: Ես չեմ հասկանում. այդ «խաղաղության դեսպան» կոչեցյալ անպատկառը կարողո՞ւմ էր Ադրբեջանի մամուլը, չսո՞ւմ էր ուղիղն, նաչո՞ւմ էր հեռուստացույց: Ադրբեջանի օրվա լրատվության կեսից ավելին ուղղված էր Արցախի և

հայ ժողովրդի դեմ: Ինչպես թե «ժողովրդի ու հայերի նկատմամբ չարություն» չէր գգում: Միայն զգացմունքներից զուրկը կարող էր նման անհեթեթություններ դուրս տալ: Այն ծանր օրերին եթե «յուդաշ» Բլեյանը գեթ մի անգամ զար Ստեփանակերտ և ճաշակեր «ալազանների» և «գրադների» մատուցած «քաղցրությունը», գոնե ձեռքը կկտրեր և հայ ժողովրդին չէր մրոտի...

ԼՂՀ կյանքում կարևոր իրադարձություն էր, երբ 1992 թ. նոյեմբերի 17-ի երեկոյան տեղի ունեցած նիստում ԼՂՀ ԳԽ նախագահությունը հաստատեց հանրապետության պետական գիմնաշանը և օրհներգը: Նույն թվականի նոյեմբերի վերջին ԼՂՀ ԳԽ շենքին բարձրացվեց արցախյան եռագույն դրոշը:

1992 թվականը Արցախի պատմության մեջ մտավ որպես փորձության, տաք, հուսախաբված և կարծր տարի: Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմը արցախահայությունից խլեց հարյուրավոր կյանքեր, առաջ բերեց մեծ ավերածություններ: Այնուամենայնիվ, Ադրբեջանի բոլոր փորձերը՝ ուժի օգնությամբ տիրանալ Արցախին, հօդս ցնդեցին:

\* \* \*

Եկավ 1993 թվականը, պայքարի վեցերորդ տարին: ԼՂՀ ԳԽ նախագահությունը և ՊՊԿ-ն դեկտեմբերի 30-ին համատեղ հանդես գալով հայտարարությամբ, շեշտում են, որ ուժի դեմ կարելի է կանգնել միայն ուժով և որ այսօր լուրաքանչյուր հայի պարտքն է Լեռնային Ղարաբաղը վերածել անառիկ ամրոցի: Արցախցիները պետք է ոչ միայն հերոսաբար հաղթահարեն թշնամու կողմից ստեղծված բոլոր դժվարությունները, այլև տանեն ձմռան ծանրությունը և կյանքը դարձնեն տանելի: Հույս է հայտնվում, որ 1993 թվականը Արցախի համար կհանդիսանա քեկման տարի<sup>109</sup>:

– 1993-ի Ամանորը համեմատաբար խաղաղ սկիզբ ունեցավ՝ առանց ուժակոծությունների ու մարտերի: Համոզված էինք, որ այդ համեմատական անդորրը երկար չի շարունակվի: Ոմանք դա բացատրում էին նրանով, որ կողմերից լուրաքանչյուրը զբաղվում էր ուժերի վերախմբավորումով, համալրումներով, հետագա ուժգնական գործողությունների ծրագրերի մշակումով և այլ անհրաժեշտ հարցերով:

Չենք կարող չհամաձայնել Համլետի այդ մեկնաբանության հետ: Իրոք, Ադրբեջանը ծրագրել էր 1993 թ. պետական բյուջեի գրեթե կեսը հատկացնել ռազմական կարիքներին: Որոշումը չուշացավ: Ծուտով թշնամին սկսեց հեռահար հրանոթներով ուժեղացնել ԼՂՀ մի շարք բնակավայրեր: Արդեն հունվարի 13-14-ին Ադրբեջանը գործողության մեջ դրեց իր ռազմական տեխնիկայի գրեթե ամբողջ զինանոցը՝ գրոհային ինքնաթիռներ, ծանր տանկեր, ինքնագնաց հրանոթներ:

Մեկ տարի էր, ինչ կենաց ու մահու պատերազմ էր մղվում թշնամու դեմ: Այո՛, ապրելու, գոյատևելու համար պետք է պատերազմել: Արցախահայությանը պատերազմ պարտադրեց թուրքը: Նրան անպատասխան թողնել՝ նշանակում էր կամավոր գնալ կառափնաբան: Եվ արցախահայության պայքարի, դիմակայության հիմնական գեներ հանդիսացավ արիությունն ու հայրենիքին անսահման նվիրվածությունը: Նույնիսկ 12-13 տարեկան տղաներն էին տանկ վարում և ռազմաճակատի առաջատար գծում կռվում հրացանը ձեռքին: Միշտ է, ԼՂՀ հյուսիսային գոտին կորուստ տրվեց, որովհետև հակառակորդը շարունակում էր պահպանել զինական ու քաղաքական առավելությունը: Բացի այդ, Հայաստանի իշխանությունները չօգտագործեցին բոլոր հնարավորությունները թշնամուն դիմակայելու համար: Արցախը շարունակում էր մնալ մեկուսացված և չճանաչված, ձևափոխման էր ենթարկվել Հայաստանի հետ վերամիավորման գաղափարը և իր տեղը զիջել անկախության գաղափարին: Իսկ Հոտնում էլ նստած ԵԱՀԿ-ի՝ Լեռնային Ղարաբաղի հարցով Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆայելին պլանավորում էր այցելել հակամարտության շրջան և խոստանում Ղարաբաղի բարդույթի լուծման նոր առաջարկություններ: Մինչդեռ զոհվում էին մարդիկ, զոհվում պատգամավորներ, զոհվում կանայք ու երեխաներ: Հունվարի 20-ին իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ Մարտակերտի շրջանի վանք գյուղում ավիատրակտորության հետևանքով ողբերգաբար զոհվեց Մարտակերտի շրջանում ԼՂՀ ՊՊԿ-ի ներկայացուցիչ, ԼՂՀ ժողովրդական պատգամավոր Բորիս Բաբայանը: Փետրվարի կեսի դրությամբ զոհվել էին ԼՂՀ ժողովրդական վեց պատգամավոր<sup>10</sup>:

Նահանջի ճանապարհ չկար: Հետևում արձաքամ լինող Արցախն

էր: Որոշ տվյալներով Ղարաբաղի բանակում կար մինչև 15 տարեկան 150 զինվոր, 14 տարեկան տանկի հրամանատար: Մարտունու շրջանի Ամարասի ձորակում գտնվող Մանկալաշենի մարտում միայն մեկ ժամվա ընթացքում ազատամարտիկները խփել էին 7 տանկ: Այդ նույն շրջանում 1992 թ. հունվարից մինչև 1993-ի հունվարի կեսերը խփվել էր թշնամու 57 տանկ<sup>11</sup>:

Ահեղ մարտերը շարունակվում էին նաև Մարտակերտի շրջանում: Մարտակերտի շրջան ժամանած Ադրբեջանի պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիևը և ներքին գործերի նախարար Համիդովը ցինիկաբար հայտարարում են, թե բոլոր հայերին կոչնչացնեն և մի քանի բեռնատար հայերի դիակներ կուղարկեն Բաքու՝ ցուցադրելու քաղաքի զրոսայգում: Մինչդեռ դրա փոխարեն կարող էին ռազմաճակատում ընկած իրենց զինվորների դիակները հավաքել և տեղափոխել այդ նույն Բաքու:

Հայ ազատամարտիկները փայլուն հաջողությունների հասան Մարտակերտի, Հադրութի և Մարտունու ռազմաճակատներում, ազատագրելով տասնյակ բնակավայրեր և հակառակորդին պատճառելով ֆիզիկական և նյութական մեծ վնաս:

Արցախի իշխանությունների միջև գոյություն ունեցող հակասությունները չէին վերանում: ԼՂՀ ԳԽ նախագահության և ՊՊԿ-ի միջև քաղաքական հակամարտությունը փետրվարի 18-ին մտավ իր վերջին փուլը: ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը չներկայացավ ԼՂՀ ԳԽ նիստին, որտեղ պետք է լսվեր ՊՊԿ-ի վեցամսյա գործունեության հաշվետվությունը:

Ահա թե այդ հանգամանքը հետո ինչպես մեկնաբանեց Համլետը.

- Դա, երևի, կապված էր ինչ-որ պատճառաբանությունների հետ: Նախագահության անդամներին համար տարօրինակն այն էր, որ նիստին ներկա, ՊՊԿ-ին մոտ կանգնածները միաժամուռ պնդում էին առանց կոմիտեի հաշվետվությունը լսելու վերանայել հանրապետությունում ռազմական դրության ժամկետի հարցը և այն հայտարարել մինչև պատերազմի վերջը: Այդ նիստում ճնշեցին նաև հակասահմանադրական առաջարկություններ: Ինչ խոսք, Գերագույն խորհրդի նախագահությունը մերժեց ընդունել որոշումներ, որոնք կարող էին հանգեցնել ուժի և բռնության հաստատմանը: Նախագահության անդամներն հանգեցինք այն մտքին, որ պետք է հրափրել

Գերագույն խորհրդի նստաշրջան և լսել ՊՊԿ-ի ու ԳԽ-ի նախագահության գեկուցումները և փոփոխություններ մտցնել ԳԽ-ի կանոնակարգի մեջ: Որոշում ընդունվեց նստաշրջանը հրավիրել առաջիկա մեկ ամսվա ընթացքում: Մենք զգում էինք, որ Գերագույն խորհրդի նստաշրջանը կանցնի բարդ պայմաններում, որովհետև օրակարգում լինելու էր նաև ԳԽ ղեկավարության թափուր պաշտոնների ընտրությունների հարցը:

\* \* \*

Միայն միասնությունը կարող էր փրկել ազգը, երկիրը, Արցախը: Այս կոչը հնչում էր բոլոր կողմերից: Ծառերի նման Համլետ Գրիգորյանը ձգտում էր տարբեր ճանապարհներով ավելի շատ օգնած լինել հայրենի երկրին, նրա ժողովրդին: Դեռևս մեկ տարի առաջ Մոսկվայում, ապա Երևանում նրան առաջարկել էին մտնել Տրանս-ազգային արմատական (ոսդիկալ) կուսակցության շարքերը: Նա ուշադիր ծանոթանալով այդ կուսակցության ծրագրին և կանոնադրական պահանջներին, վճռում է ընդունել առաջարկը, հույս ունենալով որ այդ կողմից ևս հնարավոր կլինի պայքարել Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի լուծման համար: Եվ ահա, 1993 թ. փետրվարի կեսերին Հոռոմում տեղի է ունենում այդ կուսակցության 36-րդ համագումարը, որի աշխատանքներին Լեոնային Ղարաբաղից մասնակցում են Համլետ Գրիգորյանը և Շուշիի շրջանի ներքին գործերի բաժնի վարիչ Միքայել Դանիելյանը: Հոռոմից վերադառնալուց հետո «Ազատամարտ» թերթին տված հարցազրույցում Համլետը նշեց, որ այդ ազգային ռադիկալ կուսակցությունը պաշտպանում է մարդու և ազգությունների իրավունքները: Համագումարի պլենար նիստում ելույթ էր ունեցել Համլետ Գրիգորյանը, իսկ սեկցիայում՝ Միքայել Դանիելյանը: Երկուսի ելույթներն էլ ունեցել էին փայլուն հաջողություն և ընդունվել բուն ծափահարություններով: Համագումարին մասնակցած 66 երկրների պատվիրակները լրիվ տվյալներ ստացան Լեոնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Համլետը պատմում է.

– Ընդմիջման և ապա մյուս ազատ պահերին տասնյակ պատվիրակություններ էին մոտենում և իրենց օգնությունն առաջարկում: Նախկինում ԽՍՀՄ կազմի մեջ մտնող հանրապետությունների ներ-

կայացուցիչները ևս պաշտպանում էին Արցախի հիմնախնդիրը: Տրանս-ազգային արմատական կուսակցության նախագահ, իտալացի Մարկո Պանելլան նույնպես պաշտպանել է մեր առաջարկությունները: Իմ և Միքայելի առաջարկությամբ անց է կացվել կուսակցության հատուկ ժողով՝ նվիրված Ղարաբաղի հիմնահարցին և հավանության արժանացել 1993 թ. մարտի 17-ին կուսակցության ֆեդերալ մարմնում Ղարաբաղի հիմնահարցը քննարկելու մեր առաջարկությունը<sup>112</sup>:

– Հոռոմում, – հիշում է Համլետը, – հանդիպեցի Ելենա Բոներ-Ալիխանյանի հետ: Դա մեր երրորդ հանդիպումն էր, բայց այս անգամ առանց Անդրեյ Սախարովի: Մենք երկար խոսեցինք Ղարաբաղի հիմնախնդրի շուրջը, ապա հիշեցինք Ստեփանակերտում և Մոսկվայում մեր հանդիպումները: Մարդու և ժողովուրդների իրավունքների այդ տարեց պաշտպանը անհերքելի փաստերով և կոտ տրամաբանությամբ կարողանում էր հիմնավորել իր յուրաքանչյուր միտքը և լսողներին համոզել արցախահայության ազատագրական պայքարի միանգամայն ճշմարիտ և արդարացի լինելը:

Առանձնապես երկար խոսեցինք Մոսկվայի «Մոսկվա» հյուրանոցի ռեստորանում մեր հանդիպման մասին, որտեղ Անդրեյ Սախարովը մեծ կրքոտությամբ պաշտպանում էր արցախցիներին արդար դատը: Իրոք, հաճելի էր լսել այդ մեծ մարդուն և մեծ գիտնականին, լսել նրա դատողությունները, զգալ նրա հարգանքը հայ ժողովրդի նկատմամբ: Եկավ մի պահ, երբ Ելենան սկսեց արտասվել: Փոխեցինք զրույցի թեման և կրկին վերադարձանք Արցախի հիմնախնդրին: Երբ խոսքը վերաբերում էր Արցախին, Բոների աչքերը վառվում էին. նա խոսում էր հոգու խորքից, ցավով, բայց և մեր հաղթանակի նկատմամբ հավատով լեցուն:

Նորընտիր Գլխավոր խորհրդի անդամներ են ընտրվում Հայաստանից Սամվել Ծահինյանը, Նարինե Բալայանը, Լեոնային Ղարաբաղից՝ Համլետ Գրիգորյանը:

1993 թ. ապրիլի 14-ին լրացավ ԼՂՀ ԳԽ-ի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական մահվան մեկ տարին: Լրատվական միջոցներով հայտարարվել էր Արթուր Մկրտչյանի մահվան տարելիցի կապակցությամբ կազմակերպվելիք սգո հանրահավաքի մասին: Արթուր Մկրտչյանի գերեզմանը ծածկված էր գարնանային թարմ ծաղիկներով: Եկել և հավաքվել էին հարյուրավոր արցախցիներ: Սգո հանրահավաքը բացում է Համլետ Գրիգորյանը: Այնուհետև ելույթ են ունենում ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը, ՀՀԴ Հայաստանի Կենտկոմի անդամ Ա. Ծահբազյանը, Հաղորթի շրջործկոմի նախագահ Գ. Հայրապետյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Աղազարյանը, Գյումրիի քաղաքային կոմիտեի ներկայացուցիչ Վ. Հարությունյանը, Արթուրի կնքահայր Վ. Սարուխանյանը և բանաստեղծ Գ. Գաբրիելյանը: Բոլորի ելույթներում շեշտվեց Արթուր Մկրտչյանի անմնացորդ նվիրվածությունը արցախյան ազգային-ազատագրական պայքարին և զինվորի ու պետական գործչի ունակությունները:

Նույն օրվա երեկոյան ԼՂՀ ԳԽ-ի շենքում տեղի է ունենում հուշերեկո, որտեղ շատերն իրենց հուշերն են պատմում Արթուր Մկրտչյանի մասին<sup>113</sup>:

Հետագայում, 1996-ի ապրիլին, Համլետը Արթուրի մասին կասի.

– Այն ժամանակ, երբ նոր էինք ստեղծում մեր պետականությունը, հանրապետության ղեկավարմանն էին անցել «իրավիճակից ծնված» մարդիկ, որոնք նախապես չէին անցել կառավարման կառույցների դպրոցով: Եվ Արթուր Մկրտչյանի պաշտոնատեսությունը հենց այն էր, որ նա, որպես նորաստեղծ պետության առաջին դեմք, կարողանում էր դրսևորել իրեն և ոչ թե օրեցօր, այլ ժամ առ ժամ անում որպես քաղաքական ղեկավար:

Արթուրը տաղանդավոր անհատականության, գիտնականի, քաղաքական ու պետական գործչի, ազնիվ մարդու և արդարամիտ քաղաքացու խառնուրդ էր: Հակառակ բոլոր խոչընդոտներին, նա ձգտում էր ստեղծել ու ամրապնդել կապերը Հայաստանի խորհրդարանի հետ: Երազում էր ստեղծել կայուն, միահամուռ նախագահություն: Նրա երազանքն իրագործվեց՝ ապրիլի 14-ի ԳԽ նախագահությանն փոխարինելով Բաղդասարյանի կառավարությանը: Նրա երազանքն իրագործվեց՝ ապրիլի 14-ի ԳԽ նախագահությանն փոխարինելով Բաղդասարյանի կառավարությանը: Նրա երազանքն իրագործվեց՝ ապրիլի 14-ի ԳԽ նախագահությանն փոխարինելով Բաղդասարյանի կառավարությանը:

Արթուրը տաղանդավոր անհատականության, գիտնականի, քաղաքական ու պետական գործչի, ազնիվ մարդու և արդարամիտ քաղաքացու խառնուրդ էր: Հակառակ բոլոր խոչընդոտներին, նա ձգտում էր ստեղծել ու ամրապնդել կապերը Հայաստանի խորհրդարանի հետ: Երազում էր ստեղծել կայուն, միահամուռ նախագահություն: Նրա երազանքն իրագործվեց՝ ապրիլի 14-ի ԳԽ նախագահությանն փոխարինելով Բաղդասարյանի կառավարությանը:

1993 թ. գարուն... Ես զբաղված էի գեներ, վառելանյութ, հանդերձանք և այլ անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելով: Մոնթեն գրություններով ու ռադիոկապով շտապեցնում էր, խնդրում: Այդ օրերին, մարտի 5-ին, լրանում էր տիկին Քնարիկի մահվան մեկ տարին: Արցախ մեկնեցին Ջուլիետան և հարսս: Հետո գրի առա Ջուլիետայի պատմածը.

– Մարտի 4-ի առավոտյան, հենց որ հասանք Սարուշեն, տեսանք մի ահավոր պատկեր. Կարմիր շուկայի ձորակը պատել էր ծուխն ու ամպը: Խազազի և Ղաջարի կողմից լավող հրանոթների կրակոցները չէին լուսն: Ծարունակեցինք ճանապարհը: Թուրքերը Ղաջարի կողմից մոտեցել էին Կարմիր շուկային: Ավանի բոլոր բնակիչները հեռացել և կանգնել էին այստեղ: Անտառի բացատներում և ճանապարհի երկայնքով վրաններ էին, որոնցից մի քանիսը՝ դաշտային հոսպիտալներ: Կարմիր շուկայի կողմից փրավորներին բերում էին այստեղ: Մտադիր էինք գյուղ հասնել Սխտորաշեն տանող ճանապարհով: Սակայն զինվորականները փակել էին այն: Համլետը վրանից վրան էր անցնում և հետաքրքրվում մարդկանց վիճակով: Իմացանք, որ իրիկնադեմին թուրքերը նահանջել էին: Մեզ թույլ տվեցին Հերհեր գնալ Սխտորաշենի ճանապարհով, որը համեմատաբար ապահով էր: Երբ գյուղ հասանք, լրիվ մութ էր: Սակայն կրակոցները չէին լուսն:

– Մարտ ամսում, – հիշում է Համլետը, – ուրիշ հոգսեր էլ ունեինք: Մարտի 22-23-ին Գերագույն խորհրդի մատաշրջան հրավիրեցինք նախագահ ընտրելու համար: Արդեն մեկ տարի էր Գեորգի Պետրոսյանը նախագահի պաշտոնակատար էր: Ասեմ, որ Գեորգին աշխատում էր՝ ինչքան որ ուժերը ներում էին: Սակայն Լևոն Տեր-Պետրոսյանը նրա անունը լսել չէր ուզում: Նստաշրջանում նախագահի թեկնածուներ առաջ քաշվեցին Արկադի Մանուչարովը, Բորիս Առուշանյանը, Լևոն Մելիք-Ծահնագարյանը և Գրիշա Հայրապետյանը: Չստացվեց, ոչ մեկն էլ չընտրվեց: Գեորգին մնաց պաշտոնակատար: Միևնույն է, ով էլ որ ընտրվեք, իշխանությունը մնում էր կենտրոնացված. ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանի ձեռքում:

Այդ օրերին արցախցիներին ուրախացնում էր այն, որ հանրապետ-



տության ինքնապաշտպանական ուժերը սկսել էին ոչնչացնել Քելբաջարի (Քարվաճառ) շրջանում տեղադրված կրակակետերը: Երկու տարի շարունակ հակառակորդը այդ կրակակետերից հազարավոր արկեր էր արձակել Արցախի բնակավայրերին և հսկայական ավերածություններ պատճառել: Անվտանգությունն ապահովելու համար այդ կրակակետերի ոչնչացումը դարձել էր խիստ անհրաժեշտություն: Մարտի 20-ից Ադրբեջանը ուժեղացրել էր ճնշումը: Հակառակորդի ուժերն առանձնապես ակտիվ էին գործում Մարտակերտի և Լաչինի շրջաններում: Դա լիովին հակասում էր մարտի 1-ին Հոռմում համաձայնեցված ԵԱՀԿ-ի փաստաթղթերի ոգուն: Այդ մասին հստակ ասված էր ԼՂՀ ՊՊԿ-ի մարտի 25-ի հայտարարության մեջ<sup>115</sup>:

Հիմա լսենք Համլետի մեկնաբանության շարունակությունը.

– Այդ ժամանակ կար մի երևույթ, որը դարձել էր անհամարժեքի: Դեռևս Արթուր Մկրտչյանի ժամանակից ԼՂՀ-ի ղեկավարությունը, նրա Գերագույն խորհուրդը կողմնակից էր չմիջամտել Հայաստանի Հանրապետության գործընթացներին: Թե՛ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը և թե՛ նախագահության անդամներս ՀՀ ղեկավարության, ինչպես և ընդդիմության ներկայացուցիչների ու ԳԽ նախագահության անդամների հետ բոլոր հանդիպումների ժամանակ մշտապես շեշտել ենք Արցախը Հայաստանի ներքաղաքական գործընթացի մեջ ներքաշելու անթույլատրելիությունը: Առանձնապես նշվել է, որ անօգուտ են Ղարաբաղի հիմնահարցի լուծման փորձերը առանց նրա օրինական ընտրված ներկայացուցիչների, և կործանարար է նրանց կաթճիբը հաշվի չառնելը: Ծավոք, թե՛ Արցախում և թե՛ Հայաստանում կային պնդանկատներ, որոնք չէին հասկանում, որ միմյանց ներքաղաքական գործընթացներին կոպիտ միջամտությունը կարող է ծանր հետևանքներ ունենալ ոչ միայն Արցախի, այլև ամբողջ հայության համար:

1993 թվականի մայիս-հունիսյան իրադարձությունները և բանավեճերը հիմնականում պատվում էին Քելբաջարի շրջանը Ադրբեջանին վերադարձնելու հարցի շուրջը: Հայաստանի ՀՀԹ-ական ուժերը Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, կատարելով Թուրքիա-ԱՄՆ-Ռուսաստան եռակողմ պահանջը, փորձում էին արցախցիներին համոզել հակառակորդին հետ վերադարձնել Քելբաջարի շրջա-

նը: Այդ օրերին շուրջ հինգ հազար զինվոր, բավականին տանկեր և հրետանի էին կենտրոնացվել Մարտակերտի և Ասկերանի ուղղությամբ: Նման հանգամանքներում համաձայնել Քելբաջարը հետ հանձնել հակառակորդին, նշանակում էր հանրապետության գոյությունը դնել հարցականի տակ:

Հայաստանում աղմուկ բարձրացվեց, թե իբր ԼՂՀ զորաջոկատները կուսակցականացվում են: Այդ պնդումը ճշմարտությունից հեռու էր: Հունիսի 7-ին ՀՀ նախագահի արտակարգ գործերի դեսպան հորջորջված Դավիթ Ծահնագարյանը Հայաստանի հեռուստատեսությամբ հայտարարեց, թե Միևսկի խմբի ղեկավար Մարիո Ռաֆայելին Միևսկի խորհրդածողովի անդամ 9 երկրների ներկայացուցիչներին ուղարկել է մի փաստաթուղթ, որն իբր բխում է ՄԱԿ-ի Բ. 822/93 որոշման էությունից: Այդ փաստաթղթում պահանջվում էր հայ զինյալ ջոկատները դուրս բերել Քելբաջարից: Որոշ բացատրություններից հետո պարոն Ծահնագարյանը այդ փաստաթուղթը գնահատում էր շատ ձեռնադուր:

– Այդպես էլ Արցախում չհասկացանք, – բացատրում է Համլետը, – թե 3-ի (3 պլյուս 1) նախաձեռնությունը ինչու Հայաստանի կողմից անտրտունը ընդունվեց, այլ ոչ թե հիմք չընդունվեց ԼՂՀ մերժումը, քանի որ այդ փաստաթղթում, ըստ էության, նոր ոչինչ չկար: Հայաստանի ՀՀԹ-ական կառավարությունը փոթաբանորեն պատրաստեց Մարիո Ռաֆայելիի նամակի պատասխանը, որում հավանություն էր տրվում իբր ՄԱԿ-ի 822-րդ ժամանակացույցի սկզբունքներին համապատասխանող փաստաթղթին և կոչ էր անում, որպեսզի Ղարաբաղն ու Ադրբեջանը ևս նույն վերաբերմունքը ցույց տան այդ փաստաթղթի նկատմամբ:

Ինչևհետև մենք Գերագույն խորհրդում ուսումնասիրում էինք այս չարաբաստիկ փաստաթուղթը, որի պատասխանը պետք է պատրաստ լիներ հունիսի 11-ին: Իսկ մինչ այդ, հունիսի 9-ին, Երևան ժամանեց Ռուսաստանի արտգործնախարար Բարաննիկովը: Հանդիպումներ ունենալով Հայաստանի ու ԼՂՀ-ի ղեկավարների հետ և քննարկելով ԵԱՀԿ նոր նախաձեռնությունը, հանգեցին այն մտքին, որ այդ առաջարկությունները պետք է հիմք հանդիսանան Արցախյան հիմնահարցը լուծելու համար: Այդ հանդիպման ժամանակ Գեորգի Պետրոսյանը պնդեց, որ այդ փաստաթղթերում բացակա-

յում են արցախահայության անկախ ու ապահով կյանքի համար երաշխիքները:

Գեորգի Պետրոսյանը, Երևանից վերադառնալուց հետո Գերագույն խորհրդի նախագահությունում բավականին երկար քննարկվեց Քելբաջարի շրջանը հակառակորդին ետ վերադարձնելու հարցը:

– Մենք գիտեինք, – շարունակում է Համլետը, – որ ԵԱՀԿ-ի նախաձեռնությունը սիրով էր ընդունվել Ադրբեջանի կողմից: Հայաստանի արտգործնախարարության նամակը՝ ուղարկված ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ղեկավար Մարիո Ռաֆայելիին, ավելի փոքրվեցրեց նախագահության անդամներին: Բանը հասել էր նրան, որ Ադրբեջանը ծափահարում էր Հայաստանի դիրքորոշումը: Հայաստանի արտգործնախարարն առանց ամոթի ասում էր. «Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է իրականացնելու նախաձեռնության» իրեն վերաբերող բոլոր կետերը»: Բայց չէ՞ որ նախաձեռնության մեջ Հայաստանին վերաբերող բացարձակորեն որևէ կետ չկար: Այնտեղ ասված է, որ Լեռնային Ղարաբաղը պետք է գնա ամեն մի գիջողության, ասել է թե՛ ցած դնի գեները և հանձնվի բարբարոսներին: Ասվածից ուրիշ բացատրություն չի թխում:

Եվ ահա Երևանից պահանջ եկավ Ստեփանակերտ՝ ԼՂՀ ղեկավարները, Գերագույն խորհրդի նախագահության բոլոր անդամների հետ, ժամանեն Գորիս՝ հանդիպելու Հայաստանի ղեկավարության հետ: Գորիս ժամանեցին Լևոն Տեր-Պետրոսյանը, Բարկեն Արարքյանը, Դավիթ Ծահնագարյանը, ԼՂՀ ԳԽ և ՊՊԿ-ի անդամները: Հանդիպումը տեղի ունեցավ 1993 թվականի հունիսի 12-ին: Հանդիպման հիմնական նպատակն էր պատրաստել ԵԱՀԿ-ին ուղարկվելիք պատասխանը:

– Տեղի ունեցավ տաք վիճարանություն, – վերհիշում է Համլետը, – մինչև անգամ եղան փոխադարձ վիրավորանքներ: Ես և Գեորգի Պետրոսյանը գտնվում էինք ամենահակառակ կետում: Լևոնը ամեն կերպ փորձում էր ինձ և մեր մյուս ընկերներին համոզել, թե իբր այդ փաստաթուղթը ընդունելով մենք շահում ենք: Այդպես էլ չհասկացա, թե Քելբաջարի շրջանը թուրքին վերադարձնելով ի՞նչ շահ կարող էինք ունենալ: Մեզ համար մնում էր անհայտ՝ Հայաստանի նախագահը իրո՞ք համոզված էր, թե Քելբաջարի հանձնումից որևէ օգուտ կունենայինք, թե՞ մեզ անհասկացողի ու միամիտի տեղ էր

դնում: Նա մեզ ստիպում էր ստորագրել այդ փաստաթուղթը, էլ չեն ասում, թե Բարկեն Արարքյանն ու Դավիթ Ծահնագարյանը ինչպիսիք քստմենտի դեր էին կատարում այդ հանդիպման ժամանակ: Գեորգի Պետրոսյանը, ի վերջո, բանավոր համաձայնվում է ստորագրել փաստաթղթի տակ: Բայց երբ գալիս է ստորագրելու պահը, նա կտրուկ հրաժարվում է: Մենք գտնում էինք, որ արցախցիների ամբողջական պատասխանը պետք է ձևակերպվեր Ստեփանակերտում, այլ ոչ թե Գորիսում: Այդ նույն երեկոյան զայրացած վերադարձանք Ստեփանակերտ: Դեռ Գորիսում իմացանք, որ այդ նույն օրը գոհվել է Մոնթեն Մելքոնյանը: Դա մեծ ցավ պատճառեց բոլորին:

Լևոն Տեր-Պետրոսյանի շքախումբը երկու օր անց, հունիսի 14-ին, ուղղաթիռով ժամանեց Ստեփանակերտ: Սա Լևոն Տեր-Պետրոսյանի առաջին պաշտոնական այցն էր ԼՂՀ: Այդ նույն առավոտյան հրապարակվել էր նրա հայտարարությունը՝ «Լեռնային Ղարաբաղի իշխանությունների» ԵԱՀԿ-ի առաջարկության նկատմամբ ունեցած դիրքի դատապարտմամբ: Նա նույնիսկ պնդեց, թե ԼՂՀ իշխանությունները անկարող են վճռական պահին ընդունել ճիշտ ու շահավետ որոշումներ<sup>116</sup>:

Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը օդանավակայանից ուղիղ գնաց ԼՂՀ ԳԽ և պահանջեց շտապ հրավիրել նախագահության նիստ ու որոշում ընդունել Քելբաջարի շրջանը Ադրբեջանին վերադարձնելու մասին: Տեղի է ունենում ԼՂՀ ԳԽ և ՊՊԿ-ի անդամների համատեղ նիստ: ՊՊԿ-ի անդամները Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ պատրաստակամություն են հայտնում ստորագրել ԵԱՀԿ-ի նոր նախաձեռնությունը: Նույնիսկ բանակի հրամանատարությունը հայտարարում է, թե կհամաչի իշխանությունների ընդունած որոշումը: Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության անդամներից Համլետ Գրիգորյանը, Վալերի Ղազարյանը, Գեորգի Պետրոսյանը և ուրիշներ հանդես են գալիս խիստ քննադատությամբ և պահանջում մերժել ԵԱՀԿ-ի նոր նախաձեռնությունը: Գերագույն խորհրդի նախագահության 10 անդամներից Գեորգի Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Վալերի Ղազարյանը, Վալերի Բալայանը և Լևոն Մելիք-Ծահնագարյանը մերժում են Լևոն Տեր-Պետրոսյանի պահանջը և դեմ քվեարկում, իսկ Կարեն Բաբուրյանը, Վալերի Ալեքսանյանը, Սլավիկ Ադաբաբյանը, Հրանտ Խաչատրյանը և Վլադիկ

Հակոբյանը տեղի տալով Լևոն Տեր-Պետրոսյանի ճնշմանը, քվեարկում են կողմ, այսինքն՝ Քելբաջարի շրջանը վերադարձնել թուրքերին:

Լևոն Տեր-Պետրոսյանի սարքած այդ տհաճ ներկայացումն ունեցավ հետևյալ վախճանը. ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը տալիս է հրաժարական ու նրա փոխարեն նախագահի պաշտոնակատար է ընտրվում Կարեն Բաբուրյանը, որը և խոստանում է ստորագրել փաստաթուղթը: Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը «արժանվույն է գնահատում» Կարեն Բաբուրյանի ստորագրությամբ աշխարհ եկած առաջին փաստաթուղթը՝ այդքան բախտորոշ արցախահայության կյանքի համար: Այդ որոշումը անօրեն էր և ճարահատյալ: Գեորգի Պետրոսյանի հրաժարականից հետո ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում է ընդունում ստորագրել ԵԱՀԿ-ի նոր նախաձեռնությունը, որը պահանջում էր ԼՂՀ զինված ուժերը դուրս բերել Քելբաջարի շրջանից: Լևոն Տեր-Պետրոսյանը Երևան է վերադառնում մեկ տարի շարունակ իրեն տանջող հոգսից ազատված:

– Մենք հասկացանք, – պարզաբանում է Համլետը, – որ Լևոն Տեր-Պետրոսյանը Ստեփանակերտ էր եկել ամենից առաջ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար, Հայ Հեղափոխական Դաշնակցության անդամ Գեորգի Պետրոսյանին գահընկեց անելու համար: Եվ նա հասավ իր նպատակին:

Եվ, իրոք, Լևոն Տեր-Պետրոսյանը Երևան վերադառնալուց հետո անմիջապես շնորհավորական հեռագիր ուղարկեց Կարեն Բաբուրյանին, որում ասված է, թե «ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնում ձեր առաջին գործողությունները ցույց են տալիս Ձեր քաղաքական հասունությունը և անձնական համարձակությունը, ինչպես և Արցախի ժողովրդի ճակատագրական պահին իր վրա վերացնելու պատասխանատվությունը»<sup>117</sup>: Նախագահը Կ. Բաբուրյանին հրավիրում է Երևան բանակցություններ վարելու համար: Լրատվական հաղորդագրությունում ասված է, որ նրանց հանդիպումը տեղի ունեցավ հունիսի 23-ին և ավարտվեց «արդյունավետ գրույցով»: Հետո իր ելույթներից մեկում Լևոն Տեր-Պետրոսյանը կշեռտի, որ ինքը «ոչ թե գնացել էր Լեոնային Ղարաբաղ նրանցից դրական պատասխան կորզելու», այլ գնացել էր «ընդամենը պատասխան կորզելու՝ այդ,

կամ ոչ»<sup>118</sup>: Իսկ ԼՂՀ ԳԽ մամուլի քարտուղար Գեղամ Բաղդասարյանը վկայել է, թե «ԼՂՀ ղեկավարության վրա ազդելու համար օգտագործել են այնպիսի ձևեր, որոնք դուրս են դիվանագիտության և բանավեճերի ընդունված սահմաններից»<sup>119</sup>: ԼՂՀ ԳԽ նախագահի նորընտիր պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը երկու ամիս անց խոստացավ, որ «գրաֆիկի ընդունման ժամանակ... որոշ ճնշում Հայաստանը գործադրել էր Ղարաբաղի վրա»<sup>120</sup>:

Մի քանի օր անց, հունիսի 26-ին տեղի ունեցած ՀՀԾ-ի 5-րդ համագումարում արտասանած իր ճառում Լևոն Տեր-Պետրոսյանը փորձեց իրեն արդարացնել և ժխտել իր կողմից ԼՂՀ իշխանությունների վրա ճնշում գործադրելու փաստը: Նա «Հայաստանի, Լեոնային Ղարաբաղի և Ադրբեյջանի կողմից ԵԱՀԿ-ի խաղաղության ծրագրի ընդունումը» համարում է առաջին լուրջ քայլը «խաղաղության հաստատման, արցախահայության անվտանգության և բնականոն կենսագործունեության ապահովման և հիմնահարցի փոխզիջումային լուծման ճանապարհին»: Ապա հայտարարում է, թե այդ «ծրագրի շուտափույթ իրականացումը բխում է Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի կենսական շահերից, ուստի ոչ մի ջանք չպետք է խնայել նրա հաջողությունն ապահովելու համար: Եվ որ «ոչ մի ուժ չի կարող կասեցնել Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի իշխանություններին հաստատակամորեն իրականացնելու խաղաղության տանող այդ ծրագիրը»<sup>121</sup>:

Հետո՞:

– Հետո ինչ, – պատասխանում է Համլետը: – Լևոնի այդ ճառն, ինձ թվում է, իր համար մահախոսական էր, քան ինքնապաշտպանություն: Ես այդ մտքին հանգեցի, երբ կարդացի նրա ճառը: Ջարմանում էի. նա ինչպե՞ս էր կարողանում իր աչքի առաջ կատարվող այդքան հանցագործությունները թաքցնել ու անտեսել: Մի՞թե չէր տեսնում, որ շուրջը այլան-թալան է, կաշառք ու խաբեություն, սպանություններ: Հենց այդ օրերին էլ որոշեցինք ՀՀ Գերագույն խորհրդի Արցախի հարցով հանձնաժողովի արտագնա նիստ հրավիրել Ստեփանակերտում և խոսել ավելի սրտաբաց:

Նիստը տեղի ունեցավ հունիսի 23-30-ին: Չեկուցումով հանդես եկավ հանձնաժողովի քարտուղար, պրոֆեսոր Սուրեն Ջոլյանը: Նա առաջարկեց ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ճանաչել Լեոնային

Ղարաբաղի Հանրապետության անկախությունը: Նիստում ելույթ ունեցան հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանը, ԼՂՀ ՊԳԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբոյրյանը, ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ Համլետ Գրիգորյանը, ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը: Եվ բոլոր ելույթ ունեցողներն էլ առաջարկեցին Հայաստանի Հանրապետության առաջ հարց դնել ԼՂՀ անկախությունը ճանաչելու վերաբերյալ:

\* \* \*

– Արցախյան հիմնախնդրի լուծումը, – մի առիթով ասաց Համլետը, – խճճված է անհաշիվ թելերով: Հանգույցը գտնելու համար պահանջվում է վիրահատի հմտություն: Այլապես հնարավոր չէ խճճված թելերն իրարից անջատել:

– Եվ ի՞նչ ես առաջարկում, – հարցրի նրան:

– Անխտիր բոլոր հնարավորությունների օգտագործում: Ինչպես ասում են, ջուրն ընկնողը ծղոտից էլ է բռնում: Մենք այդ վիճակում էինք: Մեզ նետում էինք ամեն տեղ, միայն թե որևէ ելք գտնվեր: Մեր պայքարի ակտիվիստները, իմիջիպալոց, հույսով էին լցված, հավատում էինք վերջնական հաղթանակին: Այլապես հնարավոր չէր դիմանալ և տանել սարսափելի ծանրությունը: Երբ հետադարձ հայացք եմ ձգում, գարմանքից ծիծաղում եմ և աղոթում՝ շնջալով՝ տեր Աստված, մեր հաղթանակը շատ չհամարես...

1993-ի մայիսին Համլետը և Հրանտ Խաչատրյանը մեկնեցին Մոսկվա՝ մասնակցելու Անդրազգային արմատական կուսակցության խորհրդարանականների խորհրդի 1993-ի հունիսին Սոֆիայում կայանալիք ասամբլեայի նախապատրաստական հավաքին: Հավաքում ունեցած իր ելույթում Համլետը բարձրացրեց ԼՂՀ-ի ճանաչման հարցը՝ որպես դարաբաղյան հակամարտության կարգավորման միակ երաշխիք: Հավաքի մասնակիցները հանգեցին այն մտքին, որ Համլետ Գրիգորյանի կողմից բարձրացված հարցը հանգամանորեն կքննարկվի Սոֆիայում: Արցախի պատվիրակները Արմատական կուսակցության լիդեր Սերգիս Ստանցոնին հրավիրվեցին Լեռնային Ղարաբաղ:

1993-ի հուլիսի 15-17-ին Սոֆիայում տեղի ունեցած հավաքին

ներկա էին մոտ 500 հոգի: Նիստերը տեղի էին ունենում «Վիտոշա» հյուրանոցում: Հավաքին Լեռնային Ղարաբաղից մասնակցում էին Համլետ Գրիգորյանը, Գեորգի Պետրոսյանը, Հրանտ Խաչատրյանը և էլի երկու հոգի: Աշխարհի 40 երկրներից եկած պատվիրակները չորս օր շարունակ քննարկում էին մոլորակի հրատապ հարցերը, ազգամիջյան բախումները, բնության պահպանման խնդիրները, աշխարհի «թեժ կետերի» լարվածության թուլացումը: Թե՛ Լեռնային Ղարաբաղի և թե՛ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունները իրենց ելույթներում հիմնականում խոսեցին Լեռնային Ղարաբաղի ազատության և անկախության հարցի շուրջը: Նրանք պահանջեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչում, Ղարաբաղի հուշարձանների պահպանում և արցախահայության կյանքի ապահովում: ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ Գեորգի Պետրոսյանը ասաց, որ «աշխարհը թևակոխեց մի նոր փուլ և գործածության մեջ մտնում է նոր աշխարհայացք՝ ի հակադրություն հին գաղափարների, հետևապես հարկ է նոր փոփոխությունների համաձայն փոխվեն և միջազգային նորմաները և օրենքները»<sup>122</sup>:

Ծնորհիվ հայ պատգամավորների ջանքերի, ասամբլեայի ընդունած բանաձևի մեջ մտան երկու դրույթներ, որոնք վերաբերում են Լեռնային Ղարաբաղին: Դրանցից մեկը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվող ավելի քան 1600 պատմամարտարապետական հուշարձանների պահպանմանը, որոնց մեծամասնությունն ունի եզակի պատմական արժեք: Հաշվի առնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի դերը որպես ազգային մշակույթի արժեքների պաշտպանի, խնդրել նրան մասնագիտական-փորձագիտական հետազոտություն անցկացնել և ԼՂՀ ուղարկել քաջատեղյակ ներկայացուցիչներ, որպեսզի պաշտպանության տակ վերցվեն Դաղիվանքի (1-ին դար), Ամարասի (4-րդ դար), Գանձասարի (13-րդ դար) և այլ հուշարձանները:

Երկրորդ դրույթը վերաբերում էր ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը:

Նորընտիր Գլխավոր խորհրդի կազմում ընտրվեցին Սամվել Ծաֆինյանը, Նարինե Բալայանը և Համլետ Գրիգորյանը: Արցախից պատվիրակները հանդիպում ունեցան Սոֆիայում բնակվող մի խումբ հայերի հետ, նրանց պատմեցին Արցախում տիրող ծանր կա-

ցության, դժվարությունների, զրկանքների մասին, խոր հավատ հայտնելով, թե վերջնական հաղթանակը հայ ժողովրդին է: Նրանք նաև այցելեցին Սոֆիայի գերեզմանատանը գտնվող Քրիստափոր Միքայելյանի շիրիմին:

\* \* \*

1993-ի օգոստոսի 15-ը ճակատագրական էր, մանավանդ Համլետի համար: Օգոստոսի 14-ին ընտանիքով Երևանից եկել էինք Հերհեր: Հաջորդ օրը ոչխար պիտի մատաղ անեինք: Այդ վճիռը կայացրել էր մատաղի սիրահար տիկին Ջուլիետան: Մարտունու շոջանում ռազմական գործողությունները տեղի էին ունենում Գևորգավան-Ամարաս-Ղաջար գծի վրա: Կրակոցները չէին դադարում: Գործում էր և Ադրբեջանի օդուժը: Ամբողջ Ամարասի ձորակը, մինչև Ֆիզուլու մոտերքը, կորել էր ծխի մեջ, շիկացել էր երկինքը: Ջոհվածների և վիրավորների մասին կցկտուր լուրեր էին հասնում գյուղերը: Բոլորս անհամբեր սպասում էինք Պարույրին՝ Համլետի ավագ որդուն:

...Պարույրը ծնվել է 1973-ի մարտի 3-ին: Միջնակարգն ավարտել է Ստեփանակերտում և 1989-ին ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի արդյունաբերական էկոնոմիկայի մասնագիտության բաժինը: Լավ էր սովորում: Սակայն հայրենի Արցախում տիրող իրավիճակը նրան հանգիստ չէր տալիս: Անընդհատ խոսում էր ուսումը թողնելու մասին և ջանում վերադառնալ Ղարաբաղ: Սակայն կանխում էի նրան և ասում.

– Եթե անհրաժեշտ լինի, միասին ենք գնալու:

Մի օր էլ եկավ «Վարանդա» հայրենակցական ընկերություն, ինձ մոտ ու թե.

– Արդեն դիմում եմ ներկայացրել ռեկտորին, մեկնում եմ հայրենիքը պաշտպանելու:

Ինչ անեի: Նայեցի նրա վճռական դեմքին ու ասացի.

– Լավ, առավոտյան ավտոմեքենայով կուղարկեմ:

Ստեփանակերտում մնաց մեկ օր: Հաջորդ օրը մեկնեց Հերհեր և մտավ Մանկալաշենի մոտոհրաձգային գումարտակի Հերհերի վաշտը: 1993-ի գարնանից նշանակվում է Հերհերի դասակի հրամանա-

տար: Մի օր հերթապահում էին, մի օր հանգստանում: Օգոստոսի 14-ի ամբողջ օրը Ամարասի ռազմաճակատի Եղլավանդի տեղամասում Պարույրի դասակը պաշտպանում էր կարևոր կետերից մեկը: Նրանց հերթափոխեցին երկու ժամ ուշացումով: Երբ գյուղ վերադարձան, արդեն մութ էր: Հաջորդ օրը Պարույրի դասակը պետք է հանգստանար: Վաղ առավոտյան հրամանատարության պահանջով Պարույրի դասակը մեկնեց մարտադաշտ: Գնալուց առաջ Պարույրը դիմեց հորաքրոջը, որին անչափ շատ է սիրում.

– Հորքո՛ւր, կեսօրից հետո տանը կլինեմ, գալու եմ դասակի բոլոր տղաները: Սեղանը պատրաստ լինի:

Հետո բուրիս հետ համբուրվեց ու գնաց: Սրտներիցս արյուն էր կաթում: Առանձնապես անխոս էին Համլետն ու Բելյան: Դեռ երկինքը խաղաղ էր, միայն մեկ-մեկ Ֆիզուլու կողմից կրակոցներ էին լսվում: Ժամը տասնմեկի մոտերքը Ուրյան բարձունքի կողմից երևացին հակառակորդի երկու ոմբակոծիչ, ոռմբեր թափեցին Ամարասի կողմերում ու հեռացան: Հետո երկու կողմից սկսեցին որոտալ հրանոթները: Քանի գնում կրակոցները հեռանում էին Ֆիզուլու կողմը: Այդ նշանակում է, որ մերոնք ազատագրել էին ամբողջ Ամարասի ձորակը և մոտենում էին Ֆիզուլի քաղաքին:

Կեսօրն անցավ, և արդեն իրիկնամուտ էր, բայց Պարույրն ու տղաները դեռ չկային: Սեղանը վաղուց էր պատրաստ: Ոչ մեկը չէր խոսում, ասես բոլորս համբացել էինք: Եկեղեցու կողմից երևաց Կամոյի «Բելառուսը»: Արագ անցավ տան մոտով, գնաց՝ պոտվեց, հետ վերադարձավ: Կանգնեց ընդհանուր մուտքի մոտ ու կանչեց Վալերիկին: Վալերիկը գնաց: Կամոյի հետ փսփսում էին: Բոլորս անհանգիստ սպասում էինք Վալերիկին: Նա եկավ գույնը զցած: Ասաց՝ Պարույրի դասակը վերադառնալիս՝ մեքենան ակամի վրա պայթել է, կան միայն վիրավորներ, բոլորն էլ գտնվում եմ Սոսի հիվանդանոցում:

Համլետը գնաց դեպի իր ավտոմեքենան: Նրան հետևեցին Բելյան ու Ջուլիետան: Համլետն ինձ ասաց՝ մնամ տանը: Մնացածները նստեցին Հովիկի ավտոմեքենան ու գնացին: Հետո, թե ինչ է եղել, պատմեց Ջուլիետան.

- Մաճկալաշենի շտաբում փորձել էին Պարույրին համոզել, որ նա իր դասակով հետ վերադառնա Հերհեր ու հանգստանա: Բայց նա հրաժարվել էր: Կեսօրից հետո նրա դասակը վերադառնում էր Արթուր Սարգսյանի զրահամեքենայով: Ականի պայթուցից Արթուրն անմիջապես զոհվել էր, իսկ Պարույրի դասակի 12 տղաներից վեցը կորցրել էին տեսողությունը: Այդ ամենի մասին հետո, հիվանդանոցում իմացանք: Երբ հիվանդանոց հասանք՝ ամբողջովին մութ էր: Ամբողջ ճանապարհին Համիետը ոչ մի ձայն չհանեց: Մենք էլ անընդհատ աղոթում էինք: Անմիջապես հիվանդանոցին չկարողացանք մոտենալ: Գյուղի գրեթե բոլոր բնակիչները հավաքվել էին հիվանդանոցի շուրջը: Տղամարդիկ վազելով մտան հիվանդանոց: Ես և Բելյան չէինք կարողանում շարժվել, փայտացել էինք: Մի կերպ հասանք հիվանդանոց: Ոչինչ չէինք տեսնում, մութ էր, աղմուկ-աղաղակ, լաց ու կոծ: Մթության մեջ միայն լսվում էին վիրավորների խուլ տնքոցները և գլխավոր բժիշկ Արեճայի կարգադրությունները: Մոմի աղոտ լույսի տակ ճանաչեցինք Պարույրին՝ շարժամահճակալի վրա պսակած, գլուխը վիրավորված, արնաշաղախ: Ծանր տնքում էր: Քիչ էր մնում խելագարվեինք: Մի կերպ զսպելով մեզ, հարցրինք՝ Պարույր, ո՞նց ես: Հազիվ լսելի ձայնով պատասխանեց՝ լսվ եմ: Տղաների անունները ընդմիջումներով բարձրաձայն կանչում էր, չգիտեինք ինչ էր ուզում ասել:

Անհրաժեշտ էր բոլոր վիրավորներին անհապաղ Ստեփանակերտ տեղափոխել: Մեքենաների հարցով զբաղվում էր Համիետը: Հովիկի մեքենայով ուղարկեցինք երեք հոգի: Հետո մյուսներն էլ ուղարկվեցին: Բոլորից ծանրը Պարույրն էր, նրան պետք է տեղափոխեին «Օտապ օգնության» մեքենայով: Համիետը փոխանակ Պարույրին տեղափոխելու, որովհետև, ինչպես ասացի, բոլորից ծանրն էր, ավելի թեթև վիրավորներին է տեղափոխում:

Ես և Բելյան Ստեփանակերտ մեկնեցինք Համիետի մեքենայով: Ամբողջ ճանապարհին Համիետը ոչ մի ձայն չհանեց: Հոսպիտալի միջանցքում պատգարակի վրա պսակած էր Պարույրը: Բժիշկները գալիս, վերքը նայում, գլուխները տարուբերում ու գնում էին: Մենք մի անկյուն քաշված ցածրաձայն լաց էինք լինում: Ասացին՝ Պարույրին

արյուն է պետք: Հավաքված բոլոր հարազատները շտապեցին արյուն տալու: Պարույրի դպրոցական ընկերուհի Նունեն մեզնից առաջ անցավ: Արյուն վերցրին միայն նրանից և Հովիկից: Այս Պարույրին տարան հանրապետական հիվանդանոց, որտեղ ութ ժամ շարունակվեց վիրահատությունը: Հետո ասացին, թե գլխից 62 բեկոր են հանել: Միայն առավոտյան մեզ թույլ տվեցին մտնել մոտը: Արդեն նարկոզից արթնացել էր: Չէին շարժվում աչ կողմի ոտքն ու ձեռքը: Աստված իմ, այս ի՞նչ է կատարվել: Պարույրը կորցրել է մի աչքը:

Բժիշկներն առաջարկեցին Պարույրին անհապաղ տեղափոխել Երևան: Բոլոր ծանր վիրավորներին տեղափոխում էին ուղղաթիռներով: Ես չէի կարող մնալ: Սակայն ինձ չէին թողնում ուղղաթիռ բարձրանալ, պատճառաբանելով, թե իմ փոխարեն կարող են մի վիրավոր տեղափոխել: Նրանք արդարացի էին, ի՞նչ կարող էի անել: Համիետն ուզում էր, որ ես անպայման մեկնեի: Տեսա ուղղաթիռի մոտ կանգնած ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Համիետի հետ մոտեցանք նրան: Խոստացավ օգնել: Իր խոստումը կատարեց, որի համար անչափ շնորհակալ եմ: «Էրեբունի» օդանավակայանից Պարույրին ուղիղ տարան ութերորդ հիվանդանոց, որտեղ մեզ սպասում էր փեսա Արմենը: Նրան զանգել էին Ստեփանակերտից և ասել, որ Պարույրին պիտի տանեն ութերորդ հիվանդանոցի աչքի բաժանմունք:

Բժիշկներն իրար էին անցել: Նրանք առանց թաքցնելու ասացին, որ աչքը վերականգնել հնարավոր չէ: Արմենը պնդում էր, որ վիրավորին պետք է անհապաղ տեղափոխել ներմային բաժին և կարգավորել գլխի վիրահատությունը: Տվյալ պահին առաջնայինը դա էր: Բժիշկները չհակառակեցին, համաձայնեցին Արմենի հետ: Պարույրին տեղափոխեցին Նորքի զանգվածի շտապ օգնության հիվանդանոցի ներքովիրահատական բաժանմունք: Բժիշկներ Ռոբերտ Գաբրյանի և Նիկոլայ Խաչատրյանի ջանքերի շնորհիվ միայն Պարույրը կյանքի կոչվեց: Այդ հիվանդանոցում, հենց բժշկից Պարույրն իմացավ, որ կորցրել է աչքը... Աստված իմ, այդ քսանամյա տղան ինչպե՞ս կարողացավ տղամարդավարի տանել այդ վիշտը, այդքան խիզախություն... Եվ մեր բժիշկները՝ Սոսի, Ստեփանակերտի, Երևանի



տարբեր հիվանդանոցների, պարզապես հերոսներ են: Ափսոս, որ բոլորի անունները չեն հիշում: Ես համբուրում եմ նրանց բոլորի նակատները...

Հետո Համլետը լրացրեց.

– Պարույրին հոսպիտալից հանրապետական հիվանդանոց տեղափոխելը խիստ անհրաժեշտ էր: Այնտեղ երկար խորհրդակցելուց հետո որոշեցին վիրահատել: Գլխի վիրահատությունը կտարեցին վարդան Ղուկասյանն ու Փարավոն Ադամյանը, իսկ այքի վիրահատությունը՝ Երևանից եկած ակնաբույժ Անդրյասովը: Ինձ համար այդ ամենածանր պահին իմ կողքին էին ընկերներս՝ Էդիկ Ղուկասյանը, Ռաֆիկ Գաբրիելյանը, Էդնեստ Հայրապետյանը, Ռուդիկ Ազարյանը, Ալեքսանդր Պետրոսյանը, Հրանտ Խաչատրյանը, Արզիկ Մխիթարյանը և շատերը: Անչափ երախտապարտ եմ բոլոր բժիշկներին, բուժքույրերին, ովքեր փրկել են իմ տղայի և նրա մեան հազարավորների կյանքը: Փառք և պատիվ նրանց...

\* \* \*

Այդ ամբողջ ժամանակաշրջանում, իսկ Պարույրի բուժումը տևեց ամիսներ, Համլետը հալ ու մաշ էր լինում: Ընչու է, գալիս կամ գանգում էին նրա ընկեր պատգամավորները, իրենց օգնությունը առաջարկում, գալիս էին դպրոցական ընկերները, անընդհատ գանգում էին Ղարաբաղից, մի խոսքով՝ շրջապատված էր հոգատարությամբ: Սակայն դառն ճշմարտությունը մնում է ճշմարտություն: Եվ ոչ մի անգամ տրտունջի նշույլ չլսեցի Պարույրից: Հետո, երբ ապաքինվելուց հետո շարունակում էր ուսումը, մի առիթով ինձ ասաց.

– Եթե ես, Սերգեյը, Կարենը կամ մյուսները չկոպեխեմք, եթե մենք զոհեր չտայիմք, ապա ինչպե՞ս կարող էինք հաղթել թշնամուն:

\* \* \*

Մի հանգամանք աստիճանաբար լայն ծավալ ընդունեց Լեոնալդին Ղարաբաղում: Դա կամայականությունների դրսևորումն էր: Ումանք արդարացիորեն վախենում էին այդ երևույթից, որն աստիճանաբար կարծրանում էր, ճաք տալիս: Դրա առաջին բացահայտ

դրսևորումը երևաց 1993-ի դեկտեմբերին: Գեկտեմբերի 20-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ստիպված էր հանդես գալ հայտարարությամբ<sup>123</sup>: Այդ առաջին բացահայտ կոպիտ խախտումը կատարեցին զինվորական պարետության աշխատակիցները: Նրանք, ինչպես ասված է հայտարարության մեջ, իրենց այդ հակաօրինական քայլերը կատարում էին քաղաքացիական բնակչության, պաշտպանության բանակի մարտիկների, անչափահասների, հաշմանդամների, լրագրողների, ժողովրդական պատգամավորների նկատմամբ: Այդ երևույթը հետո շատ խորացավ:

\* \* \*

Հիմա լսենք Համլետին.

– Պարույրի վիճակը բարվոք դառնալուց հետո, բժիշկները նրան թույլատրեցին գնալ դասերի: Պոլիտեխնիկական ինստիտուտի դեկավարությունը, մանավանդ պրոռեկտոր Սուրեն Սուլեյմանյանը, դեկանը, դասախոսները ամեն ինչով օգնեցին, որ բաց թողնվածը լրացվի: Ես անչափ գոհ եմ բոլոր նրանցից, ովքեր մարդկայնորեն վերաբերվեցին հաշմանդամ դարձած իրենց ուսանողի նկատմամբ\*:

Ես էլ վերադարձա պատգամավորի իմ պարտականությունների կատարմանը: Աշխատում էի մասնակցել երկու խորհրդարանների նիստերին: Ավելի ակտիվ մասնակցում էի ԼՂՀ Գերագույն խորհրդի աշխատանքներին: Մեր հանձնաժողովը պատրաստեց մի շարք օրենքների նախագծեր, որոնք անմիջապես վերաբերում էին կրթությանն ու գիտությանը: Սակայն դրանք բոլորն էլ մնացին թղթի վրա: Պատերազմ էր, Գերագույն խորհրդի մատաշրջաններ գրեթե չէին հրավիրվում, զբաղված էինք պաշտպանության, բնակչությանն օժանդակելու. փախստականներին հետ վերադարձնելու և համամասն հարցերով: Ընկերներ էինք կորցնում, զոհվում էին տղաները: Հաճախ էլ մեկնում էի Մոսկվա կամ այլ երկրներ՝ որոշ հանձնարարություններ կատարելու: Այդ ուղևորությունները խստորեն կապված

\* Պարույրն ունի Խաչատուր (պապիկի անունով) անունով տղա և Տաթևիկ անունով դուստր:

էին Արցախի հիմնապայքարի հետ: Նաև շարունակում էի աշխատել համալսարանում, դասախոսություն կարդալ ուսանողների համար: Ուժերիս ներածին չափ օգնում էի մեր գյուղի կոլտնտեսությանը, որտեղ շարունակում էր վարչության նախագահ մնալ Պարույրի հետ վիրավորված, մույնպես հաշմանդամ դարձած Սերյոժա Ստեփանյանը:

Պատերազմը դեռ շարունակվում էր: Իսկ մենք անելիքներ շատ ու շատ ունեինք: Թշնամուն պետք է հաղթեինք: Միայն հաղթանակը կարող էր հակառակորդին ստիպել ցած դնել զենքը և անձնատուր լինել: Գերագույն խորհրդի նախագահության անդամներս շարունակում էինք լինել ռազմաճակատներում, կապ պահպանել հրամանատարների հետ և հնարավոր օգնություն կազմակերպել: Իսկ ռազմաճակատը ձգվում էր 180 կմ: Միայն 1994-ի մայիսին լուեցին հրանոթներն ու տանկերը: Ի վերջո Ղարաբաղի հողին խաղաղություն իջավ, և հնչեց հաղթանակի շեփորը...

## ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Հետո կյանքը գնում է իր ընթացքով: Առաջ եկան պետական, տնտեսական և սոցիալական հարցեր, որոնց լուծումն անհետաձգելի էր: 1994 թվականի դեկտեմբերի 21-23-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ նստաշրջանում առաջին անգամ առաջարկություն արվեց մտցնել նախագահական համակարգ, մի բան, որի պահանջը չէր զգացվում, մանավանդ նման փոքրիկ տարածքում: Ավելի լուրջ չէ՞ր լինի հարց դնել իրագործելու 1989 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումը և ավարտել վերամիավորման գործընթացը: Որոշվեց, որ հանրապետության նախագահը ընտրվում է ուղղակի, ժողովրդի գաղտնի ընտրությամբ, հինգ տարվա ժամկետով: Սակայն, ի նկատի ունենալով պատերազմական վիճակը, որոշվեց ԼՂՀ առաջին նախագահն ընտրել Գերագույն խորհրդի նստաշրջանում ձայների մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ, երկու տարի ժամկետով: Առաջադրվեց երկու թեկնածու՝ ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քո-

չարյանի և ռազմական ծառայող Մուրադ Պետրոսյանի թեկնածությունը: Հենարկման ընթացքում Մուրադ Պետրոսյանը ինքնաբարկ հայտարարեց: Փակ գաղտնի քվեարկության ցուցակում մնաց Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը: Նստաշրջանին ներկա 53 պատգամավորներից 51-ը քվեարկեցին նրա օգտին: ԼՂՀ առաջին նախագահի համար հետո ճանապարհ բացվեց 1997-ի գարնանը դառնալ ՀՀ վարչապետ, իսկ մեկ տարի անց՝ նախագահ:

\* \* \*

Համլետի մասին վաղուց գիտեին արտասահմանում: Նա բազմիցս տարբեր երկրներից հրավերներ էր ստանում մասնակցելու այս կամ այն միջոցառմանը: 1995-ի մարտի վերջին մեկնեց ԱՄՆ, Լոս Անջելես: Նույն թվականի ապրիլի 4-ին «Ասպարեզ» թերթը հաղորդել է. «Հինգշաբթի, 30 մարտի Լոս-Անջելես ժամանեց Լեոնային Ղարաբաղի Գերագույն խորհրդի նախագահության անդամ, Հայաստանի ԳԽ-ի և ԼՂՀ պատգամավոր Համլետ Գրիգորյան: Կը ղեկավարե ԳԽ-ի կրթության, գիտության, լեզուի, մշակույթի և լրատուության հանձնաժողովը:

Համլետ Գրիգորյան հիտն է Ծուշիի Երաժշտանոցի Կառուցման Ընկերության և «Լարք» Երաժշտական Ընկերության, անոնց կազմակերպած «Ձոն Հերոսության» համերգին առթիվ:

Իր կեցության ընթացքին Համլետ Գրիգորյան հանդիպում պիտի ունենայ գաղութի ներկայացուցիչներու հետ:

Ան, Երկուշաբթի, 10 ապրիլ 1995-ին, Կլենտելլի Ս. Աստուածածին եկեղեցվոյ սրահին մեջ, հրապարակային դասախոսությամբ մը ելույթ պիտի ունենայ ներկայացնելով «Արցախեան վերջին իրադարձութիւնները» միւթը: Ձեռնարկը կազմակերպած է ՀՅԴ «Ահարոնեան» Կոմիթեության դաստիարակչական Յանձնախումբին կողմէ:

Համլետ Գրիգորեան ծնած է Լեոնային Ղարաբաղի Մարտունու շրջանի գյուղերէն մեկուն մեջ: Մասնագիտութիւնը մանկավարժ-մաթեմատիկոս է, գիտություններու թեկնածու և դոցենտ:

Ամուսնացած է եւ երկու մանչ ունի: Եղած է դարաբաղեան շարժման ակնառու ներկայացուցիչ, «Կոունկ» կոմիտեի անդամ: 1990-91

թուականներուն դատուած է քաղաքական հայացքներուն համար եւ բանտուարկուած է Ռուսիոյ և Պարսի մէջ:

Հեղինակ է բազմաթիվ գիտամեթոդական գրքերու եւ յոդուածներու: Միաժամանակ կը դասավանդէ ԼՂ-ի պետական համալսարանին մէջ»:

Եվ ապա, մեկ այլ էջում՝ «Շուշիի մէջ «Դանիել Ղազարյան» երաժշտանոցի կառուցման նուիրած համերգը՝ «Ձոն հերոսութեան» արցախեան յաղթական երթի լավագոյն արտայայտութիւնը դարձաւ: Սոյն համերգը կազմակերպուած էր Լոս Անջելըսի մէջ հիմնուած Շուշիի երաժշտանոցի կառուցման ընկերակցութեան եւ «Լարք» երաժշտական ընկերակցութեան համագործակցութեամբ: Տեղի ունեցաւ կիրակի, 2 ապրիլի 1995, երեկոյան ժամը 7-ին, Փասսատիմայի Congregationol Chureh-ի մէջ:

Ձեռնարկին պատուոյ հյուրն էր Լեռնային Ղարաբաղի Գերագոյն խորհուրդի նախագահութեան անդամ, Հայաստանի Գերագոյն խորհուրդի և ԼՂՀ-ի պատգամավոր Համլետ Գրիգորեան, որ խոսք առնելով յոյս հայտնեց, որ Արցախի մէջ կը կայանայ ամուր, ուժեղ խաղաղութիւն և այդ խաղաղութեան մէջ կը հնչէ մշակոյթի ձայնը»:

Վերադառնալուց հետո Համլետին հարցրեցի իր ստացած տպավորությունների մասին: Նա հակիրճ խոսեց.

– Ինչ ասեմ. Ամերիկան Ամերիկա է, բայց ոչ Ղարաբաղ: Միանգամայն հակադիր պատկերներ են. մի կողմում ծով առատություն է, իսկ մյուս կողմում՝ անհաշիվ կարիքներ ու դժվարություններ: Երջագայությունը ճոխ էր, հարուստ ծրագրով: Բազմաթիվ ելույթներ ունեցաւ: Եվ ամեն տեղ ընդունեցին ծափահարություններով: Պատմում ու խոսում էի մեր պայքարի, մեր խիզախությունների, մեր հպարտության մասին. մի խոսքով՝ ես այնտեղ մի փոքրիկ Ղարաբաղ էի: Ունկնդիրներից շատերի աչքերում ասես կրակ էր վառվում. նույնիսկ արտասովորներ կային: Տարիքավորները գալիս ու համբուրում էին ինձ և միայն հաղթանակ ցանկանում: Իրոք, հուզիչ պահեր կային, անմոռաց թույլներ: Արդեն մի քանի օր անց կարոտել էի մեր Ղարաբաղին, մեր Ստեփանակերտին: Անկախ իմ կամքից, ուզում էի

շուտ վերադառնալ: Հավատացեք, մեր մի ժեներալով հացը չեմ փոխի ամերիկացիների բոլոր կերակրատեսակներին: Ուտում էի, բայց թերանումս համ չէի զգում: Հացից հացի հոտ չէր բուրում: Սիրտս ուզում էր կրակի վրա տաքացրած թոնրի հաց. բայց որտեղի՞ց...

Համլետը վաղուց էր մտածում հուշարձան-աղբյուր կառուցել հայրենի Հերհերից զոհվածների հիշատակին: «ԼՂ Հանրապետություն» թերթը 1997-ի հունիսի 5-ին հաղորդել է. «Մարտունու շրջանի Հերհեր գյուղի խճուղու եզրին, Վիթխարի ընկուզենու հարևանությամբ վեր է խոյանում գեղեցիկ մի հուշարձան, որի պատվանդանից զվզում է պաղ ու զուլպ աղբյուրը, իսկ հուշարձանին փորագրված է «Հերհերի զոհված ազատամարտիկներին»:

Հուշարձանի կանգնեցման ու նրա շրջապատի բարեկարգման բոլոր տեսակի աշխատանքները կատարվել են համագյուղացի Համլետ Գրիգորյանի միջոցներով և անմիջապես ֆիզիկական մասնակցությամբ:

Գյուղի դպրոցականներն ու երիտասարդները հաճախ են այցելում հուշարձանին, բազմերանգ ծաղիկներ դնում պատվանդանին՝ վառ պահելով Հերհերի քաջագուն զավակների հիշատակը»:

Իսկ նրանք 27-ն են.

- Մանասյան Վիլեն Արամայիսի, ծնվ. 1963 թ., զոհ. 1992 թ.
- Սարգսյան Ռոմա Արմիկի, ծնվ. 1964 թ., զոհ. 1992 թ.
- Ջաբյան Արմեն Ապրեսի, ծնվ. 1969 թ., զոհ. 1992 թ.
- Հարությունյան Լավրենտ Զավենի, ծնվ. 1963 թ., զոհ. 1992 թ.
- Ադամյան Վոլոդյա Ծարոյի, ծնվ. 1966 թ., զոհ. 1992 թ.
- Բաղդասարյան Աշոտ Ծափաղի, ծնվ. 1967 թ., զոհ. 1992 թ.
- Ավանեսյան Կոլյա Գրիշայի, ծնվ. 1970 թ., զոհ. 1992 թ.
- Հարությունյան Արամ Ենոքի, ծնվ. 1972 թ., զոհ. 1993 թ.
- Համբարձումյան Լևոն Համոյի, ծնվ. 1967 թ., զոհ. 1993 թ.
- Ավագյան Արտիկ Ռազմիկի, ծնվ. 1968 թ., զոհ. 1993 թ.
- Խաչատրյան Գագիկ Արամայիսի, ծնվ. 1966 թ., զոհ. 1993 թ.
- Ալեքսանյան Ծափիս Լևոնի, ծնվ. 1957 թ., զոհ. 1993 թ.
- Պողոսյան Կարեն Բարաթի, ծնվ. 1961 թ., զոհ. 1993 թ.

Համբարձումյան Ենոք Արտաշի, ծնվ. 1962 թ., զոհ. 1993 թ.  
 Գրիգորյան Ռոբերտ Ծախենի, ծնվ. 1960 թ., զոհ. 1994 թ.  
 Խաչատրյան Ռուդիկ Ռազմիկի, ծնվ. 1975 թ., զոհ. 1994 թ.  
 Աղաջանյան Ներսես Սարոյի, ծնվ. 1960 թ., զոհ. 1993 թ.  
 Գրիգորյան Կարո Գրիգորի, ծնվ. 1949 թ., զոհ. 1994 թ.  
 Հարությունյան Կիմա Մակիչի, ծնվ. 1963 թ., զոհ. 1994 թ.  
 Գրիգորյան Սուրիկ Էդիկի, ծնվ. 1965 թ., զոհ. 1994 թ.  
 Համբարձումյան Կամո Բագրատի, ծնվ. 1961 թ., զոհ. 1994 թ.  
 Աբրահամյան Մելիկ Արշակի, ծնվ. 1948 թ., զոհ. 1994 թ.  
 Բալայան Իգոր Ենոքի, ծնվ. 1974 թ., զոհ. 1994 թ.  
 Համբարձումյան Վոլոդյա Համոյի, ծնվ. 1959 թ., զոհ. 1996 թ.  
 Գրիգորյան Միշա Ծախենի, ծնվ. 1971 թ., զոհ. 1996 թ.  
 Վանյան Արարատ Ռազմիկի, ծնվ. 1966 թ., զոհ. 1996 թ.  
 Հարությունյան Մադաթ Բարկենի, ծնվ. 1974 թ., զոհ. 1997 թ.

\*\*\*

Համլետ Գրիգորյանի կյանքի և սպառաքի հաջորդ Էջերի  
 բացումը թողնում ենք ապագային:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Тов. Афанасьеву  
 Тов. Овчаренко

Как многие, так и я получил Ваше письмо. В одних раскаяние, а в других утверждение Вашей лихорадочной позиции.

Провокационная статья “Эмоция и разум” была написана под эмоцией без никокого применения разума. Мне обидно не за Вас, как за марионетку, а за всю службу “Правды”, которая не смогла во время остановить как Вас, так и Черненко от коррупции и спекулирования в вашей корреспондентской жизни.

То, что касается Вашей профессиональной подготовленности, я повторяю слова, высказанные мною на встрече в здании обкома партии в присутствии многих: “На уровне ученика 4-го класса Вы заслуживаете отметку “единица”.

Такие как Вы являются подстрекателями и разжигателями страстей.

Г. В. Григорян  
 3.06.88 г.

Հիմք՝ Ռեդիոակի անձնակազմի արխիվ:

## ХАРАКТЕРИСТИКА

На члена КПСС с 1966 г. кандидата пед. наук, доцента кафедры алгебры и методики преподавания математики Степанакертского педагогического института ГРИГОРЯНА ГАМЛЕТА ВАГАРШАКОВИЧА, 1941 г. рожд.

Григорян Гамлет Вагаршакович работает в СПИ с 1981 г. Он преподаватель с достаточно высокой научно-теоретической подготовкой. Занятия ведет на высоком методическом уровне.

Григорян Г. В. является отличником просвещения Азерб. ССР. Постоянно выступает в научно-методических журналах со статьями. Опытом своей работы Григорян Г. В. делится на учебных и научных семинарах в организации и проведении которых принимает активное участие.

Постоянно работая над повышением идейно-политического уровня, Григорян Г. В. принимает активное участие в общественной жизни института.

С 1986 года он является председателем профкома института. На этой должности он активно руководит деятельностью проф-организации.

По характеру общителен, в общении культурен. К недостаткам не примирим. Пользуется уважением среди преподавательского и студенческого коллективов. Аккуратно выполняет поручения партийной организации и администрации института.

Характеристика дана для представления в Степанакертский городской народный суд.

Ректор: С. А. САРКИСЯН  
Зам. секретаря партбюро: С. А. ДАДАЯН  
20 июля 1988 года

Հիմք՝ Ներդաստի անձնակազմ արխիվ:

Министерство народного образования  
Азерб. ССР

### ПРИКАЗ

18 октября 1988 г.

N 121

О временном закрытии Степанакертского педагогического института имени 60-летия Советского Азербейджана.

Довожу до сведения приказ Гособразования СССР:

“Государственный комитет СССР по народному образованию”

17 октября 1988 г.

N 283

Объявляю постановление Совета Министров СССР:  
“Совет Министров СССР”

### ПОСТАНОВЛЕНИЕ

от 14 октября 1988 г.

N 1208

Москва, Кремль

О временном закрытии Степанакертского педагогического института имени 60-летия Советского Азербейджана.

Совет Министров СССР постановляет:

I. Согласиться с предложением Нагорно-Карабахского обкома партии и Исполкома облсовета, согласованного с ЦК Коммунистической партии Азербейджана и Гособразованием СССР, о временном закрытии Степанакертского педагогического института Министерства народного образования Азербейджанской ССР.

II. Совету Министров Азерб. ССР, Совету Министров Армянской ССР, Гособразованию СССР оказать содействие в трудоустройстве работников института, а также обеспечить размещение студентов института для продолжения учебы.

Председатель совета министров СССР: Н. РЫЖКОВ  
Управляющий делами совета министров СССР: М. СМИРТЮКОВ  
Հիմք՝ Ներդաստի անձնակազմ արխիվ:

Ереван 19/1881 88 24/1310

г. Степанакерт педагогический институт Гамлету Григоряну

Дорогой Гамлет! Ереванские женщины умяляют Вас прекратить голодовку. Уверены, что активная форма борьбы за наше святое дело в настоящей ситуации больше необходима Арцаху. А Вы активный борец. Мы уверены в могучей вере и преданной борьбе молодежи и преподавателей педагогического института за воссоединение с матерью-родиной и отстаивания своего права учиться и готовить настоящих

интеллигентов. Вы нужны здоровым и сильным.

Борьба продолжается, ждем вас в наших рядах, миацум!

С уважением: Галстян, Ансян, Даниелян, Хоренян, Саркисян, Варданян, Аветисян.

Ереван-2, Татевосян, дом 20, кв. 31.

Հոկտեմբեր, 1988

Հիմք՝ Ֆեդիմակի անձնակազմ արխիվ:

Степанакерт 2101 84 22/10 1430

Уведомление телеграфом

Москва Министерство здравоохранени СССР тов. Чазову

Степанакерт, обком партии, тов. Погосяну Г. А.

После отказа от выполнения требований, выдвинутых, объявившими голодовку доцента педагогического института Григоряна Г., студентов: Цатуряна И., Бегларяна Г., Хачатряна А., Арутюняна Г., выраженным в письме секретаря Нагорно-Карабахского обкома КП Азербейджана тов. Атаджаняна за номером 3/229 от 22 октября 1988 г. доцент Степанакертского педагогического института Григорян Г. В. продолжает голодовку и отказывается от воды с 14.30 часов 22 октября.

Сафарян Наири Михайлович, Степанакерт, Тимирязова 7.

Հոկտեմբեր, 1988

Հիմք՝ Ֆեդիմակի անձնակազմ արխիվ:

ГАМЛЕТ ГРИГОРЯН  
КАНДИДАТ ПЕДАГОГИЧЕСКИХ НАУК

Больших надежд с работой комиссии Верховного Совета СССР я не связываю, не жду и кардинального решения, ибо сейчас бюрократический аппарат различных уровней препятствует реализации многих решений. Пока сильно "агрессивно-послушное большинство". Вокруг нас идут горячие

споры о семи вариантах решения карабахской проблемы. Может, это звучит несколько категорично и резко, но предлагать семь вариантов - значит, отклониться от основного вопроса. Есть один простой вариант, за который единодушно высказался народ.

Поскольку в составе комиссии народные депутаты, желательно, чтобы подавляющее большинство встреч проходило с народом, в народе. Кабинетных встреч должно быть меньше. Есть у меня и другое предложение, скорее, требование: целесообразно, чтобы после завершения своей работы, члены комиссии ознакомили нас, народ, со своим мнением, своими справками. В условиях демократии и гласности так будет правильнее. Горький опыт предыдущих комиссий вызвал у нас какое-то недоверие. Если мнения скрываются, то невольно начинаешь подозревать, что есть какая-то зависимость от других органов, какая-то установка сверху. Еще одно предложение: мы хотим, чтобы комиссия встретилась с Советом городской организации "Миацум" Арцахского армянского народного движения.

Հիմք՝ "Советский Карабах", N 163, от 22 июня 1989



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒԾԵՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն թվականի հոկտեմբերի 9-ին և 10-ին Ստեփանակերտում (ԼՂԻՄ) ձեռքակալվել են Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորներ Ռոյես Աղաջանյանը և Համլետ Գրիգորյանը: Այս հակաիրավական ձեռնարկումները կոպտորեն ոտնահարում են գործող Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրական ակտերը, հանրաճանաչ միջազգային նորմերը և բացահայտ քաղաքական միտում ունեն՝ սրել հարաբերությունները տեղի բնակչության և խորհրդային բանակի միջև, ապակալումացնել վիճակը Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղում: Այս ամենի հիմնական նպատակն է վիժեցնել Հայաստանի Հանրապետության նոր իշխանությունների ինքնուրույն քաղաքական կուրսի իրականացումը:

Խորհրդային կայսրապետության փլուզումը կասեցնելու այս հերթական փորձի մեջ նոր օղակ է գործողությունների այն շղթայում, որը կենտրոնն ուղղում է կոմունիստական գաղափարախոսությունը թոթափած և զարգացման սեփական ուղին ընտրած դեմոկրատական հանրապետությունների դեմ: Միջոցների մեջ խտրություն չի դրվում, բանակին քաղաքական գործառնություններ են վերապահվում, հմտորեն օգտագործվում են էթնիկական հակասությունները: Դրա անմիջական վկայությունն է իրադարձությունների զարգացումը Բայթյան հանրապետություններում, Մոլդովայում, Թուսաստանում և այլուր:

Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը, որին հաջողվեց վերջերս տեղի ունեցած ընտրություններում «դաբարադյան քարտը» խաղարկելով պահպանել իր իշխանությունը հանրապետությունում, փաստորեն դարձել է կենտրոնի գործիք և նրա կայսրապետական միտումների հլու կամակատարը: Նման կեցվածքը կարող է անհնարին դարձնել բանակցությունները, հետևաբար և որևէ համաձայնություն հարևան հանրապետությունների միջև:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունը ժողովրդական պատգամավորներ Ռ. Աղաջանյանի և Հ. Գրիգորյանի ձեռքակալությունը գնահատում է որպես միտումնավոր քաղաքական սադրանք և պահանջում է անհապաղ ազատ արձակել նրանց:

Հիմք՝ «Հայաստան», 13 նոյեմբերի 1990

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒԾԵՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների  
սպորինի կայանավորման մասին**

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավորներ Ռոյես Գեորգիի Աղաջանյանը և Համլետ Վաղարշակի Գրիգորյանը առանց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի համաձայնության *ա/թ.* հոկտեմբերի 9-ին և 10-ին կայանավորվել են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ստեփանակերտ քաղաքում: Նման արտաոռոց փաստը հակասում է ԽՍՀՄ և Հայաստանի Հանրապետության սահմանադրություններին, «ԽՍՀՄ-ում ժողովրդական պատգամավորների կարգավիճակի մասին» և «Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների կարգավիճակի մասին» օրենքներին, ըստ որոնց հանրապետության ժողովրդական պատգամավորը անձեռնմխելիության իրավունքից օգտվում է ԽՍՀՄ ողջ տարածքում:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը նման սպորինությունը դիտում է որպես Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում, որով կենտրոնական իշխանությունները նպատակ ունեն էլ ավելի խորացնելու պայթյունավտանգ քաղաքական իրադրությունը ռեզիոնում, խոչընդոտել դեմոկրատական վերափոխումների գործընթացը, վերականգնել կառավարման վարչահրամայական մեթոդները:

Նմանօրինակ գործողությունները վկայում են, որ կենտրոնական իշխանությունները ևս մի փորձ են կատարում տոտալիտար մեթոդները ռեզիոնում փորձարկելու և այլ միութենական հանրապետություններ արտահանելու հասնար, ինչպես դա տեղի ունեցավ ազգամիջյան կոտորածներ և բախումներ բորբոքելու ժամանակ:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում է՝

1. Պահանջել ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովից միջոցներ ձեռնարկել անօրինական կալանքի վերցված Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորներ Ռոյես Գեորգիի Աղաջանյանին և Համլետ Վաղարշակի Գրիգորյանին անհապաղ ազատելու և անօրինական կայանավորման մեջ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գերագույն

խորհրդի իրավական հարցերի հանձնաժողովին Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորներ Ռ. Աղաջանյանի և Հ. Գրիգորյանի ապօրինի կալանավորման հետ կապված փաստերը ուսումնասիրել և ներկայացնել նստաշրջանին:

3. Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորներ Ռ. Աղաջանյանի և Հ. Գրիգորյանի նկատմամբ ձեռնարկված անօրինական գործողությունները չկասեցնելու հետևանքների ողջ պատասխանատվությունը կկրի ԽՍՀՄ պրեզիդենտը պրեզիդենտական երդման համապատասխան:

4. Հաշվի առնելով, որ ձերբակալված պատգամավորները փոխադրվել են Բուսաստանյան ֆեդերացիա, այս փաստի վրա հրավիրել ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի ուշադրությունը և խնդրել արտահայտելու իր դիրքորոշումը կատարված անօրինական ձերբակալությունների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության  
Գերագույն խորհրդի նախագահ՝ **Լ. Տեր-Պետրոսյան**  
Հայաստանի Հանրապետության  
Գերագույն խորհրդի քարտուղար՝ **Ա. Մահալյան**

Հիմք՝ «Հայաստանի Հանրապետություն», 17 հոկտեմբերի 1990

**Գ Ի Մ Ո Ւ Մ**

**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԳՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ**

Ադրբեջանի իշխանությունները, ունենալով դարաբաղյան հակամարտության կարգավորմամբ իբրև թե շահագրգիռ կառավարությունների լուր համաձայնությունը, փիժեցնում են խաղաղարարական բոլոր առաջարկները, հետևողականորեն իրականացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հայ բնակչության ոչնչացման իրենց դաժան ծրագիրը: Հրետա-սմբակոծում են նորաստեղծ ժողովրդական պետության խաղաղ քաղաքները, ավաններն ու գյուղերը, ավերում կենսապահովման, կուլտուր-լուսավորական նշանակության օբյեկտները: Մինչդեռ այն հանգամանքը, որ Ադրբեջանը հրաժարվում է ճանաչել ԼՂՀ բնակչության ինքնորոշման անկապտելի իրավունքը, չի ազատում նրան միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը պահպանելու պարտականություններից:

Վերջին ժամանակներս հանրապետությունում հրետա-սմբակո-

ծությունների զոհ են դարձել հարյուրավոր դպրոցականներ, մանկահասակ երեխաներ, ուսուցիչներ, ծնողներ: Նման պայմաններում, բնականաբար, հնարավոր չէ պարապմունքներն սկսել կրթօջախներում, քանի որ Լեռնային Ղարաբաղում ամեն սկսվող օրը նշանակում է նոր զոհեր խաղաղ բնակչության շրջանում, խլում է մանկական նոր կյանքեր: Եվ անհամողմեղի, հակաբարոյական է աշխարհի քար անտարբերությունը:

Դիմում ենք ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովին՝ պահանջով՝

– Դատապարտել Ադրբեջանի իշխանությունների գործողությունները.

– Միջազգային պատժամիջոցներ կիրառել նրանց դեմ՝ մարդասիրական իրավունքի նորմերը խախտելու համար:

Համետ Գրիգորյան  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի  
կրթության, գիտության, լեզվի, մշակույթի և լրատվության  
հանձնաժողովի նախագահ

18 սեպտեմբերի 1992 թ., ք. Ստեփանակերտ  
Հիմք՝ «Արցախ», 18 սեպտեմբերի 1992

Председателью Нагорно-Карабахского облисполкома  
парону С. А. Бабаяну  
Председателю Степанакертского горисполкома  
парону М. М. Мирзоян

**Депутатский запрос**

Исходя из того, что цены на продовольственные продукты и промышленные товары повысились втрое-вчетверо, а вследствие продолжительной блокады социально-экономическое и финансовое положение трудящихся области остается чрезвычайно тяжелым, предлагаю вам рассмотреть следующий депутатский запрос.

1. В течение учебного года (кроме летних каникул), в тех районах области, где существует внутригородское автобусное сообщение, обеспечить для учащихся и студентов общеобразовательных школ, профтех-училищ бесплатный проезд

на транспорте.

2. Не распространять действие закона о повышении цен на школьные и дошкольные учреждения, а также студенческие столовые.

3. Отменить на территории области пятипроцентный президентский налог с продажи одежды и письменных принадлежностей.

4. Приняв за основу последний указ президента страны относительно пятипроцентного налога, найти возможности для отмены на территории области взимания пятипроцентного налога с реализации всех товаров.

**Народный депутат Верховного Совета РА,  
член комиссии по образованию и науке,  
языку и культуре  
Гамлет Григорян**

Հիմք՝ «Советский Карабах», N 27 апреля 1991

Постановление

Верховного Совета Республики Армения

Об обращении к генеральному прокурору СССР с требованием обеспечить депутатскую неприкосновенность депутата Верховного Совета Республики Армения Г. В. Григоряна

Верховный Совет Республики Армения постановляет:

Обратиться к генеральному прокурору СССР Н. Трубину с требованием обеспечить депутатскую неприкосновенность депутата Верховного Совета Республики Армения Григоряна Гамлета Вагаршакевича, незаконно арестованного в городе Степанакерте без санкции прокурора и без согласия Верховного Совета Республики Армения.

**Председатель Верховного Совета  
Республики Армения** Л. Тер-Петросян  
**Секретарь Верховного Совета  
Республики Армения** А. Саакян

Հիմք՝ «Советский Карабах», N 17 мая 1991

Заложники возвращаются

Переговоры об освобождении граждан, задержанных во время армяно-азербайджанского конфликта, дают основания для оптимизма

Как сообщил «Известиям» первый заместитель генерального прокурора Армении Михаил Григорян, 23 мая пятнадцать заложников-армян, в их числе три врача, оказывающих медицинскую помощь жителям Геташена (Чайкенда), отпущены домой.

Продолжает оставаться неопределенной судьба арестованного в Степанакерте депутата Верховного Совета Армении Гамлета Григоряна. Верховный Совет республики обратился в связи с этим к Генеральному прокурору СССР Николаю Трубину с требованием обеспечить депутатскую неприкосновенность Гамлета Григоряна.

Հիմք՝ «Известия», N 25 мая 1991

## ОСВОБОЖДЕН НАРОДНЫЙ ДЕПУТАТ АРМЕНИИ

Как стало известно из достоверных источников, власти Азербайджана освободили во вторник народного депутата Республики Армения, доцента Степанакертского педагогического института Гамлета Григоряна.

В ночь на 16 мая Григорян был захвачен неизвестными лицами и отвезен сначала в Агдам, а затем переправлен в Баку.

Как сказал Гамлет Григорян в интервью корреспонденту «ИФ», больше месяца он содержался в тюрьме. По его словам, практически ежедневно его избивали от 5 до 10 человек, вынуждая дать показания по фактам, к которым он не имеет отношения.

Основание: «Известия» 21.06.1991

Уведомление телеграфом правительственная  
Азербейджан НКАО Степанакерт  
ул. Чкалова, дом 19, кв. 26  
народному депутату Республики Армения  
Гамлету Григоряну

Дорогой Гамлет Вагаршакович, примите наши искренние поздравления в связи с освобождением и во восстановлением ваших конституционных прав человека и депутата. То что пришлось Вам испытать, не может быть оправдано ни с юридической, ни с моральной точки зрения и является ярким примером разгула произвола и беззакония в НКАО и армяно-населенных районах Азербейджана. К сожалению, судьба многих невинных людей, ставших жертвами так называемой акции проверки паспортного режима в регионе, до сих пор остается неизвестной и вызывает тревогу и возмущение. Все это еще раз убедительно доказывает правду народа, борющегося за установление законной советской власти в НКАО. Желаем Вам крепкого здоровья и успехов в вашей трудной работе. Постпред Республики Армения Мамиконян

Հիմք՝ Ռեդիոակի անձնակաճ արխիվ:

Прокурору НКАО  
ст. советнику юстиции Плавскому И. А.

от доцента Степанакертского  
педагогического института ГРИГОРЯНА  
ГАМЛЕТА ВАГАРШАКОВИЧА,  
проживающего в г. Степанакерте  
по ул. Чкалова 19, кв. 26.

### ЗАЯВЛЕНИЕ

16 мая 1991 г. в 03 часов 50 минут неизвестные лица в военной форме, вооруженные автоматическим оружием, одетые в маски, ворвались в мою квартиру, задержали меня без каких-либо законных оснований и на автомашине мар-

ки "Нива" без номерных знаков, закрыв глаза, отвезли в село Ходжалы Аскеранского района.

В тот же день в 13-14 часов на автомашине ГАЗ-69 меня увезли в Агдамский аэропорт, а оттуда на вертолете в г. Баку, где поместили в тюрьму пос. Шувеляны, где содержали меня до 18 июня 1991 года.

После того, как меня отпустили, я сразу лег в областную больницу и частично поправил свое здоровье.

До сих пор мне неизвестно, за что был арестован, кто является инициатором этого преступного акта.

Прошу дать указание проверить и дать мне подробный письменный ответ о причине моего незаконного ареста и содержания в тюрьме.

/Григорян Г. В./

г. Степанакерт  
30.09.1991 г.

Հիմք՝ Ռեդիոակի անձնակաճ արխիվ:

... НО НЕ СВЯЗЫВАЕТ С НИМ БОЛЬШИХ НАДЕЖД

"Мы приветствуем приезд в регион председателя Минской конференции СБСВ по Нагорному Карабаху Марию Рафаэлли, однако, к сожалению, больших надежд в связи с этим не имеем", - заявил корреспонденту "Ноян Топан" член Президиума ВС НКР, депутат ВС РА и Нагорного Карабаха Гамлет Григорян. Что касается предложенного Рафаэлли графика, реализация которого должна начаться 13 июля, то, как выразился Григорян, "я в ближайшем будущем не вижу перспектив его исполнения. Более того, решение карабахского конфликта в рамках СБСЕ также не имеет перспектив, поскольку механизмы СБСЕ не дают нам повода быть оптимистичными в этом плане".

"Ноян Топан"

Հիմք՝ "Республика Армения", 10 июля 1993

ԱՄՏԱՅԱԾՏԷ  
ՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ռապարակային ԴՁրոյց

Վազմակերպություն

Հ. Յ. Գ. « ԱՀԱՐՈՆԵԱՆ » ԿՈՄԻՏԵՆՈՒԹԵԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ՅԱՆՋՆԱՄՈՒԻԻՐ

Նիւր՝

**ԱՐՑԱՆԻ ՎԵՐՁԻՆ ԻՐԱԳԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Կը խօսի՝

## ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐԵԱՆ

(ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՍ)

Տարի Կ'ուճեցայ

Երկուշաբթի, 10 Ապրիլ 1995, Երեկոյեան ժամը 8-ին  
Ս. Աստուածածին Եկեղեցոյ Ներքնաբառահին մէջ  
500 S. Central Ave. Glendale  
ԺԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՐԻԹ ԴԻՏԻ ՏԵՐԻ ՄԵՆԱԿՏԵԼՈՒ ԱՅՍ ԶԻՅՅԵՆ  
ՊԱՇՏՆԱԿԱՆ ԲՈՒՅԵՆ ԵՏԲ ՀԵՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻՏՈՐ ԱՅՅԵ

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ՀՔԿՊ ԿՊԱ, ֆ. 1, ց. 127, գ. 240, 356, 373 և այլն:
2. «Արցախի համալսարան», հ. 2-3, փետրվար-մարտ 1988:
3. «Հայոց աշխարհ», 24. 01. 1988:
4. «Արցախի համալսարան», հ. 2-3, փետրվար-մարտ 1988:
5. Նույն տեղում:
6. Հեղինակի անձնական արխիվ:
7. 1998 թ. Ստեփանակերտում տպագրված Միքայել Ռեզարյանի «Իմ սերնդի ճակատագիրը» հուշագրքում ասված է, որ Հերհերի դպրոցում իրենց գործին նվիրված ուսուցչուհիներից էր Քնարիկ Սարգսյանը: Ապա՝ «Հենց այստեղ՝ հայրենի դպրոցում՝ վերականգնվեցին բռնադատված մանկավարժներ՝ Վաղարշակ Գրիգորյանը և Գալուստ Գալստյանը, որոնց նշանակվան հրամանները ժողկրթաժամկար Եսայի Նսայանը դողդոջուն ձեռքով է գրել, չնայած Ստալինն արդեն մահացած էր» (էջ 94):
8. Ваган Бахшиевич Арутюнян, События в Нагорном Карабахе. Хроника. Часть 1, Ереван, 1990, ст. 33 (այսուհետև՝ վ. Բ. Հարությունյան...)
9. Պատճեն՝ հեղինակի անձնական արխիվ:
10. Բակուր Կարապետյան, ... Եվ նրա շուրջ , Երևան, 1990, էջ 42-44:
11. «Գարդմանք», հ. 2, 1999:
12. «Սորհրդային Ղարաբաղ», 20. 02. 1991:
13. Նույն տեղում, 21. 02. 1988:
14. «Հայոց աշխարհ», 21. 01. 1998:
15. «Սորհրդային Ղարաբաղ», 02. 03. 1988:
16. Պատճեն՝ հեղինակի անձնական արխիվ: «Կոունկի» քարտուղար Սերգեյ Խաչատրյանի, որի մոտ է պահվում «Կոունկի» արձանագրությունները (իսկ ինչո՞ւ չի հանձնում արխիվ) հրապարակվել է «Այսպես սկսվեց Արցախյան շարժումը» վերատառությամբ հուշագրություն («Եղիցի լույս» 2000 թ., հ. 3-4, 5, 6, 7), որում տեղ են գտել բավականին անճշտություններ և նկատվում է միակողմանիություն:
17. «Известия», 24. 03. 1988:
18. Նույն տեղում:
19. Նույն տեղում:
20. Հեղինակի անձնական արխիվ: Սակայն կային և այնպիսիները, որոնք չէին կարողանում պոկվել թորքի գոտկատեղից: Իրոպարադից ինչ-որ վեճերա Քալանթարովա Մոսկվա, Երևան և Բաքու ուղարկած հեռագրերում խնդրում է ԼՂԻՄ-ը թողնել Ադրբեջանի կազմում և մեղավորներին պատժել (ՀՀ ՀՔԿՊ ԿՊԱ, ֆ. 1, ց. 127, գ. 685, թ. 1):
21. Հեղինակի անձնական արխիվ:
22. վ. Բ. Հարությունյան..., 1-ին, էջ 76:
23. «Սորհրդային Ղարաբաղ», 18. 03. 1998:
24. Հեղինակի անձնական արխիվ:
25. «Известия», 30. 03. 1988:

26. «Խորհրդային Ղարաբաղ», 01. 04. 1988:
27. Նույն տեղում, 03. 05. 1988:
28. Նույն տեղում, 24. 06. 1988:
29. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 102:
30. Նույն տեղում, թ. 104:
31. Այդ մասին նյութերը տես՝ հեղինակի անձնական արխիվ:
32. «Խորհրդային Ղարաբաղ», 15. 06. 1988:
33. Նույն տեղում, 24. 06. 1988:
34. Հեղինակի անձնական արխիվ:
35. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 87, գ. 21, թ. 192:
36. «Խորհրդային Ղարաբաղ», 13. 07. 1988:
37. «Խորհրդային Հայաստան», 16. 06. 1988:
38. Վ. Բ. Հարությունյան..., 1-ին, էջ 118:
39. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 87, գ. 22, թ. 10-11:
40. Նույն տեղում, թ. 29:
41. «Խորհրդային Ղարաբաղ», 24. 07. 1988:
42. Վ. Բ. Հարությունյան..., 1-ին, էջ 133:
43. «Խորհրդային Ղարաբաղ», 24. 07. 1988:
44. Նույն տեղում, 18. 09. 1988:
45. Նույն տեղում, 01. 10. 1988:
46. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 87, գ. 23, թ. 40-41:
47. Նույն տեղում, թ. 42-45:
48. Նույն տեղում, ֆ. 4516, ց. 1, գ. 9, թ. 6:
49. Համկետ Գրիգորյանի հացադուլի հետ առնչվող բոլոր փաստաթղթերի իսկականը կամ պատճենները տես՝ հեղինակի անձնական արխիվ:
50. Թարգմանությունը տես՝ «Խորհրդային Ղարաբաղ», 11. 11. 1998:
51. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4516, ց. 1, գ. 10, թ. 127:
52. Նույն տեղում, թ. 62-63:
53. «Խորհրդային Ղարաբաղ», 06. 11. 1988:
54. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 87, գ. 25, թ. 16:
55. «Հայք», 10. 06. 1990:
56. «Տնտեսագետ», 03. 14. 1989, հ. 32-33:
57. «Հայք», 10. 06. 1990:
58. Մեղադրվում են, Երևան, 1989, էջ 86: Ն. Ռիժկովի կողմից ընդունված պատվիրական կազմի մեջ էին Ստեփանակերտի ավտոտրանսպորտային ձեռնարկության պետ Բ. Վ. Դադայանը, մարզսոցսպի պետ Գ. Վ. Սահակյանը, 8-րդ միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Լ. Ի. Սարգսյանը և մարզային հիվանդանոցի գլխավոր բժիշկ Լ. Ի. Ղուկասյանը:
59. «Խորհրդային Ղարաբաղ», 08. 03. 1989:
60. Նույն տեղում, 05. 05. 1989:
61. Հայոց աղցախյան «Միացում» ժողովրդական շարժման Ստեփանակերտի հիմնադիր կոմֆերմանի վերաբերյալ նյութերը քաղված են «Միացում» տեղեկագրի առաջին համարից (09. 08. 1989):

62. «Խորհրդային Ղարաբաղ», 10.09. 1989:
63. Նույն տեղում, 21. 10. 1989:
64. Նույն տեղում, 12. 11. 1989:
65. «Միացում», 27. 11. 1989:
66. «Խորհրդային Ղարաբաղ», 30. 11. 1989:
67. «Խորհրդային Հայաստան», 03. 12. 1989:
68. Այդ մասին տես Ռ. Գարրիբյանի վերոհիշյալ հուշերը:
69. «Коммунист», 12. 01. 1990:
70. Նույն տեղում, 16. 01. 1990:
71. «Մշակ», 1906, հ. 10, 18:
72. «Հայք», 28. 01. 1990:
73. Գալինա Ստարովոյտովան Սանկտ Պետերբուրգի իր տան ջքամուտքում սպանվել է 1998-ի նոյեմբերի 20-ին:
74. «Երեկոյան Երևան», 07. 04. 1990:
75. «Խորհրդային Հայաստան», 27. 04. 1990:
76. «Երեկոյան Երևան», 11. 05. 1990:
77. «Խորհրդային Հայաստան», 24. 06. 1990:
78. «Դրոշակ», 1990, հ. 8, էջ 7:
79. Հեղինակի անձնական արխիվ:
80. «Հայաստան», 18. 10. 1990:
81. Նույն տեղում:
82. «Խորհրդային Ղարաբաղ», 18. 10. 1990:
83. Նույն տեղում, 13. 10. 1990:
84. Նույն տեղում:
85. «Հայաստանի Հանրապետություն», 17. 10. 1990:
86. «Голос Армении» 26. 10. 1990:
87. «Зов Арцаха», հ. 1. 1991:
88. «Հայք», 18. 03. 1990:
89. «Հայաստանի Հանրապետություն», 26. 04. 1991:
90. Նույն տեղում, 21. 05. 1991:
91. Նույն տեղում, 21. 06. 1991:
92. Վ. Բ. Հարությունյան..., 4-րդ, էջ 66:
93. «Երկիր», 30. 08. 1991:
94. Բ. Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 266 (այնուհետև՝ Բ. Ուլուբաբյան...):
95. «Հայաստանի Հանրապետություն», 03. 09. 1991:
96. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի որոշ իրավաբանական հարցեր, Երևան, 1994, էջ 17: 1991 թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ ԼՂՀ-ն Ծափոնյանի հետ միասին ուներ 207678 բնակիչ, որոնցից 16680-ը՝ հայ, 38737-ը՝ թուրք և 2875-ը՝ ռուս: Քվեարկությանը չմասնակցած 10555-ը հիմնականում թուրքերն էին:
97. «Հայաստանի Հանրապետություն», 14. 12. 1991:
98. «Խորհրդային Ղարաբաղ», 27. 12. 1991:
99. «Երկիր», 16. 04. 1992:



- 100. Արթուր Մկրտչյանի ողբերգական մահվան հանգամանքը դեռևս մնում է չբացահայտված:
- 101. Հեղինակի անձնական արխիվ:
- 102. Ջորի Բալայան, Դժոխք և դրախտ, Երևան, 1995, էջ 139:
- 103. «Երկիր», 20. 06. 1992:
- 104. Բ. Ուլուբարյան..., էջ 464:
- 105. «Արցախ», 15. 09. 1992:
- 106. Դ. Բաղդասարյան, Դիմակայություն, Երևան, 1998, էջ 139:
- 107. Սենոր Հարությունյան, Գոյամարտ, Ստեփանակերտ, 1998, էջ 47:
- 108. «Ազատամարտ», 4-10. 09. 1992:
- 109. Վ. Բ. Հարությունյան..., 4-րդ գիրք, էջ 205:
- 110. «Ազգ», 19. 02. 1993:
- 111. Նույն տեղում, 16. 01. 1993:
- 112. Վ. Բ. Հարությունյան..., 5-րդ գիրք, Երևան, 1997, էջ 27:
- 113. «Արցախ», 17. 04. 1993:
- 114. «Լրագիր օր», 16. 04. 1996:
- 115. «Голос Армении», 27. 03. 1993:
- 116. Նույն տեղում, 15. 06. 1993:
- 117. «Հայաստանի Հանրապետություն», 18. 06. 1993:
- 118. Բ. Ուլուբարյան..., էջ 699:
- 119. «Երկիր», 15. 06. 1993:
- 120. «Հայք», 18. 08. 1993:
- 121. Նույն տեղում, 02. 07. 1993:
- 122. «Երևան» (Սօֆիա), 20. 07. 1993:
- 123. «Երկիր», 24. 12. 1993:

**Ստեփանակերտ-Երևան, 2000-2001 թթ.**

- 52. Նույն տեղում, 6. 02. 01:
- 53. «Արցախյան Հանրապետության համապարտ», 09. 02. 2000:
- 54. ՀՀ ՀՊԹ կրկին, 4. 1. 02. 00, 25. 01. 2000:
- 55. «Հայք», 06. 06. 1992:
- 56. «Յոթնամյակ», 03. 14. 1999, 8. 08. 01. 00, 10. 01. 00, 10. 01. 00:
- 57. «Հայք», 10. 06. 1992:
- 58. «Յոթնամյակ», 03. 14. 1999, 8. 08. 01. 00, 10. 01. 00, 10. 01. 00:
- 59. Նույն տեղում, 10. 01. 00, 10. 01. 00, 10. 01. 00:
- 60. Նույն տեղում, 10. 01. 00, 10. 01. 00, 10. 01. 00:
- 61. Հայք, 09. 08. 1989:
- 62. «Երկիր», 16. 04. 1993:

**ՀՐԱՆՏ ԱՐԱՀԱՄՅԱՆ**

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԿԵՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Ծնվել է 1931 թ. օգոստոսի 18-ին, ԼՂՀ Մարտունու շրջանի Քերթ գյուղում: 1954 թվականին գերազանցության դիպլոմով ավարտել է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Որպես պատմության ուսուցիչ աշխատել է ԼՂԻՄ Մարտունու շրջանի մի շարք դպրոցներում: 1973 թվականին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Լեոնային Ղարաբաղը 1920-1937 թվականներին» թեմայով: Այդ նույն ինստիտուտում 1997 թվականին պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Արցախահայության ազատագրական պայքարը 1917-1923 թթ.» թեմայով: Ներկայումս հայ ժողովրդի պատմություն

է դասախոսում ՀՀ ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտում և Քրդք Քրրքորյանի անվան տնտեսա-իրավագիտական համալսարանում:

Շուրջ 100 գիտական հոդվածների և գրքերի հեղինակ է: Վերջին տարիներին տպագրվել են նրա «Արցախյան գոյամարտ», «Երբ հայրենիքը վտանգի մեջ է», «Արցախի համար զոհված դիզակցիները», «Թևան», «Մամնայի հերոսամարտը» և այլ գրքեր: Այս վերջին երկուսի համար արժանացել է ԼՂՀ կառավարության սահմանած Եղիշեի անվան մրցանակի: Ներկայումս տպագրության է պատրաստում «Մարտնչող Արցախ. 1917-2000» եռամսս ուսումնասիրությունը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                      |     |
|--------------------------------------|-----|
| Ռուպես նախաբան                       | 3   |
| Ես հպարտ եմ                          | 6   |
| Սկսված փոթորիկ                       | 7   |
| Որոհումների ճանապարհին               | 28  |
| Խորացող հորձանուտ                    | 66  |
| Ամպերը նոր գույն են ստանում          | 86  |
| Արցախը թարտում էր                    | 108 |
| Դատը մոպլություն                     | 122 |
| Անկախություն՝ ոռոմբերի պայթյունի տակ | 143 |
| Հաղթանակ՝ արյան գնով                 | 167 |
| Խճճված թելեր                         | 199 |
| Կյանքի ընթացքը                       | 214 |
| Փաստաթղթեր                           | 219 |
| Ծանոթագրություններ                   | 233 |

АБРАМЯН ГРАНТ БАРСЕГОВИЧ

### НАВСТРЕЧУ СУДЬБЕ

Документально-публицистический очерк

*Книга посвящается битве армян Арцаха, завершающей второе тысячелетие христианства и отражает овеянную славой деятельность одного из руководителей этой героической битвы ГРИГОРЯНА ГАМЛЕТА ВАГАРШАКОВИЧА*

MEETING THE FATE

A DOCUMENTARY ESSAY

*This book is devoted to the heroic battle of the people of Artsakh, concluding the II millennium of the Christian Era and to the depiction of the glorious activity of one of the leaders of that battle - HAMLET VAGHARSHAK GRIGORIAN.*

ՀՐԱՆՏ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

**ԺԱԿԱՏԱԳՐԻՆ ԸՆԴԱՌԱԶ**

Փաստավավերագրական  
ակնարկ

Հրատ. խմբագիր՝ *Ա. Մկրտչյան*  
Համակարգչային  
շարվածքը և էջադրումը՝ *Գ. Հովհաննիսյան*  
Ձևավորումը՝ «Դար» ՍՊԸ



«Ամարաս» տպարան  
Երևան, Տերյան 44  
Հեռ. 56 04 79, 56 74 64